Այս ապա խորհեցան Ջալալիքն գնալ յեր կիրն գեղամայ՝ որ է գեղարքունի. քանզի գի տէին ԹԷ անգէն համբարք ցորենոյ և գա րեղ. և ջոկք աչխարաց և անդէնց. որէ պախ րէ՝ յոլովք գոն։ վա՛ որոյ յոլովք՛ի զօրացն Ջա լալեաց եբեալ գնացին յերկիրն գեղամայ. և զբա զում գիւղս կողոպտեալ աւարէարին։ և բա ցեալ զհամբարս նոցա ցորենոյ և գարեղ. և նոցին տեարց ձեռօք բարձին նոցին անասնոցն. և զնոսին կալան պահակ՝ որ է կոռ. վարօղ և ջշօղ բեռնակիր անասնոցն. որով՛ք բերբէին զցորեանն՛ի ընակարանս իւրեանց։ Ա՛յլև զկա նայս, և զաղայս գերացուցեալ բերին ընդ ին քեանս. ոմն զի տեարք գերեացն արծաԹ և ոսկի վա՛ նոցին գնոցն բերեալ դուձուսցեն զգե րիսն։ Այս իբրև լսեցան բաղձանաց սրտից իւրոց զոր ինչ և կամեցան արարին. և ապա չոՀեցուցեալ զգերեալ կանայս և զաղայսն. և պահակ կա ցեալ արամբքն բարձեալ նոցին գրաստուցն և եզանցն զամն բեռուինսն։ և զբազմուԹիւն անաս նոցն՝ որք էին ջոկով ոչխարք՝ և պախրէք. և երամով ձիք վարեալք բերէին։ Այբև եկին երկուց աւուրց ՃանապարՀ՝ և զի էր գործ առնուԹիս այս՛ի ժամանակս ձմերայնոյ այլև ձմեռնն այն ծանրաձմեռն և ձիւնամած էր. վա՛ որոյ բեռնակիր անասունքն ամբն վաստակեալք մնացին՛ի ՃանապարՀին. և՛ի ԹանձրուԹէ ձեռն ոչ կարէին գնալ յապագս որոյ զմնացելոց գրաստուց բեռուինսն բաժանեցին շալակ շա լակ. և շալակեցուցին գերեացն արանց և կա նանց

նանց և տղայոց։ և այսպէս անցուցեալ զսարն
հասուցին ՚ի կարփի գիւղն։ Այլ թէ որքան
դառն աղետիւ վտանգ էր ողջմտելի ժողովը
դեանն՝ որք պատահեցան այսմ գործոյ։ զի ո՞
մանց զձեռս՝ և զոտս՝ և զունչս տարաւ ցուրան։
որք յօդաթափք եղեն ՚ի մասանց մարմնոյ։
և այլք ՚ի ընչմանէ ցրտասառույց օդոյն սառու
ցեալք անդէն իսկ ՚ի ձանապարհին մեռանին։
Այլ այսպէս՝ որք մեռան ՚ի ճանապար
հին. մեռան, իսկ որք մնացին՝ զամն բերեալք
հասուցին ՚ի կարփի. զոմանս վաճառէին ար
ծաթոյ. և զոմանս պահէին ՚ի ծառայութիւն
գործոց իւրեանց։ և ջալալիքն կացին այսպէս
մինչ ՚ի գարունն՝ և հասին մերձ յաւուրսն
համբարձմանն. և ապա եղեալք անտի գնացին
յերկիրն ախլցխոյ. և անդ ևս զայն գործ կա
տարէին։

Այլ ոչ միայն այս ջալալիքս այսպէս առնէին.
գոյին և այլք ջալալիք՝ ոմանք յոլովք՝ և ոմանք
սակաւք. որք ՚ի տեղիս տեղիս զկայսաւեալ և որ
ջոգեալք էին՝ զայսպիսի գործս գործէին։
Այլև ՚ի քրիստոնէից ազգէ՝ որք ոմանք, որք
ոչ ունէին զերկիւղն Այ՝ինքեանս. իբրև տե
սանէին թէ այլ ազգքն այսպէս առնեն. ին
քեանք ևս սկսան այսպէս առնել։ վն զի աչօք
տեսին և սրտիւ յօժարեցան. եթէ յայտնի
յայֆչտակութիւնք՝ և թէ գաղտնի գողութիւնք
այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի
էր յոչխարհակալ բռնաւորաց. և ամ՝որ զա
խորժակս կամաց իւրոց կատարէր։ Այդ ոմն
պատմեն տեսօղք ժամանակին. զի քնաւ ոչ
գոյր նշոյլ բարութեանէ յաւուրսն յայնոսիկ բաց
՚ի թշուառութենէն. ոմն պատմեցաք, և տակաւ
ին ևս պատմելոցեմք։ վն զի Թագաւորն ա

բևեռից չահաբաս զօրաքն Պարսից զբաժին արևելեայ աշխարհիս յաւետ դարձոյց։ սոյնպէս և ջալալիքն՝ որք մասին բաժնի արևելեայ երկրիս գերագոյն քան զնա եղեն աւերիչք և ապա կանիչք։ [2] սարդարն () սմանցւոց նոցին զօրքն խմբք երկրայս սկսեալ՝ի կոստանդնու պօլսէ մինչ՝ի յերևան քաղաք աւերեցին։ սոյնպէս և ջալալիքն, որք եին յաւուրն յայնոսիկ՝ի կողմանս երկրին () սմանցւոց գերագոյնք քան զնա աւերիչք։ [3] սքեին որք անուանիք՝ և յաղթօղք՝ և քաջ պատերազմօղք՝ և անպարտելիք։ [4] զի եին ջալալիքս այսոքիկ բազումք, վասորոյ հարկաւոր համարիմ շարադրել զա նուանս նոցա։ որով մարթասցին վերահասու լինել աւերման աշխարհաց՝ որ՝ի նոցունց եղև։ Թէ որքան եղեալէ։ և զորինչ լուսաբ յակա նատես պատմողաց՝ զայն գրեմք։

[1] Այս զարայ եաղիչին բազումք հեծելոք, որ՝ի հազարքառասունևեօթն Թուին ապա տամբեցաւ՝ի Թէւրէն։ և եկեալ յուրհայ քաղաք եմուտ՝ի բերդն, և ամրացաւ։ և հրամայեցաւ՝ի Թէւրէն իվ՚ը սորա սարդար գալ։ և սարդարն եկեալ քառասունհազար մարդկամբք ոչինչ կարաց առնանել՝ և դարձաւ և ապա եաղիչին եղեալ՝ի բերդն՝ և այլևս զօրս ժողովեաց իվերայ իւր։ և նոքօք սկսաւ աւերել զաշխարհ։ նախ զուրհայ քաղաք՝ և ապա զայլս՝ զԹօխաթ՝ զսեբաստիայ՝ զբուր սայ՝ զանկիւրիայ՝ և այլ ուրև հանդիպեցաւ։ և զխարաքն զոր հանապազ Թէւրն առնոյր՝ի ժողովրդոց։ այս եաղիչիս զերկուս տարուայ խարաքն ինքն էառ։ և իւրոց զօրացն ոչ չիկա բաժանեաց։

[2] Նուէրեին փայլայ՝ հազարքառասունևուԹ Թուին ապստամբեցաւ՝ի Թէւրէն։ [3] Ա-

Պ. Օսայսաֆար Հազարքառասունևեւթն Թոճին ապստամբեցաւ։

Ա. Մատփաշայ՝ Հազարևյիսուն Թոճին ապստամբեցաւ։

Ա. Ջաղան՝ Հազարյիսունևերեք Թոճին ապստամբեցաւ։

Ա. Ղուլըղտին՝ Հազարյիսունևչորս Թոճին ապստամբեցաւ։

Ա. Ռաւուլն տասնևերկու Հազար մարդով. Հազար և յիսունևերկու Թոճին ապստամբեցաւ։

Ա. Այս Թաւուլոյ եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք։

Ա. Նահմատփաշայ. քսանհազար մարդով։

Ա. Անօղլի։ Ա. անփօլատօղլի ալեփաշայ։

Ա. Որին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք։

Պ. Օռօղլի. այս այն քօրօղլին է. որ բազում խաղէ ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն։

Պ. Զիրօղլի մօստաֆայբէկ Հազար մարդով. և սա ևս ընկեր է քօռօղլւոյն՝ զոր յոլով առ զիս խմէք իւր խաղին յիշեալ է։

Ա. Իւս մուստաֆայբէկ։ Ա. արաղաշ։

Պ. Ալուշնասիպ։ Ա. Օղլայ սըղմազ։

Ա. Անդրի Թանիմազ։ Պ. Ասկապախան։

Ա. Ըփլախ։ Պ. Ռեասաքեաս։ Պ. Ռոլու։

Ա. Արաասհաթ։ Ա. Ղաջդանփիրի։

Այսքան ամէն ջալալիք է ինն որք ոչ հնազանդէ ին Թագւորին. և ոչ՝ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին. այլ աշխարհաւերք և աշխարհա կործանք։ ուրև լսէին զհամբաւ շինուԹե, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպ տէին։ և զչինուածսն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից կոստանդնուպօլսի՝ մինչև յերևան քաղաք։ Ի բաղդատոյ մինչև ցդա մուրղափուն։ զսպիտակ ծովու մէջն և ըզ

սեաւ ծովու մէջն. այսոքիկ եղերքս՝ զորս ծրա գրեցի. զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւերը և յապականուածն դարձուցին։

Ւ. Եւ յայսմանէ պատճառէ հողագործք և երկ րագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյենայեր կիւղէ և յահէ սոցա փախուցեալք ՚ի բերդս և ՚ի դղեակս. և ՚ի փապարս լերանց ամրա նային. և ոչ կարէին առնել զերկրագործու թիւն. վն որոյ սերմանել՝ և հնձել՝ և կալ՝ և կուտ բարձաւ ամենևին։ և սկսաւ լինել սղու թիւն հացի և ամենից ուտելեաց իրաց և ոչ գտա նիւր. և թէ ուրեք ուրեք և գտանիւր. և այն ևս ծանր գնոյ։ Ւ. Եւ ՚ի ժամանակի սղութես այս եկն մարախ յընդհանուր միջերկրայս. և ե հար միանգամայն զամ՝ երկիրս. և եկեր զխոտ՝ ղերայս՝ և զայլ կանաչ՝ որ երևիւր։ Որոյ հետ գայ եղև սով սաստիկ. և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի։

Ւ. Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց. և գնացին իւրաքանչիւրոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կեցոյ և ապրելոյ։ ոմանք յուռուսաստան. ոմանք ՚ի բուղդան. ոմանք ՚ի լեհ. ոմանք ՚ի կափայ. ոմանք ՚ի ծովն զերան պոնտոսի. ոմանք ՚ի Թաւրէզ և յայր տաւէլ՝ և ՚ի գաւառս սոցա։ զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յաստացեալ գաւառս. յայս ժամանակիս և յայսմանէ պատ ճառէս են գնացեալք։ Ւ. Շահաբաս Թագ աորն՝ որ ՚ի Հայոց ազգէն զայնքան քրիստոնէ այսքշեաց և տարաւ յերկիրն սպահանայ և ֆահ րա պատուս. նոքա մինչև յայս ժամանակիս են ի եկեալ՝ զոր շահն տարաւ։

Ւ. Ըստ ասացելոյս ՚ի ժամանակի սովուս՝ որք ցրուեցան և գնացին, գնացին։ և որք մնա ցին

ցին ՚ի միջերկրեայս. ՚ի չգոյէ հացի սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս՝ և զոչխարս։ և ՚ի սպառել ըզոչ կենդանեացն՝ սկսան ուտել զմեր կենդանիս՝ զձի, և զջորի, և զեշ. և զայլ անուր կենդանիս. մինչև զշուն, և զկատու՝ և այլ ինչ որ ՚ի ձեռս անկանէր վն կարեաց կերակրոյն։ Այս իբրև այլ առաւել սաստկացաւ սովն. սկսան ուտել զմեռեալս՝ և ոչ թա զէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր խիղճ աշխարհի սովն։ Այս բազումք ՚ի բազում տե ղիս զկենդանի մարդն ըմբռնէին և ուտէին։

Որպէս պատմեցին մեզ Թէ յերկիրն արա բադու ՚ի գիւղն որ կոչի ուշական. այր ոմն արա բեալէր վհՀ ինչ իմէջ տան իւրոյ Թաքնա բար. որ զայր զարիպական խաբեալ բերէր ՚ի տուն իւր և սպանեալ պահէր ՚ի վհՀն յայն՝ և օրըստօրէ սակաւ սակաւ ուտէր. զոր յետոյ իմացան բնակիչք գեղջն՝ և հալածեալ փա խուցին ՚ի գեղջէն։

Այս ՚ի գիւղն՝ զոր ըզնի ասեն. Ձանապար հորդը ոմանք ընդ այն անցանելով տեսանէին զի ծու խ ելանէր ՚ի տանէ միոյ. և նիշ առա բեալ գնացին ՚ի տունն՝ տեսին զկանայս երիս ՚ի տանն՝ որք կառուցեալք էին զպոյան և էփէին զկերակուր. իբրև ՚ի վերառին զխուփն՝ տեսին զձեռս և զբազուկս և այլ միս մարդոյ. զոր էփէին զի կերիցեն։ Իբրև բռնադատեցին զկանայսն խոստովանիլ զայն՝ յայնժամ նոքա զտոյգն ասացին. Թէ վասն Հարկի սովուն՝ զի ոչ ունիմք զինչ զի կերիցուք. վն որոյ զանցորդ մարդիկս խաբեալք բերեմք ՚ի տուն՝ և սպանեալ եփեմք և ուտեմք։

Այլև յարզրում քաղաքի սոին օրինակաւ այսպիսի գործ եղեալ էր՝ զոր տեսօղքն պատ

մեցին ինձ. Թէ կանայք չորք միաբնեալք էին. և՝ ի տան միում արարեալ ինքեանց բնակու-թիւն, որ մի և երկու՝ ի նոցանէ աւուրց յաւուրս եղեալ արտաքոյ շրջէին և խաբէին զմարդիկ պատրողականիւք բանիւք՝ և բերեալ՝ ի տուն, ըմբռնեալ զմարդն սպանանէին. եփէին և ու-տէին։ Այլ եղև՝ ի միում աւուր զի զայր ոմն տա-բան՝ ի տուն. և մինչ կամէին ըմբռնել զայրն՝ և այրն իմացեալ զնորհուրդս նոցա փութանակի՝ ի քաղ ոստեաւ՝ զերծաւ՝ ի ձեռաց նոցա և փախու-ցեալ էլ՝ ի տանէն։ և գնացեալ առ փաշային, որ իշխան էր քաղաքին՝ ծանոյց նմա. և իշխանն հրամայեաց զինուորսդ գնալ ընդ առնն՝ և զմ բռնել զկանայսն. և զինուորացն գնացեալ ըմբռնեցին զկանայսն։ ապա սկսան խուզել զտունն. իբրև մտին՝ ի ներքսագոյն տունն, տեսին քսանևչորք դլուխք մարդոյ՝ դորս ապա նեալ և կերեալ էին. և զինուորքն բռնադա-տեալ խոշտանկէին զկանայսն ասել ստուգիւ զգործս իւրեանց. և նոքա պատմեցին Թէ վե-ցետանկի սովուս խաբանօք բերեմք զմարդիկս աստ՝ և սպանեալ ուտեմք։ և կալեալ զկանայսն տարան առ փաշային. և փաշային հրամայեաց սպանանել զչորեսին կանայսն։

Այս մերձ բասենոյ երկրին է գաւառ մի. զոր ոմն անունն խալխալի ասեն՝ որ այժմ անբնակ է գաւառն այն. ուստի էր այր ոմն Հաւատա-րիմ և բանագէտ. սա պատմեաց Թէ՝ ի ժամա-նակս այս սովուս՝ տղայք երկուք առ մեզ բնա-կէին՝ զի մեզ գոյր ցորեան ուտելոյ։ և եղև օր ինչ, զի ոչ երևացան տղայքն. և եկն առ իս կար-ծիք՝ Թէ մի գուցէ անկան՝ ի ձեռս մարդակե-րաց սոցանց՝ և կերեալ եղեն. և վն աՀի մար-դակերաց սոցանն առի ընդ իս սրս երկուս և-

բան

քանզի և ես երկնչէի միայն գնալ առնուա. և գնացի ՚ի կարծեցեալ տեղին, ուրէին Ժողո վեալ բազում սովալուկ մարդիկք արք և կա նայք՝ յորոց գոյր կարծիք մարդակերու Թե։ իբրև մտի ՚ի տունն հարցի ցնա՝ և նոքա յուրաստ եղեն. և էր Թոնիրն ՚ի վառ և պոյտն իվը. յո բուսմ եփէին զկերակուր. և առեալ իբաց զխուփն հայեցայ իմէջ պուտկին՝ տեսի զոտն տղային. ապա եկեալ եղբայր տղային ասաց՝ Թէ զեղբայրն իմ մորԹեցին և կերին. և այդ նորին ոտն է։ և ես յետ բազմաց կսկծանաց՝ առեալ զմնացեալ տղայն տարայ ՚ի տունս մեր՝ որ ապրեցաւ։ Այլև ասէն այր ասէր՝ Թէ տեսի զի երկու պառաւ կանայք՝ որք կալան զփոքր աղջիկ մի. խեղդեցին և կերին. և ես զայս ծանուցի սարգիս անուամբ առն միոյ. և նա սպան զերկոսին պառաւսն։ Այս բազումք ՚ի բազում տեղիս այսպէս արարեալք էին. որոգեալք զմարդիկ և կերեալք։

Այս ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլև արք և կանայք զզուակս իւրեանց կերեալք են։ ոմն լուսաք Թէ յերկիրն սեբաստիոյ ոմանք զզուակս իւրեանց կերեալք են։ Այլև յայլում գաւառի կին ոմն զիւր զերեկուս որդին և զմի դուստրն կերեալ է։

Այս ոմանք Հարկեալք՝ ՚ի կարեաց սովուն էլա նէին՝ և շրջէին ՚ի շինամիջին և մե պակասեալ զօրու Թե Ձնշեալ՝ և մաշեալ, և ընդոլեալ ոչ կարէին գնալ, անկանէին ՚ի շինամիջին և յանցս Ճանապարհաց և յանկիւնս որմոց մանչէլով և նուաղով մեռանէին։

Այ ոմանք եկեալք միաբանէին արք տասն՝ քսան՝ և երեսուն և գնային ՚ի գեղջ ՚ի գիւղ և յերկրէ յերկիր Ճանդրել զկերակուր և ոչ

կարէին գտանել, ղի եբրև զՅառաք պատու հաս իվր ընդհանուր աշխարհին սփռեալ էր սոքին, ըստ բանի մարգարէին կոչեաց սով յերկիր նոյ և զամ զօրութեն հացի եբեկ։ Եր զի ոմանք'ի նոցանէ հասանէին'ի չէնս, և եր զի մեռանէին։

Այս'ի դիւականց մեռելոցս այսոցիկ կերին վայրն գաղանք և անընդելք կենդանիք, մանաւանդ թէ գայլք։ և ուտելով զմեռեալս, սովորեցան և զկենդանի մարդն ևս ուտել՝ զոր մարդագայլ ասէին։ և այնքան սովորեցան և համարձակեցան գայլք իվր մարդոյ մինչև զկէն դանի մարդս պատառէին և ուտէին։ Այս յայսմ պատճառէ երթն և եկուածն գնացից ձա նապարհաց խափանեցաւ յահէ մարդագայ լոցն։ Այնքան վատահացան գայլք իվր մարդոյ՝ որք գայլն իմէջ չէնէն և մտանէին'ի տունս, որում և պատահէին եթէ յանկողնի ննջեալ տղայն։ և թէ իմէջ որորոցի, և թէ'ի գիրկս մարցն, իվր արձակէին և բռնութէ կորզեալ'ի գրկացն և յորորոցէն յափշտակեալ փախչէին՝ և տարեալ ուտէին։ Այսմ գոր ծոյս տեսօղք յոլով գոյին՝ որք զնուրբան չնար տեսանէն պատմէին գործս զարմանա լիս և սարսուռելիս։ Որև այնմ ժամանակեան գայլատոռ մանկանցն բազումք գոն այժմ՝ որք եղեալք են արք կատարեալք և ծերացեալք, որոց'ի գլուխն և յերեսն և յայլ տեղիս մար մնոցն տեսանի սպի վիրացն պատառոտեալ և գիշատեալ՝ զոր արարեալք են գայլքն՝ որոց'ի հարցանէին մեր վասն գիշատելոց տեղեացն, պատասխանէին թէ գայլն յափշտակեալ տա րաւ զիս յուտել՝ և ժողովեալ արանց բազմոց ազատեցին զիս'ի բերանոյ գայլոյն։

Այս եղև սովս այս իմէջ երկուց մեծաց

Ծովուցն այսինքն սպիտակ Ծովուն, և սեաւ Ծո
վուն՝ ի մերձակայ գաւառացն կոստանդնուպօլ
սոյ մինչև՛ ի գաւառսն Թաւրիզու, ՚ի բաղդա
տայ մինչև՛ ի դամուրղափուն, այսքան եղեբայս
մեք ն եղև սուին և սաստկացաւ։ Այս եղև սկիզբն
սովուս ՚ի հազար և չիսունևհինգ Թուին, յո
րում ամի Թոյլ եր սուին և ոչ եր խիստ, իսկ՚ի
մուանեղն, հազար և չիսուն և վեց Թուին. և՚ի
հազար և չիսուն ևեօթն կարի սաստկացաւ. և
՚ի մուանեղն հազար և չիսունևուԹն, Թուլա
ցաւ. և՚ի հազար և չիսունևինն բարձաւ
քնաւին ողորմուԹքն Ա՛Ց ամենախնամողին՝
որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուոց իւրոց՝
և ոչ յաւիտեան պահէ զոխս, որում փառք
յաւիտեանս ամէն։

Յաղագս առման Քաղաքացն գանձայու և համախու։

ԻԵ

ՅԵՏ ԵՐԿՈՐԴՈՒ ԳՐՈՒԹԻՒՆ

Յետեան և դառնալոյ ջղալօղ լի սարդարին,
որ եկն ՚ի սօֆիան և պատերազմեցաւ ընդ
Պարսից և պարտեալ դարձաւ ՚ի համիԹ և մե
ռաւ։ Թէն Պարսից շահաբաս ամենեւին զօրօքն
իւրովք կայր՚ի Թաւրէզ քաղաքի զձմեռն զայն՝
իսկ՚ի չնչել հողմոյն Հարաւոյ ՚ի ժամնակս գար
նան ժողովեաց զամն զօրս իւր՝ և գնաց իվր զօ
րացն ( )սմանցւոց՝ որք տակաւին էին ՚ի քաղա
քին գանձակայ՝ որ է գանձայ, յորում ամի էր
Թուականն մեր հազար և չիսունևհինգ, և՚ի
հասանիլն անդր շրջապատեալ զբերդն
նստաւ իվր։ և զերկիւղն ամ գրաւեալ ընդ իւ
րով հչխանուԹքն և պահէր՚ի խաղաղուԹե,
զհրամանն արարեալ իւրոց զօրացն մի զոք խուճել
և մի

և մի զոք բռնադատել՝ ի բնակչաց երկրին, ուստի լցեալ լինէր ամ պիտոյք նոցա մարդկանց և անասնոցն և ինքն շահն ուշ եդեալ գոր ծոյ պատերազմին՝ զի առցէ զբերդն պէսպէս հնարիւք։ երբեմն զսէրայ քարձրացուցեալ՝ ի վերուստ ծեծէին։ երբեմն՝ ի ներքուստ զյատակս պարսպացն փորեալ զնաղմն առնէին, և զայն ընուէին քարուքով և հրդեհէին, և զպատ բեսպն իվերատեալ ընդ երկինս ցնդէին։ և երբեմն սուտ երդումն և դաշն խաղաղուէ գրէր շահն՝ և առաքէր ամբջ բերդին, թէ դուք ամքն ձերով ընչիւք և ամենիւք ընտանեօք եկեալ գնացէք յաշխարհն ձեր՝ և մեք ձեզ ինչ ոչ մերանչեմք, մի այն թէ զբերդն տուք մեզ։ Յատկ զօրքն ()ամանցւոց ոչ տային՝ այլ երկայնա մտեալ համբերէին, և քաջութիւն պատերազմ մեալ դիմակայէին։ Յատկ Պարսիկք զօրքն ոչինչ կրէին վտանգ՝ կամ կերակրոյ կամ ցրտոյ և կամ ի շրջակայ թշնամեաց՝ և կամ յայլ երաց, այլ կայուն առանց պակասութեան և հանապազ պա տերազմէին։ Յս մինչ ետես շահն թէ սակաւ ինչ երկարի գործ պատերազմին՝ ձուլեաց ան դէն երկուս թօփս մեծամեծս հզօքս և ուժգ նաբաղխս, որոց՝ ի ձգելն կարի վլուցանէր զպա րիսպ բերդին. և սովաւ յոյժ վտանգ լինէր ()ամանցւոցն։ Յ վերջոյ ամի պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն ()ամանցւոց հայհոյեն շուրջ զինքեանք զի ոչուստեքէ գոյր նոցա օգնական՝ ոչ յիւրեանց շրջակայից քաղաքացւոցն և ոչ՝ ի դրանէ թագաւորին իւրեանց։ զի ջալալիք բաղումք կային համբ երկրին ()ամանցւոց՝ զորոց զանուճանան յանցեալ Ջաւախք յիշեցաք։ և նորա այնու էին պատասխեալ՝ այլև փաշային գանձայու անկեալ էր ՝ի պատերազմին՝ որոյ

անուանն

անուն էր զնջիլղան ալխաշայ։ այլև նոր ձու
լեալ Թօվին կարի վրդովեաներ զպարիսան։ վա
րոյ յամենից կողմանց ՚ի նեղ անկեալ էառուն
զբերդն Պարսից։ եբրև էառ շահն զբերդն
գանձակայ՝ տիրեաց ամի երկրին՝ և կարգեաց
անդէն իշխեցօղ զումն՝ որում անուննէր աղ
սալ մահմատ խան։

Այս մինչև ցայժմ առ ինքն ունէր շահն
զԹուրն ալէքսանդրու Թագաւորին կախէ
Թու զԹամրազն։ և այժմ արձակեաց զնա
գնալ յաշխարհ իւր Հայրենի, տուեալ նմա
պհրաման եշխանութեն տիրել իւրոյ Հայրենի
աշխարհին՝ և վարել զգործ Թագաւորու
Թեն իւրոյ։ Այլ կալ ՚ի միաբանութեն և ՚ի
հնազանդութեն Թագաւորութեն Պարսից։ և
Թամրազն գնացեալ ՚ի կախեԹ ՚ի հայրենիս
իւր վարէր զիշխանութեն Թագաւորութեն,
և կայր ՚ի հնազանդութեն Պարսից։

Ա՛յլև ամանք ասացին Թէ յետ առնլոյ շահին
զգանջայ։ կայեն ՚ի գաւառին գանջայու մահ
մետականաւ հաւատով ազգ մի։ զոր ինքեանք
կլ անուանեն, և զանուն այս եղիս ջեկիր
յու ասեն։ որք են դաւանութեբ և կրօնիւք
Օսմանցւոցն՝ զոր առնեն ասեն զպհրաման արար
վասն սոցա շահն Ժողովել զամենեսեան ՚ի մի
վայր ՚ի տեղի ինչ՝ որ էր տեղի հեղեղատի, որոյ
մուտանեղ էր՝ զոր պահէին Պարսկք։ և որբան
գեպ ՚ի ներքս երթայր լայնանայր։ և շուրջս
նակի բարձրութիւն։ յորմէ ոչ կարէին ելանել
և փախչիլ։ Հրամայեաց շահն զնոսա զամենե
սեան անդէն ՚ի սուր առաքել՝ զարս և
զկանայս՝ զծերս և զտղայս։ և մինչև ցմատաղ
մանկունս կոտորեցին, և բնաջինջ արարին։

Յայնժամ Թագաւորն շահաբաս յետ առնլոյ զգ
զերդն

ղբէրդն գանձակայ և տիրէլոյ ամի երկրին, ըսկ սաս Ջանապարհ ելանել և գնալ ՚ի կողմանս վրաց ՚ի քաղաքն Թիֆլիս։ Եաս ընդ իւր և զմնացեալսն ՚ի զօրացն և յաղգէն ( )սմանցւոց՝ որք մնացին ՚ի կոտորմանէ բերդին։ Խաբեաց զնա պատրողականիւք բանիւք տուէալ նմ յոյս անուն ասելով՝ եկայք դուք զկնի բանակի իմոյ, զի մի գուցե երթ-զակք մարդիկք ինաս ինչ առ նիցեն ձեզ, այլ ՚ի մերոց զօրացս կարգեցից ձեզ զօրս պաշտպան զի խնամելով և հովուէ լով տանիցեն զձեզ մինչև հասուցանիցեն ՚ի սահմանս երկրին ձերոյ։ և այսպիսի պատրա նօք առեալ տարան զնս ընդ իւր։ և հասեալ ՚ի գաւառն ախատևու բանակեցաւ ՚ի ձորն՝ զոր կոչէին ձոր ասեն իվ ջրոյն։ և անդէն հրամայեաց զօրացն Պարսից կոտորել զնմանս մնացեալսն յաղգէն ( )սմանցւոց՝ և աւար արա բեալ զնչս և զստացուածս՝ և զկանայս և զմանկունս նոցա։ և արարեալ կատարեցին ըստ հրամանաց շահին զամենայն։

Կոտայսորիկ շահաբասն ամիս բանակաւն իւրով չոքեալ յերկրէն կոչէին գնաց ՚ի քա զաքն Թիֆլիս, խաղաղութեբ եմուտ՝ և խաղա ղութեբ երեալ գնաց զի միաբանութեն էր ընդ Պարսից և ՚ի ոչ։

Երեալ շահն ՚ի Թիֆլիսու գնաց ՚ի գաւ առն գեղամայ։ և բանակեցաւ անդէն բանակ արբունի։ և ինքն շահաբասն ինջավանեցաւ ՚ի տան մելիք շահնազարին՝ որ էր ՚ի գիւղն մա զրայ՝ բնական ՚ի նոյն գեղջէն։ Այս էր մելիք շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիս տոնեայ։ Ինչման հղօր և փառաւոր։ որ արար զհիւր ընկալութի շահին ոչ վայելէ թագաւո րն՝ և էր ինքնս բարեկամ և մտերիմ և ար

գոյ

գոյ առաջի թագաւորինս որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացու ցեալ խնդայեաց. և պարգևեաց նմա զիշխա նութիւն մեկնբուրթ գաւառին. և այլևս գաս տակերաս և գեղորայս նմա և եղբարց նր։ և զհաստատուն նոսա գրեաց և կնքեաց թագաւո րականաւ կնքով. և ետ նց զի անփոփոխ լինի ժառանգութիւնն այն նց և զաւակի նց յաղգէ յազգ մինչև յաւիտեան։

Եւ անտի յարուցեալ կամեաւր գնացին ք՝ հաս ի Թաւրէզ ամենին զօրօքն իւրովք, եկաց մինչև եմուտ ի միւս տարին. յորում էր Թոռն կանն մեր հաղար և յիսուն և վեց. ապա առեալ զամ զօրս իւր գնաց իվերայ չամախոյ՝ և նստաւ իվերայ բերդին, շրջապատեալ և պաշարեալ զնա։ և ոչ պատմեցաք վասն գանձոյն՝ նովին օրինակաւ պատերազմեալ ընդ չամախոյ և առ զնա յ( )ամանցւոց և զզօրսն ( )ամանցւոց սրով կոտորեաց. և զընտանիս և զինչս առաքեալ յափշտակեաց։ և կարգեաց ի նմա իշխան զգ զ լինլար խանն. և ինքն չուաբարձեալ բանա կան իւրով գնաց ի Թաւրէզ։ Այս ի մտանէն ի Թոռնականն հաղար և յիսուն և օթն. գնաց շահն ի ապահան քաղաք։

Թե որպիսի պատճառանօք կոչեաց շահաբաս զԹագաւորն Վրաց առ ինքն. և հնարիւք գրաւեաց զնոսա։

Ի։

Ի ԳԱՒՈՐՈՒԹԵՆ ՇԱՀ ԹԱՀՄԱՍՊԻՆ՝ որ էր Թագաւոր ազգին Պարսից։ և եղև զօրանալ այս շահ Թահմասպիս և բռնանալ իվ ի այլոց ազգացն՝ որք չէին աղգին Պարսից և ետու զպատճառսն ի Թա

'ի Թագաւորաց նշ: 'ի Թագաւորէն Թիգլաթ
սար՝ որ էր մեծ սիմնխանն՝ զգուստորն եւ զեղ
բայր նը: և 'ի Թագաւորէն կախէ Թուս. որ էր
աղէքսանդրն՝ զորդի նորա, որում անունն էր
կոստանդին: և գոյին այս աղէքսանդր Թա
գաւորիս այլեւս որդիք երկու՝ դաւիթ՝ և գոր
գի սոքա երկոքինս կային առ հայրն իւրեանց
յաղէքսանդր: Եւ ակ կոստանդինն, որ տուեալ
եղեւ պատանդ Թագրիին Պարսից շահ Թահ
մազին՝ մնաց անդէն՝ և անաւարտնաց, մեծացաւ՝
և եղեւ այր երեւելի 'ի դրան Թագրիին. քանզի
դաստիարակեցին զնա 'ի քրիստոնէականաց հաւա
տոցն 'ի կրօնս մոլար առաքնորդքն: Վերա
շահԹահմազն՝ և Թագրեաց որդի նորա շահ
խամայէլն տարի և կէս՝ և սպանին զնա: յետ նը
Թագրեաց եղբայր նորա շահ խուտաբանտայ
ենն տարի: յետ սը Թագրեաց սորին որդին աշ
խարհաւերն շահաբաս: և կոստանդինս այս
մնաց մինչ 'ի ժամանակս այս շահաբասիս, և
յորժամ եկն շահն 'ի Թաւրէզ՝ և 'ի նախ
ջուան՝ և յերեւան. և գրաւեաց զնա ընդ իւրով
իշխանութեն, այս կոստանդինս ել շահինէր:

Եւ յաւուրս յորս էր շահն յերեւան և
պատերազմէր ընդ Օսմանցիսն՝ որք կային
եմեջ բերդին երեւանու: Հարուստն 'ի խորհ
ուրդս չարեաց շահաբաս խորհեցաւ զի և
զԹագրեան վրաց ածցէ առ ինքն, վ՛ որոյ առա
քէ նշ կոչնականս զ'ի նոցանէ տուեալ պա
տանդն՝ յորոց մի էր այս կոստանդինս՝ զոր ա
ռաքեաց կոչնականս իւրոյ հօրն աղէքսանդրի:
և զհանիս Թահմազղուլին, որ էր եղբայր ա
Թաբէ կին, զոր նախագոյն յիշեցաք՝ առաքեաց
կոչնական գօրագլ Թագրեին Թիֆլիսու: և գօր
գի Թագրեայ էր որդի մեծ սիմնխանին, որ

յետ ըմբռնման սիմոնիանին, զայս գօրգիա կարգեցեալն ՚ի տեղի նր Թագուր։ Իսկ շահն, որ առաքեաց կոչնականս առ Թագուրցն ՚ի ըստ՝ յիշեցոյց նոցա և ասաց, եթէ Հաստատուն կայք եւ ՚ի կանխագոյն դաշանցն, զոր նախնեքն մեր պայմանեալ Հաստատեցին, պարտիք աշխատել՝ և գալ յօգնութեն մեզ՝ որ կամք ՚ի պատերազմիս Թշնամեաց։

Իսկ Թագուրքն ՚ի ըստ առ այսմ գործ վարա նեցան, քանզի ոչ կամէին գալ, քայց զկնի բազմի խոկման և մտածութե յանձնառին զգաշն, ոչ յիւրեանց կամաց՝ կամ յանգիտու թե, այլ յանձարակութե։ վասնզի ոչ էն ինքնակալք ՚ի ընդդէմ կարիցեն կալ Սամանցւոց և Պարսից՝ այլ էն տակաւք և անզօրք։ վն որոյ Հարկէ զի միոյ ՚ի սոցունց ընդ ձեռամբ լինին։ Պատաջ ընդ ձեռամբ էին Պարսից ՚ի ժամանակս շահ Թահմազին. իսկ յալաքաշէն, որ էր Սամանցւոց սարդար՝ եկեալ կալաւ զքաղաքն ՚ի ըստ՝ և չինեաց ՚ի նմա բերդ որայս՝ և կարգեաց ՚ի բերդան ենկիչարիս. քանզի փա խոյց զսիմոն խանն։ և յետոյ միւս զօրավարն Սամանցւոց ջաֆար փաշէն եկեալ ըմբռնեաց զսիմոն խանն՝ և առաքեաց առ խոնդքարն՝ և անդ սպանին զսիմոն խանն, և զԹոռն նորին. և այսպիսեաւ պատճառաւ իբաց կացին ՚ի ըստ ցիք յազգէն Սամանցւոց։ Իսկ արդ շահն պա հանջէ ՚ի սոցունց գալ ՚ի հնազանդութե. և պատճառս յոդէ զկանխաւ դաշնադրութենն՝ որ ՚ի ժամանակս նախնեացն եղեալ է։ և սոքա ոչ թէ վն դաշնադրութեն՝ և ոչ թէ յանգի տութե՝ և ոչ թէ կամաւ՝ այլ յանձարակու թե. զի մի գուցէ շահն աւարտեալ զպատե րազմն Սամանցւոց. դառնայցէ իւրն ՚ի ըստ

խորհեցան այնու հաճել զկամս նը՝ զի թերևս այնուհետև դարձուսցեն զնա յինքեանց. զի մնայ ցեն ՚ի խաղաղութեն. և զայն ոչ գիտէին թէ յապագայն նորին ձեռամբն է լինելոց կո րուստ և զրաւ ինքեանց՝ և ազգին հւրեանց։

Ա.րդ երկոքին Թագրդա ՚ի ըսոյ աղէքսանդր և գօրգի։ելեալ երկիւղ երևան տեսանել զշահն Իսկ շահն՝ ոմն բնաւորեալ գոյ յապգին նոյ խո րամանկութեն. յառաջագոյն սիրով և մեծա րանօք ընկալաւ զնա, և խնդայեալ պատուհաս՝ զի հաճեցուսցէ զմիտանոյ և զտեսողացն յինքն. և խաղաղութեբ պահեաց մինչ որ էառ զը բերդն երևանայ։

Եւ ապա ըստ դիւթական և ըստ կախար դասաց արհեստին իւրեանց դեղ մինչ մահա բար ջամբեցուցեալ է գօրգի Թագրին զի յետ սուղ մինչ աւուրց մեռցի. և գօրգի Թագաւորս առ ժամուն ոչ է գիտացեալ զայսպիսի հնա րակերտութիւս, զոր առ ինքն ներգործեալ է շահն։ և զինի այսմ իրագործութեն սիրով և պարգևօք արձակեաց շահն զգօրգին գնալ՚ի տեղի իւր։ Եւ նա եղեալ յերևանայ գնաց, ՚ի սակաւ աւուրս կեցեալ մեռաւ. ՚ի տիխնս ՚ի քաղաք իւր, ըստ ներգործելոյ և ըստ բաղձա նաց շահին։ Եւ ազգն և իշխանք՝ որք տեղւոյն էին՝ Թագորեցուցին ՚ի տեղի գօրգոյն զորդի նո րին զլաւասակ մանուկ տիօք։ արդ զրաւ գօր գի Թագրին այսպէս եղև ներգործութիւբ շահին։

Իսկ զաղէքսանդր Թագրին կալաւ շահն առ ինքն և ոչ եթող գնալ. այլ ընդ իւր տարեալ շրջեցոյց այսր և անդր. և խնդրէր ՚ի նմանէ պատանդս։ և սակս այսորիկ աղէքսանդր յան հնարս անկեալ եթէ կամաւ և թէ յակամայ բե րեալ զթոռուն իւր, որում անունն էր Թամրազ՝ մանուկ

մանուկ տիօք եւս ի պանտանդս շահին, ապա շահն հրամանեաւ նմա դնալ։ եւ այնքսանդր առձակեալ ի շահէն գնաց ի տեղի իւր։ եւ Թուն նորին Թամրազ մնաց ի դուռն շահին։ եւ Թամրազս էր որդի դաւթին որգւոյ այնքսանդրիս։

Սկիզբն եւս պատմութեան դատաստանութեանն շահաբասին, զոր միւսանգամ արար ընդ Թագաւորին Վրաց։

Ա։



ՆՐՈՑ ԱՄԱՑՆԱՒ։

Թագաւորն կախէ Թուս այնքսանդր եւ իւրով կամաւն տուեալէր զԹագուրուԹինն իւր որգւոյ եւրուս դաւԹի, եւ դաւԹին վարէր զնշխանութիւն ԹագուրուԹինն։ Լսակ միւս որդին այնքսանդրու գօրգի ոմանցաւ ընդ այն՝ եւ սպան զեղբայրն իւր զդաւԹի՝ զի ինքն լինցի Թագաւոր։ եւ այնքսանդր հայր նոցին կենդանի էր՝ ոչ եւս զԹագուրուԹինն գօրգոյ՝ այլ յինքն գրաւեաց՝ եւ ինքն վարէր զԹագաւորուԹինն։

Ո այսու ժամանակաւ խորամանկն ի հնարս չարեաց շահաբաս, խորհեցաւ զնորին հնարս կործանման եւ երկպառակութիւն արկանել ամէն ԹագուրուԹինն քրիստոնէից։ կոչեաց առաջի իւր զկանխաւ ասացեալ զուրացօղն կոստանդին զորդին այնքսանդրիս՝ որ աւ շահն էր, եւ խօսեցաւ ի սիրտ նոր ըստ ախորժակաց նոր եւ ըստ հաճոյից, եւ ասաց նմա։ Որդեակ ընդ քեզ զօրս ըստ բաւականի ի մերոց գօրացս՝ զօրս տամ քեզ՝ եւ գնա յերկիրն քո հայրենի, եւ հնար լեր սպանցես զհայր քո զայնքսանդր՝ եւ զեղբայր քո զգօրգի, զի դու լինիս Թագաւոր ի տեղի հօրդ՝ եւ վարեսցես զքո հայրենի Թագաւորութիւնն։

Այլ այժմ եթէ խմէք մերոյ աղգիս և թէ անդ խմէք ։ Քանզ աղգին, մի ձևացուսցես սակս գնալոյդ քո թէ գնամ յաշխարհն իմ զի անդ կացից, այլ ձևացուսցես զքեզ և երևեցի պատճառ զայս խօսեսցիս առ նմա՝ զի քեզ քեալէ զնա շահն այսու զօրօքս՝ զի գնացից՝ ի շամախի առնուլ զնա, և՝ ի ժամանելն քո յերկիրն կիր քո՝ որոք և յաջողեսցի քեզ զայն արասցես, եթէ սպանումն հօր և եղբօր քոյ՝ և թէ առումն շամախու։

Յորդ՝ զայսպիսի պատուհէր ընկալեալ օձն դարանակալ, ելեալ զօրօք գնաց յերկիրն կախէթ առ հայրենեաւր այրէքսանդր, և յայնմ ժամու ոչ կարաց դաւել՝ զի կարծ ինն անկաւ՝ ի միտս ։ Քանզ տեսանելով զանուղղայ գործս նորա, որ և ինքն՝ ի նմին ժամու պատրուէս կեաց զմերեալ խորհուրդս սրտի նորոյ։ և յաղագս զինքն ուղիղ և անսենգ ցուցանելոյ, և հաճելոյ զմիտս ։ Քանզ, ՝ի զօրացն հօր նա քոյ յաղգէն ։ Քանզ յորում զօրս էառ ընդ նա և ելեալ գնաց հնի՝ շամախոյ։ և աղգն ։ Քանզ յոյժ կամէին զկորուսանել, մերոյ՝ ի ժամ պատերազմին յետ յետոյ կային և ոչ հաւատարմաբար պատերազմէին, զի գուցէ յայնմ պատերազմի ձեռամբ ()ամանցւոցն լինի կորուսանել։ Նոքա զայն կոստանդին ծանեան զայս երակութի յոգի նա, և զայն ևս գիտեր թէ զօրքն Պարսից ոչ կարէ յաղթել զօրացն ()ամանցւոց, և մինչ՝ ի խմբել պատերազմին մարտնչելին ընդ ()ամանցւոցն, Թողեալ զքեաց զգործ պատերազմին և փախեաւ դէպ զօրուիղ յաշխարհն Պարսից՝ և գնաց առ շահն։ և ()ամանցիքն առեալ նմա զնացեալ զօրսն Պարսից ի պատ կոտորեցին զնա, և աւար հարին զամ ինչս նոցա։

Նոքա

Իսկ շահն կրկինագամ ետ զօրս կոստանդնին երբև երեսունհազար. և կրկին առաքեաց՝ ի Հայրենի յերկիր իւր նովին դիտաւորութիւն։ և երբև էհաս կոստանդին՝ ի հայրենի յերկիր իւր, ձեւացուցանէր զինքն երբև զղջացեալ յուրացութենէ, և կամի վերստին դառնալ՝ ի քրիստոնէութեն, վասն որոյ երբ զբարե պաշտօն յօժարեցաւ սրտիւ՝ ի չրջագայել յեպիսկոպոսից և՝ ի վանորայս։ բայց, և այսու հնարս իւր ժողովեաց զբազումս անօթս յեկեղեցեացն անտի, զխաչ՝ զկնի՝ զբուրվառ՝ և այլ զորինչ կամեցաւ և յետոյ զամ զանօթսն զայնոսիկ խորտակեաց, և բաշխեաց առաքելոց զօրացն Պարսից՝ որք ընդ իւր եկեալ էին։ Երբև զայն տեսին աղքն։ բայց՝ ի սիրտ և յոգի խոցեցան՝ և իսկոյն կամեցան բառնալ զնա՝ ի կենաց. և խոր հուրդ արարեալ ընդ աղէքսանդրի հօր նր զի սպանցեն զնա. իսկ աղէքսանդր յասպազէր յայս գործ, և տակաւին մեռեալ մարժէր վն կատար մանն էրիցն։ և մինչ աղէքսանդր յայսմ խոհմանն կայր՝ յայտնեցաւ այս խորհուրդ կոստանդնէ, և կոստանդինոս փութացաւ նախաժամանն և սպան զհայր իւր զաղէքսանդր՝ և զերբայր իւր զգօրգի, և՝ ի ձեռն իւր գրաւեաց զիշխանութենն, և բռնացաւ իվ ի երկրին։

Հետայսորիկ դաբձեալ գումարեաց կոստանդին զզօրան իւր, և զերկրին՝ որ յազգէն։ բայց, և նոքումբեք երեալ գնաց իվ ի քաղաքին շամախու։ երբև աւուրց ինչ ձանապարհ գնացին, յայնժամ միաբանեալ զօրքն։ բայց՝ մինչ զձանապարհայն գնային՝ յարեան իվ ի կոստանդնէ սրախող խող արարեալ կտոր կտոր յօշատեցին զնա՝ և բարձին զերան՝ ի մէջ։ Իսկ զօրքն Պարսից՝ որք ընդ կոստանդնու եկեալ էին,

աստիճ խոժոռեալ ընդ այն, կամեցան յառնել ի պատերազմ ընդ զօրացն ։։ Եւ ասէ Նահ զօրքն ։։ Եւ ասէ ցուցին զԹուղթ ինչ գրեալ ի Թէ՛ ի շահէն առաքեալ առ նա առնել զայն, որով պատասխանեցին ։։ Եւ նայեցին Պարսից Թէ հրամանաւ շահին արարաք զայս, և ապա Թուլացան կողմն Պարսից՝ և ոչ պատերազմեցան, այլ ցրուեալք՛ ի միմեանց գնացին յաղգն իւրեանց և՛ ի տեղիս։ Եւ եղև առա ջինն և երկրորդ գալն և սատակումն կոտանդնեա այսորիկ՛ ի Թուականութեե մերում Հա զար չիսուն և չորսին։

Նահ զնչխանութեե Թէ Թշգրութեե կախեե Թու ընկալաւ չիւր հրամանն Հարսն ածէքսանդրու կինն դաւԹի, և այս յիշագս երկուց պատճառաց։ Նախ զի այնպէ կամեցան իշխանք աշխարհին, զի կինն էր դաւԹի, որում տուեալէր ածէքսանդր զԹշգրութեե։ Եւ երկորդ, զի մայր էր Թամրազին՝ որ էր մնացեալ ժառանգ Թշգրութեե, իբրև զառանդապահ պահելով զԹշգրութեե որդւոյիւրոյ Թամրազին՝ որ տակաւին՛ ի պանդանդի կայր առ շահն։ որպէս զկնի առնման բերդին գանջայու ոչ յառաջագոյնն նշա նակեցաք առաքեաց շահն զԹամրազ՛ ի կախեե Թ՝ որ եկեալ Թշգրեաց՛ ի տեղի Հարց եւրոց։

Եւ պատճառ առաքելոյ Թամրազին՛ ի կախեե այս է, զի շահաբանն յորժամ եւրով հնարաւորիւ ներգործուԹեե ապանանել եաս զպապն Թամրազին երեքին որդւովքն նոր երեք ձեռօք, և ինեց տեղինն ուռայն՝ և Թամրազա կը ժառանգ տեղոյն՝ և կայր առ շահն՛ ի պանդանդի, մինոյ զնաց առաքեաց։ Եւ այլ քաջգիտեր շահն՝ զի Թէ յաղգէն Պարսից առաքեացե իշխող աշխարհին կախեեԹու ոչ ընդ

ընդունին իշխանքն կախել Թուռ, վ՚որոյ զթամ
բազում առաքեաց։

Պատմէ Թէ և պատճառ աւերման աշխարհին Վրաց. և
մահուան Լուսաւոր Թագաւորին. որ եղև Ձեռամբ
առաջին Շահաբասին։

ԺԲ։

ՅՈՐԺԱՄ ԴՐԶԱՒԻ գօրագլխին Թագաւորին | րոպ յերևանայ՝ և գնաց
ցեալ հ՚հաս՚ի Թիֆլիս՝ ոչ ապրեցաւ.
այլ փութով մեռաւ. քանզի դեղեալէր
գնաց շահաբասն ոյզ՚ի վեր անդր պատմեցաք։
| Իսկ իշխանքն | րոպ կարգեցին՚ի տեղի գօր
գլխ Թագուհին զնորին որդին Թագաւ՚ որում ա
նունն էր լաւասափ՚ի տիս տղայութեն։ | Եւ եղև
զի հրամանաւ լաւասափ Թագուհիս կարգեցաւ
այր ոմն իվր՚ քաղաքին Թիֆլիսոյ՚ի գործ մով
րովութեն. որում այժմտարու՚ղայ ասեն. և
էր մովրով կարգեալ այրս, այր հանճարեղ բա
նիւ՝ և կորովի խորհրդով. և խելամուտ՚ի
գործս իւր. այլև հսկայաձև՝ ուժգնդակ՚ քաջ
պատերազմող՝ և անպարտելի ախոյեան. որ՚ի
կռուին յորում միջնանէր՝ զմիւս ներհակ կռուին
յաղթէր. և զընդդիմակայ զօրսն իբրև զբան
ջար կոտորեալ ընդ երեսս դաշտաց Թափէր.
որոյ քաջութեին յառաջի կայդ՚ի բազում տե
ղիս լինի յիշեցեալ յորոյ զհաւատին իմանաս։
| Այլ այրս այս մովրով՝ ոչ էր ինքն ազնի որդի,
և կամ իշ խանազուն՝ և յերևելի յազգէ՝ այլ՚ի
հասարակ և՚ի խառնարհ ազգէ՝ զոր ազգն | րոպ
գլխի ասեն։ | Այր և քոյր մի այս մովրովիս
նորահաս կոյս՝ չքնաղ և գեղեցիկ՝ բարեսե
սիլ և բարեյօդ դիրք մարմնոյն և հասակին։

Ասկ Թէ՛ւբրն լաւտասափ զարգացեալ եհաս ՚ի չափ հասակի հնգետասան ևվեշտասան ամաց աւելի կամ պակաս. յորում ժամանակի շաղ ժուռն ցանկական մասին զօրանայ ՚ի մարդն՝ և ընդ իւրով իշխանութ՛ գրաւեալ յածե ցուցանէ։ ՚Ի սոյն ժամանակի Թէ՛ւբրն լաւտասափ հաճեալ ՚ի քոյրն մովրովիս մոլեգին շաղաչարութ՛ սիրէը զնա՝ և խաղայր ը՛ նմա ՚ի ծածուկ. բայց ոչ էին զուգաւորեալք. այլ էին կոյք երկոքեանն լաւտասափին և աղջիկն։ Ա՛ւ գործս այս Թէպետ ՚ի ժամանակս ինչ մնաց ՚ի ծածուկ՝ այլ յետոյ յայտնեցաւ. ըստ հրամանաց Ա՛ն, Թէ ոչինչ է ՚ի ծածուկ որ ոչ յայտնեսցի. որպէս յետոյ եհաս յականջս մովրովին լուրս այս։ Ա՛յլև ոմանք՝ որք էին նա խանձաւորք և ոխակալք ընդ մովրովին. որ գիք չարեաց և յուզողք խռովութ՛ց. յիշեցին զայն առաջի մովրովին, և երեսածածանք արարին նմա. և մովրովին յայտնի պատճառէ վշտացեալ ոգւով չափ և Թախծեալ սրտիւ. զմահ անձին խնդրէը և ոչ գտանէր։ Ա՛ւ զկնի բազմաժամանակեայ տրանջանաց, որ ՚ի ծածուկ. ապա յայտնի և համարձակ ընդ ամենս խօսէը, և ասէը. Թէ ես սպանելոց եմ զլաւտասափ. քանզի ոչ կարեմ տանիլ զայսպիսի նա խատինա՝ զոր ընդ երեսս իմ ասէն. զի ամ Թալի աւտակ եղէ իմ ջ աշխարհիս։ Ասկ իշխանք և մեծերիմք Թէ՛ւբրին լաւտասափու իբրև լսէին զբանս մովրովին. երկուցեալ խռովափէին ՚ի նմանէ. քանզի գիտէին եԹէ կարօղ է առնել գործով. զորև բանիւ ասէ։ վն որոյ ՚ի դիպօղ և ՚ի պատշաճաւոր ժամու աղաչէին զլաւտասափ աղաչանօք և մեղԹանօք իբաց կալ յայնպիսւոյ գործոյն, որ ոչ իսկ բնաւ վայելէ

վայելել Թէոդորակնի անուանեալ։ Եւս բանք սպառ-
նալեացն մովրովին մի գուցէ թէ գործովք
արդիւնացին։ Եւ ի բազմոց Թախանձա-
նաց իւրոցն բարեկամաց. լաւ ասասի ասաց,
ոչ կարեմ երբաց կալ ի կուսէն յայնմանէ. քան
զի ոգւով ջոխ սիրեալեմ ես զնա. բայց որով
հետեւ այդպէս ասէք. ահա ունի և գիտակ իսկ
էք զի ոչ ես զկին արարեալեմ՝ և ոչ կոյն այն
զայր։ արդ խօսեցարուք զնա օրինաւորօք կար
գօք ինձ ի կնուէ. և դիք զնշան զի արացուք
հարսանիս. և բարձցի զտրտունջն ի ձէնջ։
Եւ ի բանս լաւասասփիւն հաճեցան իշ խանքն
ամքն. նա և մովրոնին իսկ. և ուրախացեալ
փառս մատուցանէին Աստ զի բարձաւ զխո-
վութիւն ի միջոյ. և այսու բանիւ եդին զնշան
աղջկանն այնմիկ վը կնութե լաւասասփու։
Իսկ եղբայր աղջկանն մովրով՝ յոյժ ուրախա
ցեալ ընդ գործն այն՝ և գոհանայր զլաւասա
փէն. ասէր զինքն ծառայ և պաշտօնեայ նմա.
և թէ զանձն իմ և զկեանս եդեալ եմ ի ձա
նապարհս և ի հրամանս նր. որովհետև ոչ
արհամարհեաց զանտոհմութիւն իմ, զի ինձ որ
դի գլխի ասէին. այլ այնչափ հաճեցաւ յիս՝
մինչ որ զքոյրն իմ եառ ի կնութե և ի ծա
գութիւն ինքեան։

Իսկ բիրտ և հպարտ և ինքնահաճ աղգն
Ռ|| րաց՝ որ զտոհմութիւն և զնախնի հարց սեռս
քննեն՝ և խոչընդոտ որոնեն. ոչ հաճեցան ընդ այս
բան։ քանզի կանայք իշխանացն՝ և ազնիւր
դուոցն՝ և թաւառացն. որք եին մեծ աղգիք և
դասերք իշխանաց յառաջն. և արդեանս ամա
նակի կին և մարք իշ խանաց։ ընդ սոցին և արք
ամանք էս։ ոչ քնաւ հաճեցան՝ և ոչ երկն կամա
կից սյսմ գործ ոյ. քանզի երևելի կանայքն ասէ

ին արանց և որդւոց եւրեանց. Թէ զիարդ մաք
Թի մեզ՝ որ եմք դատերք այս անուն աղնի որ
դեաց. և կանայք և մարք այս անուն իշխա
նաց՝ գնալ յերկրպագութեն և յողջոյն աղջկան
միոյ՝ որ դուստր է գլխի տուն միոյ շինականի.
Արդ՝ եթէ հաւանեցուցանէք զԹէրն՝ դա
նալ յայդմ խորհրդենէ՝ և առնուլ իւր զկին
՚ի դատերաց Թէրց՝ բարւոք է. ապա Թէ ոչ
այսպէս՝ մեք և մեր կամիմք գնալ յողջոյն և
յերկրպագութեն գլխի աղջկան միոյ. զի
ծանր է մեզ գործդ այդ. և եթէ կամիք որ
ձակեցէք զմեզ ՚ի կնութէ ձերմէ. և այլ կին
առացէք: Եւ եղև այս շփոթ և աղմուկ և խռո
վութեն մեծ և անփարատելի իմէջ ազգին
Իսրայէլ զբազում աւուրս: և որքան հնարէին
կողմն հաւանողացն ոչ կարէին ՚ի հաւանութեն
ածել զանհաւանն կողմն. վասն որոյ յանհնարս
անկեալ խաղաղասէրքն անկանէին յոտս
լաւասափին, և աղաչէին. զի Թերևս խա
զաղութեք արասցէ եղս երացն: Ասէ Թէրն
և ան՚ձար մնացեալ առ այսմ. ասաց նոցա
դուք գիտէք. և իշխանքն առաքեցին յեր
կիրն դադիանու և զդուստրն դադիանու
Թէրին նշանեցին վասն կնութէ լաւասափին:
և այսու պատճառաւ իբաց է կաց լաւասափ
՚ի մովրովի քրէերէն:

Եւ մովրովա այս՝ որ յառաջնում նուճադին
զի ունէր բնակեցուցեալ յինքեան ՚ի ղօրացն
շար այսու. և արդ՝ այսն այն առաջին, զեօթն
այլ այս չարագոյնս քան զինքն առեալ ընդ
ինքեան, և եկեալ բնակեցաւ ՚ի մովրովս յայս.
և եղև սորայս վերջինն չար քան զառաջինն:
վասն զի փըռնգայր իբրև զյատերազմասէրը
երիվար. և գոչէր իբրև զառիւծ. և չնչէր
իբրև

իբրև զՀրաշունչ վիշապ իմն լաւասափուս. և
խնդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատ
ճառաց ։ առաջին՝ վն նախկի խոյատուականաց
քեռն իւրոյ. և երկրորդ՝ վն վերջին անարգա
նացն նմին. և խնդրէր, Թէ զիարդ՝ ի դէպ
ինչ գտցէ զնի Հարեալ սպանցէ զլաւասափն ։

Նակ իշխանքն մտերիմք՝ և ցաւակից բարե
կամքն զգուշանային, և պահէին զլաւասափն.
և զգուշացուցանէին զնա՝ զի պահեսցէ զինքն
՝ի մովրովէն ։ այլև խրատէին զնա զի սպանցէ
զմովրով ։ Եւ իբրև հասատատեցին իշխանքն և
լաւասափն իմէք եւբեանց զխորհուրդ սպան
ման մովրովին ։ այսու գիտաւորութիւ , յա
ւուր միւսմ՝ ի գինարբուս խրախուսեցին բազում գինի մովրովին՝ զի գուցէ փոքր
ինչ լուծցի՝ ի զօրութենէ , ոչ զի գիւրաւ սպան
ցեն զնա. և իբրև եհաս ժամն՝ եկ Թագաւորն
արտաքս. և իշխանացն ամենք գիտակք եղեն նո
ւս եկին ի ի արտաքս ։ և կոչեցին առ լաւ
ասափ զմին գահիճ, որ հրամայեր նմա լաւա
սափ գնալ՝ և ներքս և սպանանել զմովրով ։
և՝ի ժամուն միանչ նա ընդ գահճին զայն խո
սեր. լուաւ զայն բանն ոմն՝ ի ծառայիցն մով
րովին. որ եր յառաջընթաց փայեկ նորին. զոր
առեն շաթր . և իբրև զթուղուն Թռուցեալ
՝ի ներքս՝ ի տուն անդր ուր եր մովրով և ասաց
նմա. ահաւասիկ գան առ սպանանել զքեզ.
քանզի այսպէս հրամայեցաւ վասն քո՝ ի Թա
գաւորէն ։ Նակ մովրով իբրև լուաւ՝ ի սաստիկ
երկիւղէն այնպէս եԹող նա զգինին ոչ Թէ ոչ
ինչ բնաւ արբեալ զգինի ։ և երբ յայնմ ժամու
գօտեկցաւ և գլուխ իւրոյ նստեալ՝ և՝ի տագնա
պէն այնպէս բոկոտամբ՝ և գօտեկցաւ՝ և գլուխ
իւրոյ՝ ի վերոստեալ՝ ի տեղւոյն ընԹացաւ յա

խոռ

խոռ երիվարաց Փարաւոնին. ուր այրուն
երիվարքն կապեալք կային՝ քանզի մերձ էր և
զի ինքն մովսես փութայիւ գիտէր Թէ յերիվա
րացն, որոք է փութագնաց և սրընթաց՝ էարկ
գանդանաւանդ՝ ի բերան երիվարին. և՝ ի
ներքս՝ ի յախուռն անդ հեծաւ իմն երիվարին
ջլով միայն առանց Թամբի. մի երկիւղն մա
հաբեր՝ զի մի ըմբռնեալ սպանցի. և այնպէս
հեծեալ յերիվարն եւ արտաքս՝ ի յախուռէն,
Թոյլ տուեալ զերծանակ երիվարին և մնրա
կեաց զնա՝ զի առեալ զինքն փախիցէ: Իսկ օդա
պարիկ երիվարն այն. իբրև զերկնագնաց Թըռ
չուն առեալ զնա ընԹացմամբ գնայր ոչ իբրև
իվերայ երկրի. այլ իբր ընդ երեսս օդոյ: Այս
Թէպետ բազում՝ ի զօրաց լուսաւորին ելին
յերիվար և ընԹացեալ զհետ. ոչք՝ ի նոցանէ
կարաց հասանել՝ բայ յերկուց ոանց: Իսկ
մովսես խօսեցաւ ընդ նոսա կալ՝ և զտեղի ու
նել սահ մի. իբրև կացին եկօղքն. սկսաւ խօ
սիլ ընդ նոսա մովսես բանս մաղԹանաց. ոչ
զի մի ըմբռնացին զինքն՝ այլ Թոյլ տացեն նմա
գնալ. և այնքան խօսեցաւ մինչև էարկ զգուԹ
և զողորմ՝ ի սիրտս նոցա՝ որք ոչ ըմբռնեցին՝ այլ
Թոյլ եառնուն: և նա անցեալ գնաց՝ ի քաղաքն
Թինվեհս. ՚ի դիմի իերին էմուտ և՝ ինձին գիշերին
եբ. էառ ընդ իւր զայր ոմն Թարգման. զի ինքն
ոչ գիտէր զայլազգեացդ լեզուն. գնաց՝ ի գաւ
առն ախտաւուտ առ աւազեանն ղազախաց՝ որ նա
տէր՝ ինձին գաւառի. և ծանոյց նմա զամ ան
ցուածս իւր՝ և խնդրեաց՝ ինոցունց առաքել
զինքն առ շահաբաան: Այս նորա լսեան անպա
տուական Թէ՝ պատրաստեցին ինքեանց
ձրս յոլով. և առեալ զնա հասուցին առ շահն՝
որ էր յայնժամ՝ ի դղեակս աստուածանեալ տե
ղին՝ որ է յերկրին շամախուս: Այս

Պնակ Մովրովին առ Շահն։

Իւր զաղախս զօրականքն՝ որք առեան զմով
րով՝ յանդիման կացուցին շահաբասին. և
շահն խօսեր ընդ մովրովին՝ և հարցաներ զոմն
և զուստին և զվն էրն. և մովրով ամենայն հար
ցուածոց առն էր զպատասխանի կարգաւորօք
խօսիւք։ և ասեր, եթէ ընդ հովանեաւ տէրու
թէ քոյ ընկալեալ ընդունիցիս զիս. ես քա
զմոց գործոց և իրաց պիտոյանամ ՚ի ծառայ
ութէն քո։ և կացեալ ժամանակս ինչ անդէն
շահն իւրով բանակաւն. և ապա ջնջեալ անց
ի գէպ՚ի սպահան. տարաւ ընդ իւր և զմով
րովին. և օր աւուր յառաջ խաղալով հանդարտ
ութիւք գնացին, մինչև հասին ՚ի սպահան։ և
յայնմ դիպող ժամու շահն խօսեր ընդ մովրո
վին և տեղեկանայր ՚ի նմանէ զորպիսութէն աշ
խարհին՝ և ազգին ։| ըստ, զամրութէն երկրին,
և զհմաստութէն թագաւորին, և իշխանացն. զբազ
մութէն ազգին, և զքաջութէն զօրացն. և այլ
զօրինչ կամեր։ Իւր կացին անդէն ՚ի սպահան
հանց այն ամն՝ և մտին յամն երկրորդ. առե
շահն առ մովրով. ահա անցին աւուրք յո
ղովք. արդ որով կերպիւ յօդեսցուք զպատա
ճառս՝ որպէս զի այնու պատճառաւ զօրաժո
ղով լեալ գնասցուք իմն ազգին ։| ըստ։

Իսկ մովրով յայմ կամեր զայն քէնն առ
նուլ՚ի լաւասափէն. որ էն վատանութէնէ
և անարգանաց քեռն էր. որոյ սակս և երկեալն
իսկ էր՝ ըստ նմին Ճանապարհն և կերպի խօսե
ցաւ՝ և զտուն էտ շահաբասին՝ և ասաց։ Լա
ւասափին քոյր մի թագուհին նորահաս կոյս չքնա
զագեղ և գեղեցկատեսիլ. և ամիս ամսէնէ թագ
վայելուչ. որ վայելէ ոչուամբ՝ բայց միայն
սեռն իմում արքայի. արդ՝ խնդրեա զնա
քեզ՚ի կնութէն. և յետ գալոյ կուսին զմայրն
և

և խնդրեացես պատճառաւ կուսին. և յոր ժամ եկեսցէ մայրն՝ զմայրն ևս արգելցես պատ պատճառաւ կուսին. և նաքօք դիւրինէ որպէս զլաւասափ՝ ի կորուստ արդ՝ եթէ այս խորհուրդ այսպէս առցէ զկատարումն՝ բարւոք է. զի դիւրին է և հեշտ. և եթէ ոչ լսէ նէն և ոչ տացեն զաղջիկն քեզ. յայնժամ չտալն նոյ եղիցի քեզ պատճառ գնալոյ իվերայ նոյ։

Իսկ անվթար կամարարն սատանայի՝ երկ րորդ սաբիւտոսս այս շահաբաս՝ յետ ընդու նելոյ զայսպիսի խրատս ի մովրովին. գրեալ առ լաւասափ և առ մայրն նր՝ վն քեռ լաւասա փին զթուղթ սերոյ և ողջունի. որ ի վերոյ ու ներ բանս իբրև զկենաց. բայց ի ներքոյ լրիւ հրաւեր մահու. և գոյացուածի բանի թղթոյն ևր ըստ այսմ օրինակի։

Կամիմք ձգմարտութ՝ զի հաստատուն և անդրդուժելի լիցի թագաւորութիւն մեր և ձերդ. և սէր և միաբանութի երկուցս ազանց Պարսից և Հռոց. և մեք զամ իշխանաց և աշխարհաց կողմանցդ այդոցիկ զվերակացուութի յանձնես ցուք ի ձեզ. զի դուք հոգայցէք՝ և վարիցէք զթագաւորական զիշխանութի հիւսիսական կող մանցդ՝ իսկ մեք զայլևս կողմանս հոգասցուք։ Եւ սմին այսմիկ միաբանութե նշան և պատ ճառ լիցի այս. զի զբերդդ դուստրդ ձեր քե րիցէք առ մեզ. նախ զի լիցի կատարումն գոր ծոյս այսորիկ նշան և չարհակապ միութե երկուց ազանցս։ Երկրորդ՝ դ չհոյ և թագուհի լիցի ամի ազգին արեացս։ Երդ ըստ այսմ օրինակի գրեալ զթուղթն առաքեաց յաչխարհն։ Բայց իքա զաքն տփխիս առ լաւասափ՝ և առ մայրն նր։

Իբրև ընթերցան զգիրն, ծանեան զի թագա դրութե և թշնամութե մովրովին դաւաճա նութե

նուէրն էր ամ բան թղթոյն։ ||Է զինքեանց
գնալն և ոչ զաղջկան տալն կամեցան. քանզի
ասաց մայր լաւասափիլն. 'ի ժամանակին՝ յոր
ում է իր յերևան քաղաքի 'ի պատերազմի. կո
չեցեր զմեզ առ քեզ բարեկամութեամբ պատճա
ռաւ. և մեք անկեղծ սրտիւ իբրև 'ի ձմարիտ
բարեկամ և 'ի թագուր եկաք առ քեզ. և դու
զգործ թշնամոյ գործեցեր ընդ մեզ. զի դէ
ղովզայն իմ սպաներ՝ և զնա խայտառակեցեր՝
արդ մեք՝ որ զայսպիսի գործս տեսաք 'ի քէն. զի
արդ վստահացուք միւսանգամ գալ առ քեզ
արդ եթէ ստուգիւ զհաստատութիւն և զհան
գիստ մեր կամիս, ոչ ասացեր. մի նեղեր զմեզ՝
և մի խռովեցուցեալ վրդովեր զնաղաղութիւն
մեր. այլ թող զմեզ կալ 'ի հանդարտութեան. զի
այս փոքր իշխանութիւս մեր բաւական է մեզ
'ի պէտս կարեաց մերոց. ողջ լեր։ |,ւ ապա
տասխանիս այս եկեալ առ շահաբասն մինչ էր
'ի սպահան. յորում ինքն և մովրսին խորհէին
և խոկային զօրհանութագալ զաւեր աշխարհին
||ըաց՝ և զանկումն թագաւորութեանն։ |,ւ զպատ
գամն զոր նախ գրեաց առ նոսա շահն. երկիցս
և երիցս կրկնեաց. և տուաբեաց առ լաւասափ
և առ մայրն նորա. զի թերևս կամ զլաւասափ
կամ զմայրն և կամ զքոյրն ածցէ յիւր ձեռն՝
և ոչ կարաց։

Հետ երից անգամ գնալոյ և գալոյ պատգա
մացն իբրև ոչ եկին. այնուհետև զերեսս իւր
դարձուցեալ շահն դէպ յաշխարհն ||ըաց.
ժողովեալ զզօրս իւր զօրաբարեալ 'ի սպա
հանայ ||ն իւր ուղեղով զնորատուտն չարեաց
և աշխարհաւերն զմովրսով. ելեալ 'ի սպահա
նայ կամկար և հանդարտ գնացիւք հասին
մինչև յերկիրն ղարաբաղու 'ի քաղաքն գան
ջայ.

ջայ. և անդէն զտեղի առեալ կացին զամառն։ Եւ ասեր չահն ընդ մով բովին, արդ անցին իմր ժամանակք բազումք՝ երբ լինէին զի տալցես զմեզ ի ըստ տուն պատասխանեալ ասեր մով բովն տակաւին համբերեա՝ զի արդ ես ոչ է ժամանակ, և յորժամ եկեսցէ ժամանակն, ես ինքնին յուշառնեմ քեզ գնալ անդ։ Եւ զայս վն այն ասեր մովբովն թէ ոչ է ժամանակ՝ զի ամառն անցցէ և ձմեռն եկեալ իմր հասցէ՝ և ծառք մայրեացն տերև աթափք լինին, զի դիւ բին լինի զօրացն Պարսից ձիով խաղալ մտանել յաշխարհն։ Ըստ։ Այլև ազդն։ Ըստ՝ որք փա խուցեալք և ամրացեալք և գաղթեալք էին, յամուր վայրս և ի փապարս և ի դժուարին տեղիս աշխարհին, ի խստութենէ ցրտոյ և ձեան ձմերոյին ժամանակին, և ի նեղութենէ նէ սովու և այլ կարեաց, ոչ կարացեն տևել ցրտոյն և կալ յամրոցն, այլ դարձին ի բնա կութիս իւրեանց ի ձիախաղաց տեղիսն, ոպ զի դիւրին լինի զօրացն Պարսից յափշտակո ղաց և աւարչաց խաղալ ձիօք և առնուլ յաւա րն զնոսա։ Եւրև առ յապայն կատարումն գոր ծոյն ըստ օրինակի նախագոյն խորհրդեան Ն ր կատարեցաւ։

Ետ ազդն։ Ըստ Երբ լուան զգալն չահին իմր իւրեանց, նման մտախոհ լինիլ վն էլից իրացն, և խորհեցան զմիաբանութենէ առնել ընդ իւրեարս երկոքին թագաւորն։ Լաւ ասափ՝ որ էր տեր Թիֆլիսու և քաղքայ. և Թամրազ, որէր տեր կախէթու և գրիմայ, ոպ զի երեքեան օգ նականութենէ կարասցեն դիմակալել Պարսից։ Եւ ի պատահուա այս առաքեցին լաւասափ և իւրքն ի կախէթ՝ և կոչեցին զԹամրազ ի Թի ֆլիս վն միաբանութենէ։ Ետ Թամրազ՝ զի

զիշխան բաժանման և զերկատութիւն, բազում
անգամ կրեալ էր. նա և զվիճակ և զթշնամութիւն
ազգին Պարսից՝ որ յորով անգամ արարեալ
էին նմա, գիտէր. հոգւով չափ յոժարէր՝ ի միա
բանութիւն. վասն որոյ յարուցեալ եկն՝ ի թիֆլիս.
որոյ գալն եղև ուրախութիւն անպատմելի լուսա
սափին և իւրոցն. որպես արարին զուխտ և զդա
շինս լինել միաբան և միախորհուրդ. և զան
ձինս դնել իւրեարց՝ և մեռանիլ վասն
միմեանց:

Յաւուրս յայսոսիկ, որ եկն Թամրազ՝ ի տըփ
խիս. լրտեսքն շահին. զորինչ լուան և տեսին,
գնացեալ տարան զՀամբաւն շահին և կամայօ
ժար կամարարն անկելոյ արուսեակին շահաբաս
առեալ զնովքն՝ ի նմանէ զնորագիւտ հնարս
կործանման և երկպառակութեան առնել թշնա
րութենն քրիստոնէից. քանզի մինչ էր՝ ի գան
ջայ քաղաք զետեղեալ իւրոյն բանակաւ.
սկսաւ աստի և առաքել զթուղթս պատրա
նաց և խաբէութեան. ոչ յառաջագոյն՝ ի սպահա
նայ. այլ ընդ նմին և այժմ աստի. որ՝ ի վերոյ ունէր
զողջոյն զսէր և զխաղաղութիւն. և՝ ի ներքոյ զպատ
րանս և զխաբէութիւն և զնենգութիւն. գոնեայ զի
յերիցն զմինն արկցէ՝ ի ցանցս իւր. կամ զլուսա
սափ. կամ զմայրն, և կամ զքոյրն, և ոչ կարաց:

Այս նորագիւտ հնարն այս էր. զի զթուղթն
պատգամաց՝ զոր յայտնի առաքէր. ընդ նմին
ծածկաբար միւս այլ զթուղթ ծածկեցեալոց
խորհրդոց և նենգութեց գրէր առ լուսասափ
և առ Թամրազ ծածուկ՝ ի միմեանց. և առ
լուսասափ գրէր թէ միհաւատար դու Թամրա
զիդ՝ և մի միաբանիր ընդ դմա՝ զի գա թշնամի
քո է՝ և կամի բարեկամութիւն դասել և սպանա
նել զքեզ՝ և տիրել աշխարհին քում. ոչ ինձ

ծանուցեալ է զայս խորհուրդ. արդ մինչ դեռ
չես սպանեալ՝ փութացեալ դու սպան զնա՝
զի դու տիրեսցես երկրին քոյմ և նոր. նա և
ես քեզ օգնական եմ. եթէ զօրք պիտոյանան
քեզ՝ և թէ գանձ. զի ինձ գոյ յօժարութիւն
զի դու տիրեսցես երկրի նոր։ Այնպէ և ըստ
այսմ օրինակի գրէր և առ Թամրազն ծածուկ
՚ի լաւասափէն. դու սպան զլաւասափ՝ և դու
տիրեսցես երկու աշխարհին։ Յորժամգամ
առաքեաց առ նոսա զայսոսիկ Թուղթս
զայսոսին և զգաղտնին իմիասին. և լաւասափ
և մայրն իւր ոչ ինչ գիտացին, եւէջ զաղ
ջինին առաքեցին։

Իսկ ծածուկ Թուղթն՝ զորս վճ միմեանց
ընկալեալ էին Թամրազ և լաւասափ՝ պահեալ
ունէին առ ինքեանս. և տակաւին մնալարժ
լինէին իմանալ զչմարիտն և զսուտն։ և ՚ի
խնամոյն Յերկոքեան Թղթոցն յայտնեցին
զխորհուրդս զայս միմեանց. նաև ցուցին զզ
Թուղթն՝ զոր առաքեալէր նոցա շահն, և ՚ի տե
սանէին իմացան՝ և ծանեան սուտ գիւ զվճիռ
մուրճ շահին՝ որ առ ինքեանս։ և փոխանակ
Թշնամութեն զսէր անխզելի և զբարեկամուն
անքակտելի հաստատեցին իմիջի իւրեանց։ Ա ե
զի լաւասափ զքոյրն իւր՝ զոր խնդէր շահն՝
ետ ՚ի կնութի Թամրազին. զի նախկին կինն
Թամրազին մեռեալէր։ և արարին անդէն հար
սանիս Թամրազին և քեռ լաւասափին՝ որոյ
անունն էր փարի։ Եւ ետ հարսանեացն՝ Թամ
րազ և լաւասափ գնացին ՚ի մշխնիձայ՝ որ է
աթոռ և պատրիարգարան իւրեանց. և
կրկնակի երդմամբ, միաբան և միախորհուրդ
լինել և պատերազմիլ ընդ Պարսից։ Այս ՚ի լի
նէին այսմ ամի։ Թղթաբերքն Պարսից՝ որք
յայտ

յայնմ եկեալք ի նմա. և լրտեսքն, որք՝ ի ծածուկ գնացեալ պատմեցին շահին. և նա՝ ի խոր խոցեալ լինէր՝ ի սիրտ և յոգի՝ զի ինքն քանիցս անգամ խնդրեաց զաղջիկն, և այսքան զօրօք վնաս եկն. ինքեան ոչ ետուն, այլ Թամրազին։

Ոչեաց շահն զմովրուին և ասէ ցնա՝ այսօրիւք ամենիւք զօրօքս ածեալ բերեր զմեզ մինչև ցայս վայր. և զաղջիկն, զորմէ ասէիր, ահա տեսեր զի ոչ ետուն ինձ՝ այլ Թշնամւոյ խմոյ. որպէս ծառայից խմոց հազիւ Թէ հաւասարի։ Արդ ծաղր և այպն կատականաց արարեր զիս ամի աչ խարհի. և եթէ ոչ տարեալ մուծցես զիս յաշխարհն Պարսից. և՝ ի ձեռս իմ գրաւեսցես՝ զերկիր նշ. գիտեա դու յանձն քո՝ զի չես միայոց կենդանի. այլ յօդ յօդ բաժանելոց ես մարմին քո ամ։ Եւ մովրուի ետ զպատասխանի՝ եթէ ոչ տարայց զքեզ յերկիրն յայն՝ այդպէս առնես. և Թէ տարայց զինչ առնես։ Ասէ ցնա շահն, ամ խորհրդական և նախկնաց նախարարաց խմոց բուն իսկ գլուխ՝ Ենոխապատիւ՝ և գերագոյն քան զամն դու ես լինելոց։ Եւ խրատուին մովրուի համբերեցին մինչև՝ ի դեկտեմբերի ամին, մինչև յաւուրս ոմանս. որ եկեալ էհաս ձմեռնային ժամանակն՝ և ցուրտն սաստկացաւ. և եկեալ ձիւնն կալաւ զգլուխս լերանցն՝ և զձանապարհս փախստեանն և յամրոց մտեալ արքն նեղեալք՝ ի ցրտոյ ի քէն՝ ի շէնս և՝ ի գեղս բայս. և տերևք ծառոցն Թափեցան, որ ամ տեղի աչաց ակներև տեսանելի եղև։ Ասպա ասաց մովրուի ցշահն. արդ ահա այժմ գնաս ցուք յաշխարհն Պարսից՝ զի այժմ է ժամանակն. և ջանեալ՝ ի գանձակ քաղաքէ եկին՝ ի սահմանս կախեթուց՝ որ է երկիր Թամրազին։

Եւ Ենոխապատիւ երկրին կախեթուց իմէջ ձո

ըոյ մտանէր՝ ընդ որ անցանէ ինն՝ և ապա մտանէ ի ներկիրն. և էր այն նեղ և նուրբ և դժուար ելին վայր երկու. իսկ կողմանքն ձորին բարձր և քարավէժ լերինք. և մացառուտ և թաւ մայրի. ըստ որ մարդ և ձի ոչ կարէ ինչ գնալ: Օ որ թամրաղ և լաւասահ եկին բազմաք զօրք կողմանն զկիրճն ձորոյն՝ և կանգնեցին զպարիսպ ամուր քարիւ և փայտիւ. և ի ներսին կողմանն ի շինեցին զտեղի պատերազմի ուստի ի ներքս կալով ելիցեն պատերազմեսցին ընդ թշնամեացն՝ որք արտաքոյ:

Իսկ բանակն Պարսից յարձակ վայրի հանդէպ ձորոյն բանակեալ էր. իբրև տեսին թէ Պարսիկքն կալան զանցս Ձանապարհին. ան Ձար եղեալ ի տարակուսի մեացին: և շահն դարձեալ կոչեաց զմով բով և ապառնացաւ նմա զմահ. նաև մով բոյն ինքն ևս մեաց ի տարակուսի: Իսկ յետ երկուց աւուրց ասէ մով բոյն ցշահն. խորհեալ եմ գտեի զկողմն յուրեք Ձանապարհ. բայց երկուց աւուրց Ձանապարհ հեռի է ասեի. այլև պիտոյէ կացնաւորս և բահաւոր և մրճաւոր. որ զմայրին կոտորեն և զդժուարին տեղիսն հարթեալ դիւրեն: Իբրև լուաւ զբանս զայս շահն մեծաւ ուրախութիւն ցնծացաւ՝ և հրամայեաց զօրաց իւրոյ առնուլ զգեղեմ կացին և զգեահ հղայլինչ գործ ի ևգնալ ի տեղին և բանալ զՁանապարհ. և նոքա գնացեալ կոտորեցին զմայրին՝ և դիւրեցին զդժուարին տեղիսն՝ և բացին զՁանապարհ. և եկեալ ծանուցին շահին Թէ եղև՝ զոր հրամայեցեր:

Իսկ շահն հրամայեաց բանակին իւրոյ. զոր օրինակ մինչ ցայնժամ կազմեալ հարեալ կացուցեալք էին վրանքն՝ և ուղտ և բեռնակիր անասունքն. և օրտուս բազարչիք՝ և այլ ամենայն

ոմն յառաջն կային սոյնպէս կացցեն ՚ի տեղիս
եւբեանց։ ոմն զի համարեացին Ա ըսցիւքն Թէ
տակաւին անդ են զօրքն Պարսից։ Այլ միայն
մարտիկ զօրքն Պարսից եւբեանց պատերազմա
կանաք զինուքն եւ երիվարօքն զանխոս եւ Թա
քուն եղեալ գնացեալ են։ ընդ գացեալ Հանա
պարհն մտցեն յերկիրն կախեցուս։ Յայն
ժամ եղեւ պատերազմականաք զօրքն Պարսից եւ
գնացեալ ընդ նոր գացեալ Հանապարհն մտին
յերկիրն Թամրազին՝ եւ հասին ՚ի շէնս եւ ՚ի
գիւղս եւ ականս կոտորել զազգն վրաց անխնայ։
Յակ Թամրազ եւ զաւս ասուի ոչ քաջ նստէին զօրօքն
Ա ըսց ՚ի բերան Ձորոյն ոչ գիտէին զարար
մունան Պարսից։ մինչ յանկարծակի տեսին
զայրմի գլուխն եւ մարմինն վիրաւորեալ եւ հա
սանն ամ արեամբ Թաթաւեալ։ որ փախուս
ցեալ ՚ի ապանմանէն Պարսից եւ եկեալ գուժ
կան եւ համբաւաբեր մն գալոյն Պարսից եւ մնա
նելոյն յերկիրն Ա ըսց։ Այս ՚ի լսէն զայս Թամ
րազին եւ լաւասարին՝ եւ որոց ընդ նմն։ ափշեալ
յիմարեցան՝ եւ ոչ այլեւս կարացին առնել։ ոչ
ստացուածոյ կամ ապրանք բառնալ՝ եւ քնաւ
ոչինչ։ այլ իւրաքանչիւրոք զընտանիս եւ զկա
րեւոր սիրելիս իւր առեալ ընդ ինքեանս հա
զիւ Թէ ՚ի մէկնակի ձիով հեծեալ հապճեպ
տագնապաւ անապարեալ իբացփախչէին զնի
մի անկցին ՚ի ձեռս Պարսից։ Ընդ յայսմանէ
պատճառէ Թամրազն եւ լաւասարին ասուի փա
խուցեալք անկանէին ՚ի Լոփլիս։ եւ անտի ՚ի
գօրի։ եւ անդ եւս ոչ կարացին կալ։ այլ ընդ
Հանապարհն կոլբայու անցին զլեռան կովկաս՝
որ ՚ի եալբուզ սարն։ եւ գնացին ՚ի պաշխաչու
խի աշխարհն։ վասն զի մայրն լաւասարին
դուստր էր պաշխաչուխի Թէրուին։ վն այսո

ըիկ Թամրազն և կինն իւր՝ և լաւասարդ և մայրն իւր. և այլ ընտանիք սոցա փախուցեալք ի պաշխարհս զերծան ի ձեռաց Պարսից։

Այս զօրքն Պարսից՝ որ ի միւս կողմանէ եկեալ մտին յերկիրն Թամրազին. եկին մինչև ի բերան Ձորոյն, զոր կապեալք էին վրացիքն. քակեցին զկապն և բացին զլայն և ընդարձակ Հանապարհ. ընդ որ եկին բանակին Պարսից՝ մտին յերկիրն Թամրազին. և անդէն բանա կեցան և կացին մինչև յաւուրս յիսուն՝ և ոչ ելին յերկրէն։ Այս յայսքան աւուրս, զոր կացին անդէն Թէ զինչ գործեցին. բերան ոչ բաւէ խօսիլ և ոչ լեզու Հաւել. դուս մտօքդ խոր Հեալ խելամուտ լեր. Թէ զօրքն զանպարտ զանձինս քրիստոնէից սրախող խող արարեալ վերաւորեցին. կամ Թէ գլխովին խակ սպանին. և զանմեղն գերեցին և խայտառակեցին. և զինչս և զստացուածս յափշտակեցին. և զշի նուածս հրդեհեալ այրեցին և քանդեցին. և զեկեղեցիան քակեցին. զսեղանն Եջ՝ և զնշան սր խոյ խաչին կործանեցին։ Այս զգերեալսն պահէ ին Համր բանակին առ իւրեանս՝ և պէսպէս վշ տօք տառապեցուցանէին՝ ցրտով և մերկու թ՝ քաղցիւ և ծարաւով և այլ բազումաւ կերպիւ։

Այս յորժամ էմուտ շահաբաս յերկիրն կա խէթոյ և եռես Թէ փախուցեալք են Թամ բազն և լաւասարդն. և Մնաց երկիրն և ժողո վուրդքն՝ ի ձեռս իւր։ Յայնժամ Հանձարեղն՝ ի խորհուրդս ջարեաց, և այլեա աշ խարհ աւեր Հնարս ներգործեաց, քանզի Հրամայ եաց յամեն գաւառս և՝ ի գիւղս կախէթոյ մունեդիկք շրջեսցին՝ և քարոզեսցեն բար ձու ձայնիւ՝ ի բազում աւուրս՝ և ասասցեն Թէ՝ Հրամանք՝ ի Հզոր և՝ ի խաղաղասէր և

յաշ

յաչ խարհաշէն Թէլբրէն շահաբասայ, զի յամէն բնակիչք աշխարհիս կախէ Թուս, եթէ ի խանիք եթէ հեծեալք, եթէ արուեստաւորք, եթէ առամիկ ժողովուրդք, և ամ՛ոք, որ եկեալ ամրացեալէ ՚ի լերինս, և՛ի մայրիս, ՚ի բերդս, և յամէն ամուր տեղիս· դարձցին, և եկեսցեն ՚ի տեղիս և ՚ի բնակութիս իւրեանց՝ և կացցեն խաղաղութ.զերկիւղ և զկասկածանս ինչ ՚ի զօրացն Պարսից՝ մի կրեսցեն, քանզի հրամայեալէ նոցա Թէլբրէն· մի զոք նեղել՝ և մի զոք խուճել ՚ի ժողովրդենէ աշխարհիս՝ որք գան ՚ի հնազանդութիւն շահին՝ և լինին շահիսեւան, ոչ լինին նոցա ինոսա ամենևին այլ կայ ՚ի խաղաղութիւն։ Այսպէս որք յամառեալք դիմադարձ լինին հրամանաց Թէլբրէն, առաքելոցն Թէլբրէն իվէր նոցա զօրս բազումս, որք զամրոցն նոցա առեալ աւերեսցեն, և զինքեանս սպանցեն, և զընտանիսն գերեսցեն, և զինչսն յափշտակեսցեն։ Այդ եղեալ ՚ի յամրոցսդ՝ և եկէք ՚ի հնազանդութիւն, և լերուք շահիսեւան, և կացէք ՚ի խաղաղութիւն։ Այս յիշեհանաց և՛ի նշանաւոր արանց ամէնց յառաջեալ վաղագոյն գայցէ, ընծրհելոց և նմա Թէլբրէն զփառս և զպատիւս՝ և զպարգևս բազումս, և զպետութիւն իշխանական։

Այսպէս բնակիչք երկրին կախէ Թուս իբրև լուան զբանս քարոզութիւն մուհեդկացն, Մանկք պատրեալք հաւատացին. եկին և եղեն շահի սեւան։ Մանկք յերկիւղէ սպանութիւն և գերութիւն եկին և եղեն շահիսեւան։ Մանկք վ՚ր բազ մերեայ կալցին անդէն համՋ երկրին Պարսից, անձար մնացին, եկին և եղեն շահիսեւան։ Մանկք տեսին զի զայս անուն ամրոց առին, և զայն անուն ամրոց առին, և արարին զպատնութիւն և զգերութիւն ընդ բնակողաց ամրոցին ա՞ա

բեկ և երկիւղալից եղեն, մի գուցէ ինքեանց
ևս այնպէս պատահիցէ, վնորոյ ինքեանք յամրո
ցաց եկին և եղեն շահիսէ ան։

Այլև հրամայեաց շահն վն շահիսէ ան եղէ
լոցն զի բնակեցուսցեն զնոսա յիւրաքանչիւր
շէնս և՝ի տեղիս, և յուսով և քաջալերութիւ
մեծաց բարեաց խոստացին ընդ նե։ և զանո՛
անս նոցա արանց և կանանց, ուստերաց և
դստերաց, և ամենից ընտանեաց գրեսցեն՝ի
քարտիսի, և առ ինքեանս պահեսցեն Պարս
սիկք։ Գ.յլև կացուցին իւրն նոց պահապանս՝ի
զօրացն Պարսից յամեն տեղիս՝ զի մի գուցէ որ
՝ի նոցանէ փախիցէ յայլուրեք։ բայց խաբէին
զնո և ասէին, վն այնորիկ կարգաւոր ձեզ զպա
հապանս՝ զի մի որ՝ի Պարսից արանց զձեզ նե
ղիցէ, կամ՝ զինչս ձեր յափշտակիցէ։ և ովքը
եկն՝ի շահիսէ անութե, այսպէս արարին ոչ
պատմեցաք։

Այս որք ոչ եկին, այլ մնացին յամուրս իւրեց,
եղին Պարսիկքն իւրեանց մրոցաց նոցա, և զբա
զում աւարս պեսպես հնարիւք մարտեղեալ
ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնուին, և
զսուր իւրեանց եղեալ անխնայ կոտորեին, իբրև
պաշտօն բարի մատուցանել Գ.Ի համարեին,
ըստ վկայութե Ցն։ ապա զինչս և զստացո
ածս կողոպտեալ յաւարն առնուին, և զմնա
ցեալ կանայս և զմանկունսն նոյն գերեալ ածեին
՝ի բանակն իւրեանց։ Այս ոչ ասացի յաւարս
յիսուն կացեալ անդէնոչ մնաց ամրոց՝ զոր ոչ
առին, և կամ՝ զտեղի, զոր ոչ աւերեցին, և միա
հաղոյն յաւեր և յապականութե դարձուցին
զամենայն և զյուսութե և զբազմամարդ աշ
խարհն կախել թուս և գրիմս։

Այս եկեղեցեաց զանօթ ան և զսրբութե ան
զխաչ՝

զխաչ՝ և զսկիհ՝ և զաւետարան՝ և զբուրվառ՝ և
զշուբքան՝ և զայլ անօթս և զբրբուխս. որք էին
մեծ ածաձոյք և ծանրագինք, և զանազանիւք
յօրինուածովք ակամբք և մարգարտովք յօ
րինեալք. Հրամայեաց շահն վճռել ընդ մի խորտա
կեացեն. այլ տանիլ՝ ի քաղաքն յասպահան և
դնել՝ ի գանձարանին արքունի. և կայ անդէն
՝ի գանձարանին արքունականի մինչև ցայսօր.
որք բազումք՝ ի մերոց ազգացս վկայեցին գոլով
ականատեսք այնց սրբութեանց. Այլև զանկար
պատմուհանն Ա՛ի ընդ այլոց սրբութեանց անտի
առեալք են. և կայ՝ ի նոյն գանձարանին յաս
պահան քաղաքի. որ դեռ ևս զլոյս վառեն առա
ջի նր. և այսմ խօսեցա ասօղքն. Ինքեանք իւրն
աչօքն տեսեալք էին. և էին արք հաւատա
րիմք.

Յետ բազմաց աւերութեանց աշխարհին այ
նորիկ չոճեալ անտի և եկեալ՝ ի սինօս երկուց
աշխարհացն կախէթու և քառթլոյ՝ և անդ
բանակեցաւ շահն. և զհրամանն արար իւրոց
զօրացն մի նեղել՝ և մի խոշնել զոք՝ ի բնակչաց
աշխարհին քառթլոյ. և զօրացն Պարսից ելին
պիտոյացն իր ինչ՝ որ կարիք է մարդկան և
անասնոց. գնով գնեացեն՝ ի գաւառականացն.
և ըստ կամաց վաճառողին տացեն զդինն.
Այլև հրամայեաց շահն՝ զի ելցեն մունետիկք
և շրջեացեն յամեն գաւառսն քարթլոյ՝ և աղա
ղակելով քարոզեացեն. թէ.

Հրաման է՝ ի մեծ և յաշ խարհաշէն թագաւոր
շահաբասայ. զի աշխարհս քառթլոյ ամենք
գաւառականաք իւրով՝ իշ խանօք և ռամկօք
իւրով՝՝ ի խազաղութեն և յանդորրութեն կաց
ցեն. և ամէն որք երեալք են՝ ի բերդ և յամուր
տեղիս վճռ երկիւղ զօրացն Պարսից. այսու

հետև մի երկիցեն, և մի կասկածանս ինչ կրիցեն. այլ ելցեն ՚ի բնակութենս իւրեանց՝ և կացցեն ՚ի գործս իւրեանց և ՚ի շինարարութենս. և եղիցի սէր և խաղաղութիւն. և երթևեկութիւն ամենից ազգին Պարսից և ՚ի ձայս. քանզի զաշխարհս քառթլայ եմ գիտեմ, և ոչ աւերեմ վա՛ եմ և վա՛ լաւասափայ թագաւորին. վա՛ ոմն ինձ որ դէմ, և եղբայր և բարեկամ գիտեմ. և յորժամ գայցէ նա զնորին աշխարհն կինքն յանձնելոց եմ և ես գնամ յաշխարհն իմ։ ՚Ընդ՝ երթէ կամ մեռցի լաւասափ թագն՝ և գայցէ այսպէս առնեմ. և թէ ոչ գայցէ ահաւասիկ մովրուին՝ որ է յաշխարհս քառթլայ և յաղգէն ՚ի ձայս՝ որ և ահա ընդ մեզ է. զաշխարհս քառթլայ տամ մովրուվին՝ և ես գնամ յաշխարհն իմ։

՚Այլև պատուհիրեաց շահն մովրուվին զի և նա յերեսաց ծառայից առաքեսցէ յամին տեղիս աշխարհին՝ զի ըստ սովին օրինակի խօսեսցին առ ամենն բնակիչս գաւառացն առ ի հաւատացուցանել զնա։ ՚Եւ մնաւ և պատրաստականաւ յուսով զմովրուվին և խաբեաց ասելով. վա՛ ասասփն թէ գայցէ և թէ ոչ. քեզ տամ զնշխան նուէրին քառթլայ. որև ծառայք մովրուվին այնպէս խօսէին ընդ գաւառականացն։ ՚Եւ այս պիսեաւ օրինակաւ ստովք և պատիր բանիւք խաբեցին զամենն գաւառականան՝ որոչ պատերազմաւ և ոչ խռովութիւ. այլ սիրով և խաղաղութիւ ածին զամենն գաւառականան ՚ի հաւանութիւն՝ և ինքեանց յամրոցացն. և բնակեցուցին ՚ի գիւղորայսն։ ուստի լցեալ լինէր ամպնոց քանակին Պարսից մարդկան և անասնոց։ և յորմէնէ կողմանէ ունէին վտանգ ինչ զօրքն Պարսից։ այլ յամէ կողմանէ կային ՚ի խաղաղութիւն և յանդորրութիւն։

Այլ բնակիչք աշխարհին քառթլայ եր կիւղիւ կասկածանս կրէին՝ եթէ գուցէ ոչ գայցէ լաւատսին. և ՚ի պատճառէ այնմ՛քին նոյ. հրամայեացէ շահն Իւրոց զօրաց աւարել և գերել զաշխարհ տերութեն լաւատսափու։ և զայս բան զօրքն Պարսից ևս ասէին. և խօսէին ընդ գաւառականացն. այլև ասէին՝ եկայք դուք ևս գրեցարուք շահիսհեան՝ զի մի մանիցիք ՚ի գերութեն ոմն զժողովուրդն կախէթու՝ զի օրք գրեցան շահիսհեան ոչ մանեցան ՚ի գերութեն։ Իւ յայսմանէ պատճառէ բազումք աշխարհէն քառթլայ եկին և գրեցան շահիսհեան. և օրք գային ՚ի շահսհեանութեն՝ Իւրեանց և ամենից ընտանեաց զանուճանս գրէին ՚ի քարտիսի և առ ինքեանս պահէին Պարսիկք։ և զգրեալ շահիսհեանն բնակեցուցանէին յիւրաքանչիւր տեղիս յուսով մեծագունից բարեաց և խաղաղութեն։

Իւ միոջ նստեալ կայր շահն խմէլ սահմանի երկուց աշխարհացն. արար միւս ևս զնոր հնարս. քանզի զմիոք յիւրոց խորհրդակցացն՝ որ էր մեծագոյն իշ խան և փառաւոր նախարար՝ որոյ անունն էր Արուխօջայ՝ կարգեաց զնա հրեշտակ խաղաղութեն. առիթոյ նամակաւ առաքեաց ՚ի պաշիսհուխ առ լաւատսափ. և էր պատգամացն էր ըստ այսմ օրինակի։

Իրեաց յարքայէն շահաբասէ բազմաւ սիրով ողջոյն հասցէ արքայիդ Իրաց լաւատսափուխ. մանգամ գրեցաք առ քեզ սիրով և ցուցաք զմեր սրտի բարեկամութեն, որ առ քեզ. բայց դու ոչ անսացեր և հաւատացեր բանից մերոցարդ՝ ահա ՚ի գործ ոյն ՚ի միտ առ և հաւատայ ոմն և տեսանես՝ զի զերկիրն Թամրաս զին աւարեցին. հակ զքոյն ահաւասիկ շէն և ամ

ամբողջ պահեալ եմ վասն քո. և ապաստեմ գալստեանդ քոյ: արդ՝ ի գանգաղիր՝ ի գալ և մի անմիտ և անհանճար խրատուուիցայ լսեր. և զքեզ՝ ի թիգրու թիեդ զրկեր. քանզի ոչ ունիմ զոխս և զնեղուն յիմում սրտի՝ ի քոյդ կողմանէ. ոչ և դու ոչինչ բնաւ ինաս գործեալ ես առ իս: Այլ զգոյշ քո յաղագս այնորիկ խնդրեմ, զի ոչ նախնեաքն մերովք երբ միաբան նուիրի իմիջ երկուց ազանցս. այնպէս կա միմ զի և՝ ի մեր ժամանակս լինի. և մեք զա ինայն կողմնա հիւսիսայինն՝ որ յայս կոյս է գե տոյն երասխայ յանճնեացուք՝ ի քեզ. զի դու լինես վերակացու և հրամանատար իվ ամենից ի չխանաց կողմանցս այսոցիկ. ոչ զի քո զայս կողմնա հոգալով. և մեք անհոգ եղեալ զմիւս կողմանան հոգացուք և թշնամեաց զդէմս կալցուքզողջ լեր: Օ այս թուղթս գրեալ էտ Այրու խօջային. և այլ բազում՝ զանա և հնարս խարդախուն՝ զոր ամբարեալ ունէր յիւրում սրտին զանիւ պատուհասեաց նմա. թէ որով հնարիւք և եղէ հաւանեցուացէ զլուսաւոր գալ առ շահն: Իսկ սարուխօջէն գնացեալ՝ ի պահնաչուխ յանդիմանեղեալ լուսաւորիս մա տոյց զողջոյնն և զթուղթն. իբրև ընթերցան զթուղթն՝ գիտացին զի ամէնն զանգն պատրանք են. ոչ հաւանեցան թէ լուսաւորին՝ թէ մեծին՝ թէ քոյրն՝ և թէ թամխանն. թէ պէտ Այրու խօջայն բազում և զանազանիս կերպիս յոր դորեր զլուսաւոր. սակայն ոչ հաւատացին:

Օ կին աւուրց ինչ՝ զպատուախանի արարին զանից շահին՝ ըստ այսմ օրինակի: Ձմարիտ է բանքն քո՝ և աստուածիւ կամիս, որ՝ ի մեր մէջն բարեկամու թիւն լինի. ահաւասիկ նշան սիրոյ քո և խաղաղութե այն լինի. զի դու շէն և ամբողջ

ամբողջ Թողցես զաշխարհն մեր։ և Ժողո
վուրդքն մեր յիւրաքանչիւր տեղիս կացցեն։
և դու փոխանակ քո՝ի քոյոց եչխանաց զմիոք
Թողցես այդը՝ ոչ զի զնա՞ սեր և զիաբանուն
և զդաշնադրութիւն Թէ, զոր դու կամիս, միշնորդու
Թիւ նորին հաստատեսցուք ընդ քեզ։ և դու
եղեալ յաշխարհէն մերմէ գնասցես։ և մեք
եկեալ ուխտեսցուք աշխարհին մերոյ՝ և կացցուք
ընդ քեզ՝ի սէր և՝ի միաբանութիւն։ ոզջ լեր։
Եկեալ բազմաց հնարաւորաց խօսից՝ ասէրուխա
Քայն իբրև ետես Թէ ոչ հաւանացին։ առեալ
զԹուղԹն լաւասափոտ՝ և եկեալ առ շահնձա
նոյցն մանզնման բանս և զհաստատուն միտս նոցա

Եկեալ ընդոյ շահաբասին զայս բան պատաս
խանեաց։ չոճեաց ամիս բանակաւն և եկեալ՝ի
վերոյ քան զգօրի իմ ձանապարհին, որ գնայ
՝ի պաշխաչուխ։ և անդ իմերոյ ձանապարհին
բանակեցաւ։ Պատճառ յայսմ տեղւոջ բա
նակելոյն այս էր՝ զի Թէոք յազգին Ալ բաց իջ
խան կամ ուամիկ՝ Թէ կամիցեն փախչել և գնալ
՝ի պաշխաչուխ մի կարասցեն գնալ։

Նա առաի և առաքեաց շահն զարքուխա
Քայն կրկնակի առ լաւասափ բանիւ և գրով
զի Թերևս պատրեալ գայցէ՝ և ոչ եկն։

Եաւել երրորդանգամ առաքել զնոյն առ
րուջախայն առ լաւասափ՝ և ոչ եկն։

Նա՝ի բազում գալոյն և գնալոյն ձանձրա
ցան լաւասափ և իւրքն։ յայսմ՝ի վերջինն
նոճադիս գալոյն՝ արարին զգործ անարգանաց
և սարուխաջային՝ զի միւս առաքեսցէ առ նոսա
շահն հրեշտակ։ Նա անարգանաց զգործն, զոր
արարին այս էր՝ զի զամեն ինչս նոր յափշտակե
ցին, և բնաւ ին մերկացուցին՝ի զարդուց և՝ի զի
նուց, ՝ի հանդերձից և յերիվարաց, մինչ զի
և զ ջո

և զԵղբին ևս զոր ինքն հեծեալեր առին. և զինքն հետևակ արձակեցին ՚ի գնալ. և պա տուիրեցին մեծաւ սպառնալեօք միւս յա լըլ առ ՚ի գալ՝ և այսպիսեաւ անարգուԹիւ սարսուխօջայն եկն առ շահն։ Եւ շահն երկայ նա մտեալ համբերեր ՚ի տեղւոջն. և մտավար ժեալ խոկայր ՚ի խորհուրդս էարեաց՝ և նեն գուԹե լաւ ասափին, և Թամբռաղին։

Ա՝ինչ շահն այսպէս վարանեալ կայր՝ և ոչ գտաներ զելս իրացն։ ՚Ի այն աւուրս այր ոմն ՚ի քաղաքէն տփխիսոյ գործօնեայ էարեաց՝ և որդի անիծից՝ շարժեալ ՚ի դիւաց ըստ ազգե ցուԹեն սատանայի, եղեալ ՚ի տփխիսոյ և եկն ՚ի բանակն արքունի՝ և ծանոյց շահին ԹԷ խըն դիր ե տերուԹիւ. քո բերել զլաւ ասափ. արդ եԹէ ստուգիւ կամիս և ՚ինաս ոչ առնես. ես գնացեալ ածից զնա առ քեզ և իմ՚ ոյամ բանի առնն մեծ զարմացուաւ կալաւ զշահն. և հարց ցայրն ԹԷ դուս զիարդ կարես բերել զնա. և այրն ասաց մեք ազգականք եմք լաւ ասափին քանզի նա ինձ սան ե ՚ի կնքաւորուԹիւ կոչմա նէ. և իմ՚ք մեր ղմեծ հաւատարմուԹիւ ունիմք առ միմեանս. վՆորոյ գիտեմ զի նա հաւատայ բանից իմոց։ Եւսկ շահն իւրոյ ոյամ բանի ան պատում ցնծուԹիւ լցեալ եղև. զի գործ զոր ինքն բազմաւ աշխատուԹիւ ջանայր՝ և ոչ լինէր. և որում՚ ՚ի յոլովից ժամանակաց ցան կայր և ոչ հասանէր. արդ իս յոյժ դիւրուԹիւ լինի. վՆորոյ խոստացաւ առնն այնմիկ զբա զում գանձս և զբազումպարգևս՝ և բազում՚ևս փառաց հասուցանել եԹէ բերցէ զլաւ ասափն։

Եւսկ չարաբաստ այրն այն վատաչուէր՝ որ եղև պատճառ կործանման ԹշնուԹեն քրիս տոնէ ից. գնացեալ՚ի պաշիսաչուխ առ լաւ ասափ և առ

և առ Թամրազ. և յաւուրս բազում խօսեցաւ ընդ լաւասափին հաւանականաւ և մեղկացուց չաւ բանիւ. մինչ որ Թուլացոյց ի պնտուԹէ զմիտանն։ բայց Թամրազ՝ և մայր և քոյր լաւասափին՝ և ամքն հաւատարմութիւնն ոչ հաւանեին բանից առնն այլ քամահէին. քանզի գիտէին ստուգիւ Թէ կախարդասար հնարքն է չհին։ Այլ այրն սատանայքնակ ոչ զօճն ևայլ հա կեալ դարձոյց զմիտս լաւասափին գնալ առ շահն։ Այսկ մայրն լաւասափին, և քոյրն, և Թամրազն. և իշխանքն, և ամքն բարեկամքն. լայ ին արտասուօք և ողբային, և ասէին. մի մա ռներ զքեզ ի ձեռս Թշնամւոյ քոյ՝ զի նա քո Թշնամի է և ոչ բարեկամ. և ի կորուսանել զքեզ ջանայ։ և Թամրազն ասէր մի հաւատաք անհաւատիդ այդմիկ և խորամանկ գազանիդ. զի դա զկորուսան մեր ջանայ։ Այսկ միաք լաւասափին. բանից չարեաց արբանեակ առնն առաւել հաւանէր. քան Թէ բանից բարեկա մաց իւրոց։ Այս զայս առնէր ամենեցուն պատասխանի՝ Թէ ահաւասիկ շահն եկեալ և նըս տեալ կայ իմ ջ մերոյ երկրին. և խնդրէ զնա առնել զնաղաղուԹի. և Թէ ոչ գնացից զամ երկիրն աւերեալ ապականէ. և զեկեղեցիսն քանդէ, և զքրիստոնեայսն սպանանէ, և գերէ. և այս ամ լինի ի պատճառս իմ։ քան Թէ կեցից ի ժամանակս ինչ խղճմտանաք՝ և այնքան անձանց պարտական լինէ ինձ գնալ առ շահն և զաչխարհն ամ ազատել զի մի լինի խոռվ պատճառաւ աւերուածն աշխարհի. յու սալով յԱ՛ծ գնամ առ նա ուղղուԹիւ. և անդէն զինչ և պատահեացի ինձ եԹէ մահ և եԹէ կեանք, եղիցի կամք ամն օրհնեալ։

Այդ այսպիսի բանդագուշեալ խելօք ոչ լսեաւ

լուծաւ լաւասափ քաղեկամաց իւրոց. այլ Հաւատացաւ անդ բանից և երդմանն շահին. եւ ետ՝ի պա շիաչուխէն գալ առ շահն. և յորժամ բերին զաւետիս գալստեան նոր առ շահն՝ ոչ գիտեր թէ որով օրինակաւ ցնծասցէ սիրտ նր։

Այս յորժամ եկեալ լաւասափ մերձ եղև քանակին Պարսից շահն ինքն եւեալ ընդառաջ նր ամիւք իշ խանօք և զօրօք. և՝ի տեսա նել ի միմեանց սիրով և խնդութիւք և քաղցր շուք դնելով զողջոյն ասային իրերաց։ իսկ որ շահն էր ցնծայր՝ի սիրտ և յոգւի իւր. զի մեծ եղև նմա օրս այս քան զամենն աւուրս կենաց իւրոց. զի կատարումն եղև ջեր կամացն՝ զոր՝ի բազմաց ժամանակաց բաղձայր։ Այս ոչ սովորութիւն է խորամանկ և օձաբարոյ ազգին Պարսից. և մանաւանդ այս շահիս բազմահնար վիշապիս զառաջինն բազմաւ սիրով և մեծարանօք ընկալաւ զնա. և հանապազ զսուտ և զնոտի պատրողականիւք բանիւք ըստ հաճոյից կամաց նր խօսէր. մինչև համբաւն այնպէս տարածեցաւ յամ աշխարհն Ռ|րաց՝ թէ շահն որ խնդրէր զլաւասափ. ոչ ևս այլևս պատճառի էր. քան թէ ևս սիրոյ և միաբանութեան։

Ապա ջուեալ անտի իւրով քանակաւն շահն գնաց՝ի տիխիս. տարաւ ընդ իւր և զլաւասափ՝ և պահէր զնա իւր հաւասար մեծաւ փառօք՝ և հանապազ խօսէր ըստ սխորժակաց մտացնորա՝ զբանս հաճոյականս նմա. և զինքն հաւատարիմ ցուցանէր նմա։

Այս լաւասափ՝ՙի ժամանակին յորում նոր նատեալ էր թագաւր. և զկնի ամաց հինգ և չորս և հինգ ամաւ յառաջ քան զշահի գալն։ Այս եղև երբեմն՝ՙի կարգս զրուցոց պատմութեան զպատգին լաւասափիս զսիմեան խանին. զոր մի

բռնեցին օձմանցիք տարան ՚ի ստամբօլ սպա
նին և անդէն թաղեցին, որոյ վր՚ եռաց ա֊
իւնն լաւասափին՝ և ըղձացաւ առ ՚ի բերել
զնշխարս պապուն իւրոյ սիմոն խանին՚ի հայրե
նի գերեզմանատունս իւրեանց՝ թաղել ընդ
այլոց և նախնեացն և ընտանեաց իւրեանց։
Աւ իբրև տեղեկացեալ էգիտ զարս ումնա՝
որք գիտէին զտեղին՝ յորում թաղեալ կայր
նշխարք սիմոն խանին ՚ի քաղաքին կոստանդ
նու պօլսի։ և իսկոյն զգիտօղ զարն զայնոսիկ
առաքեաց առ ի բերել զնշ խարս սիմոն խանին։
և նոքա գնացեալ ՚ի կոստանդնուպօլիս հանին
զնշ խարսն և բերեալ հասուցին ՚ի Թիֆլիս։
և ՚ի գալ արանցն՝ որք բերին զնշ խարս սիմոն
խանին՝ պատահեցաւ յայսմ ժամանակիս ղե
շահն ՚ի Թիֆլիս էր, որև գիտաց շահն Թէ
զնշ խարս սիմոն խանին բերին։ Աւ լցեալն խոր
հրդով և խարդախութիւ սատանայի, որ այն
քան Թշնամիէ քրիստոնէից միշտ զլի և արեան
նց ծարաւի՝ ոգ սպանմամբ և գերութիւ կէն
դանեացն ոչ չատացաւ, արդ այժմ ընդ ոսկե
րաց մեռելոցն և սրար զԹշնամութիւն, վնաս
սատիկ հրամանաւ հրամայեաց իսկոյն բերել
առաջի իւր։ Աւ իբրև կատարեցաւ հրամանն,
ասաց զսա ես առաւել պատուհեմ և փառաւո
րեմ քան զձեզ, զի դուք ոչ գիտէք զարժա
նաւոր պատիւ Թիւրց, և կամիմ առաքել զսա
յիմամուղէն՝ զի ընդ նախնեացն մերոց Թիւրց
և պեսաց փառաւորեսցի։ Արդ այսպիսի կա
խարդասարիւք բանիւք առաքեաց զոսկերսն
սիմոն խանին՚ի պարսկաստան, և ոչ էԹող Թա
զել՚ի հողն Արաց, և ոչդք գիտաց Թէ զինչ
արարին համ՚ուր տարան։ և այսպէս անյայտ
արարեալ կորուսին։

Ա։ յայսքան ժամանակս որ եկաց շահն՝ի Ա ըստ տուն ընդ իւրով իշխանութեանն գրաւ եաց զնա՝ մի աշխարհն։ Ա յայց զերկիրն Թամրազին զբովանդակն՝ յայտնապէս արար զնի լեցի ընդ իշխանութեանն Պարսից եթե Թէ Թրոմն իւրով առեալ զայն։ վն որոյ առաքեաց զզօրս՝ի Պար սից՝ որք շինեցին յերկիրն Թամրազին զբեր դօրայս՝ և կացոյց՝ի նոսա զզօրս՝ի Պարսից։ և զսենեկապետն։ և զվէզբարխանն։ և զբէկդաշ խանն կարգեաց անդէն զնիշխան և զզօրս գլուխ՝ զնի պահեցեն զերկիրն ընդ իշխանու թեանն Պարսից։

Ա։ զբնակիչսն կախէ Թու և գրիմայ սպա ռեաց։ զոմանս սպանմամբ։ զոմանս գերու Թեամբ։ և որք մնացին և գրեցան շահիսէ ան զհրաման արար վն նոցին զնոմն արտաստահման առնել և բշել տանել՝ի Պարսկաստան։ Ա։ կարգեաց նվէր այսմ գործոյ զնիշխանս և զզօրս որ առաջին գրոնն և ԹղԹոնն, զոր գրեցին զանօ անս նոցա և առ ինքեանս ասնէին։ այն գրոնն սկսան քննել զամն ընտանեաց իւրեց։ և զամն զնն իւրեանց ընտանեաց և ստացուածոց չիւ բաքանչիւր տեղեաց հանել և զորս հանէին քե րեալ բանակեցուցանէին յափն կուր գեղոյն՝ի տեղին որ անուանի զաբրին։ քանզի անդէն սահմանեցին զբանակատեղ։ այսպէս արարին մինչև զամ շահիսէ ան գրեալքն հանին։ և յորժամ եղև զրաւհանելոյն՝ նոյն գրոնն և մատենիսն չուէցուցեալ անտի՝ և բշեցին տանիլ յաշխարհն Պարսից։ և բերեալ հատուցին մինչ՝ի զազիլն քաղաք։ և անտի տարան՝ի քաղաքն Ֆահրա պատ։ յորժամ հատուցին՝ի Ֆահրապատ՝ զո մանս՝ի նոցանէ իմէջ Ֆահրապատու քաղաքին բնակեցուցին։ Թէ՝ի Ա ըստ և Թէ՝ի Հայոց։

Թէ

թէ՝ ի մահմետականաց. թէ՝ ի քրիստոնէից. և զայլս բազումս՝ ի նոցանէ բնակեցուցին՝ ի գեղջ բայսն. և եռուն սոցա անդրէն զտեղիս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց։ Այս այսու կերպիւ աւերեաց զաշխարհն Ռ բաց, կախէ Թուս և գրիմու. և տարեալ էլից յերկիրն Փա հրաստանու։

Այլ գնացեալ ժողովուրդքս այսոքիկ. ոչ աձեցան յայ խարհին յայնմիկ. վասն զի ոչ էին ընդելք գերջ և դաժան ընչարգել և մգաւոտ օդոյ երկրին. նաև ոչ ուտելեաց և ըմպելեաց. և այլ կենցաղավարութեանէ երկրին։ վասն որոյ սկսան կոտորիլ և մեռանիլ. և՝ ի սակաւ ժա մանակս այնքան կոտորեալ մեռան հազիւ թէ՝ ի տասնէն մէկն մնաց։ Այս այնք որք մնացին՝ յետ ժամանակաց՝ ի հիւանդութենէ և՝ ի ցաւոց ձնչեալք և մաշեալք և ցաւագարեալք եղեն. որ ոչ կարէին զգործ ինչ մարմնական գործել յօգուտ կենցաղավարութեանէ իւրեանց։ Այս և՝ ի պանդխտութենէ և՝ ի նշդեհութենէ եղեն աղքատք և չքաւորք՝ և զորինչ ունէին վաճառեալ կերթին։ Այս՝ ի պատճառէ չքաւորութենէ զբողոք բարձին ազգն Ռ բաց առ շահն. որ յաւուրսն յայնոսիկ՝ ի փաշայութեանէր. վասն չքաւորութենէ և սովուն զորս կրէին։ և շահն զպատասխանի արար նոցա. թէ ուրացէք զձեր հաւատս. և լերուք օրինաւքն մահմետի. և ես տամ ձեզ յոլով զինչս որով ապրիք՝ և ուտէք։ և նոքա հարկեալք՝ ի կարեաց սովուն արարին զհրամանս շահին, և եղեն մահմետականք. և շահն ոչ ետուն զինչս յոլովս քան զոր ասացաք։ Այս նոքա քանչիւր անձին երէք մեծաց երէք վորունց եւ զին մի դահեկան, և արձակեաց՝ ի տունս իւրեանց։

Ի.դդ որք գովին զայս շահս թէ քրիստոնէ
ասէր և աշխարհաշէն և խաղաղարար թագրէր.
այս է նոր քրիստոնէասիրութիւն, որ զամ աշ
խարհն քրիստոնէից զհայոց և զ|| րաց աւե
րեաց. և զամեն սպառեաց սրով և սովու և գե
րութ. և զնացեալսն վարեալ տարաւ 'ի
Ֆահրապատ և 'ի սպահան, որ նորա ևս օրաւ
ուր անդէն սպառին պէս սպէս կերպիւ: և ովքը
որ գովել կամի զնա. թող յառաջ հայեցեալ
նկատեսցէ զարարեալ գործսն, զոր արար ընդ
քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա:

Ի.դդ որով օրինակաւ պատմեցաք, զոր արար
շահն ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահի
ակեան 'ի Թամրազի երկրէն. սոյն օրինակաւ
և արար ընդ ժողովրդեանն. որք գրեցան շահի
ակեան 'ի լաւատափի երկրէն: վերդ իվր նոց
կարգեաց զզօրս և զզօրապետս՝ որք առաջին
գրոյն և բարեխնամն չունեցուցին յիւրքանչիւր
տեղեաց և վարեալ տարան 'ի Պարսկաստան:
Նայց զայս ժողովուրդս, որք էին յերկրէն
քարթլայ ոչ տարան 'ի Ֆահրապատ այլ տա
ցան յասպահան. և բնակեցուցին 'ի սար գե
զօրայն ասպահանու. ուր և զազգն հայոց
բնակեցուցեալք էին: Ի.դ այժմ յարդեանս
ժամանակիս՝ որք Թուրքական մեր հազար և հա
րիւրեւեօթն. յորում գրեցաք զպատմութիւնս.
այս վրացիքս ամքն գարձան 'ի հաւատոյն
եւրեանց 'ի կրօնս մահմետի. և այնքան կու
ռէքը և դահիճք են քրիստոնէից. որ 'ի պա
տահին մեր նոց 'ի ձանապարհն ուրեք. զբարևն
մեր ոչ առնուն. մեզք համարելով եւրեանց
զբարև առնուլն: այլև հայհոյեալ անարգէն
զՏարս և զնախնիսս եւրեանց՝ թէ նորա անհաւ
ատք են և անհաւատ մեռան: այլև իվր նորոյ
հաւատ

Հաւատոյն իւրեանց գոհանան զԱ. Թէ այս է
Աչմարիտ Հաւատ՝ զոր այժմ ստացաք։ Ա. Այլեւ
յայսմ Ա| ըսաց ժողովրդենէս՝ ի ժամանակին
յորում նոր բերին՝ ի սպահան. բաժանեցին
զմոմն ինչ և յառաջ խաղաղութեալ տարան յեր
կիրն շիրազու. և յերկիրն, զոր անուանեն ասու
փաս. որև օրքան ևս սպառեցան պէս սպէս կեր
պիւ. և մնացեալքն ամքն միահաղոյն դարձան
յօրէնս մահմետի։

O այսու ժամանակաւս՝ յորում չահն՝ ի տըվ
խիս էր և առ ինքն ունէր զլաւաստափ. վն որոյ
խնդայր և բերկրեալ զոճաձանայր՝ զի ըմբռ
նեաց զնա՝ ի ցանցս իւր։ Ա. այլ վն Թամրազին
տրտմէր զի ոչ կարաց ըմբռնել. որև վն նոր խոս
կայր՝ ի սենեակ սրտի իւրոյ՝ ի խշտին բեհեմով
Թաց՝ Թէ զի արդ կարասցէ կորուսանել զնա։

Ա| Ո՞րոյ և յաղագս նր հնարէ այսպիսի ինն
որոգայթ. զի հաւանեցոյց զայր ոմն և առա
քեաց՝ ի պաշիաչուխս. եցոյց նմա զՅամն Ճանա
պարհս. հնարից՝ պատուիրելով զնառայ Թէ
որով և իցէ օրինակաւ սպան դու զԹամրազն
Թէ չայանի և Թէ՝ ի ծածուկ։ և զայս այր, որ
առաքեաց՝ ի ծածուկ սպանանել զԹամրազն
Թաքուն և գաղտնի չամենից նախարարաց իւ
րոց արար՝ որ ոչքք գիտէր։ Ա. այս այս գնա
ցեալ եհաս՝ ի պաշիաչուխս. և չաւուրս ինչ եղ
և մուտ արար՝ ի տեղիսն ուր էր Թամրազն. և
դիտեալ նկատեաց զՅամ ինչ. զՅանապարհն և
զաեղին ուր՝ ի գիշերի ննջէր Թամրազ. քանզի
աեղինէր վերնատուն, զոր փայտեայ սանդխով
ելանէին և իջանէին։ Ա. չաւուր միում՝ ի
ծածուկ և անգիտելի ումեք այրն այն զսպատա
կալեալ հսկեաց զգիշերայն. զի Թերևս գտանի
ոչ զղեսցէ ժամ առնի սպանանել զԹամրազն.

և ՚ի հասարակել գիշերոյն գիտաց Թէ ամբն
ննջեալք են. նաև գիշերապահ արքն՝ որք են
քէշիկչիքն, ննջեալք են։ եկեալ այրն այն զան
խուճ և Թաքուն. և բնդ փայտեայ սանդուխն
ել ՚ի վերնատունն ուր ննջէր Թամրազ. և
տեսս զի ՚ի կողմն մի վերնատանն ննջեալք
էին ոգիք երկու ՚ի միում անկողնի. և ՚ի
միւս կողմն ննջեալք էին այլեւս ոգիք երկու
՚ի միում անկողնի։ և սքա որք ննջեալք էին
՚ի վերնատանն ՚ի միում անկողնի էին Թամ
րազ և կինն իւր. և ՚ի միւսում անկողնոջն
էին երկու աղախնայք՝ որք վե սպասաւորու
Թէ մերձ առնոսա ննջեալք էին ՚ի միում ան
կողնի։ Եւսկ այրն որ եկեալ էր վե սպանուԹէ՝
ոչ կարաց տատգիս վերահասու լինել Թէ
որդք ՚ի նոցանէ էին Թամրազն. վե որոյ ոչ հա
մարձակեցաւ ՚ի սպանուԹէ՝ զի մի գուցէ սպա
նեալն այլոք էին և ոչ Թամրազն։ վե որոյ
խորհեցաւ Թողուլ զգործ սպանուԹէ յայնմ
գիշերի և գնալ. և յառաջիկայ աւուրն դի
տեսցէ՝ և տատգիս իմ ՚ի հասցէ Թէ որդք ՚ի նո
ցանէ էին Թամրազն. և ապա եկեալ անվրէպ
զնա հարեալ սպանցէ։ Եւ զայս խորհուրդ
՚ի
էարկ ՚ի սիրտ առնն այնմիկ՝ և դարձոյց զնա՝ ոչ
զի վ սպանցի ԹագաւորԹէ էր։ Եւ զվե զնա
բանիկ չարուԹէն շահին յայտնեալ զնա էայ
տատակեաց։ Եւ դարձ այսու խորհրդով այրն
դարձաւ ՚ի վերնատանէն. և սկսաւ ինձանել
բնդ փայտեայ սանդուխն բնդ որ եկեալն էր.
և մինչ ինձանէր այրն, նորին ինքեան Թիւրն
որ զմիջով իւրով ածեալ ունէր այրն՝ հա
րաւ ՚ի սանդուխն յորմէ հնչեաց ձայն. և ՚ի
ձայնէն արԹնացաւ շունն քէշիկչոց՝ և սկսաւ
հաջել առ այրն. և ՚ի հաջելոյ շանն արԹնա

ցան

ցան պահապանքն. և տեսեալ զայրն և շրջապա
տեալ բնդեղինեցին զնա. և որք տեսին զայրն
զահիհարեալ ապուշ մնացին ամենքն։ Եւ՝ ի վա
ղիւն Թամրազն, և այլք յիշխանաց կոչեցին
զայրն առաջի իւրեանց՝ և հարցմամբք տեղեկա
նային. և այրն զամն ստուգութեբ խոստովա
նեցաւ, թէ շահն առաքեաց զնա Թէ գնա
ցեալ սպանցես զԹամրազն։

Յայնժամ Թամրազն՝ ի խորոց սրտէ հառա
չեալով ասաց։ Որդ տեսեք եղբարք, զի շահն
զերկոսին որդիսն իմ յինէն առեալ տարաւ
առ ինքն՝ և արար ներքինիս. և զմայրն իմ տա
րեալ կորոյս՝ ի խորին պարսկաստան. և այժմ
զերկիրն իմ բնաւին աւերեաց՝ և զամ ժողո
վուրդն իմ և զազգն գերեալ տարաւ. և ես
զգլուխ իմ միայն աւեալ վախուցեալ կամ՝ ի
պանդխտութես. և նա այնու ամիս ոչ չաստա
նայ. այլ դեռևս ջանայ՝ ի հեռաստանէ սպա
նանել զնա. արդ նա որ այսքան ջանայ սպանա
նել զնա՝ և ես որով յուսով համարձակեցայց
գնալ առնա. և ամէնն որք տեսին զայն գործ՝ և
լուան զբանս Թամրազին. երեսացուցանէին
զնաւսնին և Թամրազ ողորմեալ առնին ոչ սպան
նեա. այլ արձակեաց՝ որ գնաց զնանապարհս
իւր։ Այլ ինքն ոչ ևս վստահացաւ կալ՝ ի
պաշխարհս, զի մի գուցէ այլևս որոգայթս
հնարեսցէ նմա շահն, այլ երեալ անտի գնաց
յերկիրն դադիանու՝ և հեռացաւ՝ ի շահէն։

Որդ զորպէտն ամ զարահնարից գործոց,
զոր արար շահն ընդ աշխարհին ։ Ըստ չէ կար
ժ զ ձառել զի՝ ի վեր է քան զձառ բանից. բան
զի զողջ ամին եկաց նա ամիս բանակաւն Պարս
սից անդ՝ յաշխարհին ։ Ըստ և զինն ամին խոր
հեցաւ երանել յաշխարհէն ։ Ըստ և գնալ
յաշխարհն Պարսից։

Կայց ՚ի վարանս և յուզմունս խորհրդոց կայր շահն թէ զի արդ կարասցէ կորուսանել զլաւասափ: և յայնպէս այսօրիկ բանս եդ նա խաբարաց իւրոց ասել ընդ լաւասափու. Թէ որովհետև բարեաւ և յաջողմամբն Ա՚ի եկեր դու՚ի տեսու Թէ շահին. և եղև սէր և միաբանութիւն ձեր. արդ յայնպէս հաստատու Թէ սիրոյ և ուխտի դաշանցն: Ա՚ւաւ վայելուչ է և պատշաճաւոր. որովհետև շահն եղանէ ՚ի գնալ յերկրէն քուանից. պատեհ է քեզ գնալ ընդ նմա երից և ջորից աւուրց Ճանապարհ ոմն զուղևոր՝ մինչև՚ի սահմանս երկրի քոյ. և ապա դարձցիս յաթոռ քո: Այս զայսպիսի բանս շահն ինքն ևս ասաց ՚ի կարգս զրուցոց ընդ լաւասափին. և լաւասափ քանզի ոչ ունէր կեղծաւորեալ զխորամանկութիւն ՚ի սրտի ևս բում, ոչ յատուկ է քրիստոնէից. հաճէցաւ առնել զասացեալն նոցա:

Այս յորժամ ջուեաց շահն ՚ի քաղաքէն Թէ ֆլիղոս: և առ ընդ իւր և զլաւասափ ըստ յա ռաջագոյն կարգեալ պայմանին իւրում:

Այս յորժամ գնացին երից և ջորից աւուրց Ճանապարհ. զնոր ինն բանս եդ շահն նախա բարաց իւրոց ասել ընդ լաւասափու. Որով հետև այս քան աւուրց Ճանապարհ եկեր՝ և յոյժ բարւոք արարեր. արդ խնդրեմք զի մի Թուձես ցի ծանր. այլևս յատաջել և գալ մինչև ՚ի քա զաքն գանձայ. զի անդէն՚ի գանձայ եդեալ է շահն ՚ի մեռ իւրում կոչել առաքել նւր զամն ինչ խանս կողմանցս այսոցիկ զշամախու և զե րևանայ. և զամն կամի կարգել՝ զի կացցեն ընդ ինչ խանուԹիւն քում. և զբեզ վերակացու և հրամանատար նմա՝ զի քո հրամանաւ արասցեն զամ, զոր ինչ և առնելն է: Այս այսմ

և

եւս հաւանեցաւ լաւասափ և գնաց ընդ շահէն
մինչև՛ ի գանձայ։ Եւ անդէն՛ ի գանձայ եբրև
անցին աւուրք յոլովք ոչ երևեցաւ նշան բա
նից առացելոց նախաբարաց շահէն։ այլև ոչ
երևի նշան և նշմարանք արձակման խրոյ։
Յայնժամ գիտաց լաւասափ յոգի ևս թէ
հնարիւք հանին զնա յերկրէն եւբմէ՝ և ոչ ևս
թողուն գնալ յերկիր եւբ։ վասն որոյ՛ ի մեծ
տրտմութեն և՛ ի վարանս խորհրդոց կայր լաւա
սափ։ և թէպէտ խորհէր՝ այլ ոչինչ կարէր
առնել զինաթս փրկութեն։

Այլև բազմաբուեսա հնարագործ այրն չա
հաբաս։ ՛ի նենգաւորս կարծ ևս եւբ խորհեալ
թէ միգուցէ կամ՛ ի գիշերի կամ՛ ի տուընջեան
գնալոց ժամ գտեալ հնարիւք ևմն փախիցէ
լաւասափ։ և՛ ի սակս այսմ կարծեաց արար
զնոր ևս հնարս ըստ այսմ օրինակի։ զի շահէն
պարգևեաց լաւասափին զմեհկհատ ջոյց՝ զոր՛ ի
գլուխս եւբեանց հարուն իշխանք։ և եր յոյժ
ազնիւ և պատուական։ գեղեցիկ և մեծագին։
և ընդ պարգևել ջոյցին պատուիրեաց սիրով
լաւասափին թէ յարաժամ՛ ի գալն քո առ ես
եղիցի սա՛ ի գլուխ քո։ և լաւասափ ևս այնպէ
առնէր հանապազ՛ ի գալն եւբ առ շահէն։

Եւ զկնի աւուրց ինչ հրամայեալ է շահէն
գողոցն եւբոց՝ զոր հանապազ ըստ ինքն պահէր՝
քանզի բազումաթս զբազմահնար գողք էին
վասն պէսպէս հնարից առ ինքն պահէր շահէն։
ոմն և այժմ ահա արար։ վնդի պատուիրեաց
նմ զանխուսափ և թագուն՛ ի գիշերի մտանել՛ ի
վրանն լաւասափու և գողանալ յատուկ զոյն
ջոյցն և զայլ ևս ինչս։ և գողքն արարին ոմն
ուսան՛ ի շահէն։ զի գողացան զջոյցն և զյո
լով յընծայեցին։ Եւ յաւուր միում յոյժ առ

չէրցին զլաւասափ առ շահն ըստ հանապազորդ
կոչմանն. և՛ ի գալն լաւասափու և՛ բազմիլն
ոչ էր ջղայն՛ ի գլուխ նոր ոտ յառաջ լինել. և
՛ի տեսանելն զնա շահին՝ իբր անգէտ գոլով
հարցանէր ընդ էր զջղայն ոչ եղեալ ես՛ ի գլուխ
քո. իբրև լուաւ թէ գողացեալ էն. յայնժամ
շահն՝ ի չքմեղս եղեալ և իբր բարեկամ և ցաւա
կից զինքն ձևացուցեալ մորմոքայր և ափսոսայր
և ապա դարձուցեալ զքանն իւր առ նոսա
արարս իւր՝ որք անդն կային. բարկանայր նոք
և յանդիմանէր՝ և զմահ սպառնայր. և ասէր՝
ընդէր ոչ բարւոք հոգաբարձուիք և հապա
տակուիք արարիք ծառայութեն սմա. և այն
քան անհոգ և պղերգ էք մինչ զի գողք ևս
մոռանեն՛ ի վրան սորա և առնեն զգողութիւն. և
մանաւանդ զայսպիսի երեւելի և պատուական
ինչ. և զայս ասէր վա՛ ջղային: Ապա ասաց՝
արդ միգուցէ միւսանգամ եկեալ գողոց գո
ղանայցեն այլևս ինչ յընչից սորա յաղագս ան
հոգութեե ձերոյ. և լինիցի մեզ կրկին ամօթ.
արդ պատրաստեցէք դուք զարս քաջս և
զգոյշս. զի յայմ գիշերի գիշերապահք պահ
պանութիւք պահեսցեն զվրանն սորա շուրջ
նակի՝ զի մի ինչս ևս պատահիցէ սմա. ապա
թէ ոչ՝ զձեզ զամն ընաջինջ առնեմ: Հետ
ընդունելոյ նախարարացն զայսպիսի սաստիկ
հրամանս. այնուհետև կացուցին պահապանս
շուրջ զնովաւ՝ որք՛ ի տուէ և՛ ի գիշերի պա
հէին զնա զգուշութիւք.

Ո այսպիսի հնարս գործեաց շահն՝ և կա
յոյց իմ՛ք լաւասափին զպահապանս զի մի գու
ցէ փախիցէ: և այսպիսի պահպանութիւք բե
րեալ հասոյց՛ ի Թաւրէզ. և տարաւ ընդ իւր՛ ի
պաղքին, և՛ ի փահրապատ, և՛ ի սպահան, և
անտի

անտի առաքեաց ՚ի շերտաւ քաղաքն ունել զնա ՚ի պահեստի. և անդէն ևս կարգեալ իւիր նէր պահապանս, որք պահէին զգուշութիւն։

Եւ եղև զի յետ յոլովից ամաց եկին դէս պանք ՚ի Աստուած Թագուրէն վէր սիրոյ և բազմաց գործոց. և ընդ աւուրսն այնոսիկ գնացեալ էր շահն ՚ի գաւառն սպահանայ՝ և նստեալ կայր իւիր գեղոյն, զոր անուանեն աւխրուրան և կամէր զջուր գեղոյն այնորիկ, բերել և խառնել ՚ի գետն սպահանայ՝ քանզի ջուրն սպահանայ սակաւ է։ և բազումք արուեստաւորք և գործաւորք գործէին ՚ի Հնամապարհս ջրոյն. և ինքն ևս շահն յայտնեալ պատճառէ անդէն զետեղեալ կայր։ Եւ գեսպանքն Աստուածոյ յայսմ տեղւոջ եկեալ հանդիպեցան տէր սուրբ շահին՝ և ընդ յոլովից խնդրուածոցն. վէր լաւասափին ևս խնդրեցին. ոմն ի դարձցի ՚ի տեղի իւր՝ և կացցէ ՚ի հրամանի և ՚ի հնազանդութիւն շահին։ Եւ խորհրդով շահ հաբաս. խնդրութիւն ընկալաւ զբանն զայն. և յաժարութիւն և աչալրջութիւն յանձին կալաւ կապաւել զխնդիրն զայն՝ առաքել զլաւասափ ՚ի տեղի իւր։ և այսպիսեաւ կերպիւ հաձեցուցեալ զդեսպանան ուղևորեաց յերկիր իւրեանց։

Յետ անցից այսոցիկ կոչեաց շահն առաջի իւր զնշխանն առ որ յանձին կայր լաւասափ՝ առ ցնա։ Եւ կոչառեան և սպանման արժանի գործ՝ ընդէր թողեալ ես զլաւասափ կեալ կեն դանի մինչև ցժամանակս այս. զի այժմ սոքա եկեալ խնդրեացեն զարձակումն նորա. արդ եթէ ոչ փութանակի եկեալ բերցես զնմա բաւ կոչառեան նմա. դու քոյովքն հանդերձ բնաջինջ լինելոց ես։ Նշխանն առեալ զայսպիսին հրաման վազվազակի հասանէր ՚ի քաղաքն

քաղաքն շինրազ. և ձեւացուցանէր զինքն
առ լաւ ասասփ սիրոյ և խաղաղութեն աղագաւ
եկեալ։

Այս յաւուր միում եղեւն՝ ի միասին լաւ առասփ
և իշխանն՝ ի պըտօսանս յերէցս գնաց. յորում
և սկսան զձուկն օրհնալ. և նախ պարսիկ իշ
խանն եառ՝ ի ձեռս զվարմն զի կազմեալ արկցէ
՝ի գետն յորս ձկանց. և ինքն իւրով կամօքն
անյարմար կազմեաց և թիւր և թէր ձգեաց՝ ի
գետն. երևեցուցեալ զինքն ոչ թէ ոչ գիտեմ
նակ լաւ առասփ ոչ ունելով զկարծիս ինչ՝ ի մտի
և ոչ ունելով զխորհուրդ զանձնէ. յինքն եառ
զվարմն՝ ի ձեռանէ իշխանին ոչ թէ ինքն այլ
ևս լաւագոյն արկցէ զվարմն՝ ի գետն. և մինչ
զգլուխն կորացուցեալ և խոնարհեալ իվէր վար
մին յարդարէր զվարմն՝ ի ձեռին իւրում. յե
տուստ կողմանէ պարսիկ իշխանն հանեալ
զսուրն զոր զմիջով իւրով ածեալ ունէր՝ ա
ծեալ բախեաց յանկարծակի իվէր պարանոցի
լաւասասփին՝ յորմէ բախմանէ գլուխ լաւասա
փին անջատեալ յինքենէ թռուցեալ անկաւ
՝ի բացեայ։ Այս նոյն պարսիկ իշխանն առեալ
զգլուխ լաւասասփին բերեալ՝ ի նախկին աս
ցեալ տեղին յաւիքուան կոչեցեալն. ՝ի բա
նակն արքունի՝ և էբեր առաջի շահին. և շահն
՝ի տեսանելն զգլուխն՝ և յիմանալն թէ լաւ
ասասփին է՝ ի դաժանութէ սրտին իւրոյ շար
ժեցաւ՝ ի ցասումն և՝ ի բարկութիւն իվէր գլխոյն.
անարգէր, և հայհոյէր, և քամահանօք հարեալ
այր և անդր ձգձգէր. և յորժամ այնպէ
անցուցեալ ընդ գլխոյն՝ ի ցասմանէ սրտին։
և ապա կալեալ զականջէ գլխոյն ձգեաց՝ ի բա
ցեայ՝ և գլուխն գլորեալ երթայր զառիվայր,
քանզի զառիվայր էր տեղին։ Եւ ընդ այսպէս
եղև.

եղև զբաւ կենաց լուսաւորչին Թադեւորին
ասիսիսուս՝ զի չարաչնարն շահաբաս այսպէս
սեաւ օրինակաւ կորոյս զնա. և զնորին աշ
խարհն գրաւեաց ընդ իւրով իշխանութիւն։

Պատմութիւն նահատակութիւն մեր Ղամրազի Թագաւորին
Կախեթուց՝ ինոյն Շահաբասայ։

ԺԲ։

ՈՐ՝ ՊԱՏՃԱՌԵՑ ԹՈՒՄ

Որազ Թագաւորն յերկրի իւրում՝ի կա
խեթ՝ և վարէր զնշխանութիւն իւր
խաղաղութիւն, և կայր՝ի հնազան
դութեան Պարսից, զի տակաւին չէր եկեալ
շահն յայլ խարհն Ի՝ բայց՝ և փախուցեալ զթագա
որան և աւերեալ զայլ խարհն՝ զորինչ յանցեալ
Ջառիդ պատմեցաք։ այլ կայր Թամրազն յիւ
րում երկրին՝ և շահն՝ի պարսկաստան. առա
քեաց շահն առ Թամրազ և խնդրեաց զպա
տանդ. և նա առաքեաց զմի յորդւոց իւրոց։
յաւել շահն միւսանգամ խնդրել զպատանդ.
և Թամրազ առաքեաց զմիւսևս որդին։ յաւել
շահն երրորդանգամ խնդրել զպատանդ. և
Թամրազ առաքեաց զմայրն իւր։ Ապա շահն
վերկոսեն որդիան Թամրազին արար ներքինիս,
զի մի ընծայեացի՝ի նոցանէ զաւակ՝ զի մի գու
ցէ լինիցի ժառանգ Թագաւորութեան նոցա։ Ապա
զմայրն Թամրազին յևս խորին պարսիկս առա
քեաց՝ի շինուած քաղաք առ իմամզուէի խանին
ունել զնա՝ի պահեստի։ և այսպէս հրամանաւ
շահաբասին կայր՝ի պահեստի մայր Թամրազին,
որոյ անունն էր մարիամ. բայց յետ ժամանա
կաց վկայեաց Վրէ Լծուքեն և նահատակու
թիւ կատարեցաւ մեր Վանականաց հաւատոյս՝ի
նոյն

նոյն շահաբաշխ. այսպիսեաւ պատճառաւ։ Եղև կային այլեւս մեծ ազգի կանայք յազգէն Հրեից յերկիրն Պարսից՝ գերեալք՝ ի պարսից։ Նոյնպէս և որդիք սոցա գերեալք էին ի Պարսից. և կարգեալք էին ծառայք Թագաւորին մեծի և առաջնոյ շահաբաշին. զի վասն մեծ ազգութեանէ սոցա հանապազորդ սպասաւորք և առաջնակայք կացուցեալք էին զնա Թագաւորին։

Եւ յաւուր միում շահն զբանս ինչ խօսից խօսեցեալ է ընդ ծառայից այսոցիկ. և իմիջ փորձի փորձ խօսիցն ասացեալ է նոցա. Թէ ընդէր զմարսն ձեր Թողուք մնալ՝ ի քրիստոնէութեան՝ որոյ կատարումն է կորուստ. և ոչ առնէք հաւատով և կրօնիւքն մահմետի՝ որոյ կատարումն է վայելչութեան արքայութեան։ և ծառայքն ասեն, բազում անգամ ասեմք, և ոչ դառնան՝ ասէ արքայ՝ ընդէր ոչ դառնան։ Նոքա ծառայքն, յերկիւղէն անձաւ մնացեալ ոչ գիտացին Թէ զինչ պատճառս յօդեսցեն, կամ զինչ տացեն զպատասխանի։ բայց ոմն՝ի նոցա նէ ասացեալէ, ոչ Թէ գիտութեամբ այլ անգիտութեամբ։ յորժամ ասեմք մարդ մերոց Թէ տաճկացեալ, նոքա ասեն մեզ՝ մայր Թամրաշէն քրիստոնեայ է՝ մեք ընդէր տաճկանամք։

Յայնժամ խորամանկն շահաբաս զայս բանս՝ի սրտի իւրում պարուրեալ՝ յետ աւուրց ինչ զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է. զի կամ դարձուացէ զդիտօփայն՝ի քրիստոնէութեանէ յօրէնս մահմետի. և կամ չարաչար մահուամբ կորուսցէ։ Եւ իշխանին գնացեալ՝ի շէն քաղ քաղաք. և մերձ կացեալ՝ի դուռն դիտօփային կոչեաց զնա. և առանց երես երես տեսանելոյ յետուստ կուսակ դրանն խօսեցաւ ընդ նա՝ և ասէ։

Հրամանն Թէգրին այսպէս է, զի հարկէ քեզ տաճկանալ. եթէ չօժարիս չոյժ բարի է՝ և թէ ոչ չօժարիս լեզուովդ ասա. և սրտովդ պահեա զքո հաւատն. առ չայս մարդկան ձևացո իբր թէ եղեր օրինօքն մահմետի. և ի ծածուկ պաշտեա զքո հաւատն. զի և մեք մնացուք ազատ ի խղճմտանացն՝ որ ի քոյդ կողմանէ է. զայսպիսի բանս ասէր նշ խանն. և զայր նման դահճին հերօդի. որ գնաց դէպ տեղ զօհանելոյ մկրտիչն։

Իսկ դիդօփալն ասաց ի ներքուստ. դու իմ եղբայր, և իմ որդի. ընդէր թաքուն խօսիս ընդ իս՝ եկ յանդիման խօսեաց. զի ես Թէգրի դուստր եմ. Թէգրի կին եմ. Թէգրի մայր եմ. և ես իսկ անձամբ իմով զԹէգրուԹէն վաթեալ եմ չետ առնն իմոյ՝ մինչ որ տղայն իմ զարգացաւ. սա կայն անցաւոր և ընդունայն է մածուԹէն աշխարհիս. եթէ Թէգրն քո լսովանդակ արարած ծոցս տէր լինի. և զամենեցուն ԹէգրուԹէնն ինձ տայ. ես ոչ ուրանամ զԻ՛ն իմ. և ոչ փոխանակեմ ընդ սիրոյ նորա զոր ունիմ առնա. և դու զորինչ առնելոց ես՝ դու դիտես։

Այլոն ընդ դիդօփալիս երկու քահանայք և բացին. և այլեւս ծառայք և աղախնայք. դարձաւ դիդօփալն առ նոսա և ասաց. եթէ զիս անդամ անդամ չօչեն՝ ես ոչ Թուլանամ ի սիրոյն Աւրի՝ և ոչ դառնամ ի նորին հաւատոցն. իսկ զձեր օգուտն դուք ընտրեցէք. և նոքա առհասարակ գոռալով լային. և աղքային զգրկուԹիւն իւրեանց ի բարեփառ տիկնոջէն։

Եւ ապա չետ բազմաց խօսից ողջանալոյ և սպառնալեաց՝ իբրև եառես եկեալ իչ խանն զհաստատուն միտս նր. հրամայեաց երկաԹի ձանիկօք խզբատել զմարմին նր՝ և կարի վերաւորել։

բել. և նա գոհանայր զԱ.Յ և արտասուօք
հայցէր ինքեան զհամբերութիւն ի Տէ:

Ձեռայսորիկ հրացուցին զառաքեալսն ի
ձին և եդին ի գլուխ նոր. և ոչ այնու կարացին
հաւանեցուցանել զնա:

Այլ ապա բերին զերկաթեայ բահ, որով զեր
կիր փորեն. և զայն բահն սաստիկ հրացուցին
և եդին իմէջ ստեանց դիդօփալին՝ իվերայ
կրծիցն և սրտին. և նա այնու աւանդեաց զա
նուշահոտ հոգին իւր առ Ա.Ջ:

Այլ մինն ևս ի քահանայիցն մարտիրոսա
ցաւ անդէն ընդ նմա. և այլքն ցրուեցան:

Ա.յս դիդօփալս յառաջագոյն պատուի
րեաց Թէ յորժամ սպանանեն զիս. զմարմին
իմ մի ընկենուք արտաքս ի տեսուքէն ոամ
կաց. բայց յետոյ փոչիմանեալ ասաց. ես որ
վա՛ղ հաւատոյն մարտիրոսանամ. զմարմին
իմ ղօրինէք և կամին արասցեն: Այլ յորժամ
սպանին՝ զպատուականն նշխար մարմնոյն ըն
կեցին արտաքս կերակուր լինիլ շանց և գա
զանաց: բայց Ա.Ջ փառաւորեաց զնա երկ
նաւորօք նշանօք. վասն որոյ ֆռանկք պատրիք
որք կային ի քաղաքին. գողացան զպատուա
կան մարմինն նր. զկնի պատեցին մաքրօք
կտաւօք խնկօք և զմռսօք՝ և ուղարկեցին ի
ֆռանկաստան, որ անդէն պատուի մեծաւ փա
ռօք: Այնպէս և զմիւս ևս զկնի պատեցին մա
քրօք կտաւօք խնկօք և զմռսօք և տարան առ
որդին նր Թամրազ յաշխարհն Ալ ընդ: և նա
անպատմելիս խնդութիւնք յղեալ գոհութիւնս մե
ծաւ փառաւորեր զԱ՚ն Ա.Ջն մեր, որ արժանի
արար զմայրն իւր վկայականի մահուան: Այլ
ասաց, սորին բարեխօսութիւնն զմեր Թէ ըրու
թիս Ա.Ջ հաստատուն պահեսցէ, և եղ պա

տուաւ յեկեղեցին իւր։ Որոյ յիշատակին օրհ
նութիւն եղիցի և աղօթիւքն իւրովք ողորմացի Տէր ամե
նից քրիստոնէից։ Այլև նահատակութիւն դիւդօ
փալիս ի մերում Թուականին Հազարևեօթա
նասունևչորից ։ ի փառս Քրիստոսի մերոյ ։

---

*Պատմութիւն նեղութեանց զոր կրեցին ազգն Հայոց յա
ռաջնոյ շահաբաս Թագաւորէն ։*

ԺԴ։

ԱՅԴՈՍԿԱՅՈՑ ՈՐՔ-
մատամբ և կամօքն իւրեանց կուրա
ցուցին զաչս իւրեանց, զի ինքեանք
կործանեցին զիթագաւորութիւնն իւրեանց՝ նէն
գութիւնք և անհնազանդութիւնն իւրեանց, և
եղեն ոտից կոխան, և ծառայք, և գերիք
այլոց ազգաց և թագաւորաց ։ և ի ժամանել նե
ղութեց նրանք եվր ինքեանց երբեք ոչ գտանեն
զօգնութիւն յուստեքէ, անձամբ մնացեալ փա
խստական լեալ Հողոպրին այսր և անդր ։

Այդ ևթէ յայսմանէ պատճառէ, և թէ կան
խաւ պատմեալ մեծի սովուն և ջալալոց պատ
ճառէն, ամ ազգն Հայոց եղեալք վտարանդիք
եղեն յիւրաքանչիւրոց տեղեաց և հայրենեաց
և բնակութեց և յաշխարհաց, և տարադէմ գնա
ցեալ ընդդեմ երեսաց՝ ցեր և ցան եղեալք
սփռեցան ընդ ամ աշխարհ, ի Կիպրոս, ի Կոս
տանդնուպոլիս, և ի քաղաքս, որք շուրջն
զնովաս, յԱւստրիէն, ի Հունդրան, յերկիրն
Լեհաց, ի կողմն Կաֆայու, ի ծովեզերեան
Պոնտոսի ։ Այլև բազումք յաշխարհն Պարս
պատականէ, յերեւան ի գանձակայ, ի Թաւրէզ
յարտաւէլ։ և ի շրջակայ գաւառս սոցա ։

Եւ յազգէն Հայոց ժողովուրդք որք ե-

կեալ զետեղեցան յաշխարհն ատրպատական
նի, մեծ և առաջին շահաբեան Պարսից թագաւո
ցաւնն զնա վարեալ քշեաց, տարաւ յաշխարհն
Պարսից՝ զկես բաժին մի 'ի ֆահրապատ, և
զկես բաժին մի 'ի սպահան քաղաք և 'ի գաւ
առս նր: Այս զայս գործ որ զազգն Հայոց քը
շեաց և տարաւ, ոչ թէ միանգամ կամ երկիցս
և երիցս արար և եկաց, այլ գտի հաւաստեաւ
զբազում արս՝ որք ինքեանք իսկ քշածքեն են՝ յո
րոց հարցեալ տեղեկացայ՝ նաև 'ի յիշատակարա
նաց գրոց՝ զորս ընթերցայ զի եօթն և ութն ան
գամ որիշորիշ զկնի միմեանց քշեալ և տարեալ:
Այս զյորմէս ոմանս 'ի սպահան տարեալ ժողո
վրդենէս, առ ներկայ աւուրսն այնոսիկ զե
տեղեալ բնակեցուցեն 'ի փութկայն՝ որ է քա
ղաքն անուանեն: Այս այս ժողովուրդ ոչ միայն
սին եկեալ էին, այլ որիշք 'ի միմեանց, վասն որոյ և
երկու գաւառք էին, միոյ գաւառն պետ և գլուխ
կարգեալէր շահն զայր ոմն 'ի նոցունց իւրոյ
մէկէն, որում անուն էր մուրատ, զոր մականուն
ամբ ղըրխեալան ասէին նմա: Եւ միւսում գա
ւառն մէկէն էր կարգեալ յովսէփ անուանեալ
այր ոմն, զոր մականունամբ ղարապաղ մէկէն
ասէին:

Այս ազգն Հայոց՝ որք եկին յասպահան,
զատ 'ի ջուղայեցւոց և յերևանցւոց ամէն չքաւ
որեցան, վասն զի ոչ յայտէ ամենևցուն զի յաս
պահան քաղաքն ամ ինչ եթէ ուտելի և թէ
զգենլի և թէ այլ ինչ, ամ ծանրավաճառ և
թանկագին է, և յայսմանէ պատճառէ այս է
կեալ ժողովրդս չքաւորեցան՝ զի զորինչ ունէին
վաճառեցին և կերին: Այս մանաւանդ առաւ
ել չքաւորեցան այս յիշատակեալ երկու գաւ
ժողո

ժողովուրդքս՝ որք վն չգաւորելոյն և սովե
լոյն իւրեանց այսր և անդր գնացեալ՝ որուամ
և պատահեալ ծանուցանէին զչգաւորու
թեն իւրեանց։ և մանաւանդ իւրեանց վերա
կացու Պարսիկ իշխանին, և զինուորաց նորին,
վն զի շահն զմի որ յիւրոց իշխանացն նոյ վերա
կացու կարգեալքը առի գիտել և իմանալ
զնման անցուցածս բանից և գործոց նոյ, այլև զի
գուցէ թէ ելանիցեն յասպահանայ և գնասցեն
յերկիրն աստպատականի և կամ յայլսւր։

Այս էհաս համբաւ չգաւորութեն նոյ առ
շահն խձեռն վերակացու իշխանացն՝ որոց
էին անուանք աւագագունին աղաշահաք, և
երկրորդին ուղուրլուբէկ, զորս աղաչեցին
քրիստոնեայքն ծանուցանել զչգաւորու
թեն իւրեանց շահին՝ և խնդրել ի նմանէ ինչս
առի պարէնս պետոյից կերակրոց և այլ կա
րեաց իւրեանց։ Այս իշխանքն ծանուցին, վն
որոյ շահն կոչեաց զերկուս դասուս ժողովը
դեանս մէլիքներն, և զայլս ոմանս ի նոցունց,
ասաց նոյ տամ ես ձեզ զգանձս և զինչս ի գան
ձարանէ թագաւորականէ, առի պատճառս կելոյ և
ապրելոյ ձեր։ բայց զպայմանն դնեմ և այն պայ
մանաւն տամ։ Այս պայմանն այս է, զի զորինչ
և տամ, փոխատամ ձեզ երիւք ամօք ժամանակօք
զի յետ երից ամացն դարձուցանիցէք ի մէզ.
և զայս փոխս ոչ թէ շահոյ և տոկոսեօք տամ,
այլ առանց շահի տամ զփոխս։ զի դուք այնու
առեալ գանձիւն առ և տուր արարեալ շահի
ցէք. և նորին շահն եղիցի ձեզ պարգեւեալ՝
զի մի ինայցէք եւէլ նեղուլթեց. այլ պատճառ
ձեզ առի և տուի շահելոյ և կելոյ նովաւ։ և զկնի
լման երից ամացն զգլուխ պարտուցն դարձու
ցանիցէք անդրէն ի գանձարանս թագաւորին. զի

այդ Թշուառական գանձէ, որում ոչ է հնար կորն չեզոց և ոչ փողի միոյ. և յորժամ վճարեցէք զնա, առէք ձեզ զգեղ ազատութեամբ և վճար մանն՝ այսինքն զղաբս։

Ի ՀԱՄՈՂ ՔՆ ՁԵՒՆՈՂ, որոք և առցե՛ք ի Թշուառական գանձէս. յորժամ բերցէք զառեալ գանձն՝ և վճարեացէ՛ք ի գանձարանս Թագաւորին, եղիցի ազատ. և եթէ ևցէ ոք, որ ոչ վճարիցէ զառեալ գանձն. այլ կերեալ և վատնեալ և կորուսեալ ևցէ զդրամն. և ոչ ունիցի զինչ զի տացէ։ այնպիսին, փոխանակ գանձին, կամ դարձցի յեւրոց հաւատացոյն յօրինս մահու. և կամ զորդին և զդուստրն տացէ առ ի լինել Թշուառական ծառայ։ Ի՛սկ զսոցին ևս զգինն յայտ արար. զգինս ուստերաց չորս Թուման ասաց. և զգինս դստերաց երեք Թուման. զի որոք ոչ ունիցի զբերամ առ՛ի տալ՝ փոխանակ չորս Թուանին զորդին տացէ, և փոխանակ երեք Թուանին զդուստրն տացէ.

Ի՛սկ այսու պայմանաւ եւ շահն այսց երկուց դասուց ժողովրդեանս զչորս հարիւր Թուման. զի մինչև ցերիս ամն առ և տուր արա բեալ շահեսցին. և յետ երից ամաց դարձուսցեն՛ի գանձարանս Թագաւորին։

Ի՛սկ արբշիռ. և անագորոյն. և անխմաստ և անամաքարոյ ազգս Հայոց՝ ոչ՛ի սկիզբն խորհեցան. և ոչ՛ի վերջն Հայեցան՝ Թէ զինչ է լինելոց վերջ գործ այսորիկ. այլ եբր անբան և անվիտ անասունն գոլով գնացին և առին զԹշուառական գանձն. որ էր ոչ զմահարար Թոյն օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ երեն մտախոհ Թէ ոչ զփուշ օձի է գանձն այն մահացուցանող։ Ի՛սկ երկոքեան մեկնեցան իւրեանց ժողովրդօքն առին զԹշուառական գանձնն.

ձէն. զարապաշ մեկնիքն ժողովուրդքդն առին զերեք հարեւր Թումման, և զրբեհալան մեկնիքն ժողովուրդքն առին զհարիւր Թումման, և լսեին գնա զարուց համարեցան զայն անձանց իւրեանց։

Եւ յամին յորում էառ շահն զգանձս զայս ժողովրդեանն Հայոց՝ էր Թուականն մեր հազար և չետասնեւեօթն, և հասին մինչև՛ի Թուականն հազար վաթսունեւերկու, և յայնժամ շահն, որ անմոռաց ունի զչիշատակս չարեաց՛ի միտս իւր՝ յիշեաց զայն. և զինդիր արար տուեալ գանձին։ Իսկ առօղք գանձին եղնաբարոյ ազգն Հայոց՝ ոչ միայն՝ ոչ շահ հեգուցին, այլև զգլուխն ևս կորուսին, զի ոմանք՛ի չքաւորութենէ, և ոմանք յանհնար հարուածենէ, և ոմանք յանտեղեկութենէ առի և տրոյ քաղաքին՝ կերին և վատնեցին, ցնցխեցին, և կորուսին զտուեալ գանձն թա գաւորին։

Եւ զուղղութեանն էին, որ վերակացու էր ժողովրդեանն, դարձալ կարգեաց շահն իվ՛ ինչ, զի զթագաւորական գանձն առեալ՛ի ժողովրդենէն չանձնեացէ՛ի գանձապահս թագաւորին։ Որոյ եկեալ զօրականաքն առեալ իվ՛ ժողովրդեանն ձգեին պահանջէր զգանձն։ Իսկ ժողովուրդքն զեղեալ գործն պատասխան նէին թէ ոչ ունիմք, զի չքաւորք և աղքատք էաք և առի վատնէին զամենեսեան կերեալ վատնեցաք։

Եւ վերակացու եչ հանին իւրով զօրական նօքն հանապազօր բռնադատէին զժողովուրդն, և չարչարէին, կախէին, հարկանէին, չանտարգել առնէին, և էին ժողովուրդքն խիզճ մեծ ի նեղութենէ։ և թէպէտ զոչինչ ու

նէին, և զորինչ ունէին, զայն ևս ՚ի ձախս դի նուիրացն վատնեցին, դի զմանն ինչ տային ՚ի ձաձուկ կաշառս՝ և զմանն ինչ տային յայնմ մուհլաթանայ՝ և զմանն ինչ ՚ի պետս կերակրոց զնուիրացն և երիվարացն, և այլ ևս ինչ պատճառ վատնեալ սպառեցին, և եղեն խոպառ աղքատք և չքաւորք։

Նոքա ուղղուրդուբէին իբրև ետես Թէ զոչ ինչ կարաց առնուլ ՚ի նոցանէ, ապա ծանոյց Թէուբինն զչքաւորութիւնն ժողովրդեանն, վ՚որոյ հրամայեաց շահն կոչել զժողովուրդսն նոցա առաջի իւր՝ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասաց. դուք մի համարիք և ամբաստանիջք լինիք զլինելն Թէ ես Թէրականաւ բռնութիւն և իշխանութիւն խնդրեմ և առնում ՚ի ձէնջ զդանձ, այլ դատաստանաւ և իրաւամբք խօսիմ, դի ես ձեզ փոխ ետու զդանձն զայն, և այժմ գնոյն փոխառեալ դանձն խնդրեմ ՚ի ձէնջ, և ոչ Թէ գնոր ինչ խնդրեմ, այլ զնմ տուեալ փոխն՝ և զայն առանց վաշ խից և տոկոսեաց խնդրեմ զգլուխն միայն։ Եդ եԹէ այս բանիք իրաւամբք Թուի ձեզ՝ տուք զառեալ փոխն ձեր ապաԹէ ոչ՝ ահաւասիկ դատաւորք և դատաստանք գոն ՚ի քաղաքի աստ, ես և դուք երԹիցուք խմիսն ՚ի դատաստան առ դատաւորս, և զորինչ հրամայելոց է ՚ի դատաւորացն ընդունելի լիցի ինձ և ձեզ։ և յոր կողմն և խօսիցին՝ կողմն Նայոց պարտեալ գտանիւր։

Եւ ՚ի բազում աւուրս ժողովուրդքն Նայոց՝ զբազում իշխանս բարեխօս արկեալ առԹէրն, արդեայով և բազմօք աղաչանօք խըն դրեցին ՚ի Թէուբէն գԹալ ՚ի տառապանս չքաւոր և աղքատ ժողովրդեանն, և զներումն առնել և Թողուլ զպարտսն զայն, և նա ոչ կամեցաւ նոցա ներել։ Իբրև

Իբրև կարի սաստկաբար խնդրէին զայս ի Հողմն Հայոց, ժողովեցին զամն զուստերս և զդստերս Իւրեանց ժողովուրդքն, և ածեալ կացուցին առաջի Թագաւորին ասելով, Վասն զի ոչ ունիմք զդրամ զի տուեալ՝ի պարտս Թագաւորին վճարեսցուք զուստերս և զդստերս մեր տամք Թագաւորին ոչ և յառաջագոյն սահմանադրեցաք։ Ի նդ ուստերաց և դստերաց՝ ղորս Հարք նոցա ածեալ էին՝ և առ գումթ աղեաւ նց եկեալ էին ամքն ազգականք նոցին, մարք, և եղբարք, և այլք, որք միագումար կային և բարձ բականահաք ողբով և արտասուօք լային՝ որ զտեսողացն ամենն զսիրտ և զաղիս մորմոքմամբ ձմլեցուցանէին։ Օ որս տեսեալ Թագաւորն յայն պահս յողբս և՝ի հառաչանս հրաժարեցաւ յառնլոյ զտղայն։ Բայց բարկացաւ իւր ու ղուրլուբէկին, որ դնա ածեալ էր՝ և ասաց զնոչ օգուտ մեզ յածելն քո զտղայն, զի կամիմ ես զնամն դարձուցանել՝ի տաճկութիւն։ Վն որոյ ասաց՝ եթէ վճարեսցեն զամ փոխն բարի է, եղիցին ազատք՝ և թէ ոչ վճարեսցեն, դարձցին յիւրսն Հաւատոցն՝ և եղիցին Հաւատոյն մահմետի, և ես զառեալ պարտանն՝ ընոր հեմ նց, և իւր այնր այլևս ձերս պարգևաց բաշխեմ նոցա։ զայս վճիռ Հաստեալ՝ ասաց, և առիպեաց առնուլ զպարտան։

Ասկ զինուորացն յետ ընդունելոյ զայս պահ սի Հրաման՝ի Թագաւորէն, սկսան յոյժ ձգիւ խնդրել զպարտան՝ի քրիստոնէից, կախէին, Հարկանէին, բանտարգել առնէին, և բազմաւ կերպիւ նեղէին։ զի Թերևս՝ի վտանգէ նեղուԹեն դառնայցեն՝ի Հաւատոցն՝ եսկ ժողովրդքն տեսէին, և տանէին ամենից վշտացն՝ և՝ի Հաւատոց ոչ դառնային։ Այսու հետև

ողորմելի ժողովուրդքն Հայոց որդւովք և ընտանեօք շրջեին ՚ի պողոտայս և ՚ի փողոցս քաղաքին առ ամենք լալով և ողբալով զի Թէր և յուսահեքէք լինէր Հնար օգնուԹԵ կամ փոխով կամ ողորմուԹԵ։

Եւ շրջագայելով գնացին ՚ի վանորայս Փուանկաց, որք էին ևմԵք քաղաքին ասպահանու։ և անՑ եպիսկոպոս յազգէն Փուանկաց եկեալ էր յայնմ ժամանակի յասպահան, և բնակէր ՚ի վանքն Փուանկաց՝ որոյ Հուսկենիայ անուն կոչեին։ Եւ էր այս եպիսկոպոս այր երևելի և վարԹամ՝ զոր բազում անգամ կոչեալ գնա շահն առ ինքն և խօսէր՝ և զսէր առնէր ընդ նմա։ և այս եպիսկոպոս իբրև Հետս զար ուասուան Հայոց՝ և Հարցեալ տեղեկացաւ ամէն, խօսեցաւ ընդ նոսա յուսադրականօք բանիւք և ասաց. մի երկնչիք, այլ Հաստատուն կացէք իւր ըՔականաց Հաւատոցն ձերոց, և ես զորինչ ունիմ տամ ձեզ՝ ոչ ԹԷ փոխ, այլ վն սերոյն ՚Ի՛ն, և նորին Հաւատոցն։ և դուք տուք շա Հին, և վՃարեցէք զպարտսն ձեր և՚ե Հաւատոց ձերոց մի դառնայք։ Եւսկ ժողովուրդքն Հայոց արտասուօք օրհնէին, զնա և զեպիսկոպոսն, և չնորՀակալուԹԵ գոՀանային զնմանէ զի ի՛ մէջ անՀնարելի նեղուԹեացն յօգնուԹԵ ժամանեաց նոց։

Իբրև ըստ իւրում խոստմանն եւս եպիսկոպոսն զգանձս երկուց դասուց ժողովրդեանն։ ձի ուամբ զարդարեալ մէկիկքին նորին դասուն էր կու Հարիւր Թումանն զուտ արծաԹԵն դրամ։ Եւ միւսում դասուն, որոց էր գլուխ զրիեա լան մէկիկքն, և այլ ոմն քաՀանայ բազդասար անուանեալ՝ այր Հանճարեղ և խնամատուն և Հաստատուն չՀմարտուԹԵ և Հաւատոյն ՚Ի՛ն,

սոցին ձեռաքն եւ սոցին դասուցն յիսուն Թուման զուտ արծաԹի դրամ։ որ և երկոցունց դասուց ժողով ըդ-ոցն տարեալ եւտուն վերա կացու իշխանին՝ի վՀարս պարտուց իւրեանց։ և վե մնացորդաց պարտուցն խնդրեցին զաւուրս ինչ ներել զի զայն ևս գտեալ յուսանէքէ վՀարիցեն։

Այս ոչ զԱՀ մատնիչ յուդայն, որ բաժա նեալ անջատեցաւ՝ի գնդէ երկոտասանիցն. Այլ երկու յաղգէն Հայոց՝ և յայսմանէ ժողո վըդ-ենէ՝ի դասուց պարապաշ մնլիքին. որոյն անունն բաՀդասար և միւսոյն ախիջան, եղեն արբանեակք առաքելոյն և աման չարին. Հակառակք եղեն քրիստոնէից և ասեն, եԹէ տաք մեզ իւրաքանչիւրոցս տասն տասն Թուման՝ի գանձէդ, զոր ետ Փռանկ եպիսկոպն, բարի է՝ ոչ՝ ինչ ասեմք. և Թէ ոչ տայք, գնասք առաջի իշխանացն նաև Թզւբին իսկ, և ասեմք. ոչ գնացեալ Փռանկ դարձան, վՀ այնորիկ ետ սոցա եպիսկոպն զգանձս. զոր բերեալ ետուն ձեզ։ Այսպէս միւս արքն աղաչէին և ասէին՝ այժմ ներեցէք մեզ՝ զի զայս գանձս տամք՝ի պարտս Թզւբին, զոր ահա ձերով իսկ աչօք տեսանէք՝ Թէ ոչ կարի Ճշդիւ պահանջէին յարդեանս աւուրս, և յետոյ՝ի մէնջ յամ ժողով ըդ-էնէս ժողովեմք և տամք ձեզ՝ ոչ և կամք ձեր ՀաՀի։ Այս ոչ ոչ եղեն ժուժկալք՝ և ոչ անսացին բանից և աղաչանաց նոցա, այլ երեալք գնացին առ իշխանս մահմետականս։ Ապա խօսեցան զՀայոց և ասացին. Թէ Հայք գնացին առ Փռանկան, և դարձան՝ի Հաւատս նոցա. առեալ զգանձս զայս և բերեալ վՀարեցին ձեզ։ Այլև ընդեանք մատնիչք արքն երկոքինն ամենիւք ընտանեօք իւրեանց դարձան յօրէնս մահմե-

տէր, և պատուիրէ կալան զոյն հաւատոյն, զի ամենիւք ընտանեօք երթանց Թլփատեցան։

Այլ եւ այսմ բանի յոյժ խոժոռեցան իշխանքն մահմետականք՝ և ասելով զբանն ընդ միմեանս, մինչև եհաս բանն յունկն Թագաւորին, որոյ կարի ծանր ի դառն թուեցաւ։ Որոշ հրամայեաց բերել առաջի իւր զմելիք ներսն, և նախ զղարապաշ մելիքն գտեալ տա ըան յայնմաւուր, ընդ որում խօսեցաւ արքայ և ասաց մեղադրանօք և սպառնալեօք։ Մի ազգ ապերախտ և չար, արժանի բնաջնջի և կոտորման, ես ողորմեալ ձեզ եւոու զայսքան գանձ, և զայսքան ամաց շահն ևս ընդհեցի ձեզ, և խոստացայ այլևս ընդհել երթէ դառնայք ի հաւատս մեր, և դուք ասացիք վասն գանձի ոչ դառնամք ի մերոց հաւատոց։ և այժմ զնարդ դարձեալ էք ի հաւատն ֆռանկաց և առ եալէք ինոցունց զգանձ, արդ երթէ մի գանձի դառնայիք ի հաւատոց ի հաւատս, զինչ էր նոճաստուածն և արատ մերոյ հաւատոյ՝ յոր ոչ դարձայք։ Պատասխանեալ մելիքն իւրովք ընկերովքն, Մի հրաշազան և տեսերական արքայ՝ քաւ լիցի մեզ դառնալ ի մերոյս հաւատոյ, ոչ եմք դարձեալ, այլ կամք ի հաւատն մեր ոսկ և էաք յառաջն. և որք զբանս զայս ասացեալք են զմենջ առաջի քումդ ահ երեսաց քոց՝ նոքա զսուտ են ասացեալ և զգանձն զոր՝ի ֆռանկաց առաք՝ զփոխ առաք, զոր և բերեալ տուաք ի տեղի պարտուցն։ Պատասխանեալ ասաց արքայ, ոչ է ձշմարիտ խօսքդ ձեր, քանզի պատճառանօք ես փոխեալ այդ, զի թէ սուտ փոխ էր՝ յայլոց ազգաց զնարդ ոչ առնուիք այլ միայն ի ֆռանկաց։

Այս

Այլ Թէպէտ ՚ի բազում աւուրս բազմաւ կերպիւ խօսեցան Ժողովուրդքն. այնուհետեւ բնաւ ոչ ետ զտեղի բանից նոցա որքայ։ այլ ոչ նախէր ասացեալ. սոյնպէս և այժմ ասաց՝ եթէ դառնայք յօրէնս մեր յոյժ բարւոք առնէք. զի զըրինչ և պարտիք զայն ամ ընորհեմ. և իմ ՚ի այնր բազում և այլեւս պարգեւս և զէիրս բաշխեմ ձեզ։ ապա Թէ ոչ դառնայք. մատնեմ զձեզ ՚ի տանջանս անզերծանելիս. զի իմ ՚ի տանջանաց վատնեալ սպառեսցին ոգիք ձեր՝ և ընդ վայր սատակեսջիք։ Ով որ և իսկոյն մատ նեաց ՚ի ձեռս դահճաց. զի Թարց իմիք ներե ցոյ հանապազ տանջեսցեն մինչ կամ դառնան կամ մեռանին։

Այլ այնուհետեւ եկին և ՟ՀՃաս իմ ՚ի ողբմելի Ժողովրդեանն մէջ՝ մատախուղ՚ և խաւար ան փարատելի. զի վաղվաղակի փուԹացեալ անօ րէնն դահճացն այսր և անդր գտին զամ արս ՚ի Ժողովրդենէ անտի. կալան, և սկսան յանխնայ ջարչարել. Հարկանել և վիրաւորել. ՚ի կախս ղանի և յորսոյս. ՚ի շղԹայս և ՚ի կոճեղս. ՚ի բանտս և յարդելեանս. սովու և ծարաւով զբազում աւուրս. և աղաղակ Ժողովրդոյն. լալ և կոծ արանց և կանանց ընդ իրեար խառնեալ յերկինս հասանէր։

Այլ զղարապաշ մելիքն կախեալ գլխիվայր այնքան բրած-եծ արարին որ ոտից ըղնկուէնքն Թափեցան. և յարեանէն ամ մնրմինն ԹաԹաւեցաւ՝ և եղև անշուշ իբրև զմեռեալ. վն զի կարի յաւէտ անողորմ Հարին՝ յահ և յերկիւղ միւս քրիստոնէից ըմբռնելոց. և ընտանիք նր տարեալ ծածկեցին իմիք փայինի։ և Պար սիկք զօրականքն. որք ջարչարէին զԺողո վուրդն. վն խաբէլոյ զայլ Ժողովուրդն

Համբաւ

զհամբառ հանին. Թէ զարտասուս մկրտիցն տաճկացաւ:

Այլ պարսիցն որ զայս ամ ածին իվերնոյ՝ խնդացան զհատատուն միտս նոյ՝ և ծանեան Թէ մեռանիլ կամին և ոչ դառնալ յօրէնսն մահ մեռի. այնուհետև բառնու Թէ իվայր կոխեալ Թէփատէին. և ասել տային զդառանուԹիւն հաւատոյն իւրեանց. և բազումք՝ ի քրիստոնէից կաշառս եառուն զօրականացն, և Թէփատողացն. և զերծան՝ ի ԹէփատուԹէ:

Այլ տակաւ գնացեալ սատանին չահէին. Թէ զա բռնադատիլսն և իւր ժողովուրդսն կատարեցին զհրամանս Թագաւորին. զի Թէփատեցան, և դառանեցին զմեր դառանուԹիւն. և եղեն մեզ սուրմանք:

Յայնժամ զոմանս չահէն հրամայեաց Թէ դուքս ածցեն՝ որք եկին՝ ի հաւատս, Թո ղէք զառաջինն պարտսն, զորս տալոց էին. զի չնորհեցի. և այլևս զպարգևս նորս այժմ տուք, զի միսիԹարեացին իվեր վշտացն՝ զորս կրեցին: Այլ յայնմանէ հրամանէ Թագաւորին լուծին զնա զամենեսեան՝ ի կապանաց. և եառուն նոքա զպարգևս իւրաքանչիւր տան առանձին երեք Թումման դրամ: և առ սոսա այսպիսեաւ կերպիւ վճարեալ զերակուԹէ գործոյն, դարձան՝ ի տունս իւրեանց. զի երեկոյացեալ էր օրն:

Այլ զկնի սոցա էհաս կարգն՝ ի զրխեալսն մկրտիչն՝ և՝ ի ժողովուրդս նոր. և յայնմ երե կոյին եկեալ դահճացն կալան զզրխեալսն մկրտիչն՝ և տարան. որում հրամայեցաւ՝ ի Թագաւորէն դարձիր յօրէնս մահմետի. և առ քեզ զպարգևս գևս, և զմեծուԹիս, և զպետական իշխանուԹիս. և մի մատներ անմտաբար զանձն քո տանջանաց և՝ ի կեր առիծուց՝ և շանց. որև զգա

զանան

զանուն պատրաստական անդէն կապեալ ունէ
ին։ Եւսկ ղրխեալսն մէկնէքն եԹէ յահարկուԹէ
և յամօԹոյ Թշուրական առենին՝ և Թէ յերկիւ
ղէ տանջանացն։ և Թէ ՚ի պատրանաց խաւա
մանց։ յանձն էառ կատարել զՀրամանս Թշուա
րին՝ որպէս անդէնն իսկ դաւանեցուցին նմա զդա
անուԹէն հաւատոյն մահմետի՝ և տանձկացաւ։
Եւսկ իշխանքն և այլ մահմետականքն սկսան գո
վել զնա և ասել։ զայդ բարւոք արարեր՝ զի
եկիր ՚ի հնձմարիտ հաւատս։ և խնդրեցին այդմ պատրաս
քեզ։ զի և զժողովուրդսն քոց զնմանն բերցես ՚ի
հաւատս յայս։ Եւսկ ղրխեալսն մէկնէքն սկսաւ
անիմաստ և անգէտ բարբառանՔն լսել խօսել։ և զի
խօսիլն զտեր բանդատարն մատնել։ քանզի
ասաց՝ զկարծիս ունիմ Թէ ժողովուրդքն
ամէնն դառնան և ոչ դիմադարձին։ և Թէ դի
մադարձի բանդատար երեցն միայն։ և Թէ նա
դառնայ ժողովուրդքն ամէնն դառնան։

Եւ մահաբեր լուրս՝ և դառնահամբաւ
բօթս այս յայնմ իսկ երեկոյի եհաս առ բանդ
դատար երեցն և առ ժողովուրդսն։ որք և
յահէն հասին ՚ի դրունս դժոխոց։

Եւսկ քահանայն բանդատար յայնմ գիշերի
զյոյս և զհաւատս արիականաս հաստատուԹէ
ժողովեալ առ ինքն։ հաւաքեալ զնմա ժողովէս
քրիստոնեայս յաղօԹատուն տունն՝ զոր ՚ի քար
վանասարայի անդ սահմանեալ էին։ և սկսաւ
քարոզել ժողովեանն զմարդասէր գԹուԹէն
և զողորմուԹիւն Եւ՚ զորինչ գիտէր։ և յորդո
րեաց զնմին յաղօԹս և յաղաչանս բազմահա
ւաչ և մեծաձայականօք ողբովք և աղաղակս
հոս արտասուօք խնդրել ՚ի Ջէ հեշտալոյ և
յանողոքակալէ։ զի դարձուսցէ զցասումն բար
կուԹեն սրտի Թշուրին ՚ի գուԹ ներողուԹեն
ընդ-

ընդդէմ նոյ, և ամբն ժողովէքն մեծ իւք պաղա
տանօք կային մինչև ցառաւօտն յաղօթանոցն
անդ խնդրել ի Տէ զգուշ և զողորմութի։

Իսկ ինքն բահդասար քահանայն յերկորեայ
սկսաւ ցայգապաշտօն սաղմոսերգութիւ զիւրն
բային աղօթան կատարել։ և անդէն զժողո
վուրդան խոստովանեցուցեալ մատոյց զնուէ
ին պատարագն՝ հաղորդեաց զարժանաւորսն
՚ի պատուականէ մարմնոյ և յարեանէ Որդւոյն
Ա.Յ։ Իսկ այդ առաւօտուն մինչև երբ քահա
նեալ զմուրթն և զլոյսն. ամենից աղօթականաց
կարգաց զաւարտումն արարեալ կատարեցին։

Իսկ ընդ լուսանալ առաւօտուն շնշտակի
ձիրնթաց արշաւամբ եկին զինուորք և զօրա
կանք իբրև զյարգաղան պատեցան շուրջ զտէր
բահդասարիւն՝ քարշեցին արտաքս։ և ձգե
ցին առաջի երիվարացն՝ ընթացմամբ վարել
փութանակի հասանիլ ՚ի դիւան Թէգրին։
Իսկ ի հասանիլն ՚ի դուռն Թէգրին շուրջ զնո
վաւ պատեալ մարդադէմ գազանքն կրծոտէին
զատամունն. և խրոխտականիւք բանիւք
ջանային ատամամբք քանդել զմարմին նր։

Իբրև նստաւ Թէգրն յատեան. տարան առա
ջի զտէր բահդասարն. ընդ որում խօսեցաւ
արքայ վն դառնալոյ նմա՚ի Քրնականաց հաւա
տոյն. և Թէ յամառեալ ոչ հաւանիս շանց և
առիւծուց կերակուր լինիս. որով վն զնոն աշա
ցուցանելոյ անդէն պատրաստական ունէին
զգազանսն։

Իսկ անշուշտ խոստումն Տն մերոյ Յի Քի
աստանօր կատարեալ ցուցաւ՝ որ ասաց. յոր
ժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց և
Թէգրաց՝ մի հոգայցէք. և մի զմտաւածիցէք
Թէ զինչ պարտիցէք ձեզ խօսիլ. զի տացի ձեզ
բան

բան և եմաստուԹի՝ ի ժամուն յայնմիկ՝ զոր
ինչ պարտիցէք խօսիլ. զի ոչ եԹէ դուք իցէք
որք խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսեացի՝ ի
ձեզ։ Ապա տուեալ պատասխանի բաղդա
սար քահանայն Թագաւորին՝ և ասաց։ եԹէ ասես
ինձ իմոք կամօքս դառնալ յիմոցս Հաւատոց
ես կամօք իմոք ոչ դառնամ։ և Թէ բռնաւորԹ
դարձուցանես. ոչ է այդպէս Հրամայեալ քեզ
օրինադիրն քո և Թէ վա՛ պարտուցն քոց ասես և
խնդրես. զյոլովին տուեալեմք. և որինչ մնա
ցեալ է. զայն ևս այսօր և՛ի վաղիւն վճարեմք։
Այս զորօրինակ ջուր ցուրտ Հեղեալ իմիջ
եռանդնոտ կաԹսայի. նոյնժամայն նստու
ցանէ զնորին փրփրալի եռանդն. այսպէս բանք
տեառն բաղդասարին ցածոյց զբարկուԹէ
|ՙՋմիածնի և կէդիկան ՚ին՝ որ անդ նստի։ |ՙև զայս բանս ոչ թէ տգէտք և անհնչանք ոմանք միայն ասացեալ էին. այլև նշանաւորք և գիտունք։ |ՙայլև լուսաք յոմանց թէ զայն ևս ասացեալին. թէ կամի շահն որ հաստատուն մնայ ազգն Հայոց յաչխարհիս Պարսից. պարտ է նմա բերել զաջ սրբոյն գրիգորի լուսաւորչին յասպահան. և անդ շինել նոր |ՙՋմիածին. զի անդ լինի օրհնեալ մեռոն. և անդ նստցի կէդիկն. և ապա ազգն Հայոց կայաւորեալ մնասցեն. քանզի իւր աջոյն և |ՙՋմիածնի ամ ազգն Հայոց կապեալք կան։

|ՙԴրդ օձն դարանակալ՝ և խորամանկ թշնամին կենաց, և հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար և հանապազ ՚ի տարակուսի կայր վն ազգին Հայոց. արդ ՚ի նոցանէ լուսաւորչութեան տարակուսանացն։ |ՙ,ինու հետև հաստատուն և անփոփոխելի եդ ՚ի մտի իւրում քակել զսուրբ |ՙՋմիածինն և խափանել որ անդ զկէդիկսուն. և բերել զաջն լուսաւորչին, և զքարինան |ՙՋմիածնի յասպահան. և անդ շինել նոր |ՙՋմիածին։ զի անդ նստցի կէդիկան. և անտի սփռեսցի մեռոն ընդ ամ աշխարհ, ոպ զի այնու մնասցեն ազգն Հայոց ՚ի Պարսկաստան, այլև շահ և մուտք առնից աշխարհաց ժողովեսցի ՚ի քաղաք և յազգ իւր։ |ՙՍրդ եմք քրիստոսի ասպահանու նշանակեալ զատոյց տեղի ուր շինել կամէր զ|ՙՋմիածին. և եր տեղին այն մերձ այնմ այգւոյն որ բարբառոյն Պարսից քաղիզրիչկ ասեն յարևմտից կուսէ՝ յետուստ կողմանէ նորին, կից նմին այգւոյ։

|ՙև յաւուր միում գնաց շահն ՚ի նշանակեալ տեղին, եր ընդ նմա և խօջայ նազարն և անփոփոխելի գոյր հաստատեալ ՚ի միտս նմին. այլ

այլք ումանք՝ ի Հայոց, ասաց շահն ընդ խօջայ նազարին, վն ձեր չինեմ աստ զ։Ջմիածին, զի մի վն այնմ ։Ջմիածնի կարօտութիւն կրեալ ձմեռացին սիրտք ձեր։ և հրամայեմ գնալ բա զում ուղտ և ջորի և սայլ, զի զքար և զհող այնմ ։Ջմիածնի քանդեալ բերցեն աստ, զի այնու քարով և հողով շինեսցի այս ։Ջ միածինս. ոչ զի առանց նմիք երկեայուք հաս տատեսցին սիրտք ձեր իմ շինելոյս։ ։Ս այսու կերպիւ հնարեալ կամեր քանդել զսբ ։Ջմիածինն։ ։Ակ խօջայ նազարն քանզի ոչ կամեր զքանդումն սրբոյ ։Ջմիածնի զի կըս կնծեր սրտի նր. և առ՝ի խափանելոյ զխոր հուրդ շահին, պատասխանեալ այսպէս։ ։Ա գաւորն ողջ կայցէ՝ եթէ կամք քո յօժարեսցի շինել ։Ջմիածին գեղեցիկ և հաստատ, կա ըօղ ես յարձանթոյ և յոսկւոյ շինել թողթէ՝ ի քարէ. և զինչ հարկէ յաղագս քարւն և հողոյ զայնքան աշխատութիւս կրել. և զայնքան ծախս ծախել իմ նր. ոչ զի ՝ի հեռու և յօ տար աշխարհէ զքար և զհող բերելբաւական և բարւոքէ այս աշխարհիս քարն և հողն, եթէ կամիս շինել սոքօք շինեա. և ընդունելի է մեզ։

։Ակ ամենաթագաւորն ։Ջ. որոյ թագրու թիւն միայն է յաւիտենական, որ և զանցաւոնք զքաղմօք խորհրդովք մարդկան. թագաւորաց, ազգաց և ազանց՝ ըստ գրեցելոյնն, թէ ։Ն ցրուէ զխորհուրդս հեթանոսաց՝ անարգէ ։Ն զխորհուրդս ժողովրդոց. և արհամարհէ ։Ն զխորհուրդս նշխանաց։ ։Յլ խորհուրդ ։Ն յաւիտեան մնայ. և խորհուրդ սրտի նր յազ գէ մինչև յազգ։ ։Է կամեցաւ զկատարումն խորհրդեան շահին յայնժամ. թէպէտ և արդ խափանեցաւ խորհուրդ նր այսու պատճա

ուսու։ զի Հանդերձեալքն նա գնալ յաշխարհն
ի ըստ իմոյ թելոյ և ազգին նոր. և բազմեք զ-
րօք, և յոյժ պատրաստութիւն եղեալ յասպահա
նայ գնացք յաշխարհն ի ըստ։ Եւնախ՝ի կախէ թ
էմուտ և զթիւրն կախէ թու զթամրազ փա
խոյց և զերկիրն աւերեաց. և եկեալ էմուտ յեր
կիրն քաւթլայ և բանակեցաւ՝ի վերին կողմն
քաղաքին գօրու խլիր Հանապարհին, որ գնայ՝ի
պշիաչուխ. և խոհայր և սպասէր թէ որով հնա
րիւք՝ի բուռն ածեալ ըմբռնեսցէ զթիւրն
ի ըստ։ ոչ և յառաջագոյն զնմ ոչնուելին
պատմեցաք։ արդ այսոքիկ այսպէս։

Յայմ ասասցուք զպատճառ Հակառակու
թե կթ՝ղկոսացն, զի նոցին Հակառակութենէ
պատճառ յասպահան ասնելոյ քաղանցն
ի վիածնի և բուսաւորչի աջին։

Ժամանակին յորում շահն զմեծ սուր
գունն արար՝ և զազգս Հայոց վարեալ տարու
՝ի յասպահան. գնաց ընդ նոսին և դաւիթ
կթ՝ղկն յասպահան՝ և անդ կայր, մելքիսէթ
կթ՝ղկն ևս գնաց ընտուրգունին, բայց՝ի կէս
Հանապարհէն դարձաւ՝ և եկն յ՝ջվիածին՝ և
առնէր զկթ՝ղկուելին։ Այլ ինքն մելքիսէթ
կթ՝ղկն ոչինչ բնաւ զիոյթունէր վասն չինու
թե, և պայծառութե, և ժամակարգութե,
և Հաստատութե ի ջվիածնի. այլ ինքեան
տեղի բնակութե կալեալ յերևան քաղաքի՝ի
կաթուղիկէ եկեղեցւոյն. և իւր իւր ժողո
վեալ զազգականս և զմերձաւորս իւր նորօք
յօրանայր լոյծ և ընդարձակ կենօք. մսիւք և
արդեամբք որբոյ աթոռոյն ի ջվիածնի։

Այսին յայնմ ժամանակի՝ և եպիսկոպոսք
ոմանք՝ի սբ ի ջվիածնի՝ի նոյն գեղջէն ի ջվի
ածնի. որոց անուանքն են կարապետ՝ և մար
տիրոս՝

թիւն՝ և ընդ ինեւթիւ կեղեցեաց։
տիրոս՝ և յօհան՝ ընդորս և այլք ևս եպիսք և
աբեղայք. առքա հոգւոյին վասն ։ չմիածնի
հանապազ՝ և յաւելին վն անչքուքիւ՝, և ունայ
նուիէնորին. և զայրանային ընդ արարս մեր
քիսէթ կիճիկեին։ և բազումանգամ աղաչա
նօք՝ տրանչմամբ՝ և զայրացմամբ ասացին. թէ
մի թողուր զաթոռն այնպ ունայն և անշուք.
այլ յաթոռն նստեալ կաց ըստ քում ախորժա
կաց. գոնեայ դի միայն աստ լինիցիս, և այն ևս
բաւական է մեզ և աթոռոյս ։ ոչ մեր քի
սէթ յօրացեալ և ստուարացեալ գոլով պե
տականաւ իշխանութիւն. ստունգանէր՝ և ան
կուշէր զնմանն ասացեալսն նոցին։ ոչ եպիսքոյն
արանեղեալ ընդ աղօտութիւն և ընդ անչքու
թիւն ։ չմիածնի՝ և ընդ քամահանս բանից նո
րեանց։ միակամ եղեալ ամենն ծանուցին իշխա
նին աշխարհին ամենգունայ խանին. որոյ ամ
բաստանութիւնքն կալաւ խանն զմեր քիսէթ
կիճիկեին. և ետու վաթսուն թուման զոսկւոյն
որոյ վճռ սրտացնայ լեալ կիճիկեին՝ և խանէն ե
լեալ գնաց՝ և ։ ։ ըստացաւն ինքը խռովեալ՝ և
խանէն։ և յաղագս գնալոյ կիճիկեին իշխանիք
և բարեկամք խանին մեղադիրք եղեն նմա. վն
որոյ և խանն զարս ոմանս առաքեաց զնմին մեր
քիսէթին կոչնականս. խոստանալով նմա պա
հել զնա պատուով և կատարել զնմանն կամն,
և ապա մեր քիսէթն դարձաւ՝ և եկն յերևան,
և խանն սուի չահել զսերտն մեր քիսէթի կա
լաւ զեպիսկոպոսն և ետու զտուգանս։ այնու
հետև կարապետ եպիսկոպոս եթող զաշխարհ և
գնացեալ յանապատ կրճնաւորեցաւ. այս այն
կարապետ եպիսկոպոսէ, զոր՝ ի Ճառի մեծանա
պատին յիշեցաք. թէ եկեալ բնակեցաւ՝ ի
սեւան կղզին։ ոչ վն մարտիրոս եպիսկոպոսին կա

Թուղիկոսն ինդրեաց ՚ի խանէն, զի արտասահ
ման արարեալ վարեսցէ յարարատեան աշ
խարհէն, և խանն արար այնպէս. զի զնինուոր
տին կարգեաց իվ ՚ի մարտիրոս եպիսկոպոսն վարիչ.
որ վարեալով զնա տարաւ մինչև ցՀին ջուղայ.
զգեան երասխ անցոյց յայն կոյս, և ապա դար
ձաւ զինուորն:

Ոսկ մարտիրոս եպիսկոպոս ոչ ուրեք արգելաւ՝
այլ գնաց յաստղահան, և եմուտ, և յարեցաւ առ
դաւիթ կԹղկան. և օր աւուր ՚ի ժամու և ՚ի
տարաժամու պատմէր առաքինի զարարսն մել
քիսէթի. և զաւերուԹէն և զմայուԹէն Ոչ
միածնի: Ոյնպէ և առաջի ժողովրդականացն
ջուղայեցւոց և երևանցւոց հանապազ խօսէր
և ծանուցանէր. իսկ ջուղեցիք՝ և երևան
ցիք կարի վշտացան ընդ արարսն մելքիսէթի
և ընդ մայուԹէն Ոչմիածնի. ժողովեցան
առ դաւիթ կԹղկան. և Հարկեցին զնա գնալ
յ Ոչմիածին՝ տիրել և հոգալ զչինուԹենորա,
ասելով. մեք օժանդակեմք քեզ յամենն գործս
և ՚ի բանս, և դաւիթ կԹղկան ելեալ յասպա
հանայ ընդ որում և մարտիրոս եպիսկոպոս եկին
յերևան քաղաք և յ Ոչմիածին: և յաւուրս
յայսոսիկ յորում շահն ՚ի գօրի բանակ եդեալ
նստեալ կայր. դաւիթ կԹղկան և մելքիսէթ
կԹղկան երկոքեան ՚ի միասին եկեն ՚ի սուրբ Ոչ
միածինն. բայց նախանձն, և սխալարուԹիւն, և
հակառակուԹիւն ոչ սակաւ յորդեալ առաւ
եղաւ իմէջ նոցա այսու պատճառաւ:

Ոքանզի դաւիթ կԹղկան յառաջագոյն և
նախ էր լեալ կԹղկիկ քան զմելքիսէթն. և աւ
ուրբք և ալեօք ևս ծեր էր. նաև գաւիթն
էր օրհնեալ զմելքիսէթն կԹղկիկ՝ զի լինցի ին
քեան ընկեր և ձեռնտու. բայց նա եղև խոչ

ընդ-

ընակն։ և յետ ամաց հինգ, որ յառաջեաց մեռանի
սէթն յանուն և ՚ի գործ կթիղկուսթե. միան
գամայն յինքն կորզեալ գրաւեաց զիշխանու-
թե կթիղկուսթե, և ինքն վարէր. և զդաւիթ
հարստահարեալ և արտաքեցեալ ՚ի բացեայ ա-
րար յիշխանութէ։ Ոսկ որ դաւիթն էր ասէր
ցմեռեալսն թն. թէ պետ և իբաց կացուցեր զնս
յիշխանութէ կթիղկուսե այլ գոնեայ թերևս
ծերութե իմոյ գթա և խնայեաւ. տուր ինձ օր
աւուր զդարման պիտոյից պարենի կերակրոց և
զգեստուց. զի անցուցից զսակաւ մնացեալ ժա-
մանակս ծերութե իմոյ. և մի վշտացուցաներ
զծերութիս իմ։ Ոսկ մեռեալսն գիրացեալ՝ և
ստուարացեալ և յօրացեալ յիշխանութե մի
ջն, ոչ կամէր լսել դաւթի. ըստ տէրունա
կան առակին որ վասն այրւոյն և անիրաւ դա
տաւորին պատմէ. զի զորինչ ասէր դաւիթ՝ զնա
նիւ նորա մեռեալսն ստունդանէր։ Ոյլև
արք՝ որք մեռեալսն եանք էին. եթէ խոհը
դակից ք, և եթէ սպասաւորք. ՚ի չմարդի կա
լեալ զդաւիթ արհամարհանօք ունէին զնա.
և բանս եպերանաց՝ և քամահանաց անդոսնե
լով ասէին նմա. ոչ թէ ՚ի ծածուկ՝ այլ յայտ
նի, և յերեսս նորին. և իվ ի սուղինչ կարեաց և
պիտոյից վշտացուցանէին զնա ընդվայր։ Ոյս
էյօրվից ժամանակաց տմարդութե նոյ գործ,
յոյժ գառնացաւ դաւիթ. զի բնաւ ոչ թու
լանային ՚ի բերտ բարուց իւրեանց. և մանու
շակ վշտացեալ յոգւի իւր. այնուհետև թախ
ծեալ սրտիւ եղեալ գնաց ՚ի գօրի ՚ի բանակ շա
հին. զի յանգիման եղեալ շահին ամբաստան
լինցէ զմեռեալսն կթիղկսն։ զի յայսմ ժամա
նակի տակաւին շահն ՚ի ՚ր բացատուն էր. մերձ
բաղաքին գօրու բանակեալ էր և նստեալ։
և ինքն

և ինքն շահն զերկոսին կՀնդկոան կարի քաջ
Ճանաչէր. բայց զդաւիթ առաւել ընդունէր
քան զմեքիսեթ. վն զի ի ժամանակին՝ յո
րում զմեծ սուրգունն արար շահն. երկոքին
կՀնդկուենքն գնացին ընդ սուրգունին. և յոր
ժամ հասին յահար և ի մուշկուն կոչեցեալ
գաւառան՝ անտի մեքիսեթ կՀնդկան առանց
գիտելոյ շահին դարձաւ յերևան և յ|ջմիած
ին՝ և վաթէր զնչխանուԹ՚ն կՀնդկուԹ՚ն Թարց
հրամանաց շահին: |ակ դաւիթ կՀնդկան
գնաց ընդ սուրգունին՝ ի սպահան. և անդ
՚ի սպահան բազումանգամ հանդիպեալ շա
հին. և շահն ընդ նմա գԹով և քաղցրուԹ՚ը
խօսէր՝ մինչ որ հայր ևս կոչէր զնա շահն. եԹէ
կեղծաւորուԹ՚ը և Թէ չՀմարտուԹ՚ը: |՚ընդ
դարձն մեքիսեթին յերևան՝ ծանր Թուէ
ցաւ շահին. և գնալն դաւթին յասպահան
դիւր՝ վն այսորիկ առաւել ընդունէր շահն
զդաւիթ: |ակ դաւիթ կՀնդկան գնացեալ
ենաս ի բանակն արքունի. և յաւուր միում
եկեալ յանդիման եղեալ շահին. և ի տեսա
նելն զնա շահն ըստ նախկնի սովորուԹ՚ն գը
Թով և քաղցրուԹ՚ը խօսէր ընդ նմա. և հար
ցանէր Թէ զնարդ կեաս ի կեանս քո դիւրու
Թ՚ը և անդորրուԹ՚ը: |՚ոյ դաւիթն պատաս
խանեալ ասաց, Թագաւոր յաւիտեան կեցցես. Թէ
պէտ և լցեն զինձ նեղչիք, և դաւնացուցիք.
այլ տեսանելով զքաղցրուԹ՚ն և զվայել չուԹ՚ն
երեսաց՝ և զմիԹարուԹ՚ն բանից քոց, մոռա
ցումն և վարատումն լինի ամենից վշտաց իմոց.
և շահն հարցեալ՝ ոՀվ այն այր, որ զքեզ վշտա
ցուցանէ. պատասխանեալ դաւիթ բարբա
ռ՚ոյն պղտգեայ՝ Թէ սմուռ սաԹան խալխիվն.
որ է ոսկերաց ծախօղ: և սմուռ սաԹան սակ
լով

ՙի ՚Ներքինեն և Պատիժ Նորին։

լով սկսեալ յամբաստանուելն մերքինեի՝ զի զարարանՙ յիշեալ առաջի շահին, որ զնշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ յաղագս կաշառից Թոյլ ետ փոանկաց զի տարան։ ՚Այլև արք ոմանք ասացին, Թէ դաւիՙեն զայս բանս ևս ասացեալ առաջի շահին. եԹէ ոչ երԹիցէ աջ լուսաւորչին, և քարինքն ՚Նժիածնի յատ պահան. անՙնար է Ճնալ ազգին Հայոց յատ պահան։ ՚Իբրև լուաւ շահն զնշխարսդ ծա խելն՝ հեռացրեքիր եղեալ տեղեկացաւ ամենից որպիսուԹեՙն. և իմՙր արար մանցն մերքինեի տխրեցաւ՝ և ՚ի ցաւումն և ՚ի զայրացումն չար ժեցաւ՝ այնքան մինչ ՚ի պատիժս և ՚ի տանջանս մատնեաց զմերքինեն Թ։

՚Ի սոյն ժամանակի տարաւ առ ինքն շահն զամիրգունայ խանն՝ մինչ էր ՚ի ՚Ի ըացատան աւելով՝ եկեալ ընդ մեզ կացցես ՚ի գործս պա տերազմիս ընդդէմ Թշնամեացս։ և նա գնաց ցեալ ՚ի ՚Ի ըացատուն կայր ՚ի բանակի շահին։ ՚Յե շահն փոխանակ և տեղապահ ամիրգու նայ խանին առաքեաց զորդի Նորին որոյ ա՚ նունն էր Թահմազղուլիբեկ. որոյ եկեալ յե բևան քաղաք եմուտ ՚ի բերդն՝ և անդ նստեալ պահէր զաշխարհն։

՚Յե շահն ցաստմբ մեծաւ հրամայեաց գրել զնոմս արքունի հրամանաց իւրոյ Թահ մազղուլիբեկին, և առաքել յերևան առ նա. և էր գոյացուԹիՙ գրեալ բանին այսպէս՝ ՚Հրա մայեալ է քեզ Թահմազղուլի. զի զմերքինեի Թ կԹ՚ղկան կալեալ տանջանօք չարչարեսցես. և զինքեան իսկ զմարմնոյ զմիան կտրեալ ինքեան ուտեցուսցես և ապա զմերքինեի Թն կապանօք. և զՀայոց ազգի լուսաւորչի աՙն առ իս առա քեսցես աստ։ ՚Յե զայս գիր ետուն իշխանի

ուՙմեՙն

ուժեմն նաղդիբէկ անուանեալ. որ փութանակի հասոյց յերևան առ Թահմազղուլի բէկն։ և Թահմազղուլիբէկն վաղվաղակի ի ձեռն ածեալ ըմբռնեաց զմելքիսէթ և կթռիկան. և սկսաւ ջարչարել՝ և բազմաւ սոսիպով խնդրէր զայրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին։ Նոյնպէս կա Թուռիկոսն և իւր միաբանքն անձար մնացին. և ոչ գիտէին հնարել ինչ. վն զի սաստիկ տա գնապաւ խոչտանգէր զնոսա Թահմազղուլին. վն որոյ ածին առաջի Թահմազղուլիբէկին զայրբոյն լուսաւորչին. այլև ընդ նմին զմեկ ոսկե տուփ և մեծագին աւետարան. և զմեկ արծաթեայ խաչ։ և Թահմազղուլին առեալ զսոսա և զմելքիսէթ և կթռիկան, եկն յերևան քաղաք։

Յետ այսորիկ բերին զմելքիսէթն յերևա նայ բերդի մէջն և իւր գետնայ տարածեցին զնա. և ի ջորից կողմանց քարշեալ պրկեցին զնա կապեալ ի ցից. և արկին յորսայս. և առեալ զբևեռաքաշս այսինքն քալբաթին. և այնու կարեցին զմիսն ծղեացն, որ է թևերն. և զայն կորեալ միսն եդին ի բերան նորին. և յերկուց կողմանց կանգնեալ փայտաւորք հար կանէին զնա և ասէին՝ ծամեա՝ և կուլ տուր. և մելքիսէթն թէպէտ և ոչ կամէր՝ սակայն ի վտանգէն անձար մնացեալ ծամեաց և է կուլ։ և ապա աղաղակեաց մունեդիկն՝ թէ կատարե ցաւ հրաման թագրին իւրոյ խալիֆային. զի զմիսն իւր ծամեաց և է կուլ։ Ո՞ այս գործս և տան ջանս արարին այլազգինքն ընդ մելքիսէթին յաւուրս պահոց փոխման ածածնին։

Ո՞ւնի այսց գործոց. Թահմազղուլիբէկն պատրաստեաց զզօրականս. որոց գլխաւորի անունն էր նաղիբլուլ. զուբաթ աղայ. և ետ ի նմա զմելքիսէթ կթռիկան կապանօք. ընդ նմին և

զաջ լուսաւորչին, և զաւետարանն, և զխաչն։ և նոքա տարեալ Հասուցին՝ ի բանակն արքային, և ծանուցին շահին. և նա հրամայեաց բերել առաջի իւր. և բերեալ բացին առաջի շահին զաջն, և զաւետարանն, և զխաչն։ և շահն ի մի՝ ի ձեռս իւր առեալ տեսանէր. զաւետարանն, և զխաչն, և ապա զլուսաւորչի աջն. և հարցանէր թէ ստուգիւ այս է լուսաւորչի աջն. պատասխանեալ ասացին թէ ստուգիւ այդ է. և ապա համբուրեալ զաջն եդ՝ ի վայր։ Նոյն ինքն մեկքիսեթ կաթուղիկոսին հաստատեալ էր շահն զկամս իւր զի սպանցէ զնա. բայց ամէն գունայ խանն յոյժ ընդունէր զմելքիսեթն՝ զի բարեկամ էր նմա։ յաղագս այնորիկ հնար եաց՝ զի զերեսին զորդիսն իւր՝ որք էին նոքա ժամայնք տղայք՝ առաքեաց առաջի շահին. որ առ ժամուն անցանէր ընդ քանակին. և տղայքն զթիւրս իւրեանց արկեալ էին իմ ի պարս նոցին իւրեանց՝ զորս՝ ի տեսանելն շահին և՝ ի հարցանելն՝ իմացաւ որ վա՛ մելքիսեթին աղաչեն՝ զի մի սպանցէ. այլև իմացաւ թէ ամէրգունայ խանն հնարեալ է զայն. վա՛ որոյ իջաւ՝ ի կամաց սպանանելոյն։ այս գործ. զոր արար ամէրգունայ խանն յոլով ատուրբք յառաջ էր քան զբերելն մելքիսեթին առաջի արքային. որոյ աղագաւ ոչ արար շահն հրաման սպանանելոյ կամ տանջելոյ զմելքիսեթն. յաւուրն յորում յանդիման կացուցին զմելքիսեթ, և զսրբութեանն առաջի թագրին։ որև յետ տեսանելոյ սրբութեանցն, դարձուցեալ զբանս իւր շահն առ մելքիսեթ կաթուղիկոն ցասմամբ և զայրացմամբ՝ բազմաբանիւ յանդիմանեաց զնա։ և՝ ի զրաւ բանին ասաց դատաստանն քո աստ ոչ լինի առնել զնշանն քո մեծ է՝ այժմ պարտ է քեզ

գնալ

գնալ յասպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ արարից զդատաստանն քո:

Ա՝Հրդ առտուանօր պարտէ մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գոր ծոյս՝ որ կատարեցաւ իւր ի մեղքիսեթ կաթուղիկոսին: զի նա՝ Ա՝նախ զԱ՝Յ օգնութիւնն ան տես արարեալ՝ի մարդ յուսացաւ. և ստուն դանեաց զբանս օրինացն, որ ասէ, անիծեալ որ դիցէ զյոյս իւր՝ի մարդ. և Ա՝երկրորդ՝ զի ար համարհեաց զարքայիսն վարդապետն, որ վասն վՀաբելոյ զպարտսն սրբոյ աթոռոյն Ա՝ջնիածնի և վն նորին նորոգութիւն եկեալ էր՝ի համ թայ: այլ զյոյս իւր եդեալ՝ի շահն. ապա տան սրտի իւրոյ զնա արարեալ գնաց առ նա՝ի սպահան զի յապագայ ժամանակս բարութիւս բազումն ընկալցի՝ինձանէ. և այսօր ինքն ևս զհատուցումն երախտեաց՝ և ակնկալութիւն իւրոյ զյոյս չարչարանս ընկալաւ՝ինձանէ՝ ըստ օրումն պատմեցաք: և տակաւին ևս պատմելոց եմք փոքր՝ի շատէ: և այսպիսեօք լինի կատարումն բանին որ գրեալէ, թէ Ա՝րուվ և մեղան չէ ոք նավիմբ և տանջեացն: կամ թէ մի յուսայք յիշխանս. և մի յորդիս մարդկան զի ոչ գոյ փրկութիւն՝ի նոսա:

Ա՝ւ դարձեալ աստանօր երևի լինիլ կատարումն բազմաժամանակեայ բաղձանաց շահին. քանզի նա որ՝ի վաղուց ժամանակաց ցան կայր, խորհէր, և խոկայր, թէ որով հնարիւք քակեացէ զսուրբ Ա՝ջմիածինն. և խաբանեաց զնդ եղեալ կաթուղիկոսութիւն. և՝ի սպահան շինեացէ Ա՝ջմիածին. և անդ կարգեացէ զկա թուղիկոսութիւն. արդ ահա եդիւտ զպատճառ ըստ յօժարութիւն կամացն իւրոց: Ա՝յլ զի դար ձոյց զմեղքիսեթ կաթուղիկոսն յերևան առ թագ

մաղղուլի խանն. և գրեաց զնամակ հրամանաց
իւր նր այսպես. Յանիր Թահմազղուլի՝ զի
ահա դարձուցաք առ քեզ զմեղքիսէ Թ կաթու
ղիկոսն, և զղուսաւորչի աջն, և զաւետարանն,
և զխաչն այլև գնասցես յՋմիածին. և մինչ
նաւոր քարինս Ջմիածնի քակեալ հանցես ի
տեղւոջէն. և զայն քակեալ քարինան Ջմի
ածնի, և զղուսաւորչի աջն, և զաւետարանն,
և զխաչն, և զմեղքիսէթ կաթուղիկոն, զամենեսեան
զսոսա առաքեսցես գնալ ի քաղաքն ասպա
հան։ Իսկ ի հասանել հրամանաց Թ գրին առ
Թահմազղուլի խանն. կամեցար մնոք պատրաս
տեցաւ զնմն անթերի կատարել. ոչ զի այնու
հաճոյական ծառայ երևեսցի առաջի շահին։

Իսկ նախքան զքարինան Ջմիածնի՝ զղու
սաւորչի աջն կամեցաւ Թահմազղուլի խանն
յառաջագոյն առաքել. վն զի մնոք դիտեալ
նկատեաց՝ զի մինչ ի քակել քարանցն. և՛ի պատ
րաստել զնմն կաշս տանելոյ նր. նա և գնա
ցուսն քարանցն յամրագոյն և ծանր լինի. քա
զումք աւուրք իւր անցանեն՝ և անագանի. վն
այսմ պատճառի կամեցաւ զաջն յառաջագոյն
առաքել։ Յաղագս որոյ պատրաստեաց զզօրս
կանս զի տարցեն զաջն ի սպահան. այլև յովա
նէս անուանեալ զոմն քահանայ աշխարհիկ. որ
էր այր Հարտար և խմաստուն ի բանս և ի
գործս. որ ինոյն գեղջէն Ջմիածնի էր. զզօ
հրամայեաց Թահմազղուլի խանն գնալ ընդ
զօրականացն վասն սպասաւորութե աջոյն։
Այս կարգեալ զօրականքն և տէր յովանէս ան
առին զղուսաւորչի աջն՝ և զայն ոսկեզտուս
աւետարանն և զայն արծաթեայ խաչն. զայս
երեքս իմիասին առին և եկին յերևանայ՝ և
գնացին ի քաղաքն ասպահան. և յորժամ

մերձ եղեն քաղաքին ասպահանու. յամենայն ազգն Հայոց. որք կային ի քաղաքն ասպահան, որոց և հրաման արարեալ էր շահն. ելին ընդառաջ լուսաւորչի աջոյն խաչվառովք և աւետարանաւ՝ խնկօք և մոմեղինօք՝ և երգօք եղանակօք. և բազմաւ պատուով բերեալ հանգուցին ի տուն խոջայ սաֆարին. ընդ նմ խարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, և ընդ այլոց սրբուհեացն որք անդէն կային: Ա. օրդ աջ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին. այսպիսեաւ պատճառաւ և կերպիւ գնաց յասպահան:

Ասկ թահմազղուլի խանն՝ յետ լուսաւորչի աջոյն առաքելոյ՝ բազմաւ ջանիւ հոգայր զքահրինան առաքելավաճառոյ ինքնայօդովուք զօրականօք գնաց ի սուրբ Ջմիածինն. և զնշաւուր քահրինան Ջմիածնի քակեաւ հանին ի տեղւոյն, որք են այսոքիկ: Ուրբ սեղանն, յորոյ վերայ պատարագն սքանչելւոյ. Ա. այս սեղանոյ սիւնն: Ա. ի իջմանտեղեաց քարն: Ա. ւազանն: մեկ քար ի կողման հարաւայնոյ աստիճանի բեմին: և մեկ քար ի կողման հիւսիսայնոյ աստիճանի բեմին. վերկուս աւագ բեմի աստիճանքն յերկուց կողմանց են ի հիւսիսոյ և ի հարաւոյ: Երոս քար ի ջրից անկեանց եկեղեցւոյն ի դրուց կողմանէ: Ա. րկու քարէ մոմիդան. որ մեծ իւղաբերից մոմ դնեն իմէջն, և վաւեն: Ա. րեք այլ որիշ քարինք ի սալայարկ քարանց բեմին: Ընդ ամէն տասն և հինգ քար: զայս քարինքս քակեցին, և հանին Ջմիածնէ և եդին իմէջ կաշոյ և կարեցին: Ա. ւս ապա պատրաստեցին զարս զօրականս. որոց գլխաւորի անունն էր նաղդի բէկ: և զայն տէր յովանէսն, զոր ընդ լուսաւորչէն աջին առաքեցին վն ապա աւս

առաւօրութեանն աջին. նա՛ի սպասհանայ դարձեալ
երթ և եկեալ զնա միւսանգամ կարգեցին գնալ
ընդ քարանցն վն նոցին սպասաւորութեան, Ա.ՋՄԻԱ-
ծին պատրաստեցին ըստ բաւականի քարանցն սայլ.
և քարշեալ տարան՛ի քաղաքն ասպահան։ բայց
՛ի քաղաքն ոչ մուծին. այլ արտաքոյ քաղաքին
մերձ Թօխչղ դարվազին այլազգի մահմետա
կանաց գիւղ կայ, որոյ զանուանն բաթումն կո
չեն. յայս գիւղս հասուցեալ զքարինսն. եդին
ինքեանք գմբեթին. որ մերձ՛ի գիւղն չինեալ կայր։
Ա.ՋՄԻԱԾՆԻ յորժամ քարինքն եկեալ մերձ եղեն գեղ
ջըն այնմիկ. ամենեքեան, որք՛ի Հայոց ազգէն
բնակեալք կային՛ի քաղաքին ասպահանայ՝
հրամանաւ քաղաքապետին ելին ընդառաջ
քարանցն խաչիւ և աւետարանաւ, խնկօք և
մոմեղինօք՝ և երգօք եղանակօք բերեալ՛ի
գիւղն բաթումն եդին գմբեթին։

Ա.ՋՄԻԱԾՆԻ քարինքն անդէն գմբեթին եօթն աւր, ոմանք աւելի և պակաս ասացին։ Ա.ՋՄԻԱԾՆԻ ապայ բնակիչք բաթումնայ գեղջն զաւ զայ ետուն շահին՝ թէ խնդրեմք յարքայէ. զի հրամանաւգէ վն քարանցն Ա.ՋՄԻԱԾՆԻ հանել ՛ի գեղջէս մերմէ և տանիլ յայլ տեղի. վնզի աւք գեղջս մերոյ մեռանին. և անդ մեր ոչ ևս տան զպտուղ ոչ յառաջն տային. վն որոյ հրամայեաց շահն՝ զի հանցեն անտի զքարինսն՝ և տարցին իմեք ջուղայեցւոց. զոր և արարին։ և՛ի բերել քարանցն յորժամ մերձէ ղեն ջուղայու՝ ըստ առաջնոյ օրինակին ամենն եկեղեցականք և աշխարհականք խաչիւ և աւետարանաւ՝ խնկօք և մոմեղինօք. և երգօք հոգևո
րօք բերեալ եդին՛ի խաչէնց եկեղեցին. և կայ
անդէն մինչև ցայսօր։ Ո այսոսիկ քարինս
յորժամ հանեալ Ա.ՋՄԻԱԾՆԻ ուղևորեցին

գնալ՝ ի սպահան Թովհաննն մեր հազար և վաթսուն և երեք էր: և յորժամ հասա՝ ի սպահան փոխեալէր զտարին, և մտեալ էր՝ ի հազար վաթսուն և չորս: Այս յորժամ եկաք մեք՝ ի սպահան՝ տեսաք աչօք մերովք զքարինան. և Թովհեցաք. և ասա գրեցաք:

Այնպես և զմեղքիսէթ կաթուղիկոն բերին՝ ի սպահան քաղաք զօրականքն, զոր նմա տանօղ էր կարգեալ Թահմազղուլի խանն. և անուն աւագի նոցա Թահմազղուլբեկ: Յորժամ հասա մեղքիսէթ կաթուղիկոն՝ ի սպահան. շահն համարէր զնա թէ՝ ի բանտի արգելեալ կայ՝ ի կալանս. բայց նա կայր յընդարձակի՝ և վարէր զնչխանութիւն կաթուղիկոսութեն իւրեւրայ հայազուն քրիստոնէից՝ բնակելոցն՝ ի քաղաքին ասպահանու՝ և յամէն շրջակայ գաւառս նր: Եւ զքարանց տանելոյ Թովհաննն գտաք և գրեցաք. իսկ զլուսաւորչի աջի տանելոյ և զմեղքիսէթ կաթուղիկոսի տանելոյն ոչ գտաք՝ վն որոյ և ոչ գրեցաք: Այս այսպես:

Յաղագս հարիւր թուման մուղագային. զոր շահն եդ իւրոյ մեղքիսէթ կաթուղկոսին:

ԺԲ:



ԻԴ ՈՐՊԷՍ ԿԱՏՆԱԽԱՒ

պատմեցաք վասն դաւթի կաթուղկոսին. թէ գնաց՝ ի դուռն շահին. և առ-

ջար զամբաստանուէն վն մեղքիսէթ կաթուղկոսին. և շահն բարկացաւ իւրմ մեղքիսէթին ընկէց՝ ի կաթուղկոսութէն և առաւքեաց՝ ի սպահան: Իսկ դաւթի կաթուղկոն մնաց անդէն՝ ի բանակին՝ ի դուռն շահին: անդ էր և ամիրգունայ խանն: որ էր տէր և իշխան ամի գաւառին արարատ դուռ և սրբոյ Էջմիածնի:

Եւ

Եւ յաւուր միում յորժամ զՀանդէս արա
բեալքը շահն՝ և նստեալ կայր ՚ի Հանդիսին.
առաջի նր կային կանգնեալ ամբն նախարարք
և իշխանք իւր. էր յայնմ Հանդիսի և ամիրգու
նայ խանն և դաւիթ կԹոլկան։ Յոսեցաւ շահն
առ դաւիթ կԹոլկան քաղցրութիբ ասելով. Ընդ
հեցաք քեզ զկԹոլկական իշխանութիւն Ջմիած
նի։ Եւ դու գնացեալ նստցիս յԶմիածին և վա
րեացես զնշխանութիւն կԹոլկոսութեն։ Յայն
ժամ դաւիթն խնդրանօք ասացեալէ առ շահն
Թագր իմ զնս ՚ի խանն ամանաԹէ. ապա դարձու
ցեալ շահն զբանս իւր առ ամիրգունայ խանն.
յանձնարար նմա զդաւիթ կԹոլկան. Թէ բա
րւօք խնամակալութիբ պահեացես զնշալիփայ
հայրդ մեր։ իսկ ամիրգունայ խանն խոնարհեալ
միջօք չափ. և եդեալ զձեռն իւր իմր գլխոյ
իւրոյ պատասխանեալ բանից շահին ասելով.
իմր գլխոյ իմոյ ունի գա զտեղի Հանգստեան։
Որբան շահն ՚ի Որ ըացաւուն էր՝ անդ էին
կԹոլկան և ամիրգունայ խանն. և յորժամ շահն
եղեալ գնաց յերկիրն Պարսից՝ դարձան և եկին
ամիրգունայ խանն և դաւիթ կԹոլկան յերևան.
խանն ՚ի խանութիբ իւր։ և կԹոլկան ՚ի կԹոլկոս
թեին իւր։ Որբան շահն յերկիրն աստպատա
կանի էր՝ ՚ի մերձակայ քաղաքս և յերկիրս. պա
տուէր ամիրգունայ խանն զդաւիթ կԹոլկան.
և քաղցրութիբ խօսէր ընդ նմա վն երկիւղի
շահին. և յորժամ հեռացաւ շահն՝ բարձաւ
երկիւղն ՚ի սրտէ խանին. և սկսաւ խոշորիլ
ընդ դաւիթ կԹոլկոսին. ոչ պատուէր, և ոչ
խօսէր. և յորժամ խօսէր խրոխտանօք խօսէր.
քանզի զդաւիթ յԶմիածին նստիլն ոչ կա
մէր՝ այլ զմեղքիսէ Թէին. վասրոյ Հառաջէմ
երևեր. և խօսէր խանն ընդ դաւիթին. և ոմանք

ասացին. Թէ ջանայր և խանն Թէ՝ ի ծածուկ հնարիւք նմին սպանցէ զդաւիթ։ Այս գոր ծոյ խուովեցեալ զոր խանն առնէր ընդ դաւթին. ոմանք ասացին պատճառ զծածուկ ներքինագործ հնարակերտութեն մեկնիսէթ կիրակեսին գոլ. Քզի Թէպետ նա կայր յասպա հան՝ այլ հանապազ՝ ի ծածուկ զիուղթ և զաղերս՝ զնշան սիրոյ ոչ պակաս առնէր՝ ի խանէն՝ այլ միշտ առաքէր։ Ասէ Խոջ կիրակոսեանն իշխանութեն մեկնիսէթեն առաւել ձեռն բաց և բազմատուր էր դրամօք և այլ իրօք իշ խանաց և զինուորաց և ևւրոց համախոհից. վասն որոյ խանն և այլք ամենեքեան զմեկնիսէթի կիրակոսութեին կամէին, և ոչ զդաւթին։

Այս՝ ի ժամանակին յորում եկն սարդարն Օսմանցւոց՝ որոյ անունն էր օքոզսհմատ փաշայ իմէր երևանայ բերդին. եկն և շահն յերևան վն օգնութեն բերդին. և կայր՝ ի լբինս գառնու. և յորժամ դարձաւ սարդարն յերևանայ՝ ի յարզրում. և շահն տակաւին՝ ի լերինս գաւառացն էր բանակեալ։ Ասկ դաւիթ կիրակոսն զանգետեալ յերկիւղէ խա նին մի գուցէ Թէ՝ ի ծածուկ դաւեալ սպան ցէ զինս. անձարակ լեալ՝ ի վտանկէն Թարց գիտելոյ խանին միւսանգամ գնաց առ շահն՝ և երևցաւ նմա. և՝ ի հարցանելն շահին զորպէ սութէ դաւթին. ասաց դաւիթն այլազգեաց բարբառուին. փաչահուս զանկի չայինտան մանայ բիր իչուս սուս վերմատիլար։ զանկիչայ երևանայ մեծ գեան է, որ՝ ի բերդի ներքև են անցանէ։ Այլ այսմ ամբաստանութեաս գի տաց շահն, զի ամիրգունայ խանն է՝ որ ոչ տայ զկանգիստ դաւթի, և ոչ ընդունի զնա. և զայն ևս ծանեաւ, որ՝ ի պատճառս մեկնիսէթ

թին ոչ ընդունի խանն զդաւիթն. վ՚որոյ ոչ բարկացաւ խանին՝ առ ղինչ ակնառուԹի և առնելով նմա. այլ մեղքիսեԹ կԹղկոին բարկացաւ յոյժ բարկուԹիբ. զի զայն և ծա նեաւ որ մեղքիսեԹն՚ի սպահան յընդարձակի կալով վարէ զկԹղկոսական իշխանուԹին աղանց Հրամանաց շահին։ վ՚որոյ Հրմայեաց պատրաստել զօրականս՝ զի գնասցէ՚ի սպահան և կալեալ զմեղքիսեԹն կապանօք բերցէ առ շահն։ զոր և իսկոյն առաքեցին զոմն ԹՀրական ծառայ անունն չարքաշ իբրահիմ. որոյ Հա սեալ՚ի քաղաքն սպահան ոչ էգիտ անդ մեղ քիսեԹ կԹղկոն, վ՚որ զի գնացեալ էր՚ի գան դիման գաւառն. և չարքաշ իբրահիմն և գնաց՚ի գանդիման. և էգիտ զկԹղկոն՚ի գիւղն քաԹակ. զոր կալեալ կապանօք էբեր յասպահան. և անտի էբեր առ շահն. որ էր յայնմ ժամանակին եկեալ՚ի վայոց ձոր. այս ինքն յերեզագաձոր. յորում տեղւոջ բերեալ չարքաշ իբրահիմն զմեղքիսեԹ կԹղկոն՚ի բա նակին արքունի, և ծանոյց շահին։ բայց շահն անտես արարեալ զդատաստանս մեղքիսեԹի էԹող մնալ՚ի կապանս։ չուԹաց շահն՚ի վայոց ձորոյ և եկն՚ի նախչըճան։

Ո՚ինչև ցայս վայր դաւիԹ կԹղկոն ընդ բանակի շահին էր. ցգալն մեղքիսեԹ կԹղկ սէն։ և իբրև եառես դաւիԹ կԹղկոն ԹԷ շահն Թողեալ անտեսաբար զմեղքիսեԹն մնալ՚ի կա պանս. խնացաւ յոգի իւր, ԹԷ կարի երկա րաձգի անտեսուԹիւն այն. վ՚որ զի խորհեցաւ Հրաժարիլ՚ի կԹղկոսուԹենէն, և գնալ յասպա հն. որ և մատուցեալ առ շահն խնդրեաց զՀրա ման գնալոյ իւրոյ յասպահան. և շահն ետ նմա զՀրաման։ և գնաց դաւիԹ կԹղկոն յասպա

հան՝ և կայր ՚ի լռելեայն. քանզի շահն պար գևեաց նմա զիւղ մի գարման կենաց նր՝ ՚ի գառաւին ջրախոռ. որում անուն կոչէին քնդիկան. զի կերիցէ զմուտս գեղջն այն միկ. և աղօթեացէ վս կենաց թգաւորին. և նա գնացեալ յասպահան կեայր այնպէ։ Ասկ մելքի սէթ կՓիղկան մնաց ՚ի քանակին արքունի ՚ի կապանս շղթայից։

Այս շահն ջոճեալ ՚ի նախջուանայ գնաց ՚ի գիւղաքաղաքն ագուլիս. յորում ժամանակի նահատակեաց զտէր անդրէաս քահանայն։ զմովսէս վարդապետն՝ և զպօղոս վարդապետն՝ արար ՚ի կապանս։

Ապրդ ոմն կալեալ շահն զմովսէս և զպօղոս վրդովոմն, էառ զերկբհարիւր թոմման. ոմինք և զմելքիսէթ կՓիղկան կալեալ պահանջէր. զերիս հարիւր թոմման տուգանս վս երից յան ցանաց։ Ասկ վս նշխարաց սրբոյ կուսին Հռիփսիմեայ՝ որ թոյլ տալոմն մելքիսէթի տա րան փառանկներն, զոր բազում աստ ին թէ վս կաշառացն թոյլ էառ։ Երկրդ. վս դառնալոյն ՚ի մեծ սուրգունէն՝ որ առանց հրամանաց շահին դարձաւ՝ և եկեալ յՋիմաճ ին վարէր զիշխանութգն կՓիղկաւթգն. և այն ևս առանց հրամանաց շահին։ Երրորդ՝ յորժամ շահն ընկեց ՚ի կՓիղկաւթգ զմելքիսէթն՝ և առա քեաց յասպահան, համարեր շահն զնաթգ ՚ի կալանս կայ, բայց մելքիսէթն յընդարձակի կալով վարէր զիշխանութգն կՓիղկաւթգն. և այն ևս առանց հրամանաց շահին։ վս այսքան յանցանացս կալեալէր շահն զմելքիսէթն և կամէր սպանանել. իսկ վս բարեխաւսութգ ա՜ միրգունայ խանին ներեաց և ոչ սպան, բայց պահանջէր զերիս հարիւր թոմման տուգանս, վս որոյ

վասոյ՝ի կապանս երկաթեաց պահէը՝ի կալա նել։ զի զայն վճարեսցէ, և գնացեալ դադա րեսցի յուրեք լուեալ յիշխանութենէ կաթո ղիկոսութեան։

Լուեալ շահն յագուելեաց գնալով եհաս՝ի գանգէ, յասպահանայ մինչ և ցայսր կապանօք կայր մեղքեսէթ կաթողիկոն, և այնպես շրջէը ընդ բանակին արքայի։ և յայսմ տեղւոջ երկիցս և երիցս մեղքեսէթ կաթողիկոն զարշալ գրեաց՝ և հասոյց՝ի ձեռն շահին, և ծանոյց զառաւ պանս իւր՝ թէ յայսպիսում վտանգի կամ, խնդրեմ յարքայէ անդորրութիւն առնել հմոյս տառապանաց՝ եթէ մահուամբ և եթէ կենօք։ Լսեալ շահն պատասխանի էր արարեալ սպան դեարն բէկունց. ոչ սպանանեմ, և ոչ թողում, այլ այնպէս կապանօք պահեմ, մինչև մեռցի, և զերծցի. և կամ տացէ զերդեքսարեւը թուման դրամն՝ զոր հրամայեալէմ նմա՝ և ազա տեսցի։

Լսէ՛ի ժամանակին յայնմիկ արք խորհրդա կանք և երեսելիք՝ որք էին՝ի դուռն արքային, եթէ յայլազգեաց՝ որ էր սպանդիարբէկն՝ է թէ ուղղութեամբ էկն, և այլք յոլով, և եթէ՝ի քրիստոնէից մեծամեծք, որ էր խօջայնազարն, և խօջայ սուլթանումն, և միաբանեալին. և մէկնէք հասկաց, և այլք բազում։ ասացին ցմեղ քիսէթ կաթողիկոն, անհնար եղև գործդբո, այլ պարտիս տալ և զերծանիլ՝ի ձեռաց սորա։

Ի.րդ պատմութիւն Ջաւախս յաղագս Հարիւր Թուման մուղադայիս է, և մինչև ցայս վայր միաշաւիղէր պատմութիւս, զոր և անտարակոյս գրեցաք, այլ յայմհետէ յերկուս շաւիղս բաժանի և երկատութիւն պատմութեան մեզ աշխատանս յաւելու, և մի ոչումիք գիտելոյ

զիսկն պատմութեաւ՝ Հարկ եղև մեզ զերկոսինն
ևս գրել : քանզի ոմանք՝ ի պատմողաց՝ մանաւ
անդ թէ բազումք պատմեցին՝ թէ մեկնեսկ
կիճակն ունելով իւրն ոսոխ զդաւթ կիճակն
Հանապազ առնէր իւրն զներհակութիւն. կանգ
նի ախոյեան, և դրդեալ գայթագղէ զիչխա
նութիւնն մեկնեսկի՝ և ոչ տայ զՀանգիստ և
զանդորրութիւն, վասն որոյ խորհեալ մեկնեսկն
եմուտ ինեզբոյ ծանրաբեռն Հարկի, զի վա
ծանրութիւն Հարկին ոչևս իշխեացէ դաւիթ
կիճակն յառաջկալ դրդել և խառնակել
զիշխն, այլ եբացկացցէ, որոյ եբացկան՝
մեկնեսկն անվրէպ վարեացէ զիչխանութիւն
կիճակութեն: և յայսմանէ պատճառէ գրեաց
մեկնեսկն զարզայ առ շահն: Զի թագաւոր
ցն եվր մեր կամք թագուրին՝ և արասցէ մեզ զայ
ցելութիւն, և տացէ զիչխանութիւն կիճակութե
մեզ՝ մեք տամք ամ յամէ՝ ի դիւան թագուրին յինչ
բաքանչիւր տարւոջ զՀարիւր թումանն՝ ի ոս
Ձինկ ծառայից թագուրին : Նոյն թագուրին տեսանէ
զով օգուտս յոլովս եւրոյն կողմանն վասն որոյ խո
նարհեալ զինքեան՝ ի բանս մեկնեսկին՝ և կատա
րեաց զինդրուածսն, զի ետնմա զիչխանու
թիւն կիճակութե Հանդերձ թագուրականաւնո
մոսիս գրեալ և կնքեալ, Զորով եկեալ մեկնե
սկին յամէրկիր վարէր զկիճակութիւնն իվր
ամենից Հայոցն եաց ժողովրդոց, և դաւիթ
կիճակն կայր՝ ի բացեայ մահասլով նՀանգիստ
՝ի ներհակութենէ. և իբր զգազան կապեալ
՝ի գառագեղի, սպասէր ևբղ Հայր դիպող ժա
մու: Զրդ զոր ասացաք վասն պատմութեաս թէ
կերկուս ոձս բաժանեցաւ, մինն այսէ, զոր
գրեցաք, զոր ոմանք և մանաւանդ թէ բա
զումք այսպէս պատմեն:

Նոյն

Նակ այլ քամանք՝ ի պատմողաց ասացին, թէ շահն երեք հարիւր թումանն տուգանք էարկ եվերայ մեղքիսեթին, և զայն ևս ոչ կարեր տալ մեղքիսեթն. բայց զի մնաց յանհնարս և՝ ի հարկէ նեղութեացն յականայ կամաք ասաց տամ. վասն որոյ գրեաց զթուղթ և առաքեաց առաջի շահին ըստ այսմ օրինակի։

Հրամայեալէ տէրութէ ինքնակալիդ վն մեր՝ թէ երեք հարիւր թումանն տացէ. յանձինկս լոյ տալ զերեք հարիւր թումանին. բայց յերեք տարին տամ յիւրաքանչիւր ամի հարիւր թումանն. մինչև զերեք տարին վճարեմ և առ արտեմ. քանզի՝ ի միում ամի ոչ կարեմ վճարել. եակ շահն առեալ էր զայս ձեռագիրս մեղքիսեթ կաթուղիկոսին. և արձակեալէր զնա՝ ի կապանաց. և տուեալ էր նմա զիշխանութէ կաթուղիկոսութէն։ Այլ՝ ի քուն մա տեան արքունականի դիւանի ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ ոչ էր ձեռագիր կաթուղիկոսին թէ երեք հարիւր թումանն տամ, և ոչ այլինչ առ լի՝ այլ գրեալէր շահն թէ մեղքիսեթ կաթուղիկոսն խնդրեաց զաթոռն կաթուղիկոսութէն, և խոստացաւ՝ ի տարին հարիւր թումանն մուղադայ տալ՝ ի դիւան թագաւորին, վասորոյ և մեք չնորհեցաք նմա զիշխանութէ կաթուղիկոսութէն, զի նա վարեսցէ։ Այս զայսպիսի գրելս շահին ոչոք գիտէր, ոչ կաթուղիկոսն և ոչ այլք՝ ի Հայոց՝ և յորժամ գիտացին, ոչոք կարող եղև ինչ. զի անհնար էր եղեալ զհրամանն զայնպիսւոյ խրոխտի թագաւորի, և կամ արտահանել՝ ի թագաւորականաց և՝ ի դիւան նախնեաց մատենից՝ յորում գրեալէր։ Այն չև ցայս վայր երկրորդ ոքն պատմութէ՝ զոր գմանք այսպէս պատմեցին, և դու ընկալ որպ

և հաւ

և հաւանեա, և կամ զորինչ տեսութեն մեռաց քոց յերկուցս պատմութեցս արտաբերեցե։

Ընդ-թե այնպես և թե այսպես, ստուգիւ և հաստատութեբ, Տարեւր Թուսման մուղադայ եղաւ իվր մեղքիսեթ կթղկան՝ զոր տայր թագրեին ամ յամէ. և՛ի նորին պատճառէ ան կաւ մուղադային իվր սրբոյ աթոռոյն Ջմիածնի. և մնաց աթոռն՝ի նեղբոյ զաբալայի։ և այս եղև բեռն ծանր, և լուծ տաժանելի, և ան ուր անխզելի իվր սրբոյ աթոռոյն Ջմիածնի՝ի զուր և՛ի տարապարտուց։ և ամի ազին Հայ կայ սուգ անմխիթար և տրտմութեն անփարա տելի եկեղեցականաց և աշխարհականաց։

Նակ մեղքիսեթ կթղկուսն յետ արձակելոյն՝ի կապանաց և առնլոյ զիշխանութեն կթղկուսութեն՝ ջանայր բազմաւ ջանիւ զի զխոստացեալ Տարէն վճարեսցէ, ոչ զի ազատեսցի, վնորոյ եղեալ է՛ի շրջագայութեն յազգս Հայոց յա զագս ժողովոց, և նախ՛ի տփխիս գնաց, և անտի՛ի Թաւրէզ. և անտի յասպահան։

Յորժամ տարին բոլորեցաւ՝ շահն ան մոռանալի ունէր զայն՛ի մտին վերոյ՛ի թագրա կանաց ծառայից իւրոց զարս ջորս գլխաւորս՝ որոց անուանքն էին, զիալբէկ, ասաթբէկ, ջրաղբէկ, բահրամբէկ, առաքեաց իվր մեղքիսեթին՝ թե զմուղադայն զոր խոստացար տալ՛ի դիւանն արքունի, տուր թագրականաց ծառայիդ՛ի ասկ կարգեալ առձկաց իւր եանց։ Յա այս եղև վտանգ և աղէտ դառնա գին, և անուր անխզելի իվր կթղկսարանին, զի բեռն իվր բեռին բարձեալ եղև։ քանզի ոչ գոյր առձեռն պատրաստ դրամ, զի տացեն զուլերուն, սակս որոյ մնային զուլերն և նստ էին իվր կթղկսին ծառայութ և երեվարօք իւր եանց։

եանց։ և զնմանն պիտոյս իւրեանց զկերակրոց և զայլ կարեաց ՚ի կԹ՛ղկեն առնուՀին։

Ոսկ կԹ՛ղկան վՀԹ՛ղրականի մուղադայինն և վՀ պիտոյից այսոցիկ ղուլացս, եղանէր և շրջէր յաղագս Հայոց՝ և ուր և շրջէր կԹ՛ղկան, ղուլերն ևս ընդ նմա շրջէին, և ծանրանային ի վերայ ժողովրդեանն վՀ պէսպէս կարեաց, ինչ քեանց և երիվարաց իւրեանց։ և սերունդք նոցա մաւուր ոչէր առանց գինւոյ, և ծախք նոցա ոչ սակաւ, և ժամանակ գինեբղուԹեն միշտ։

Այս ՚ի շրջագայելն իւրում կԹ՛ղկան յամէ երկիր համՀ ժողով դրեանն, ուր և լինէր իրաւամբ հասոյԹք իւր զոյն առնոյր, որ և ոչ լինէր այն բաւական ծախուց իւրոց և ղուլերուն, և մուղադային։ վՀորոյ զարս անպարտս, եԹէ եպիսկոպոս լինէր եԹէ աբեղայ. եԹէ երէց՝ եԹէ աշխարհական, կալեալ զնա Թարց համՀ պարտեաց և ՀնասուՀ՝ անիրաւաբար յօդէր բարբառս իմ Հոգնոյ և պահանջէր զդրամ, և մնանէր ՚ի ձեռս զինուորացդ ղուլերուն, որք կախէին յոտից և բռնածեծառնէին, մինչև ըստ կամաց իւրոց առնուՀին դրամն՝ և ապա արձակէին։

Այլև այսու պատՀառաւ մտին բազում անկարգուԹիք և օրինազանցուԹիք յաղագս Հայոց, կաշառաւք անարժանից զՀեռնադրուԹիս տալ, եԹէ եպիսկոպոսաց և Թէ քահանայից. և կաշառաւք զսեպհական վիճակ այսմ վանացս կորել և այլում վանաց չնորհել։ և ջհասի, և մեղօքի, և կնաթողուԹիե, և երկակնուԹիե, համարձակ գՀրաման տալ առնուն։ Օ այսոսիկ, և որք սոցին նման զբազում անկարգուԹիս գործէին, կԹ՛ղկան և եպիսկոպոսքն իւր, և ոգւով ջան գուն գործեալ եԹէ իրաւամբք և եԹէ անիրաւուԹ՛ Հնարէին ժողովելոյս, զնԹէր

զնեցերևս բաւականապէս ծախուց եւ զրեանց եւ զուլերուն, և վճարման մուղադայեն, սակայն ոչ լինէր զի ոչ առուծով, այլ մարդկայնով հանձարով հնարէին կատարել զգործ, վերոյ ոչ կատարիւր, ըստ վկայութեն սաղմոսին, թէ ոչ Տէր շինէ զտուն. լինանիր վաստակին շինողքն։

Այց կթիղկան ոչ թուլանայր և դադարէր ի շրջագայութենէ, զի թերևս վճարեսցէ զխոստումնան վերոյ երեալ ի սպահանայ գնաց ի ֆահրապատ. և անտի ի նախիջեան, և անտի դարձեալ յասպահան։ և ապա ի բաղմայ վշտացն զոր զուլերն վշտացուցանէին զկթիղկան, և խնդրէին զգանձս ինմանէ, արդեայով ծանուցեալքեր կթիղկան շահին զվիճան իւր, և շահն անտեսաբարեալքեր զբանս կթիղկանին, վերոյ մնացեալքեր անհնարելեաց տարակուսանաց մէջ։ և ապա գնացեալ և անկեալ ի շահի թաւրէզն, և ծանուցեալքեր շահին թէ ուրն հարիւր թուման տուեալեմ, այլ ոչ ունիմ կոր տալոյ։ Ասէ շահն ասացեալքեր թէ ես յայդ հարիւր թուման մուղադայեդ փողմի չեմ ան ցանիլ. այլ թէ մեկ այլն պառաւ լինի մնացեալ ես առնեցց եմ։ և ապա երեալ մերքն սկթն յասպահանայ եկն յերևան և յԱրջմի ածին, շահի զուլերն ևս եկին ընդ կթիղկանին. և խնդրէին զիւրեանց տօնեցուն՝ զոր շահն բարեթերս արեալ իւր կթիղկանն տալ նոյ ի կողմանէ հարիւր թուման մուղադայեն։ և ուրև շրջէր կթիղկան՝ ընդ նմա շրջէին և զուլերն, և ծանրաբեռն լինէին իւր ժողովրդեանն վերհարկաւորաց կարեաց իւրեանց և անխնայբար շռայլութիւն ցնդէին զինչս ժողովրդեանն. և այս վտանգ յոյժ էր իւր ժողովրդեանն, զի զկենցաղավարութիւնս իւրեանց զեղծուն շռայլու-

շուայլութիւ վարել են։ Ընդոյ ամէն ձանձրացան և սրտիւ լքին զկռիւն և զիւրան՝ և իւրաց կացին'ի նոցունց։ Այս այնու հետև ոչ ըստ երաւանց և կանոնականի կարգի, այլ այլազգեաց իշխանութիւք և իբր զաքսալաւոր հարկատու բըռնանային իւրեանց ժողովրդեանն՝ և առանց երաւանց կեղեքեալք կողոպտէին զժողովուրդսն։ և թէ պէտ կեղեքելով առնուին՝ և թէ պէտ ոչ ըստ երաւանց. սակայն ոչ լինէր բաւական ծախուց իւրեանց։ Ընդոյ'ի կարեաց պակասու թենէ և'ի հարկելոյ զուլերոյն գնացին առ շահակեր փոխատուս։ և յոլովատոկոսեօք առնուին զփոխ'ի նոցունց։ Յոլովակի յայլազգեաց քան թէ'ի քրիստոնէից՝ քանզի քրիստոնէայք ոչ հաւատային'ի տալն։

Այս եղև այժմ'ի ներկայիս յերկուց կողմանց յաւելանալ պարտուցն, 'Ախ'ի կողմա նէ հարիւր թումանն մուղադայիւն, զոր ոչ կարէին տալ, վասնոյ մնաց ամբաղձ և ի հաս միւն չեղեալ հարիւր թումանն բաղձ։ Այս երկրորդ, իւրմէ արարեալ պարտուն, զոր'ի պարտաստուճացն առեալէին վասն կարեաց զուլերոյն՝ և ինքեանց։

Զոր վասն յաձախութիւն պարտուցն և այլոց ևս նեղութեանցն, զորս կրէր կռիւն, նաև անբն դունակ լինելոյն յազգէն Հայոց, խորհեցաւ'ի միտս իւր զի բարձեալ յինքենէ յայլոց վէր դիպեալ զանուն կռիւսութեն, ընդ նմին և զպարտն։ Ընդոյ ասաց ընդ մովսէս վարդապետին, որ'ի ժամանակին յայնմիկ բնակէր յերևան քաղաքի առ դամբարանի սրբոյ առաքելոյն անանիայի, որ կայ յեզր քաղաքին։ Այդ ազգս Հայոց մեծ և փոքր զերես դարձուցին յինէն. և զբեզ սիրեն, և ընդունին՝ և մանաւանդ զի ծերացեալ իսկ եմ, և հարկն արքունի պարտք եղև

եղև և բազմացաւ իմ ի նմա: արդ տամ քեզ զնա
աթոռն Աղուանից, և զկաթուղիկոսութիւնն դու
վարեա այնու հետև ոչ և եաղ արժան, և ինձ
տուր ամենայն դարման պիտոյից, և զի՛ ի վա
նորէ եղեր, զի անդ նստայց լուսաւորչին, և վճարե
ցից զծերութիւնս իմ, Սակ մովսէս վարդապետն
ոչ էր յանձին կալեալ այլ հրաժարեալով հրա
ժարեալէր:

Յորում երեղէօր որդի մի մեծքիսեթ կաթուղիկոս,
որոյ անունն էր սահակ՝ի նմանէ եպիսկոպ էր
Ձեռնադրեալ՝ և կայր՝ի սպասու նորին: որոյ
հասուցեալ բանս առ կաթուղիկոն մեծքիսեթ,
թէ կաթուղիկոսութիւդ այդ քո է՝ թէ առնես դու
յոյժ բարւոք է, արա, և թէ ոչ առնես դու՝
ընդ էր այլոց չնորհես, և ոչ ինձ, որ եմ ժա
ռանգ և որդի էր: յայսմ բանի, և բարեկամք
եւրեանց յորդորեալ քեզ ի նմա զկաթուղիկոն: Սակ մեծ
քիսեթ կաթուղիկոն, հաճեալ՝ի բանս սահակին
և բարեկամացն, և հաւանութիւնք, և միաբա
նութիւնք բարեկամաց եւրեանց տարեալ էր զսա
հակն յԱղուանից և՝ի հրեշտակապետաց կի
րակի օրն օրհնեալէր զնա կաթուղիկոս, և առեալ
էքէր՝ի քաղաքն երևան, և ծանուցումն արա
րեալ զայս բան ամենայն ժողովրդեանն: Ա
յլև գրեաց զկոնդակ, և ետ ցսահակ կաթուղիկոն, թէ
ծանուցումն լինի ամենայն Աղուանից՝ այսոցիկ զի ես ծե
րացեալեմ և անկարացեալ. վնորոյ հրաժարե
ցայ՝ի կաթուղիկոսութենէս և օրհնեցի զսահակ որ
դիս իմ կաթուղիկոս, և կարդեցի՝ի սբ աթոռն Աղ
ուանից: արդ ովքեր հնազանդեսցին մեզ և խնդրող
օրհնութիւնք մերոյ, յաժարութիւնք հնազանդես
ցին հրամանաց դորա: Յորում այսպիսի բարոզեաց զնա
կաթուղիկոս ամենայն Աղուանից այսոցիկ, առաջի վար
դապետաց, և եպիսկոպոս: Եւ առեալ առաջի

ամիրգունայ խանին կացոյց և ասաց, Թէ եռու զկնիկսութենն սա, որում խանն ևս հաւա նեցաւ։ և՝ի խանէն ևս խնդրեաց մեկնիսել կնիկոն, գրել խնդրանաց զնուղթ առ շահն. զինամ տացէ զկնիկսութենն։ և ինքն մեկնիսել ևս գրեաց աղաչանաց զնուղթ առ շահն՝ Թէ ես ծերացեալեմ, և ոչ եմ բաւա կան վարել զնշխանութիս. սա իմ որդի է՝ խնդրեմ զի սմա շնորհեսցես զկնիկսութենն։

Ո կնի ամի այսոցիկ, զի կարգեցաւ սա հակն կնիկոս. և ընկալաւ զհրաման՝ի մեկ նիսել կնիկսեն և յամիրգունայ խանէն՝ այնուհետև սկսաւ սահակն վարել զնշխա նութիւն կնիկոսութենն. և շահն զուլերն ևս ժողովեցան իվը իսահակայ կնիկոսին և ընդ նամա շրջագայելին։

Ո կնի առնուց ինչ սահակն առեալ զնուղթս ըն մեկնիսել կնիկսին և ամիրգունայ խանին գնաց՝ի դուռն շահին, առի սեպհականացու ցանել իվերայ ինքեան զկնիկսութենն։

Սակ մեկնիսել կնիկոն մնաց յԱրմաճին. և պարտատուքն յոյժ ձգդիւ պահանջէին՝ի նմանէ զիւրեանց տուեալ պարտն. և յամ առուր եկեալ կանխէին առ նա՝ և անհանգիստ արարեալ խնդրէին զտուեալ պարտն։ և նր ոչ գոյր ինչ զի տացէ. այլև ոչնչ հաւատայր տալ նմա զպարտս. և ոչ յայլոստէքէ գոյր ակնկալութիւն։ վասն որոյ զսպառսպուռ մնա ցեալ զանօթան սրբոյ Նշխարին. զորինչ և գտա նէր. նաև զաջ Նրիսոսի Հայրապետին որ դէպ սրբոյն Նրիգորի մերոյ լուսաւորչին. նաև զաջն աղջուց վանից սրբոյն Ստեփաննոսի. զայսոսիկ զորս ասացի. բերեալ էդ գրաւ առ պլազգի մահմետականս՝ և առեալ զդրամ ետ

պարտատուէացն. և զնա այնու կերպիւ ի բաց արար յինքենէ։

Եւ այնու հետև կասկած կրեալ յինքեան Մելքիսեթ կաթուղիկոն. թէ միգուցէ միւս այլ պարտատուքն ևս եկեալ նեղեսցեն զինքն։ Եւ ևս վն թագրկանի մուղադային դիտեալ ի միտս և ծանուցեալ հաւաստեաւ թէ ոչ կարեն վճարել։ և այլևս նեղու թեցան, որք շրջապա տեալ էին զինքեամբ, խորհեցաւ ի կողմն ինչ ձողոպրիլ թաքնաբար։ Եւ ոորոյ յաւուր մի ումբնդ մերձենալ երեկոյին եղեալ յ՚ չքմիած նէ պատճառեալ թէ գնամ յերևան. ինքն և սպասաւորն ոմն։ և ի հասանելն իւր ի կէս ճա նապարհին, դարձուցեալ զերեսանակ երի վարին գէպ ուղիղ յերկիրն սահաթայ՝ որ է յայնկոյս գետոյն երասխայ ի կողմն կողբայ. և անտի գնացեալ ի կաղզվան. և անտի յար զրում։ Եւ այսպէ թագնաբար գաղտագողի գնացու թէ զերծաւ Մելքիսեթ կաթուղիկոն ի մասն բաժնի աշխարհին Ոսմանցւոց։ և եղեալ ի կարնոյ քաղաքն կամար գնալով է հաս ի մեծ քաղաքն կոստանդնուպոլիս։ և անդ ևս ոչ ընկալան զնա ժողովուրդք և վրդովեալ ժամանակին վն իրիք ինչ պատճառի. ապա եղեալ անդի գնաց ի քաղաքն իլով. և ժողո վուրդք քաղաքին իլովայ ընկալան զնա յոյժ պատուով և մեծաւ փառօք։ և է կաց անդէն սակաւ ժամանակ. պակասեալ ասաի յաւե լաւ առ Հարս իւր. ի մերում թուականիս հազար և եօթանասունևհինգ ամի. անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ։ Այդ մինչ կենդանի էր Մելքիսեթ ձեռնադրեաց իլովա ցւոցն եպիսկոպոսի անուամբ զոմն. որ էր ի նոյն քաղաքէն իլովայ. և նիկոդիմոսս այս

յետ սղոց ամաց զբազում նեղութիւնս հասցէ
Ժողովրդեանն. որոյ զորպիսութիւնն ծանիցես
՚ի նոցին պատմութենէ, զոր զինի առնելոցեմք։

Պատմութիւն կճղակաւորէ և վհատեան սահակ կճղակին։

ԺԹ։



ՊԱՏՄԵՑԱՔ թէ սահակն ընկալաւ զաս
տիճան կճղակաւորէ. նաև զԹուղթ աղա
չանաց ՚ի մեծ բիսկ Թէն և յամիրգունայ
խանէն առ շահն։ և միւս ևս զԹուղթ գրեաց
ամիրգունայ խանն առ որդին իւր Թահմազ
ղուլի խանն, որ հանապազ ՚ի սպասու շահին
կայր՝ զի մներդար էր շահին. այս այն Թա
մազղուլին է, որ Ջիւանծնի քարինան հրամա
նաւ շահին հանեաւ առաքեաց յասպահան. և
յայսմ ժամանակի առ շահն ՚ի սպասու կայր։
առ որ գրեաց ամիրգունայ խանն Թէ զայս սա
հակս երևեցուսցես արքայի. և զամենայն խնդ
րուճածս սորա ծանուսցես նմա. և խնդրեսցես
տալսմա զկճղակաւորութենէն։ և սահակն առեալ
զԹուղթս զայսոսիկ և գնաց՚ի Ֆարատապատ՝
քանզի անդէր շահն ՚ի ժամանակին յայնմիկ։
Եւ իբրև եհաս առ Թահմազղուլի խանն բա
զում բանս յուսադրանաց լուաւ՝ ինմանէ՝ Թէ
մի ինչ հոգար զինչ և խնդիր ունիս յարքայէ
զամենեսեան կատարեցից։ Եւ յետ աւուրց
ինչ յանդիման արքայի կացուցեալ է զաս
տիճան. և շահն հարցմամբ տեղեկացեալ էր
վերնի. և ընթերցեալ էր զԹուղթն զամիր
գունայ խանին և զմեծ բիսկ Թէնն. նա և
խնդացաւ շահն Թէ սահակն եղբօր որդի է մեծ
քիսկ Թէնն։ և ինքն ևս սահակն ընծայ ինչ ըստ

կարողութեանէ իւրոյ մատուցեալ էր առաջի ար
քային. ընդ որս էր և ձի մի պատուական. իբրև
մատուցին զպատարագն սահակայ առաջի թա
գաւորին. է՛հարց թագաւորն թէ զինացորդս պար
տուցն, զորս՝ի կողմանէ մուղադայից տալոց է
մեզ քիսէ թէ կաթուղիկոն՝ի դիւանն արքունի յանձն
առնուս տալ՝ թէ ոչ. և սահակն յանձին կա
լաւ զտալն. վասնոյ արքայ հաճեալ և հաւա
նեալ էր բանից խնդրանաց նմա՝ և տուեալ էր
սահակին զկաթուղիկոսական իշխանութիւնն. և սա
ցեալ էր ընորհաւոր լինի քեզ կաթուղիկոսութիւդ.
այլև սահակայ ընծայեալ զձին նմին պար
գևք ընորհեալ էր: Իսկ հրամայն արար շահն
գրել զրաղամ. զոր և գրեցին. բայց մնաց կնքե
լոյ և սափթ առնելոյ. քանզի թագն և իւր քար
խանէն ելեալ՝ի փահրաստապատոյ գնաց՝ի
զազբին. և յաւուրսն յայնոսիկ զփահրաստապա
տու նոճիրակն սկիզբն էր արարեալ առնուլ
սահակն. ասաց թահմազդուլի խանն սահակայ
զրաղամն տուր ցիս. զի ընդ իս տարեալ ես
կնքել տամ. և դու կաց՝ի փահրապատ զնոճի
րակդ արա. յետոյ գաս և քեզ տամ: և այսպ
արարեալ սահակն մնաց՝ի փահրապատ. և զրա
զամն թահմազդուլին տարաւ ընդ իւր՝ի զազ
բին. և շահն, և իւր օրդուն անտի եկին՝ի
սուլթանիայ, և յարտաւիլ. և դարձեալ՝ի
սուլթանիայ: Իսկ մինչ սահակն զփարապատոյ
ժողովն արար և եկն՝ի սուլթանիայ՝ թահ
մազդուլի խանն յառաջագոյն գնացեալէր յի
բևան. քանզի ամիրդուն խանն հիւանդ կայր
՝ի վիրէն. զոր առեալ էր՝ի վրաց ազգէն՝ի պա
տերազմի. վ՛ասյսորիկ առաքեցին զթահմազ
դուլին յերևան զի տիրեսցէ երկրին: Իսկ յետ
գնալոյ թահմազդուլի խանին. եկն սահակն՝ի

սուլ

սուլթանիայ. իբրև ոչ եգիտ զԹահմազուլի
խանն. հարցեալ զնորին ծառայն և խնդրեաց
զրաղամն. և նոքա ասացին Թէ ոչ գիտեմք։
Եւ իբրև անձաոր մնաց սահակ կԹղկան վն
բաղամին. հարկեալ՝ ինեղուԹէ վերստին զաոր
զայ եաշահին այլ նմին հնարիւ՝ Թէ հիւանդա
ցայ հուքմն կորեաւ. և շահն ասացեալ էր Թէ
գնա առ դիւանբեկին։ Եւ սակ դիւանբեկին
վասն Թամահի խոստուԹէր պատասխանեալ
սահակին մինչ որ Թամահն իւր լցեալէր. և
ապա գրեալէր զնոր բաղամբայց ոչ էր կնքեալ.
և մինչ այսպէս կայր. դարձեալ եղեալ Թիւրն
և գնաց ՚ի բաղդատ. գնաց զկնի և սահակն.
Եւ իբրև մեծամեծքն ոչ կատարէին զինդ
իրան սահակայ. հարկեղև նմա միւսանգամ տալ
զարզայ շահին. և իբրև ետես զարզայն Թիւրն.
ասաց վաղուըեմն տուճեալեմ քեզ զխալիփուն
և զրաղամ։ ասաց սահակն այոյ Թիւրս տուճեալ
եա. բայց զրաղամն ոչ կատարեն. քանզի նոք
յոլովս խնդրեն ինչս՝ և ես զի ոչ ունիմ կարո
զուԹէ տալոյ՝ վն որոյ և նոք յապաղեն ՚ի մուհ
բել և՚ի սաֆԹ առնել։ Յայնժամ կոչեաց շահն
փայտակալ ծառայ մի առաջի իւր և ասաց. Թէ
այսօր զամգործ և որպիսուն բաղամի դորին պար
տիս կատարել՝ և՚ի վաղիւն չինքն տալ։ Եւսակ զին
նուէրն ըստ հրամանաց Թիւրին զամ որպիսուԹէ
գրոյն հոգաց. և ետ իսահակ կԹղկան զրաղամն։
Եւ սահակն առեալ զԹուղԹն և եկն յատպա
հան իմէջ ջուղայեցւոց. և ոչ ընկալան զնա
ջուղայեցիքն. ոչ միայն զնուճիրակ ոչ ետուն.
այլև զհարևանցի պատիւ ևս ոչ արարին նմա։
Ի սոյն ժամանակի դաւիԹ կԹղկան յատ
պահան էր. ասացին նմա ջուղայեցիքն, Թէ
մեք ոչ կամիմք որ սա լինի կԹղկն այլ զքեզ.

դու գնա՛ի դուռն շահին. և առ ընդհանուր թէ կաթուղիկոսութէ. և զորինչ և խարջ լինի քեզ ընկեր եմք։ և դաւիթ կաթուղիկոն երբեմն հաւանեցաւ խորհրդեանս այսմիկ։ և պատրաս տեցաւ գնալ՛ի բաղդատ՛ի դուռն շահին։ իսկ ցաւ զայս խորհուրդս սահակ կաթուղիկոն. և նա եւս եկ գնալ՛ի դուռն շահին. տեսանել զկատարումն գործոյն։ Այլ վնասակ խորհրդոյ սորա սեցաւ սահակին ընդ դաւթին. թէ ընդէր առնես զհակառակութէն և գործես զչարդ՝ և դաւիթն զպատճառս յօդեալէր թէ ոչ վն հակառակութէ ինչ քեզ գնամ. այլ վն գործոյ իմոյ. քանզի այն չուէ թլուկն, զոր շահն պարգեւեալ է ինձ. ոմանք յիշխանաց բռնութէ և պատճառանօք իմն հարկ առնուն վնն. վն այն երթամ՛ի դուռն թագրին. որ ազատուէ թէ զթուղթ առնում չուէ թլուկին։

Այլ՛ի հասանելն նոյ՛ի բաղդատ. յառաջ սա հակին գնացեալ երևեալէր շահին. և՛ի հարցանելն շահին թէ զինչ կամիս և սահակն ասաց՝ թէ զհրաման թագրի ոչ ընկալան. և հարց շահն թէ ով. և սահակն վն երկիւղի յանուանէ ոչ յիշեաց՝ այլ միայն ասաց թէ յայտնիւ թագրին։ և շահն իմացաւ, որ խօջայ նազարն է՝ վնորոյ ասաց՝ գիտեմ զի քօռն է. և քօռ անունս շահն խօջայ նազարին ասէր։ Ո կինի առաւրց և դաւիթ կաթուղիկոն ևս եկեալ երևեցաւ շահին՝ բայց վն կաթուղիկոսականի իշխանութէ ոչինչ խօսեցաւ. քանզի յոգւոջ իւրում ծանուցեալ գիտաց թէ ոչ լինի։ Այլ խօսեցաւ վն չուէ թլուկին. զոր և է առ զհրաման տիրելոյնմա ազատ՛ի հարկաց արքունի։ Այս յետ այսոցիկ սահակ կաթուղիկոն և դաւիթ կաթուղիկոն ելեալք՛ի բաղդատ ասէ դարձեալ եկին յասպահան. և ջուղեցիքն

այլևս ոչ ընկալան զսահակ կաթուղիկոն։ Եւ յորժամ եղեն երկոքին կաթուղիկոքն ՚ի բաղդատեայ. շահն ևս յետ սակաւուց աւուրց եղեալ ՚ի բաղդատեայ գնաց ՚ի փահրապատ։

Եւ ամաւ միով յառաջ շահն առ ինքն եր կոչեալ զմովսէս վարդապետն ՚ի բաղդատ. վն սպիտակացուցեալ մոմին. և հարցեալ տեղէ կացաւ վն արուեստին թէ ոչ սպիտակացուցանեն զմոմն և ապա՚ի թիւրականաց ծառայից իւրոց երեք ծառայ տուեալեր նմա յաշակերտութիւն. և հրամայեալեր թէ գնա յասպահան և զարուեստդ զայդ ուսո ծառայիդդ մերոյ՝ և բեր առ իս ուր և իցեմ ես։ Եւ մովսէս վարդապետն եկեալ յասպահան ուսոյց զծառայն. և զբաղումմոմն պայծառագոյնս սպիտակացոյց. և յորժամ լուաւ թէ շահն գնաց ՚ի փահրապատ առեալ ընդ իւր զսպիտակացուցեալ մոմն. և զուսուցեալ ծառայն գնաց ՚ի փահրապատ՝ և մատոյց թիւրքին։ իբրև ետես թիւրքն զսպիտակացուցեալ մոմն կարի պայծառ և հրճուալի։ այլև վն յարմարագունոյ թափելոյն յոյժ հաճեալ և հաւանեալ եր։ նա և վն ուսանելոյ ծառայիցն առաւելապէս ուրախացեալեր՝ և զոճառթացեալ խնդայր։

Եւ յետ սուղինչ աւուրց հասեալ իմն աւուրք մեծի ծոմի յայտնութեան Տեառն։ Եւ յաւուրսս յայսոսիկ զուղայեցի խօջայ նա զարն ևս՚ի փահրապատ եր. հրամայեաց շահն խօջայ նազարին թէ պատուիրեա վարդապետին լաւագոյն իմն հոգաբարձութիւն տեսանել զպատրաստութեան վասն ջրօրհնէքին, զի հանդիսաւոր լինի։ Եւ յաւուր ծոմին յորժամ եկեալեր վարդապետն մովսէս իւր գեղոյն յօրհնել զջուրն. ընդ գեղեցիկ յարմարութիւն զար

դուցն. և ընդ կարգաւորաբար շարժուսին, և՛ի կանգնիլն պաշտօնեիցն յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ. և խանդաղատեալ իւր մօսեսի: Եւ զայս իմանալով առնել խնամ ամենայ կալին Հ|ՅՐ որ զսիրտ ամենից Թագաւորաց ունի ՚ի ձեռին. և ոչ թէ հաճոյական արարմունքն մօսէսի: այլև խօջայ նազարն ևս բանս բարիս յորով խօսեցեալէր ընդ շահին վասն մօսէսի վար դնէին: Եւսկ շահն հարցեալէր ՚ի խօջայ նազարէն թէ զինչ խնդիրք ունի վարդապետն ՚ի սրտի իւրում, զի կատարեսցուք. զոսկի, զար ծաթ, և զայլինչ, զոր կամի: իսկ վարդապետն և ոչ միով իրաց հաճեալէր. քան զի ասէր ոչ ունիմ ես կարիս մարմնաւորաց իրաց. զի զպետս իմ Ցէրն իմ հոգայ օրըստօրէ:

Եւ յետ աւուրց ասաց խօջայ նազարն առ քայ. զլուսարարութիւն Հ|ՉՄԻածնի եթէ չնոր հեսս սմա յոյժ բարւոք առնես. քանզի ինքն ևս զայն խնդրէ: և խնամօքն Հ|ՅՐ Թագաւորն չնոր հեալէր զայն խնդիրն. այլև գրեալ զրաղամ տուեալէր մօսէս վարդապետին: և մօսէս վարդապետն եղեալ ՚ի փահրատապատայ գնաց յ|ՉՄԻածին:

Իսկ սահակ կաթողիկոսն մինչ էր յասպահան լուաւ թէ մօսէս վարդապետն է առ զլուսարարութիւն Հ|ՉՄԻածնի, եղեալ եկն ՚ի փահրատապատ ՚ի դուռն Թագաւորին վասն այսց իրաց. իբրև մատուցեալ առ դիւանբէկին ծանոյց նմա զկ վտանկն իւր՝ և ասաց թէ զուտ արարեալէք ինձ՝ որ զ|ՉՄԻածինն տուեալ էք մօսէսին. և դիւանբէկին արար զպատասխանի թէ պետ տուաք նմա զ|ՉՄԻածինն. զնորին լուսարարութիւնն տուաք՝ և ոչ կաթողիկոսութիւնն. կաթողիկոսութիւնն քո է, և լուսարարութիւնն նր. գուզբոյն վարեա՝ և նա զիւրն: Ելև ՚ի դրունս

մեծամեծաց բազում չըլնեցաւ սաչակին սա
կայն ոչինչ օգտեցաւ։ Խբրև տեսս թէ ոչինչ
օգնէ, եղեալ՚ի փախրապատայ եկն՚ի Թաւ-
րէզ. եկին ընդ սաչակին և շահիղուլերն, որ զմա-
ղադայ Հարիւր Թուման պահանջէին. և սո
քօք եղեալ՚ի Թաւրիզու եկին յերկիրն խոյայ։

Խյս սաչակն խորհրդով ներքսամադրեալ
մտացն Հայեցեալ նկատեաց թէ ամ ազգն
Հայոց Հեռացեալ՚ի բացկացին յինքենէ։ այլ
և աթոռն Խջմիածին այնու կերպիւ գրաւե
ցաւ՚ի ձեռն մովսէսի վրդապետին։ և մուղադայ
Հարիւր Թուման որ ամ յամէ բաղի մտաց, մնա
ցեալ բաղին մինչև յուլթն Հարիւր Թուման
Հայաս. և տակաւին օր աւուր բազմանայ. գի
տաց Հաւաստեաւ զիոչ այլինչ իրօք լինի փրկու
թիւն նմա, եթէ ոչ փախստեամբ. վնորոյ եկն
՚ի խոյ, զի կամէր՚ի խոյայ փախչիլ Թաքուն՚ի
ղուլերէն՚ի քաղաքն վան յիշխանուԹիւ և յեր
կիրն ( )ամանցուց։

Խինչ սաչակն իմ՚ի այսմ խորհրդոյ մտայոյզ
լինէր՝ և կայր՚ի վարանման՝ Թէ ոյզ արասցէ,
ոմանք՚ի Հին բարեկամաց նր, յորոց էին մա
նուէլ եպիսկոպն խոր վիրապայ, և մկրտիչ եպիս
պոսն Հաւուց Թառայ՝ սորա այլոքն Հանդերձ.
որք կային յերկիրն երևանայ։ առաքեցին զ
ԹուղԹս յուսադրական առնիւ առ սաչակն
խոյ, Թէ մի երկնչիր այլ եկ յերևան քաղաք՝
քանզի Թագմազղուլի խանն գԹով է ընդ
քեզ. և մեք ամբն Համախոհք քո եմք, վնորոյ
եկ առ մեզ ասա, և ապա զպատշաճն գործ ոյ
խորհեսցուք։ Խյս յայոց յուսադրականաց բա
նից զքաջալերուԹիւն ընկալեալ սաչակ կԹիկան՝
յայնժամ ոչ փախեաւ այլ եկն յերևան։ և շա
հն զղուլերն ևս ընդ նմա։ Խբրև չըլնեցաւ ընդ

երկիրն ամ յայս կողմն և յայն կողմն, ոչղը ընդ
ունելը զնա. և հայելը յերեսանը՝ մինչդեր զհիւր
ընկալութենն նը հարևանցի և վերի վերոյ առ
նելն։ Յակ ղուլերն հանապազ նեղելին զնա
թե զթերական պարտան վճարեա՝ և զմեր տօն
ղուշն տուր՝ և նա զի ոչ ունելը զինչս և յամենից
կողմանց վհատեալ էր և անճար մնացեալ. և
յուսադրօղ բարեկամքն իւր ոչինչ կարացին
օգնել նմա, վը որոյ հաստատուն եղեալ ի
մտի զի հնարիւք ելն զերծեալ փախիցէ։

Ի յաւուրսն յայնոսիկ եկին և հաս տօն յայս
նուէրն Ջն. որ յամամի մավսես վրդպան զտօնն
զայն մեծախումբով հանդիսիւ և հրաշալեաւ
փառաւորութբ կատարէր։ և էին ամքն յերև
ան քաղաքի, մավսես վրդպան, և սահակ կթղի
կոսն, և շահի ղուլերն։ գնացեալ սահակն ա
սաց ընդ ղուլերսն՝ թե խանն հրամայեաց
զտօն ջրօրհնեացն բազմազան և մեծահանդէս
կատարել. վը որոյ ասաց ինձ մավսես վրդպան,
գնա դու յՋմիածին՝ և զամ պատուական և
զվաղվի անօթեան՝ զոր դուք պահեալեք ի դա
րանի՝ բեր աստ. զի զտօնն կատարեացուք։ և
զայս ասելով հաւանեցոյց զնա՝ զի թոյլ տացէն
նմա գնալ. և նոքա հաւատացին նմա և թողին։

Յակ սահակն քանզի ունէր զպատուական
ձին՝ զոր շահն նմա պարգև էր տուեալ՝ հե
ծեալ ուղղեցաւ ընդ Ճնապարհն ՅՋմիածնի,
եբր թե գնալոց էր յՋմիածին և բերելոց է զա
նօթեան։ և ի հասանիլն ի կէս Ճանապարհին՝
փոխեալ զձև զգեստոյն ի ձև և ի կերպ զօրա
կանի, և դարձուցեալ զերեսանակ երիվարին,
և դիմեալ դէպ ի նախչըճան քաղաք և ի սահ
մանն։ Յակ ի մտորակել օդապարիկ և քաջա
զօրեղ և բարձրապարանոց երիվարին, ոչ թե
զերե

զերեսաքերկրի, այլ ընդ երինեաք և իմէր Թևաց ամպոց առեալ ածէր զնա շեշտակի 'ի սահ մանս երկրինն նախնեաց նորա։ և եկեալ 'ի նաւ առեղն դարաշամբայ գեղջն՝ և նաւով ան ցեալ զգետն երասխ, և գնացեալ 'ի ջորս յորմէ 'ի խոյ. և անտի 'ի վան քաղաք։ Եւ այսու կերպ պիւ Հողոպրեալ փրկեցաւ սահակ կԹ՛ղկան 'ի ձեռաց ղուկերոյն, և գնաց 'ի մանն բաժնի եր կիրն ()ամանցւոց։

Զետ այսոցիկ եբրև զգացին շահիղուկերն զփախուստն սահակին՝ եկին առ մովսէս վրդ պետն՝ Թէ դու առաքեալես զսահակն յԱջմի ածին զնա անօթի։ և մովսէս ասաց՝ ես զսա հակն ոչ տեսեալեմ և ոչ առաքեալ. այլ նա այդ ու բանիւդ զձեզ խաբեալ է և փախեալ։ Եւ ղուկերն Թէ պէտ բազմաւ կերպիւ կողմէ 'ի կողմ անկան. երբեմն առ խանն գնալով և երբեմն առ շեխն, և երբեմն առ դատաւորն, և երբեմն առ մովսէս վրդպան. ոչինչ կարա ցին պատուհասել իւրեանց մովսէս վրդպանին։ այլ ամենից կողմանց վհատեալք՝ դարձան և գնա ցին 'ի տեղիս իւրեանց ղուկերն ամբն։ Եւ այս ևս այսպէս։

Վ՛ հակառակութ՛ սահակ կԹ՛ղկան, զոր արար ընդ Խրէոյ Աջմիածնի և ընդ մովսէս կԹ՛ղկանն։

Ի։

ԵՆՏ ՓՐԽՍՏՆԵՆ սահակ կԹ՛ղկան յաշխարհ տերուԹե ()ամանցւոց. մեռաւ Թագէն Պարսից շահաբաս՝ որ զՀարիւր Թուման մուղադէն և դեալէր իւր կԹ՛ղկացն. և փոխանակ շահա բասին Թագէոսի Թոռն նորին շահսեֆի։ Եւ սակ աղգն Հայոց ամբն արևելեանք և արև մտեա

մեռանիք՝ հանապազ հեծելին և երկնելին և յո
գւոց հանելին վը հարիւր Թումման մուղադայ
ին, որ ի տարապարտուց եղաւ իվ ը աԹոռոյն.
զի սուգ անմխիԹար և տրտմուԹիւն անփարա
տելի կայր իվ ը ամենն. և միահաղոյն տրտմու
Թիւ զգածեալ ի տարակուսի կային: Այս որ
քան մտածելին ոչ կարելին գտանել Թէ որով
հնարիւք բարձցեն զայսպիսի ծանր և ստուար
լուծ ի պարանոցէ աԹոռոյն: և ի խնամոյն
Այ գտին ժամանակս զայս յորժամ Թիւրեայ
շահէ ֆինէքանզինոր Թիւր էր և մանուկ տիօք.
և ամբն նախարարքն և իշխանքն՝ որք կային ի
դուռն նր, Ճանաչէին ի քրիստոնէից զարս
երևելիս. և մանաւանդ զիօջայ նազարն՝ որ
նախապատիւ էր քան զամեն, զոր և այս խօջայ
նազարս գրէ յասպահանայ առ մովսէս վարդ
պետն. և միայն կաւ հասուցանէ ի նա՝ որ էր ի
սբ | Ջմիածնին յայնժամ. գալ փութանակի ի
դուռն արքային՝ զի Թերևս հնարեսցեն բառ
նալ զՀարիւր Թումման մուղադէն:

Յայնժամ մովսէս վրդպետն աՃապարեալ
եհաս յասպահան. և միջնորդութիւբ խօջայ
նազարիս զբաղում գանձս ծախեալ. և յոր
նակի աշխատութիւնս կրեալ. հաղիւ Թէ կարա
ցին բառնալ զՀարիւր Թումման մուղադէն. որ
ծանր բեռն անկաւ իվ ը կԹիւկոսարանին: զի
շահսէֆին հրամայեաց և զգիր ետ՝ Թէ անցայ
ի Հարիւր Թումման մուղադայէն:

Եետ այսորիկ քրիստոնեայքն խնդրեցին ի
շահսէֆի Թիւրքէն վը մովսէսի վրդպէին զՀրա
ման կԹիւկոսութիւն. և շահն ետ զՀրաման և զ
Թուղթ կԹիւկոսԹէ մօսէսի վրդպետին: Այս
ամ ազգն Հայոց, որք յարևելս և յարևմուտս
կային փաքանեցան Թղթով և բանիւ. և արա
բին

բին զմահս վրէպսն կենդանոյս և հաստատեցին
՚ի սուրբ աթոռն Հռիփսիմեան։

Սակ ջարն սատանայ զմովսէս վրէպսի կենդանի
կոսուքենն ծանր թուէցոյց՚ի սիրան սահակայ
կաթուղիկոսին. զի համարէր՚ի սրտի իւրում,
թէ մովսէսն առանց հրաւանց հնարիւք եմն
էհան զաթոռն և զկենդանկոսութենն՚ի ձեռանէ
եմէ, և յինքն կորզեալ ընկալաւ զերկոսեանսն։
և հանապազորն նախանձ կրէալ՚ի սրտի իւրում
վնասոյ սկսաւ նախանձախնդիր լինիլ։

Յոր մովսէս վրէպսն, որ եղև կենդանի ունէր
զմիաբանս և զաշակերտս բազումս, և վճռեաց
գումել սրբոյ Հռիփսիմեան որ նոր էր սկսեալ,
առաքեաց զաշակերտսն իւր՚ի նոճիրակութենէ
զի ընդրցեն զինչս յօժանդակութենէ նորոգմանն
սրբոյ աթոռոյն Հռիփսիմեան։ Յոր փիլիպպոս
վրէպսն՝ որ էր և սա մի յաշակերտացն մովսէսի,
որոյ հրամանաւ գնաց՚ի նոճիրակութենէ
յարդ բուա և՚ի բազէ և՚ի վան, և մինչ էր փի
լիպպոս վրէպսն՚ի վան քաղաքի, գտաւ անդ
և սահակ կենդանին՝ որ շրջագայիւր այսր և
անդր, և դէռ նոր սկսեալ էր յրակիզէն գոր
ծոց հակառակութենէ։ և փիլիպպոս վրէպսն և էր
հեղի արքն՝ որք՚ի վան քաղաքէն կային, որ էր
խանհնոց խօջայ ամիրխանն, և խօջայ Թումէն։
այլև խօջայ շիրոյէն, և խօջայ միրաքն, և խօ
ջայ փօլատն, և խօջայ սարուխանն, և այլք
բազումք, խօսեցան ընդ սահակ կենդանին, զի
գնահատակութենէ և զկռտուկութենէն Թողցէ. և
մի՚ի դրունս այլազգեաց դեգերելով չգրուէս
ցե զինչս քրիստոնէից։ և փիլիպպոս վրէպսն
համակամութենէ դօլվաթաւորացն միաբանեալ
յանձն առին որ՚ի սմէ։ Յոր մահճէն առացեն՚ի սա
րոջ, զերիս հարիւր զնուռուշս յամ ամի անխա
փան

փան սահակ կաթուղիկոսին, որքան ինքն կենդանի է՝ և պետս ծախուց իւրոց կարեաց՝ և զղուռս պաշայ վանքն իւրով քմութեամբ տուն նմա, զի անդէն նստեալ կացցէ՝ ի խաղաղութեան և թէ պետ փիլիպոս վարդապան և խօջանեբն՝ ի բա զում աւուրս բազմակի խօսեցան զխաղաղութեան. այլ սահակ կաթուղիկոս ոչ հաճեցաւ, և ոչ դարձաւ՝ ի չարեաց դիտաւորութենէ խորհրդոց իւրոց՝ այլ գնաց՝ ի դուռն վէզիրին՝ աւ՝ ի կատարել զխորհուրդս սրտի իւրոյ։

Ի՝ինչ շրջեր սահակն եմէջազդին Հայոց՝ որք կային ընդ իշխանութեանն Ամանցւոց, այսր և անդր յաշխարհս և՝ ի քաղաքս, զարս ոմանս՝ ի վարդապետաց և յեպիսկոպոսաց էգիտ իւրոց խորհրդոյն կամակից՝ յորոց մի էր և պօղոս անուն վարդապան՝ որ էր՝ ի սրսայ կաթուղիկոսին սրսայ։ Թէպետ յոլովք կային չարի խորհրդեանն համախոհք, այլ կատարիչք չարի գործոյն սոքա երկոքեան էին սահակ կաթուղիկոս և պօղոս վարդապետն։

Եւ պօղոս վարդապան գնաց՝ ի մեծ քաղաքն կոստանդնու պօլիս առ զաքարիայ վարդապան, և էր զաքարիայ վարդապետ կրէն վասպուրական՝ և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազգին Հայոց՝ որք կային՝ ի կոստանդնու պօլիս, զի անտ ամբ պատրիարգութեան՝ և թագաւորական մուտս ելս և հրամանաւ նստեալէր առաջնորդ՝ ի կոստանդնու պօլիս։ Եւ էր սա յայժ ներհակ մասեաց կաթուղիկոսին, և ձեռնտու և օգնական սահակայ կաթուղիկոսին, վնորոյ գրեաց զարշոյ, և մատոյց առաջի թագաւորին սուլթան մուրատի որ՝ ի նմին աւուրսն՝ ի կոստանդնու պօլիս էր։ Ընդ որք մեր Հայազուն քրիստոնեից այս՝ ի

թագա-

Թագրէն՝ զի չնորհեցեք զՀրաման կենդանւոյն առ հակ կենդանին, զի հովուեցեք մերով օրինօք զնման քրիստոնեայս՝ որք եղեն աղգաւ Հայոց. որք կան ընդ եչխանուն Թ. ինքնակալի Թագաւոր Թեդ. ( )ամանցւոց։ և Թագաւրն ետ զՀրաման և զԹուղթ կենդանւոյն առ սահակին, ոչ և խնդրեաց զաքարիա վարդապետն։ և զայս Թուղթ իշխանուն Թ՝ զաքարիայ վարդապետն ետ ցպօղոս վրդ պետն, և առաքեաց առ սահակ կենդանին, և պատուիրեաց ոչ Թուլանալ և ոչ կասուլ՝ի չարեաց դիտաւորուն Թեցին՝ այլ զանալ և աշխատիլ մինչև ցկատարումն։ Այս՝ի ժամանակիս յորում զայս Թուղթս էհան զաքարիա վարդապետն՝ի Թագաւրէն՝ ոչէր անդ առ Թագաւրն, Թագաւրն մեծ վէզիրն՝ որոյ անունն էր խոսրով փաշայ՝ այր բազմահանձար և խրոխտ իշխան. և քնաւ ոչ էր տեղեակ վէզիրն այսմ գործոյ։ և ոչ յայտնէ ասացն զի կարգ և սահմանք է ( )ամանցւոց, զի զնմ գործ և զորպիսուԹի աղգաց և ազանց. իշխանաց և պետաց. կողմնակալաց և կուսակալաց՝ վէզիրն հոգայ, ասայ և առնու. որոյ սակս և կարգեալէ։ և սոքա զանցարարեալ զվէզիրսն, և առ Թագաւրն գնացեալ առին զՀրաման կենդանւոյն առ Թուղթ կենդանին։ Այս այնու Թուղթովն սահակ կենդանին և պօղոս վարդապետն եկին՝ի քաղաքն տեգրանակերտ՝ որ է հայոց Թ. մեծ վէզիրն խոսրով փաշայ, զի՝ի նմանէ ևս առցեն զՀրաման և զԹուղթ կենդանւոյն առ Թուղթ կենդանին։

Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յաղգէն Հայոց բնակեալքն՝ի քաղաքն Հաւիթ, որ էր խօջայ երեմիայն, և խօջայ մխոսուդն, և վանեցի խօջայ ռօշկանն, որ էր այս վէզիրիս քուրըչի պաշի և հաւատարիմ, և հանճարեղ սպասաւոր առաջի նր։ Այլև բարեգ վար

դապետան, որ էր նոյն քաղաքին առաջնորդ, և էր սա բարեկամ սրբոյ Յովհաննէսի և մովսէս կաթողիկոսին, քանզի և սա յաշակերտաց սրապիոն կաթողիկոսին էր՝ վասն որոյ և յիշեցաք՝ ի Ճառի սրա պիոնին: և այլեւս գովելաթառուք և վարդապետ բազումք ժողովեցան՝ ի համեմ քաղաք՝ ի կող մանէ սրբոյ Յովհաննէսի՝ և զանայնին խափանել զսահակ կաթողիկոսի զջար դիտաւորութենն:

Եղև սահակ կաթողիկոն և ամբն համախոհ էր նա սահմանեալ էին համք իւրեանց թէ սահակ կաթողիկոն առցէ զիշխանութիւն կաթողիկոսութե՛ի վեզիրէն, և գնացեալ՝ի մէջ սը կարապետն իւր աթոռ կալեալ անդ նստցի, և անդ օրհ նեսցէ զմեռոն, և անդ՝ի առաքեալ բաժանես ցէ յաղգս Հայոց՝ որք կան ընդ իշխանութէն ( )ամանցւոց, և զվաղեմն սահմանեալ զրեմ և զվիճակ սրբոյ Յովհաննէսի հաստեալ շորթես ցէ յինքն, և ընդ իւրով իշխանութէ գրաւես ցէ բռնութէ թագաւորականն իշխանութե: և խափանեսցէ զնուիրակն և զիշխանութի սրբոյ աթոռոյն Յովհաննէսի:

Ակ քրիստոնեայ քամբն թէ եկեղեցականք՝ և թէ աշխարհականք՝ի բազում առուրս գնայ ին առ սահակ կաթողիկոն, աղաչէին և խնդրէին մի մատնել զտաւ ապետալ ազգս Հայոց՝ ի բե րան այլազգեաց բռնաւորաց՝ և մարդադիմայ գազանաց: Ոչ խոստացան սահակ կաթուղի կոսին, թէ՝ի քաղաքաց կամ՝ի վանորէից որ ում և հաձեսցի ինքեան լինել թեմք և վիճա կօք. որքան ինքն կենդանի իցէ նաճիրակ Յովհաննէսի մի մոցէ՝ի նա. այլև ընդ սմին հանապազ յամ ամի՝ի տարին հինգհարիւր ղուռուշ Յովհաննէսի նստօղն տայ սահակ կաթողիկոսին վճ իւր օր աւուր խարջին: Ընդ այս

պես և ըստ այսմ օրինակի բազմակի և յորովակի գուն գործեալ հնարեցան, և մաղթեին գալ ի խաղաղութեի սահակ կաթուղիկոն և պօղոս վարդապետ, և նոքա ոչ եկին։

Յոմանս մովսես կաթուղիկոն որ յաջմիածինն էր. և փիլիպպոս վարդապետն որ տանկաւորին՝ի վան էր։ ապա և յիւրքէ իւրոց տեղեաց գրեցին զթուղթ մաղթանաց առ սահակ կաթուղիկոն. և երևելի արամբք առաքեցին՝ զի դադարուին արասցէ խռովականի գործոյն։ և զայլևս թուղթ առ բարեկամս իւրեանց՝ոչ թէ համոզել զսահակն՝ի խաղաղութեի և կատարել զհաճոյս կամաց նր, զինչ և խնդրեացէ։

Սակ սահակ կաթուղիկոն և պօղոս վարդապետն քնաւին ոչ եղեն ունկնդիրք. այլ գրեցին զար զայ յիւրեանց կողմանէ և միջնորդութեբ եա ղուբ փաշային հասուցին՝ի ձեռն վէզիրին. և գոյացութեի բանի արզային էր ըստ այսմ օրինակի։ «Յայտ լիցի մեծի և անպարտելի տէրութեն հզօրիդ՝ խնդրեմք զի չնորհեացես մեզ զիչխանութեի կաթուղիկոսութեն ազգին Հայոց. եթէ լիցի այս բան հաճոյ կամաց վեհիդ՝ և արժան նացուսցես զմեզ այսմ սպասաւորութեն. մեք յաւելումբ՝ի գանձարանն արքունի ամ յամէ յիւրքէ նչիւր տարւոջ զտասն հազար ղուռուշ որ ամ յամէ տամք։ Եւս յաղագս այսմ գործոյ՝ի թագաւորէն ևս խնդրեցաք զթուղթ հրամանի և նա պարգևեաց. զոր ահաւասիկ առնիմք առ մեզ. և արդ՝ի քումմէ մեծութեէ ևս խնդրեմք զի հաստատուն լիցի գործս մերքոյով հովանաւորութեբն։ Ո այս թուղթս արզայի եաղուբ փաշէն մատոյց առաջի վէզիրին. և վէզիրն ընթերցաւ և մոռքն հաւանեցաւ. բայց բանիւ ինչ ոչ ասաց։

Այս յայտնեմ առուր որքն, որք ի կողմանէ Ալմաճնի էին, նոքա ևս գրեցին զարզայ և մա տուցին վէրքին ի պատշաճի ժամու, և գոյա ցուեցին բանից արզային էր այս։ Ամդրիմք յաշ խարհաշէն և ի խաղաղարարէ տերութէ հզո րիդ՝ զի մի մատնեսցես զաղքատ և զտառա պեալ ժողովուրդս ի ձեռս դոցա՝ զի դրքա վն փառամոլութէ և ագահութէ իւրեանց մատնեն զողորմելն ուխտն ի ներքոյ ծանր հարկի. որ է ժողովրդեանն մեծ սիթամ. և գործողացն մեղք։ Այս յետ ընթերցման զար զային պատասխանեալ է վէրքին արանցն մա տուցանողաց արզային. անխելք չայք՝ զիարդ ոչ տամ նոյ զկիւրկսութէն. զի նոքա ի տարւոջն զտասնհազար ղուռուշ յաւելուն ի գանձա րան թագւորին։ Ասէ խոջայ ռուհիջանն. որ վն հաւատարմութէ իւրոյ համարձակութէ ունէր առաջի վէրքին՝ ասաց առ վէրքն. փառաւոր տէր իմ. եթէ զողորմելն և զտառա պեալ ազգն չայոց վն գանձի վաճառէս նոցա. ինձ վաճառեա. և ես ոչ թէ զտասն հազար ղուռուշս. այլ զքսան հազար ղուռուշս տամ։

Այս ամենայն թագւորն Ա՛ծ. որ ունի ի ձեռին զսիրտ ամենից թագւոց և իշխանաց՝ ըստ սաղո մոնի. իվէր բանից ռօհիջանին եբաց զտէտառան մտաց վէրքին, որ կրկնակի հարցումն արար. և խոջայ ռօհիջանն զամ որինչ պատշաճ էր ծանուցանելոյ ասաց անդէն։ Այս վն նախանձ արկանելոյ ի սիրտն վէրքին. զայն ևս յուշ արարեալ նմա. թէ ամէն պետք, և իշխանք, կողմնակալք և կուսակալք ազգին ( )մանցուց խոնարհին ընդ տէրութէ քով և առ քեզ գան խնդրել և առնուլ զպատիւ և զիշխանութէն. իսկ սոքա զանցարարեալ զքեւ առ թագաւորն գնա

գնացեալ առեալ են զիշխանութեն կռիւկոս
թե։ Եւ յետ վճարման ամենից բանիցն արձա
կեցան խօջայքն՝ ի վէզիրէն՝ և ի բաց գնացին։
Եւ յաւուրն, յորում նստաւ վէզիրն յա
տեան քաղմախուռն հանդիսիւ. առնէր դէս
ան. եաղուբ փաշէն, որ էր միջնորդ և յար
դարիչ գործոց սահակայ կռիւկսին. զսահակ
կռիւկսն և զպօղոս վարդապետն ածեալ ՚ի հան
դէսն յանդիմանակացոյց առաջի վէզիրին։
Նկին՚ի նոյն հանդէս և արքն, որք ՚ի կողմա
նէ Նջմիածնի, (Էին արք) բաղուձք. որոց գլուխ
խաւորն էր խօջայ երեմիայն, և խօջայ մախ
սուտն, և խօջայ ռօշիլքանն, և բարսեղ վար
դապետն։ Ասացեալ սակաւ վէզիրն առ սահակ
կռիւկսն և առ պօղոս վրդապետն՝ և ասաց. զինչէ
յօժարութեն կամացն ձերոց՝ ով արք. որք դե
գերիք ՚ի դրունս իշխանութես։ պատասխա
նեաց սահակն. զորինչ արդեայ թղթոյնէ մատու
ցաք առաջի տեառն մերոյ։ և վէզիրն հրա
մայեաց զարգային ընթերցանութ յօրում գրեալն
էր՝ թէ ՚ի թագրէն ընկալաք զհրաման կռիւկո
սութե, և արդ ՚ի քէն ևս խնդրեմք։ Նհարց
վէզիրն ցսահակն՝ թէ արդարև ընկալեալէք
զթուղթ կռիւկսնէ՚ ի թագրէն. և նա ասաց այո,
մատեալք առ թագրն և առաք զհրաման։ Նասաց
վէզիրն. դուք յօրում աւուր ծանուցիք մեզ
զորպիսութե ձեր՝ և մեք անփոյթ արարեալ
ոչ կատարեցաք զինդրուածս ձեր. որ զանց
արարեալ զմեօք գնացիք առ թագրն ձանձրա
ցուցանել զգլուխ նր։ Նու նոյնժամայն հրա
մայեաց վէզիրն, որոց կային առաջի իւր, սպա
սաւորաց և դահճաց, դնել զսահակ կռիւկսն՝
և զպօղոս վրդապետն ՚ի փալախայ և բրածեծ
առնել. և այնչափ հարկանել մինչև կամ առ-

նալ՝ի հաւատոց իւրեանց օրէնս մահմետի. և կամ իներքոյ փայտի մեռանիլ։ իսկ սպասաւորք վէգլերին առաժամայն կատարեցին զհրամանն. զի զսահակ կԹղկոսն և զպօղոս վրդովեան եդին՝ի ֆալաղայ և յերկուց կողմանց կանգնեալ արանց հաստիւք բոլոք սկսան անողորմ հարկանել. միշտ հարկանէին, և միշտ ասէին, արդ դարձիք՝ի մոլար հաւատոց ձերոց՝ և մուտք՝ի Ճշմարիտ օրէնս մեր՝ և զերծջիք՝ի տանջանացդ՝ և՝ի դառն մահուանէ. ապաթէ ոչ՝ ոչ դադարիմք՝ի հարկանելոյ մինչև ցմահն ձեր։

Այս իբրև եղև՝ զի մատնեցան՝ի հարուածոց գանից սահակ կԹղկոսն և պօղոս վրդովեան. և զինուորքն անողորմ և ուժգին հարկանէին. զի թերևս՝ի վտանգէ տանջանացն դառնայցեն յիւրմէ հաւատոցն։ Ոչ այնժամ խօսքայ երեմիայն և ընկերքն իւր խորհեցան՝ զի մի գուցէ ոչ կարի ցեն տևել տանջանացն՝ և դառնայցեն՝ յհաւատոցն՝ և լինիցի նոցա խիղճ մտաց. և ազգին Հայոց մեծ ամօթ և նախատինք. որ և առաժամայնն քին խօքայքն այսր և անդր ընթացան առ նա խապատիւ իշխանս վէգլերին, և խոստացան նմա զարծաթս բազումս զի զբանս մադթանաց խօսեցին առաջի վէգլերին վասն վերկուԹե սահակայ կԹղկոսին և պօղոսի վրդովեան. և իշխանքն ըստ պատշաճի խօսեցան առաջի վէգլերին զբարե խօսուԹե. որով ցածեաւ բարկուԹի վէգլերին. և հրամայեաց արձակել՝ի տանջանաց. և իբաց վարել՝ի դրանէ դիւանին։ և զինուորքն որք յետ արձակելոյն, հարկանելով և ձաղելով զկառափուռնս նոցա վարեցին արտաքս՝ի հանդիսէն։

Այս իբրև այսպէս եղև կատարումն գործոյ սահակայ կԹղկոսին և պօղոսի վրդովեան. այ նու-

նուհետև եկն իմէր նոյ ամօթ և պատկառանք։ և անկան երեսք նոյ։ և ոչ կարէին հայել յե րես քրիստոնէից։ և ոչ համարձակէին չրջիլ իմէջ մարդկան վն ամօթոյ։

Եւ ապա պօղոս վրդ՝ովն գնաց ՚ի մեծ քա ղաքն կոստանդնու պօլիս, և անտի յուռուսմ լի, և անտի յաշխարհն իլախաց։ և կացեալ ժամանակս ինչ և ապա վախճանեցաւ։ և ան գէն թաղեցաւ։ Նոյնպէս և սահակ կաթ՝ղիկոսն սակաւ սակաւ գնալով եկաս ՚ի գաւառն կար նոյ։ և անտի յաշխարհն վրաց։ և անտի յար արատ գաւառս և ՚ի սբ Էջմիածինն։ և մնաց անդէն ՚ի սբ աթոռն Էջմիածին։

Եւ ըստ ցաւակիր բնութեան մարդկան պա տահեցաւ ցաւ իմն ոտից սահակ կաթ՝ղիկոսին։ և օր աւուր յաւելաւ ցաւն յորմէ պատճառէ ուռան երկոքին ոտքն նր։ և օր աւուր յաւէ լաւ ուռուցն։ և եկաս մինչև ՚ի փորն և բա զում աւուրս մնաց այնպէս։ և ցաւն այն յոյժ ցաւէր։ և կարի վշտացուցանէր զնա։

Եւ ՚ի ներգութէ ցաւոյն յաւուր միում առաց սահակ կաթ՝ղիկոսն գառնալ զինքն և տա նել ՚ի տաճար սրբոյ Էջմիածնին։ և անկեալ իմէր իջման տեղեացն ՚ի՝ն յորում տեղի ՚ի՝ն իջեալ է։ և բազմօք հաւաչանօք փղձկելով սրտիւ և յորդաբղխով արտասուօք և ցաւ ագնիւ անձամբ վերեաս ՚ի գետին փարելով։ ՚ի բազում ժամս եկաց գառնապէս։ և ընդ արտասուացն մաղթողականաւ բանիւ ասաց։

Ա՛վ Տէր իմ և Ա՝ծիմ ՚ի՝ն ՚ի՝ն գաւառապարտս ալ ծառայ քո եմ և մեղուցեալ հոգւով և մարմ մնով։ եթէ կամք քո Տա՝ծ ի կեալ ինձ կենդանի՝ փութով փրկեա զիս ՚ի ցաւոյս՝ և տուր ինձ զա ռող ջութիւն։ և եթէ կամք քո Տա՝ծ ի մեռանիլ

ինձ՝ փութով տուր ինձ զմեզ զի հանգեայց ի տառապանաց ցաւոյս: Նա անդէն ի նմին տեղւոջ եմեջ եկեղեցւոյն կոչեալ առ ինքն զոմն ծեր եպսկպս և խոստովանեալ զամեն յան ցանս մեղաց իւրոց. և հաւատով և յուսով հա ղորդեալ ի պատուհականէ Վարդանոյ և Յ.ըն նէ Որդւոյն Յ.ոյ: Նա ապա բարձեալ տարան ի տունն յորում կայր հիւանդ. և ի գիշերին յայնմիկ հասանէ նմա մահ՝ և աւանդէ զոգին՝ և վճարէ զկեանս իւր՝ և հանդչի ի տառապանաց ցաւոյն ըստ խնդրանաց իւրոց: և կատարեալ զկարգ թաղմանն իշխնէր տարեալ թաղեցին ի դիրս գերեզմանացն:

Պատմութիւն առաքինադործեաց արանց Վարդան եպիսկոպոսին և տեառն Կիրակոսին. որք եղեն սկիզբն շինողք և հաստատողք անապատիս: Ղրովք և պատճառաբարեկարգութիւն. Վանորէից, և եկեղեցեաց, և նոցին բնակողաց:

Ի.

ՈՒՐԱԽ ԵՊԻՍԿՈՊՈՍ ոմն. որ էր յաշխարհէն արարադեան. ի գաւառէն ամբերդոյ՝ որ է արագածոտն. ի գեղջէն, որ առն յարեւնի. որ է մերձ ի գիւղն կարփի. և այժմ է աւերակ և անմարդաբնակ. քանզի ի ժամանակս հարց մերոց էր շէն գիւղաք յայս յարեւնի. ուստի էր այս սարգիս եպիսկոպոս: Որոյ եկեալ քննակ ցաւ ի մեծաւոփառ ուխտն սաղմոսավանից. լեալ սոյնսաւոր բազմահաւաքից արբուրթեցն, որք կան անդր. որպէս զկնի ամաց ինչ եղև առաջ նորդ նոյն վանացն:

Քանզի գոյր մերձ այս վանիցս գիւղ մի փոքրիկ. ուստի այր ոմն քրիստոնեայ որսորդ գոլով՝ շրջէր առուրց յաւուրս ի լերինս որսալ երէ վայրիս:

վայրկեան։ Եւ եղև յաւուր միում գնալ առնս այսորիկ ի մեծ լեառն արագած ի վնոսոյ. և ի շրջելն իւրում ի գլուխս լերինն. պատահեցաւ առն ուժգին Ձգնաւորի. որ ի խոռոչս վիմացն նստեալ կայր գՃգնեալ. ունելով ի գլխին վեղարը և զիւրև փիլոն։ և մօտեալ առ ստուգիւ գիտել թէ զինչ իցէ այն. եհաս զի մարդ էր Հաւատաւոր. և մեռեալ էր. և այնպէս նստեալ կայր. և մարմինն անապական։ Եւ ի տեսլենէս այսմանէ անկաւ երկիւղ և սոսկումն իմ ի առնս այսորիկ որսորդի. և ոչ էս կարացի ժուժել ի տեղին յայն, այլ դարձ արարեալ անտի եկի ի տուն իւր։ և եկեալ ի սաղմոսավանքն պատմեցի ամենեցունցն զինքնումն Ձգնաւորին, որ պատահեցաւ նմա ի գլուխս լերինն. իբրև լուաւ զայս սարգիս եպիսկոպոսն. և ստուգեալ վերահասու եղև թէ յորում տեղւոջ իցէ։

Եւ յաւուր միում յանձնեալ զանձն իւր Տ. սարգիս եպիսկոպոսն՝ յուսացեալ յառաջնոր դութենն Տ. եղեալ գնաց ի լեառն արագած. և շրջեալ այսր և անդր յաւուրս երիս. եգիտ զվախճանեալ Ձգնաւորն. և բազմօք փափագանօք և ջերմեռանդ իւ սիրով համբուրեր զերկ ձեռս և զոտս նր. և յետ հեղման բազմաց արտասուաց՝ ամփոփեալ թաղեաց զնա նորին ոգեաստիւն. դարձաւ և եկն ի վանքն։

Եւ եղև այս պատահառ ղղջման սարգիս եպիսկոպոսին, և հրաժարելոյ յաշխարհէս. քանզի զի տաղտկալի Թուէեցաւ յախորժակս սրտի նր պատիր և ընդունայն, խնդիշ և խաբեպսիկ վայելչութեն աշխարհիս այսորիկ։ Եւ յայնմանէ օրէ և առ յապայ խնդրէր սարգիս եպիսկոպոս հեռանալ յաշխարհէ. և հետևիլ լուսաշաւիղ

երկնաչուք ի Հանապարհին առաքինականաց վա
րուց, Այլ ոչ գոյր ի ժամանակին յայնմիկ
անապատ և կամ դիտող կարգաց կրօնաւորա
կանաց վարուց. վն բազմաց հինից թշնամեաց
եկեղց իվերա և վրդովմանց՝ և աւերմանց աշ
խարհիս Այսոց՝ ամենևին բնաջինջ եղեալ էր
և բարձեալ նշոյլ և նշմարան առաքինեաց
գործոց՝ և բարեաց կարգաց յաշխարհէս Հա
յոց. Այլ մինչ կայր իմջ յայսմ վարանմանս
սարգիս եպկպսն, եդ՝ի մտի իւրում գնալ՝ի
նբ քաղաքն Եգեմ յերկրպագութիւն տնօրինա
կանաց Տեառն Այ մերոյ. որև եղեալ գնաց:

Յարձեալ՝ի նոյն ժամանակի գտեալ եղև
միւս ևս այլ ոմն. որոյ անունն էր տեր կիրա
կոս. որ կամօք և յաժարութիւն նման գոյր կա
մաց և յաժարութեն սարգսի եպկպսին: և էր
տեր կիրակոս այս՝ի քաղաքէն տրապիզոնայ.
մտեալ՝ի կարգ աշխարհի բայց ոչ վայելեալ՝
քանզի զկնի սակաւուց աւուրց վախճանեալ
ամուսնոյ նր. և ինքն մնացեալ իբրև զտատ
րակ ողջախոհ: և հանապազօր խոկայր՝ի
պատուիրանս Այ. և անձանձիր ընթեռնայր
զգիրս ածսյինս. և՝ի միտս նոյր զպատգամս
նց. և ջանօք և երկօք կրթէր զանձն ըստ հրա
մանաց գրոցն կենցաղավարելով:

Ի նոյն ժամանակի յայսպիսւոմ խորհրդե
ան գոլով տեառն կիրակոսիս՝ լուաւ յմանից վն
սարգսի եպկպսի թէ նա զղջացեալ յաշխար
հէ. և կամի հրաժարել՝և հետևիլ առաքինեաց
վարուց. վն որոյ տեր կիրակոսն եղեալ՝ի տրա
պիզոնայ եկն յերկիրն արարատու՝ի սաղմոս
վանք՝ առ միաբանիլ ընդ սարգսի եպկպսին.
և ոչ կարաց տեսանել զնա՝ զի գնացեալ էր
յեգեմ: Ի նոյ որոյ և սա եդ՝ի մտի իւրում գնալ
յեգեմ.

յԵԳՄ. և դարձեալ ՚ի սաղմոսավանից եկն ՚ի տրապիզոն՝ վաճառեաց զնաւն ինչս իւր. զմասն ինչ ետ աղքատաց. և զտունն և զանդաստանն իւր առանդեաց եկեղեցւոյն տրապիզոնայ. և զմասն ինչ ետուն ՚ի իւր զԹոդոշակ Հանապարհին. և եղեալ գնաց յԵԳՄ. և պատահեցան տըքա երկոքեանս միմեանց սարգիս եպիսկոպոս և տէր կիրակոս. և յետ աւուրց ինչ առ միմեանս եկեալ գոհին զկերեալս միով դիտաւորութիւն՝ և միով յօժարութիւն և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմանէ օրէ և առ յապայ կենցաղավարիլ ՚ի միասին:

Ապայ խնդրեին զտեղի անբոյթ և պատշաճաւոր անապատի, և հետւ ՚ի շփոթմանց աշխարհի. և լուեալ յոմանց գիտողաց թէ այդպիսի տեղիք բազումք գոն յարևելեայ մասին աշխարհին Հայոց. և մանաւանդ յերկրին սեբնեաց՝ որ և ՚ի հին ժամանակաց անապատ եղեալ է յաշխարհին յայնմիկ՝ որոց տեղիքն արդէն ևս երևին: և նոքա առաւգեցին զբանն, եղեալք յԵԳՄ յօժարութիւն դիմեցին և եկին յաշխարհս արև եղեան յերկիրն սիւնեաց. և հասեալ ՚ի մեծ ափառ ուխան սահմանի առաքելոյն՝ որ այժմ ասի տաթեւու վանք: և սուղ ժամանակս կացեալ անդ, գնացին ՚ի տեղին, որ անուանի Ձորոյ վանս, որ ասի ցրուանց: և ՚ի նմին սղոց ժամանակաց գնացին անտի ՚ի տեղին, որ անուանի Թանահատի վանք: և անտի ևս եղեալ որոնեին առաւելեւս անբոյթ և անշփոթ և յապահով տեղի, մինչև գտին զտեղին յորում այժմ շինեալ կայ մեծ անապատն: և անդ շինեցին զեկեղեցի և զխուցս ըստ պատշաճի անապատի, և միաբանեցին. ուր ցուցանի գիրք հարանց վարուց և այլոց հզնաւորացն, նահատ և

մ Թ-ին և փոքրագոյն. և սկսան անդ ղեւտեղել։

Յակ Տէրն տերանց՝ և Ընծն աստուածոց՝ որ միշտ ղբաւրին կամի և յառաջեցուցանէ, յա ջողէը և ուղղէը զգործս նոցա՝ և ինքն ձեռնտու և օգնական լինէը, վ-ն զի իւրոյ համ բաւոյնց եկին բաղումք և յարեցան ի նոսա և եղեն նոյ միաբանք և բնակիչք տեղւոյն։ ոչ միայն աշխարհականք և անշնանք, այլև եկէ ղեցականք և անուանեալք արք վարդապետք, եպիս պոսք, և քահանայք։ Որ էր պօղոս վարդան մոկացի, և մովսէս վարդապան սիւնեցի. որ զկնի եղև կաթուղիկոս. որ և զերկուցս պատմու թիեան և զարդիւնան յայլում ձառի երկար պատմելոցեմք։ Յոր ներսէս վարդապան մոկա ցի, որ զկնի գնաց ի կղ զկն վկայ և անդ շինեաց անապատ։ Յոր Թուանայ եպիսկոպոս տաթևու, որ զկնի եղև վարդապետ, և գնաց յերկիրն շամա խու հովուել և առաջնորդել ժողովրդեան աշխարհին։ և կարապետ եպիսկոպոս Ջմիածնե ցի, որ զկնի գնաց ի սևան կղզին, և զայն տե զկն շինեաց զանապատ՝ և կայ հաստատ մինչև ցայսօր։ Յոր շամբեցի արիստակէս վրդապան, որ զկնի եղև առաջնորդ նոյն մեծի անապատին, և անդ է կաց մինչև ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ։ Յոր միւս տէր արիստա կէսն, որ էր ի գաւառէն բարկաշատայ. որ զկնի գնաց ի տեղին, զոր անուանեն տանձափա րախ, և շինեաց զանապատ՝ և անդ է կաց մինչ ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ, և տեղին անապատ կայ հաստատուն մինչև ցայս օր։ Յոր դաւիթ եպիսկոպոս, որ էր ի շամբօռու Ձորէն՝ և ի ցեղէ հչխանաց՝ զոր ղարամանենց կոչեն. սա և ես կեաց է կաց ի մեծ անապատս. և ապա ելեալ գնաց ի Ձորն շամբօռու՝ և անդ շինեաց

չինեաց զանապատ՝ զոր կոչեն չարեբագետի ա-
նապատ. որ է բազմաժողով եղբարց բնակու-
թիւն. և յոյժ հաստատուն ամենիւք կարգօք և սահմա
նօք անապատի մինչև ցայսօր. և ինքն դաւիթ ե-
պիսկոպոսն անդէն վախճանեցաւ, և անդէն թաղե
ցաւ։ [Ն]ւ այլք բազումք և յոլովք՝ որք անդէն
կացին՝ և առ [Տ]ՐՆ փոխեցան. և որք յայլուրեք
գնացեալ չինեցին զանապատս և զվանորայս։

[Վ]անգի էբրև զմայրն սիօն զորմէ ասէ մար
գարէն եսայի. թէ 'ի սիօնէ ելցէն օրէնք՝ և
բան [Տ]Ն յԵՏՄ. սոքա երկոքին արքս եղեն
սկիզբն անապատիս. և անապատս եղև մայր և
ծնօղ ամենից անապատաց. և առնէր լուսաւո
րութիւն ազգիս Հայոց։

[Ա] ասն զի ոմք ասացին առա վարժեալ ուսաւ
մոկացի ներսէս վարդապետն զվարս կրօնաւորա
կանս, և ելեալ գնաց 'ի գաւառն վասպուրա
կան, և էմուտ 'ի կղզին լմայ լճիկ ծովուն. և
անդ ժողովեցան առ նա բազմութիւք եղբարց,
և եղև անապատ հաստատուն ամենիւք կար
գօք և կրօնիւք միակեցութեաց վարուց, և ինքն
ներսէս վարդապան անդէն կացեալ կրօնաւորա
կանաս ժուժկալութիւք կատարեաց զնիթացս
իւր առաքինի վարուք, անդէն վախճանեցաւ
և թաղեցաւ, և վախճան նր եղև 'ի թուին
մերում։ Հազար եօթանասունևվեց ամի։

[Ն]ւ զկնի նորին յաջորդեաց զառաջնորդու
թիւ տեղւոյն ընկեր նորին առաքիսոս վարդա
պետն։ [Ն]ւ յայսմ ժամանակիս եկաս աՀեցան
միաբանք լմայ անապատիս, վասնորոյ ոմանք եկեալ
'ի լմայ գնացին 'ի տեղին՝ որ անուանի կոտուց՝
որ և սա կղզի է լճիկ ծովուն. և անդ ևս շի
նեցին զանապատ և զեզ բայրանոց՝ և է այժմ
հաստատ ամենիւք կրօնաւորականիւք կարգօք։

[Ն]ւս

Այն և այլ ևս մանուկք անապատք շինեալք այսր և անդր, բայց մեք զնշանաւորսն յիշեցաք՝ որ յայս մեծ անապատէս ուսեալք և վարժեալք գնացին յայլ տեղիս՝ և հաստատեցին։ որոց ամենացուն եղեն սկիզբն և պատճառ վերոյ ասացեալ երկոքին արքն սուրբ եպիսկոպն և տէր կիրակոս։ Զանազի միանգամայն յամէն սրտէ լքին իւրաց զաշխարհ, և բարեաւ մնալ ասացին ամենից կենցաղականաց հոգոց սորա, և արարին զինքեանս խաչեալ աշխարհի, և զաշխարհ ինքեանց, ըստ խրատու առաքելոյն Պաւղոսի՝ ինձ աշխարհ՝ ի խաչելեալ, և ես աշխարհի։ վասն զի զցայգ և զցերեկ յինքեանս կրեալ ունէին զՅիսուսեան սենեկի յոգւոյ իւրմէ, որ ոչ միայն՝ ի ժամ աղօթից և յեկեղեցւոյ այլև՝ ի խցի ժուժկալեալ արգելուին զին քեանս, պարապելով յաղօթս և՝ ի խոստակցու թիս Յիսուսի։ և ընթերցուածն սրբոց գրոց, զաղօթս արարեալ կերակուր և զարտասուս ըմպելի։

Այս հոգին Պօղ որ քննիչ է խորհրդոյն Քրիստոսի և վերակացու տեսուածոց իմաստից գրոց, զա նայր առ ջին մարդուըդ մտաց նոյ զդրունս գիտուածս, և խելամուտ առնէր զնոսա շաւղաց գրոց, որովք լուսաւորեցան ինքեանք՝ և լուսաւորեցին զմարգարէսն և նորոք զաղգս հայոց, քան զի մինչև ցայս վայր տգիտուածք խոպանացեալ և կորդացեալ էր աղգս հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին՝ այլև ոչ զգիրս գիտէին, և ոչ զզօրուածս գրոց, վասն զի անպիտանացեալքն գիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք լցեալ հողով և մախրով։ Այս իբրև սորա մտին ընդ լծով ծառայութեանն առաքինեաց գործոց, յօժարութիւն ընթեռնուին զգիրս և կամակարիւք մտօք կրկին

քեէին զինքեանս, գործ ով ք կատարել զընթերը
ցեալն բանիւ. վ ն զի աներկբայիւք մոռք հաս
առայինն գրոց բանից Թէ Ա. յ պատգամք էին։
Ա. ս աղքա երկոքին արքս, վերոյ ասացեալ ա
րամքէն. զորոց զանուանս յիշեցաք վարդապետ
և եպիսկոպոսաց, սկսան յընթերցմանէ և յուսու
ցանելոյ գրոց վերստին նորոգել և յարդարել
զշմմն կարգս բարիս անապատաց և վանորէից
և ժամատեղաց օգնութիւբ և օժանդակութիւբ
Ղուկասին սրբոյ՝ որ վերակացու է խորոց եմաս
տից գրոց. բանայր, և յայտնէր, և ծանուցա
նէր առաջի տեսութիւն մտաց նոցա զնմաստութիւն,
և զուղիղ կարգս որում՝ ի խնդիր էին։

Ղրով սահմանեցին Թէ պարտ է անապա
տաւորաց միայն կալ՝ և ժուժ՝ ի խցիւ պահել
զմիտս և զխորհուրդս սբս ամենից անմաքրից
մտածութիւնց Հոգեկանաց և մարմնականաց։
և Թողուլ զկամս իւր և լինիլ հնազանդ և կա
տարօղ կամացն առաջնորդին։ և ոչ լինիլ ու
մեք ստացուած առանձին, այլ ամենիւն հասա
րակաց լինիլ. և առաջնորդն Հոգատացէ ամենեն
եղբարց պէտն, և բաշխեացէ ում և պիտոյ
ասցի։ և ինչ ոչ ունել՝ ի խցի՝ և կամ ուտել։
և հանապազօր՝ ի տարին պահօք անցուցանել։
բաց՝ ի շաբաթէ և՝ ի կիրակէ և՝ ի տէրունա
կանաց տօնից։ տապատ հրաժարեալք՝ ի գինւոյ
և՝ ի մսոյ։ և յամ աւուր յայգն և յերեկոյն
խոստովանել անխափան զանցուածս և զմտա
ծութիւնս աւուրն։ և յամ շաբաթ օր և՝ ի կիրա
կէ օր, և՝ ի տէրունական աւուրն զգիշերն պաշ
տամամբ անցուցանել մինչև ցառաւօտն, և՝ ի
սոյն աւուրս անխափան մատուցանել զպատա
րագ։ և հասարակ ամքն մեծ և փոքրքն, իմի
ասին գալ՝ ի մարմնաւորացն գործոց կոչնակն։ և
՝ի տե

'ի սեղանն մարմնաւոր, և 'ի տեղի աղօթից. և իւրաքանչիւրոց առանձին դնել զմարմնաւոր կերակուրն: և 'ի մեծ մինչև ցփոքունս միա ձայն, ասյնպէս և զբաժանելն մրգոց միաչափ:

Այլև զորպիսութեն և զձև զգեստուցն գաղին 'ի գրոց, զքուսիթայն, որ է գլխոյ թաղ փին: և զքառակուսին, և զպէրիմն, և զցպտիճն, որ է մանղեղէնն, 'ինչերքոյ զգեստուցն իւրմէրկ մարմնոյն: և հասարակ ամենն զգեստն բովանդակ ասուէղէն լինի՝ և ոչ բամբակեղէն: և զա սուէղէն շապիկն երկայն պէղնաւոր առնել մինչ 'ի յոտն՝ և գօտի մանկեղէն: Այս սահմանեցին ամենուն թէ իւրաքանչիւրոք իւրով զգեստուքն շրջեսցի, եթէ միայնակեաց եցէ քուսիթայիւն և քառակուսովն. եթէ երէց եցէ փիլոնաւն: եթէ աբեղայ եցէ փիլոնաւն և վեղարաւն: Այս կրօնաւորական զգեստ ամենևին անհետ լեալը, և այժմ սոքա գաղին. իսկ վեղար և փիլոն թէպէտ գոյր, այլ միայն 'ի ժամ աղօթից զգենուին, և զկնի արձակման ժամուն իբացեդեալ յինքեանց, և իբրև զաչխարհականս շրջէին:

Այլև զկարգ ժամատեղացն սահմանեցին զառաջին ժամ գիշերոյն պաշտամամբք կատարել 'ի ճրուանի աւուրն, եղանակաւ յիշեցուք այլով քն: և երկու կանօն սաղմոս և 'ի վերջն կանօնագլուխ ձայնիւ: և հանգստեան շարականն և ուսեւտարան, պաշտօն վճննջեցելոց. օրհնութիւն ըստ խորհրդոյ աւուրն, և իվ քաղցր ածք շարականաց, և թգւրք, և ալէլուք ձայնիւ նոցին զկնի ընթերնու զայսմ աւուր, և իվ նր շարականըստ պատշաճի ձառին, որ ընթերցաւ: և զկնի երկու կանօն և սաղմոս. զհետնորին հարցն իւրովք սարօքն և զարևելից ժամն,

ժամն, իւրով կանոնաւ սաղմոսովն և զկնի ա-
ռաւօտու ժամուն, և երեկոյի ժամուն, յետ ար
ձակելոյն զգիրս խրատականս ընթեռնուլ յամ
աւուրս։ Եւ զերրորդ ժամ ցերեկին. և զվեց
երորդ ժամն, և զինն երորդ ժամն, իւրեանց
նշանակեալ սաղմոսովն, զատ և որիշ՛ի միմ-
անց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ասէին։
և զկնի զպատարագն աբբ մատուցանէին։ և զա
րարողութեն պատարագին դպրօք և սարկաւա
գօք։ և իւրաքանչիւրոք իւրովք նշանակեալ
զգեստուքն։ ամբն խոտովանեալ և ապա զգես
ուսորեալս։ ահիւ և դողութբ կալ առաջի պատա
րագին՝ և մտաւոր և սրտառուչ աղօթիւ և գի
տել՛ի սրտի թէ զինչ աղօթեն։ և յըսկզբնէ
պատարագին մինչև՛ի վախճանն ըղնթերը
ցումն իբրև Հաշեցին աւետարանին, անդա
դար և անմիջոց հեղուին արտասուս իմիջ եկե
ղեցւոյն իբրև զգղ խուսն աղբերս։ Եւ զկնի պա
տարագին, ոչ վաղվաղակի առնուէին կերա
կուր, այլ յելանելն յեկեղեցւոյն լռելեայն
ընթանային իւրաքանչիւրոք՛ի խուղն իւր,
զի զընկալեալ շնորհն և զլուսաւորութիւն
մտացն՝ զոր ընկալան՛ի սրբոյ պատարագէն, մի
դուցէ փարատեսցի՛ի մտաց նոցա. և անդ ևս՛ի
խցին ժամ մի առանձին աղօթիւք անցուցանէ
ին մինչև Հանդարտեր բորբոքումն սրտից նոց։
և յորժամ Հարկանէին զկոչնակ սեղանոյն
ապա ամբն ժողովէին՛ի սեղանատունն՝ և մի
ահաղոյն նստէին՛ի սեղան՝ և ուտէին լռե
լեայն և յօրն միանգամ առնուէին կերակուր՛ի
բոլոր տարին։ և յաւուրն զկնէրակուրն առհա
նեցին զգիրս ընթեռնուլ. զի ոչ քիմք զհամ
Հաշակեն այնպ ևմիտք զբանս Ա.Յ. քննեսցեն։
Ա.րդ՝ այս յայտնի կարգ և առհմանն նց. զոր

վերոյ

վերոյ ասացեալ վարդապետքն սահմանեցին եր
կոքին արամբքս, իսկ զծածուկ առաքինու
թիանց՝ զորոնք են, նա միայն գիտէ, որ քննէ
զսիրտս և զերիկամունս որդւոց մարդկան։
Յանցն ամենն զարդարեալք էին զանազանիւք
առաքինութիւք, ոմանք ոտնակացութիւք, ոմանք
պահոց պնդութիւք. ոմանք արթնակացութիւք.
ոմանք արտասուաշխեղութիւք, ոմանք լռակացու
թիւք. ոմանք հիւանդաց սպասաւորութիւք. ոմանք
այլով կերպիւ միով զի ամենն արժանացեալք էին
ընդհաց սրբոյ Հոգւոյն. առ որ հաճոյ լինէր
սրբանուէրն աղօթք նոցա։ Արդեօք պատմեն վա
ռեառն կիրակոսի զայս ինչ։ եր ոմն այր եկեալ
յաշխարհէ և լեալ միայնակեաց. և՝ի սակաւ
ժամանակս կացեալ յանապատին. թէպէտ
և խոստովանեալ եր և զհանդերձս աշխարհա
կանն փոխեալ՝ այլ ոչ եր հաղորդեալ. զի այն
պէս եր կարգ անապատին, որ՝ի կատարել
տարւոյն ապա զնորեկս հաղորդէին։ Ընդ այս
եկեալ այրս տակաւին ոչ եր լցեալ զտարին.
զնորոյ և ոչ եր հաղորդեալ։ պատահեցաւ սմա
հիւանդանալ և անհաղորդ մեռանիլ. և տ
րեն անհաղորդ մեռանիլն՝ խղճմտանք մեծ
եղև նմա՝ անապատաւորացն։ և ոմանք կամ
ցան յայնմ աւուր թաղել զնա. իսկ տէր կիրա
կոսն պատճառէր, և ըստրուցս յօդէր. և ոչ
թողոյր՝ի թաղել, և ասէր թէ այրս այս եկն
առ մեզ՝ և եկաց յայսքան աւուրս՝ և ոչինչ օգ
տեցաւ՝ի մէնջ. և արդ անհաղորդ ևս մեռաւ։
Ընդ արդ առանց պաշտամանն և պատարագի
թաղեցք զսա, արդ ոչղեմեցարուք սմա. և պա
հեցէք այսօր և՝ և՝ի վաղիւն զպաշտօն և զպա
տարագ սրարեալ մերձ Հոգւոյ սորա՝ և այնպէս
թաղեցէք զդա։ և միաբանքն հաւանեցան առ

նել այնպէս եւ ոչ գիտեն զկիրս մտաց տեառն կիրակոսի: երբեմն կանոյ գիշերն. և՛ի վաղիւնն տեսին զվեռեռացն յարուցեալ և նստեալ՝ որ խօսէր և շարժիւր՝ և իւրովին եղեալ՛ի մահճացն գնաց յեկեղեցին. և հաղորդեցաւ՛ի սրբոյ Աստուածոյ և յԱրենէ Տեն. և գնաց՛ի տեղի հանգստեան իւրոյ. և՛ի գալ միւսում գիշերին դարձեալ վախճանեցաւ. զոր տարեալ թաղեցին՛ի դիւրս եղբարցն: զայս պատմեին զտեռնէ կիրակոսեն, և զայլ բազում պատմութիւնս արժանի լսելոյ պատմէն՛ի միաբերացոյ անապատին. մնալ հոգին Աստուծ վերակացու էր նոյ:

Եւ էր հոգաբարձու՛ի մատենաւորէ կողմն նէ անապատիս սարգիս եպիսկոպոս. և գրոց ուսուցիչ տէր կիրակոս, և պօղոս վրդապետն, և մովսէս վրդապետն, և նեռեսէս վրդապետն, և թուման եպիսկոպոս. որք բազում ժամանակս կացին խիստն սուրբ առաքինութեան: և ապա տէր կիրակոս և թուման եպիսկոպոս գնացին յերկիրն քաղդէացոց մերձ՛ի գիւղն Հօջանց, շինեցին զանապատ՝ և անդ բնակեցան: Իսկ սարգիս եպիսկոպոս էկաց մնաց՛ի նոյն մեծի անապատին. և համբերութեամբ տանէր զանհնարինս նեղութեանց եկելոց նմա, մինչև եհաս՛ի խորին ծերութիւն առաքինակնիւք վարուք. զընթացսն կատարեալ՝ և զհաւատսն պահեալ փոխեցաւ առ յերկիրն կենդանեաց՛ի նոյն մեծի անապատին. որև անդէն կայ թաղեալ պատուականն նշխար մարմնոյ նորա: որում վախճանն եղև՛ի թուականութեանն մերում: Իսկ տէր կիրակոսն, որ գնաց՛ի Հօջանց կացեալ անդ կրօնաւորականաւ ժուժկալութեամբ՛ի նմին տեղւոջ մերձ՛ի գիւղն Հօջանց՝ յիւրում անապատին եղև վախճան սո՛ի թուականութեանն մերում:

հազար և եօթանասուն. և գնաց առ սիրեցեալն իւր Քրիստոս. որում փափագեալ հանապազ կրեը ի յոգին իւր: և ի նմին տեղւոջ կայ Թաղեալ պատուական նշխար մարմնոյն ի փառս Քրիստոսի Աստուծոյ հանգչելոյն յաւիտեանս յաւիտենից:

Ա յլեա պատմութիւն վասն սրոյ մեծի անապատիս:

ԻԲ.

Կ՚ԵՒ Ի՞ՆՉՈՒ ԹՈՂԱՒ

անապատիս. իբրև անցին հիւր ամիս քառասունևհինգ կամ աւելի. արիւ մնեան կողմն անապատին, գետինն պատառեցաւ ընդ կողմն հիւսիսոյ, և էհաս մինչև ի կողմն արևելից մինչ ի հանդիպոյ լեռնայն վէմն: Ւոակ յարևմտից կողմանէ անցեալ զգետ ըեզմանաքն. և էհաս մինչ ի լեառն արև մտեայ կողմանն: և այնքան պատառեցաւ լայն և ընդարձակ և խորագոյն. զի թէ եղն և ձի և այլ անասունն դէպ լինէր անկանիլ ի խորափոր պատառածքին՝ ոչ կարէր երանել: այլև զայդ ի սմանէ այլևս պատառուածքն այսր և անդր յղուիք լինէին օր աւուր: Ւու յայսմանէ պատճառէ երկիւղալից կասկած անկաւ ի սիրտս քննակ չայ անապատիս. թէ գետինն յորոյ վերայ չի նեալ կայ անապատն սահելոյ է ի տեղւոջէ իւրմէ: Ւ, ևս ևս ամբն գաւառականքն, որք անդ պատահէին. ի տեսանելն զպատառուածն զայն, զնոյն վկայէին:

Իբրև էհաս Թուականն մեր ի հազար և հարիւր և եօթն, և յապրիլ ամիսն. եղև անձրևայինն գարունն այն՝ և այն պատառուածքն սկան օր աւուր լայնանալ. և հաւաստեաւ հաստատեցաւ ի սիրտս ամենեցուն թէ այսօր կամ վաղիւն

ղինն սահեալ հոսելոց է սաորակայ գետինն ա-
նապատեւ։ Այս եղև յաւուր աշխարհամատ
բան կիրակէ ենն, որ էր ապրիլ ամսոյ քսանևհինգ
ընդ ժամանել՝ի ժամ երեկոյին մերձ՝ի մուտս
արեւուն. սկսաւ պատառիլ գետինն՝ի հա
րաւայնոյ կողմանէ անապատին՝ի բարձոնէ՝ի
լեռնէ անտի. եբրև զմրրկեալ ամպ դիմեալ
գայր՝ի բարձանց լերին՝ ահագին դղրդմամբ
և թնդմամբ՝ և որոտմամբ՝ և ձայնմամբ իբ
րև զորոտումն կայծակնացայտից ամպոց և այն
քան ահագին էր որոտումն և թնդումն, մինչ զի
ամբն բնակիչք չինահայր գեղջն. և հալիձոր
գեղջն լուեալ զձայնն. և եղեալք յանդիման
նակացեք տեղւոջէ գեղջն իւրեանց տեսանէ
ին, զարհաւիրն զայն՝ զի յաւիտենից հաստակա
ռոյց լեռնականք վէմք պատառեալք յինքեանց
՝ի միմեանց իբաց տրոհեին. և յակղբանց կա
ռուցեալք վէմք՝ որք չիմունքն էին գետնոյն.
եռացեալք՝ի վերգային յերեսս գետնոյ. և
յողովից ժամանակաց ծառք և տունկք ամբն.
եթէ ընկուզի, և թէ կաղնի, և ընդ նոսին մե
ծամեծք վէմք՝ զառի սաորև սուզեալ՝ի ներքս
՝ի յանդունդս կլեալ աներեւութանային։
Այս մեծամեծք վէմք հասեալք՝ի լեռնէն և
զկնի միմեանց հոլովեալ գային՝ի վայր. որոց
՝ի բախելն ընդ միմեանս փշրեալ և խորտա
կեալ իբաց ցնդեին և ուժգնութիւն սոցին բախ
մանցն թնդումն սաստիկ առնէր ամենից վայ
րացն. և ձայն գոռալոյ և որոտման սոցա խլա
ցուցանէր զլսելիս՝ և սրտամեռ առնէր զամեն։

Այս որովհետև երեկոյացեալ էր օրն և սա
կաւ մնացեալ ժամ աւուրն. և այն ևս էանց
և ժամանեաց գիշերն իվր. սկսաւ անձրև թո
րիլ և լինիլ սաստիկ մինագիշեր այնքան զի և

առ ընթերակայ կացեալքն զմիմեանս ոչ տեսա նէին: Այլ ամքն բնակիչք անապատին էլին յանապատէն. և գնացեալ ժողովեցան յարև էլեան կողմն անապատին 'ի քարեայ լեառն: և անդ զետեղեալ վառեցին զլապտերս և զմեծամեծ մոմս. կային ահաբեկ պակուցմամբ, և ձայնին կատարածին. և ըղձանային լուսոյ առաւօտուն:

Խազումք համաքեցան թէ անապատն միա հաղոյն քանդեցաւ ընդ այլ սահեալ գետնոյն, բայց արարչական խնամ գթածին Աստուծոյ հայեցեալ 'ի մշտապաղատ մաղթանս ողորմելեաց եղբարցն ոչ էթող նոցառ աւերիլ՝ այլ սա կաւ: քանզի արևմտեան կողմն անապատին, պարիսպն և հիւրատունն. և ախոռք անասնոցն, և համբարանոցքն, և մատն ինչ 'ի սենեկէ եղբարցն. և արևմտեան կողմն մեծ ի եկեղեցւոյն յետուստ կուսէ արևմտեան սեռանցն, որքա առնեքեան աւերեցան:

Այս յոյժ ահագին և ահընկեց էր գործ ցեալ նոյն, քանզի ոչ լեռնացեալ կոհակք ալեաց ծովու՝ որք զկետ միմեանց սահեալ ընթանան, սոյնպէս և հաստահիմ վէմք քարուհոյ վայրացն այնմիկ եղեն: Ո՛ի 'ի սրտէ լերինն յորոյ վէր թանահատն վանքն կայ շինեալ. 'ի խորոց անդնդոց բնականք վէմք լերինն սկսան պատռիլ. և հողով և խճով և մեծամեծ ի քարամբք, ի բերլ զառուն եկեալ զառ ի վայր հոսեր: և 'ի վերուստ եկեալ հոսանն իւրոյ բռնութեամբ և ուժգնիւ հոսմամբն զիւր առաջի վայրան 'ի բնականի տեղւոյն 'ի բացուստացեալ ընդ իւր խիտսն զինի միմեանց ընթանային իբրև յորձանս ծովուց եղևէջս առնելով: և այսպէս սա հեղուլ գնացին և հասին 'ի գետն մեծ որոտան,

որ

որ իմէջ ձորոյն անցանէ, և արգելին զգնացս
ջուրցն երբեմն ժամ ուրեմն, և ջուր գետոյն, որ
՚ի վերուստ իջանէր եկեալ ծովացաւ և լցաւ
տեղին և ապա՚ի կողմանէ հինչ եգիտ ինքեան
ճանապարհս գնալոյ՝ և քարինքն և հողքն, որք ար
գելան յերկր գետոյն եղեն բլուր մեծ։

Նոյնակ գերեզմանատունն անապատաւորացն էր
յարևմտեան կողմանէ անապատին, և ըստ հոսիլ
վայրացն այս գերեզմանատունս ևս հասարակ
միահաղոյն ամ՚ի միասին, խորագոյն և անդն
գոյին յատակաւն իւրով ոստեալ՚ի տեղւոջ
ջէ իւրմէ սահեալ գնացք բազմաւ հեռաւորու
թիւ՚ի վայրն ուրումն ղկայ առեալ կայացաւ։
Այլև՚ի սոյն տեղւոջէ էին թաղեալ սբ վար
դանն պօղոս, զորոյ զպատմութիւնն արարեալ
եմք յայլում Ճառի և սարգիս պարոնաէրն որոյ
սակս յանցեալ Ճառիդ պատմեցաք։ և արիստա
կէս վրդանն, որ զկնի սարգիս պարոնտիրին
եղև առաջնորդ անապատին։ և Ճգնաւորք և ըն
տիր և առաքինագործ աբեղայն տէր բար
սեղ։ սոքա չորեքեանս առընթեր միմեանց թա
ղեալք կային, և իվ իւրեանց չինեալ կայր մա
տուռն։ և՚ի ժամ հոսելոյ տեղւոյ գերեզմա
նատանն խնամն Այ եբր զգործ ինչ պանչէ
լեաց արար իվ սրբոցս, զի ամենևին գերեզ
մանք սոցա ոչ խախտեցան, որ և քարինք տապա
նացն ոչ թիւրեցան, այլ զգիրս իւրեանց գէպ
ուղիղ ընդ արևելս ընկալեալ կայացան, ոյք և
նախկին թաղեալքն են։ բայց մատուռն որ իվ
սոցա կայր փլուզեալ ցնդեցաւ։

Այս՚ի լինելն այսց ամենից գործոցս սոսկալի
խնամքն Այ ամենակալի, ոչ ումեք եղև ինաս
մարդոյ կամ անասնոյ, այլ միայն եղբայրս ոմն
ինաց իմէջ իւրոյ խղճին և անգէն մեռաւ՚ի ներ

քոյ հողին: զի ըստ սկսանիլ հոսմանն՝ի ժամ երե
կոյին, ոմանք յեղբարցն գնացեալ ազդեցին
նմա երանելոյ անդր՝ զի ի մեռանել՝ի ներքոյ հո
ղոյ, և նա՝ի վաղուց ժամահասակաց ցանկանալով
ապաստ մահուս՝ ոչ եկն արտաքս, այլ մնաց ան
դէն յուսով ակնկալեալ Տն՝ զի թերևս վե
րանապարհ մահուանն եւրոյ ընկալցի զայցելու
թիւն հոգւոյ եւրոյ, ՚ի բազմագութ Տէ Ա՛յ՚
Ասէ միւս այլ բնակիչք անապատին ամ
ենայն ժողովեալք էին՚ի լեառն, որ կայ յարևելից
կողմն անապատին, յորդաբղխիւք արտասուօք
և մեծօք հառաչանօք կոծէին զանձինս, և
աղաչէին զԱ՛՚ զի թերևս զերծցին՚ի սատակ
մանէ, և փրկեսցէ չինուճած անապատին՚ի փլմա
նէ, քանզի յուսահատեալք էին վասն ահագին
արհաւրացն եղելոյ, և մինչև ցլուսանալ՚ի լոյս
առաւօտու երկու շաբաթին, իբր զպաղա
տաւոր ոք յերկունս կային: Ասէ այն որոյ
գթութիւնն բնութիւ՛ք՚ն՝ աղբիւրն ողորմութե
Տ՛ր Ա՛՚ն՝ ոչ միայն զնա փրկեաց՚ի սատակմանէն,
այլև զանապատն ևս ամբողջ պահեաց և ոչ
եթող աւերիլ. զի ամենազօր աջոյն իւրով ան
խախտ պահեաց զանապատն բայ յառաջ սա
ղեալ աւերելոցն:

Ա՛ւ ոմն յեղբարց անապատին պատմեաց
այսպիսի տեսիլ երազոյ. ասաց թէ տեսանէի
զոմն չքնաղատես մեծաշուք պայծառիւ զգես
տու հեծեալ յբսպիտակ երիվար՝ և կայր ինքն
առնեաց եկեղեցւոյն, որում առաջի ժողո
վեալ եղբարցն պատմէին զանցս ահագին
վշտացն: Ասէ երևեալ փառատուր այրն զնոյն
երկրորդեալ խօսեր ընդ եղբարցն: Որ՚ի
կարգս խօսից իւրոց ասաց այրն փառատուր և ես
ըն այդց երաց կամ և հոգամ, որոյ սակս սա
կաւ

կաւ մի ցաւեցաւ ծունկս իմ, զի զոտս իմ եդեալ դիմ երեսաց քարանձաւիդ զդիմկա լեալ ունելն լերինդ, զի մի փլուզեալ ծածկե սցէ զանապատս եղբայրանց։ Եւ դուք մի ծուլանայք ՚ի գործոյ առաքինութե՛ն, եւ հանապազ գոհութի՛ւ փառաւորեցէք զՔ՚Ս՚ որ փրկեաց զձեզ։ եւ առ յապայն ևս փրկեսցէ ողորմութի՛ւնով։ որում փառք յաւիտեանս ամէն։

Պատմութի՛ւն վարդապետութե՛ն եւ վարուց սրբոյ վարդապետին պօղոսի։

ԼԳ։

ԱՌՔՐԴՈՔՊՆՏՆ պօղոս էր յերկրէն մոկաց ՚ի գեղջէն, զոր անուանեն քար։ եկեալ ՚ի տուրբ և ՚ի մեծահռչակ ուխտն վարագայ յարեցաւ առ կարապետ վարդապետն, զորոյ զմայկ անուննն ձագ վարդապետ ասէին, որում աշակերտեալ ուսաւ զամն գիրս հնոց և նորոց ստակարանաց, և երբեք կատարեալ եղև գիտութի՛ւն և հասակաւ՝ ետ նմա ձագ վարդապետն զնշխանութի՛ն վարդապետութե՛ն. և նա գնացեալ ընդ քրիստոնէից քարոզեր զպատուիրանս Ք՚Ս՚։ Ել՚ քարոզելով եկն ՚ի Թաւրէզ քաղաք, և անդ ՚ի կիրակէ զգործ վարդապետութե՛ն իւրոյ, և յամ աւուր քարոզիւ և դասիւ և յորդառատիւ վարդապետութի՛ւն լուսաւորեր զժողովուրդս քրիստոնէից՝ որք և պատահէին անդ։ Քանզի յամենից կողմանց եկեալ ազգաւորքն՝ որք գային ՚ի Թաւրէզ. երբեմն պատահէին լրոյ քարոզութե՛ն սրբոյ վարդապետին միսիթարեալք զՀոգւովն Հոգւով. և զօրհնութե՛ն մատուցանէին Ք՚Ս՚ տնօրէնին այնպիսեաց շնորհաց։

Ել՚ ինքն պօղոս վարդապետն. էր վարուքն

նը և առաքինի. Հանապազօր սաղմոսերգ. և
արտասուօք և մեծաւոր աղօթս արար. որ զգի
շեր շաբաթ աւուրն յորում լուսանայր միաշա
բաթ օրն. յերեկոյէ սկսեալ յոտին կանգնեը.
և մինչ՝ ի լուսանալն հակումն առնեը. և զայմ
շաբաթու գիշեր այսպէս առնեը. զկիսեսցուքն,
զկանոն գլուխն, զալէլուն խաղով ասէր Հան
գերձ ութ կանգնաւ սաղմոսին. և յառաւօ
տուն զքրիստոնեան խորհուրդ պատարագին մա
տուցանեը. այլև հրաժարեալ էր՝ ի գինեւոյ
և՝ի մսոյ ամենևին. ՝ի շաբաթ օր և կիրակի մի
այն ճաշակէր ՝ի նաւակատեաց կերակրոց. և
զայլ ամենեսեան աւուրս տարւոյն պահօք կայր
այլև ոչինչ առնոյր զինչս և զստացուածս յու
մեքէ՝ զի անարծաթ քարոզէր և թէ տայինն ևս
ժողովուրդքն ինչս. զայն ևս՝ ի պէտս գերեաց
և կարօտելոց և՝ի շինուածն եկեղեցեաց ծախէր.
այլև ուրև գնայր՝ ի Հանապարհ թէ հեռաւ
որ և թէ մօտաւոր՝ հետի ոտս գնայր. քանզի
զգիտս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշա
կերտքն իւր բառնային շալակով և գնային։
Այս՝ ի թաւրէզ քաղաքն թէ պէտ գոյր ժամա
տուն. բայց տեղի պատարագի ոչ գոյր՝ ինձա
կաս ասՙ ինձին ժամատան շինեաց զգեղեցիկ
խորան պատարագի։

Այս ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն
Հիմարտից վարուց նր. և վաճառականքն, որք
ելին յերկրէն գողթանց աղաչէին զնա գնալ
յերկիրն իւրեանց՝ ի քարոզութի. յորոց մի եր
ցընեցի խօջայ Հայրապետն և այլք ևս ընդ նմա.
և զայս բան՝ ի բազում աւուրս թախանձէին։
Վասկ վրդապետն Հաճեալ՝ ի բանսն գնաց՝ ի գա
ւառն գողթանց և եկեալ՝ ի գիւղն ագուլիս։
Այր անդէն եկեղեցի մի առաքելաշէն զոր

մի

մէ ասէին թէ սրբոյ առաքելոյն Թադէոսի չեն նեաղն է. որև յետ բազմաց ամաց գննի բանալոյ դրանն. մեք ևս տեսաք զեկեղեցին զայն։ Այս էր դուռն եկեղեցւոյն այնմիկ՝ի բազմաց ժամանակաց ինքնին փակեալ առանց նգի և փակաղակի. և թէպետ բազումանգամ աշխատեալ էին և ջանացեալ զի բացցեն՝ և ոչ էր լեալ հնար բանալոյ. վնորոյ վհատեալք էին և իբաց կացեալք։ և փակումն դրանս այսմիկ ամենեւին ոչինսուբ պատմեալ եղև վարդապետին։

Այս յորժամ էհաս գիշերը շաբաթուն՝ի լոյս միաշաբաթին. եկեալ վարդապետին ըստ հանապազորդ սովորութեե իւրոյ է կաց առաջի փակեալ դրան եկեղեցւոյն՝ զի հսկումն արա րեալ զգայգապաշտօնն կատարեսցէ։ և կա ցեալ առաջի փակեալ դրանն սկսաւ՝ի խորս սրտի իւրոյ ուժգին գոչմամբ և յորդահոս արտասուօք աղաչել՝ և ինդրել՝ի հեշտալոյ տեառնէ զբացուումն դրան եկեղեցւոյն. զի ըե կելով սրտիւ հեզոյր զանձն առաջի Տ՚ն յոր դահոսիւք արտասուօք. զոր բղխեր յաչացն իբրև զաղբիւրս։ Այս նախ քան զսկսանիլ հսկմանն արար զդուռնաբացէք, և իբրև բախեաց զդուռն երիցս անգամ և ասաց. բաց մեզ տէր, բաց մեզ տէր, բաց մեզ տէր զդուռն ողորմութե քոյ՝ որ ողբալով կարդամբ առ քեզ։ և շնոր հօքն Ա՚Յ առանց ուրուք մերձենալոյ առժա մայն ինքնին բացաւ դուռն։ Այսկ որք մերձն կային՝ի քահանայից գեղջն և յաշխարհական նոց հնացեալ զարմացեալ ապուշկային. և ապա եկեալ՝ի միաս վաղվաղակի ընթացեալ ազդ առնէին ամի ժողովրդեանն։ որոց՝ի լսելն, թողեալ զտունս և զընտանիս՝ի խոր գիշերին փութանակի անդր ժամանէին մե

ծամածիք և փոքունք. և՛ի տեսանելն զօրն նոր
թէ՛ի քարձունս վերատաքեին Ա. Յ. Ա. Ս. իբրև
բացաւ դուռն եկեղեցւոյն. մտեալ՛ի ներքս ա-
մենիւ ժողովրդեամբն՝ ուրախութիւ և ցըն
ծութիւ անդէն՛ի նմին եկեղեցւոջ սկիզբն ա-
րարին գիշերային կարգին։ և յաւուրսն
մատուցին զիրկական խորհուրդ պատարա
գին. և ամբն՛ի մի բերան օրհնէին զՏէրն
գործն Ա՛ի՛ որ արար զնա արժանի այնց պար
գևաց. և հնչեաց հռչակ լոյս այսմիկ ընդ
ամէն կողմանս գաւառին իմիջ քրիստոնէից՝ և
այլազգւոյ. և որք լսէին հիանալով օհէին զԱ՛ի
Ա. ՐԴ՛ի բանալ փակեալ դրանս այսմիկ, մեծ
ինն խորհուրդ յայտնեալ ցուցաւ. քանզի ը
նդմին բացաւ և դուռն քարոզութիւ բանին կե
նաց յաշխարհս արևելեան. որք ցայն վայր՛ի
խոր խաւարի անգիտութիւ նստեալ կային. ոչ
թէ՛ի ժամանակս կռապաշտութիւ, եկեղե
ցականք և աշխարհականք։ և ոչ ՏՐէն Ա՛ի՛
արեգակն արդարութիւ ծագեցաւ յաշխարհ,
և լուսաւորեաց զամենեսեան հաւատով Ա՛ի՛
գիտութիւ. այսպէս և աւր վրդովման պօղոս ըզ
կողմնս արևելեան. վնզի եբարձ՛ի միջոց զմի
աւելորդ անկարգութիւն յեկեղեցականաց և
յաշխարհականաց. և կարգաւորդեալ շքե
ղացոյց զամեն ուղղիւ քարոզութիւ։ վնզի յետ
բանալոյ դրան եկեղեցւոյն՝ բացաւ դուռն
հաւատոյ աշխարհիս արևելեան՝ քարոզութիւ
և ամբծիւ և անկեղծիւ վարդապետութիւ սուրբ.
զի աւաքելաբար չըՔեղչանէն տեղիս քարոզէր
զբանն կենաց. կարգեր զքահանայս, շինէր զ
եկեղեցիս, և հաստատեր զբաւրի կարգս յեկեղե
ցիս և՛ի գիւղս. ժողովէր զմանկունս յուսումն
սրբոյ գրոց. և՛ի տեղիս տեղիս հաստատեր
զդպրս

զդպրատունս՝ և յիւրոց աշակերտաց կացուցա
նէր զդպրապետս. և զմանս՝ի մանկանց զպատ
շաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցա
նէր. որպէս ամքն հասին աստիճանի՝ աբեղայ
և երէց՝ բաւական ինքեանց և ժողովրդեան։
Յորժամն տեղիս ուրբև շրջեցաւ նա շինեաց
զեկեղեցի. քանզի յառաջ քան զնա յամն տե
ղիս ոչ գոյր եկեղեցի. և թէ ուրեք գոյր եւս,
և այնեւս անշուք, և անճահ. եկեղեցի անուն,
խրթին և նսեմ, խարխալեալ և բլբլկեալ.
լցեալ հողով և մխրով. որով ձևն և գիրն
թիւր և թէք։ Այսոկ սա ուրբև հասանէր, հմնար
կէր զեկեղեցիս պատշաճաւորիւ ձևով՝ գեպ
ուղիղ ընդ արևելս ունելով զդիրս՝ գեղեցկիւ
շինուածով խորանքն և լուսամուտքն և կա
թուղիկէն և այլքն ամքն։

Այս ըստ այմ սարսափ քարոզելով և զեկեղե
ցի շինելով եհաս մինչ՝ի գիւղաքաղաքն սա
տապատ. և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յա
նուն սրբոյն ստեփաննոսի նախավկային է ամ
րով պարսպիւ, և երկաթապատիւք դրամբք. և
յետ աւարտմանց վանիցն սկսաւ զգեղջն եկե
ղեցին շինել. ըստ թախանձանաց ժողովրդեան
գեղջն. և վասնզի եկեղեցին փոքր էր և ոչ էր
բաւական տանիլ զժողովուրդսն՝ զի բազում
էր ժողովուրդն. ընդ որոյ կամեցան՝ի խցիցն
որք շուրջ զեկեղեցւոյն էին քակել և խառնել
յեկեղեցին՝ զի մեծ ասցի։ Այսոկ աբեղայքն.
որք բնակէին՝ի գեղջն. և էին տեառքք խցիցն
խոժոռեալք ըմբռոստացան. և ոչ թողուին
քակել զխուցսն, բայց ժողովրդոցն ոչինչ
զփոյթ արարեալ զամբոխմանէ նոցա. այլ դի
մեալք իւրաքակեցին զխուցսն առ որ գժուա
րեալ աբեղայիցն՝ գնացեալ՝ի վանքն առին
զեպ

զեպիպօռունն և եկին ՚ի գիւղն. և արարին զաղմուկ մեծ. և զբանս անպատշաճս ասէին վարդապետին: Իսկ սրբոյն բերեալ յինքեան զնոսա առանձինն ՚ի տեղւոջն Ճշմարտի հեզոյն Յիւ. խորհելով ՚ի մտի թէ հալածեացեն զձեզ ՚ի քաղաքէ յայս ժամանէ՝ փախիջիք ՚ի միւսն. վաղորդի զանխուսափ յամէ եղեալ ՚ի գիշերի լուեցեայն հետևեցաւ գնալ յայլ գիւղ: Իսկ ժողովուրդքն իբրև զգացին զգնալն վարդապետին. յայնժամ գիմեալ իվի աբեղայիցն հարկանելով քարիւ և փայտիւ արտաքս վարեցին ՚ի գեղջէն. և վաղ վաղակի ընթացեալ զկնի վարդապետին բազմօք աղաչանօք դարձուցեալ զնա ածին ՚ի գիւղ անդր: և սկսան շինել զեկեղեցին լայն և ընդարձակ՝ և բարձու շինօճածով. և կաթուղիկէ իվի յօրինեալ: նոյնպէս և զայլ յարկս տանցն և պարսպին: Իսկ աբեղայքն և եպիսկոսունքն իբրև տեսին թէ ինքեանք ոչ կարացին ինչ ստնա նել վրդապետին. գնացեալ ՚ի դարաշամբ զամն եպիսկոսունս նախավկայն վանացն միաբանեցու ցեալ ըն ինքեանս առեալ եկին իվի վրդապետին. ըստ օրինակի թզուբացն ամաղեկայ որք միաբա նեալ եկին իվերայ զօրավարին Յ. Յ յեսուայ. բացց ոչ նոքա անդ պարտեալ գտան. այլնպ և սոքա աստ: վնզն թէպետ բազումանգամ հակառակեցան վրդապետին. այլ նա ամենևին ոչ լքաւ ՚ի բարւոք յառաջադիմութէն:

Իսկ միաբանեալ աբեղայքն առաւելևս դրդեալ ՚ի նախանձոէ գնացին առ մելքի սեթ կաթուղիկոսն՝ որ զիչխանութէն կաթուղիկոսութէն ղաբալայիւ առեալեր ՚ի պարսից թագաւորէն. և այնքան դրդեցին զնա ՚ի բարկութէն մինչ զի բազումանգամ առաքեաց առ վրդապետն բանս սպառնականս և յանդիմանութէն. թէ եղեալ

յերկրէս

յերկրէս մերմէ. և գնասցես յերկիր քո ուսանի եկեալ ես՝ զի ոչ է պիտոյ մեզ խաբեբայ և նո ծահանուկ քարոզուքն քո. և ոչ կեղծաւոր վարքն քո. ասացեալ ոչ՝ առակ նշաւակի, և այսմ կատականաց լինիցիս ՚ի ձեռս իմ։ Այսկ վրդովեան բնաւ ոչինչ առնէր փոյթ զայնմանէ՝ վնաս յոյսն հաստատուն եր ՚ի Տէր. այլ հանապազ ջրէր, և քարոզէր, և շինէր զեկեղեցիս, և յարդարէր զամենեսեան ուղղութեամբ գոք և սահմանադրութեբ։

Այսկ յետ ամաց ինչ անցելոց՝ կԹղկոսն մեռ քինէր և վրդովեան պօղոս պատահէցան միմեանց՝ ինաիչեան քաղաքի. և կԹղկոսն զԹոյնս և զմաղձս դառնութեբ, զոր ՚ի բառնամ ժամս կաց մԹերեալ ունէր ՚ի սրտի. յայնժամ ժայռ քեաց իմբ վրդովտին։ և յետ բաղմաց յանդիմանութեց և կշտամբանաց և անպատեհից բանից՝ զոր խօսեցաւ կԹղկոսն յերեսս վրդովտին. և զայս ևս ասաց Թե զամն եկեղեցիդ, զոր դու շինեցեր իվերայ քոյ գլխոյ քակեցից։ և հրա մայեաց նմա ելանել յայսմանէ աշխարհէ. և գնալ ՚ի տեղի իւր. և Թե այլևս յամի՝ այնուհե տև մատնի՚ի ձեռս աշխարհակալաց Իշխանացու և ոչնչ գոյր օգնական՚ի կողմանէ վրդովտին. ոչ եկեղեցական և ոչ աշխարհական։ վնաս ամենե քեան երկնչէին՚ի կԹղկոսէն. զի Թագաւորական իշխանութեբ վարեր զկԹղկոսութենն։ Այս զագս որոյ անձամբ լեալ վրդովտին՝ եղեալ ՚ի նախչեւանայ գնաց՚ի գլուխն շամբ՝ զի գնասցէ ՚ի տեղի իւր. և ըստ հանապազորդեան սովո րութեբ իւրոյ որ իմբ գիշերի աղօթէր վարդա ովտն. և յայնմ գիշերին յետ աղօթիցն խԹեաց՚ի կողս աշակերտին՝ և զարԹոյց զնա. զարԹեան և այլք ոմանք ևս. սկսաւ հարցանել ցնոսա

Թէ

թէ զինչ բարեաց թուի ձեզ արիանալ ընդդէմ փորձուածոյս։ դիմակայիլ խառնուածոյս այսմիկ և քարոզել զբանն կենաց։ թէ տեղի տալ և հեռանալ ի շփոթէ սոցա։ Նոքա աշակերտացն տուեալ զպատասխանի։ դու ինքնին տե՛ս անես զնաւաբար անդիտութեան։ թէ որպէս սփռեալէ իւրոյ ժողովրդեանն։ և զայնմանէ թէ ոչ էբաց Տէր զդուռն քարոզութեան։ քանզի զօրինչ և քարոզես վաղվաղակի արդիւնանայ։ արդ մի գուցէ վհատիցիս զի Տէր Յ ձեռնտու է քեզ։ պարտ է քեզ արիանալ և համբերել փորձուածոյ վն օգտի ժողովրդեան՝ և քարոզելոյ զբանն կենաց։

Նոքա ընկալաւ զբանիաւերս զայս ի նոցանէ սէր վարդապետն։ յայնժամ ասէ ցաշակերտսն իւր։ արդ որդեակք իմ, որովհետև այդպէս ասացէք։ պարտէ մեզ գնալ առ թագաւորն և առնուլ հնազանդ զհրաման վն շինութեան եկեղեցեացս։ և ես ակնուն իմ ի Տէ զի տացէ թագաւորս զհրամանս։ Արդ եթէ առնումք հնազանդ զհրամանս զայս քաջութեամբ անուն է մեզ։ և թէ սպանցեն զմեզ վարձս բարեաց ընդունելոց եմք ի Տէ ըստ վաստակաւորաց ծառայից նր։ և աշակերտացն ևս վկայեալ թէ յոյժ բարի է այդ խոհուրդ։

Նա նոյնժամայն ի նմին գիշերի յարու ցեալք ելին ի շտեմարանէ անցին զգետն երասխ։ և հետևեցան ի գնալ առ թագաւորն, որ էր ինքն առաջին շահաբանն։ վ առնելոյ ի նմանէ զհրաման շինելոյ զեկեղեցի։ և յետ առարտման կաս նոյն սաղմոսին, զոր ասէին։ զՀանապարհայն մինչ երթային։ պատահեցաւ լինիլ քարոզն այն որ ասէ։ վ ուղղելոյ զգնացս մեր ի Հա նապարհս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։ և վ խոր

վը խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի
ընդոտիւք մերովք. ղտեր։ յայնժամ ասէ
վարդապան ցայնոսիկ որք ընդ նմա է ին. տեսէք
որ դեակք իմ, զի ուղիղ է ճանապարհս մեր
ըստ վկայուԹե՛ սաղմոսիս. որով առաւել հաս
տատեցան, և ուրախացան. և մեծաւ յուսով
երԹային։

Եւ եղև իբրև հասին ՚ի գաւառն, զոր՝ ա
րազբար ասեն՝ և ՚ի տարաժամել աւուրն
մտին ՚ի գիւղ մի այլազգեաց առ իօԹել զգի
շերն ղայն. և տեսին, զի այր ոմն մահմետա
կանաւ հաւատով եկն ընդառաջ նոյ՝ տղայքը
և ասէր. խնդրեմ ՚ի ձէնջ վը՛յ մի գարշիլ
յայլազգուԹե՛ իմմէ այլ խոնարհիլ յաղաչանս
իմ, և գալ ՚ի տուն իմ. զի հիւրընկալ եղէց
ձեզ։ քանզի ուխտեալեմ վը՛յ. զի յայսմ աւ
ուր առանց հիւրի ոչ ձաշակեցից ինչ. և մինչև
ցարդ սպաս կալեալ կամ իմէջ շինիս. և նայ
իմ վը՛ հիւրն. և արդ զձեզ առաքեաց վը՛ն. վը
որոյ յօժարուԹե՛ խնդրեմ զգալն ձեր ՚ի տուն
իմ։ Եւ երանելոյն վարդապետին տուեալ ցնծու
Թե՛ զպատասխանի առնն, և ասէ. այդպէս եղիցի ոմպ ասացեր դ. երԹիցուք ՚ի տունդ. զգի
շերն ղայն օԹեցան ՚ի տուն առնն այնորիկ. և
այրն յոյժ բարւոք սպասաւորեաց նոցա ամենեքեան
պիտոյիւք և հանդուցանելով։ և յառաւօ
տուն մինչ կամեցան ՚ի գնալ՝ եկեալ այլազգին
աղաչէր. խնդրէր և ասէր՝ Թէ ոչ գոյ ինձ
զաւակ և յիշատակ յերկրի. խնդրեմ ՚ի ձէնջ
առնել զաղօԹս վը՛ իմ. ոպ զի լինի ինձ զաւակ
քանզի կին իմ ամուլ է։ Եւ սրբոյ վարդապետին
համբարձեալ զմշտատարած ձեռանն ՚ի յերկինս
և անդառնալեօք աղօԹիւքն խնդրեաց վը՛յ
զաւակ նմա զզաւակ. իսկ հեշտալուր Տ՚ին. զոր
խոստա

խոստացաւ ծառայից իւրոց Թէ զամ զորինչ և խնդրեցէք հաւատովք, առնուցուք· աղօ Թիւք սրբոյ վարդապետին պարգևեաց առնն այն միկ զաւակ· ոմն և յայտնեաց նոյն այր։

Յետ այսորիկ եղ անտի վարդապետն և գնաց յերկիրն աղուանից ի զարաբաղ· ի տեղին որ անուանի քօԹուկլու· քանզի անդէր բանս կեաց Թագրն չահաբաս առնիւ օպայիւն իւրով։

Ոսկ յորժամ յանդիման եղև վարդապետն Թագրին· երևեցոյց Տէր չնորհաւոր ծառայն իւր առաջի աչարկու և այլազգի Թագրին· և ի հարցանելն արքային ցվարդապետն· Թէ զինչ խնդիր կայ քո ի Թագրու Թէս մերմէ· պատաս խանեաւ ասաց վարդապետն· զի խաղաղարարաւ Թագրու Թէ քով արքայ ոչինչ կայ պակաս յա մենից բարեաց ազգիս Հայոց՝ բայց միայն աղօ Թից· զի ոչ գոյ տեղի աղօԹից՝ զի աղօԹես ցեն առ Ա՛Ծ վն աշխարհի՝ և վն կենաց Թագրին· զայս խնդրեմ յարքայէ զի տացե ինձ զհրաման, և զհրովարտակ չինելոյ զեկեղեցի· և այսմ ԹԷ եցե վարձք ինչ եղիցի Թագրին· և Թէ եցե մեղանք ինչ եղիցի ինձ· Ա՛Ծ ի լսելն զայս ար քայի զուարձացաւ յանձն իւր· և բարձու բար բառով ասաց նախարարաց իւրոց· իշխանք և դատաւորք զինչ արժան և ուղիղ Թուի ձեզ՝ զհրաման տալ զեկեղեցի չինելոյ՝ և Թէ արգե լուլ· դարձեալ ինքն փուԹանակի արար պա տասխանի իւրոց բանիցն և ասաց· ոչ է պարտ արգելուլ· այլ արժան է տալ զհրաման չինե լոյ՝ քանզի և այնք ևս Ա՛Յ տունք են· Ա՛Ծ առ ժամայն հրամայեաց գրել զնոսին՝ կնքել և տալ նմա· և իբրև կատարեցին և ետուն ցվարդապետն զԹուղԹն· և նա տարեալ իբացեայ ետ ըն Թեռնուլ· և ետես զի ոչ էր այնպէս օգտա

կար, որ բաւական լինէր կարեաց ներկայի ամա
նակին. վն որոյ ի պատճառէս հարկեաւ կրկին
անգամ կացեալ յանդիման արքային. և յու
առնէ նմա զխնդրելին իւր զՀրովարտակն. և
իբրև վերահասու եղև Թագն ամէ դիտաւորու
Թէ մտաց վարդապետին. և յայնմժամու Թագն
արտաքս ելեալ ի խորանէն երթևեկս առնէ
լուլ Հեմբը. և նոյնժամայն կոչեաց զմիոմն ի
գրչացն նատոյց ի գետնի առաջի իւր. և արքայ
կացեալ յոտին ինքն ասէր, և գրագիրն գրէր.
մինչև կատարեաց զամն բանս գրոյն. և ապա
հրամայեաց նոյն առնն գրչի շրջեցուցանել առ
ամն իշխանս զի ձեռնագրեսցեն և կնքեսցեն.
և իբրև կատարեցաւ ամ, բերեալ ետուն ցվարդ
պետն զՀրովարտակն. և արքայ վրդովեցաւ
ցեալ զՏՀ. առեալ զՀրովարտակն արքունա
կան եկն յարևելեայ երկիրս Հայոց. և այնու
հետև աներկիւղ եւնա վայելուչ սկսաւ շինել
զեկեղեցիս. և համարձակ շրջիլ և քարոզել.

Ի սակ կՀ՝ զկոմսին մելքիսԹի առաւել մախա
ցեալ ընդ վրդովետին պողոսի, խօսի զբանս զրպար
տանաց ի կողմանէ վրդովետին ընդ մեծի և հզօ
րի իշխանին ամիրգունայ խանին. որ էր իշխան
երևանայ. և ասէ, այր մի ստամբակ և անՀնա
զանդ և օտար՝ յաշխարՀէն մարաց. քանի ամ
զի շրջագայի յերկրիս պարսից. և մանաւանդ
՝ի քում իշխանութեդ գաւառս. և ստուէ և խա
բեբայիւ քարոզութեբ և կեղծաւորիւք վարուք
Հաւանեցուցանէ զամ մարդ ինքեան. և ոչ
միայ ոսկի և արծաթ և այլինչ ստացուածս առ
ոք՝ այլ զամ կազապաեալ յամենեցունց և ա
ռեալ առաքէ յերկիր իւր. քանիցս անգամ
պատուիրեցաք նմա բանիւք. նաև երես և ե
րես ևս ասացաք նմա ելանել յաշխարՀէ ասեմ.

և գնալ՝ի տեղի իւր. և նա ոչինչ արար ղիտելի՝ի մերոց բանից. և կամաւն էած թագաւորականի հրամանին. որ կայ՝ի ձեռս մեր. այլ գործէ ըստ հաճոյից կամաց իւրոց. քանզի անհնա զանդ է իշխանաց և պետաց:

Վ Ետրոյ և խանին կոչեալ զոմն զինուորս առաջի՝իւր՝ և ասէ, հրաման է յիշխանութենէս մերմէ գնալ քեզ յերկիր տերութենն մերոյ շրջիլ և գտանել զվարդապետն պողոս և ածել այսրէն առ մեզ: Նոքա զինուորին գնացեալ որ նեղով գտանէ զնա՝ի գիւղն ագուլիս. և անտի առեալ զնա ածէ յերևան քաղաք: Յա՝ի գալն յորժամ եկեալ հասին՝ի դուռն զայն գիշերն անդէն օթեցան. և կայր՝ի գիւղն յայն այր ոմն քրիստոնեայ՝ որոյ որդւոյ ձեռն գօսացեալէր՝ զոր ածեալ առաջի վարդապետին խնդրեր աղօթել իմ՛ն նր ոմն զի բժշկեսցի ձեռն մանկանն: Նոքա նբ վարդապետն կալեալ զձեռանէ մանկանն, և աղօթեաց իմ՛ն նր. և ասաց ցհայր մեր որ յերկինս, և ետ ցհայրն որ առեալ գնաց: և յայգ յառաւօտուն առեալ զորդին և եկեալ առաջի վարդապետին երկիր պագանէր և համբուրէր զոտս նր. գոհանայր և զընորհս խոստովանէր զնմանէ. և ցուցանէր զձեռն մանկանն ամենեցուն թէ աղօթիւք վարդապետին բժշկեցաւ ձեռն մանկան իմոյ:

Յլեալ անտի եկին՝ի քաղաքն երևան. և զի նոճորն, որ էած զվարդապետն. ՝ի նոյնում աւուրն յանդիման կացոյց զնա խանին. իսկ խանն ոչ ընկալեալ էր զնիւթ՝ի կիթ՛ղկանէն. զբազում մախանս և զդառնութիս ամբարեալ ունէր՝ի մտի. զի յոքնակի կիրս չարչարանաց անցուսցէ զվարդապետն: այլ այն, որ թէր է թէրոյ՝ և ՏՀ տերանց, որ՝ի ձեռնին ունի զսիրտ ամենից բըն-

նաւորաց

նաւորաց ըստ իմաստնոյն սաղմոսին. առ ժա
մայն դարձոյց զսիրտ խանին՝ի քաղցրութիւն.
ոչ արտաչէսի արքայի իշխի մեւրտքէի և բար
կութիւն իշխի Համանայ։ Վասն ընդ ակնարկել
խանին յերեսս վարդապետին՝ ոչ թէ զբանս բար
կութեան ասաց կամ զայրագնեալ դէմն երևեցոյց
նմա. այլ մեղմիւ և հանդարտիւ բանիւ ասաց
նմա. այսօր կացջիր առ մեզ՝ քանզի մեզ հիւր
ես. իսկ՝ի վաղիւն տարայց զքեզ ընդ իս առ
կաթողիկոսն և հաշտեցուցից զնա ընդ քեզ. քան
զի մեկնիսէթ կաթողիկոսն հրաւիրեալէր զխանն
իւրովք բարեկամաքն՝ի պատիւ յերկրորդումն
աւուրն. սորին վասն ասաց խանն. Թէ տարայց
զքեզ ընդ իս առ կաթողիկոսն և հաշտեցուցից։

Իսկ՝ի վաղուընեան աւուրն մինչ երթայր
խանն՝ի կոչն կաթողիկոսին. տարաւ ընդ իւր և
վրդովեան. և իբրև էհաս ժամ՝ խօսել՝ ասաց
խանն ընդ կաթողիկոսին. արդ յօժարու՞թիւն սրտի
քումդ զայս կամ՝ի քէն՝ զի դու հաշտեսցիս ընդ
վրդովտին՝ և լինիցէ ոչ զհայրն և զորդի. զի թէ
պետ շրջի նմին ժողովրդեանն. ոչինչ առնէ
զգործ կամ զվնաս արժանի դատապարտու
թե՛ն. ոչ ինձ՝ ոչ քեզ՝ և ոչ ժողովրդեան. և ես
կամիմ զի միմիջ ձեր խաղաղութիւն և սէր հաստա
տեսցի։ Իսկ կաթողիկոսն իբրև եւտես. թէ զորինչ
խորհեալ էր՝ի մտի. և խօսեալ էր ընդ խանին.
այնպէս ոչ եղև. այլ նորինն ներհակն. և թէ պետ
ոչ կամէր հաշտիլ՝ այլև ընդ իմանալ հրամանաց
խանին անմարթ վարկանէր՝ զի՝ի չահել զսիրտ
տըն նր կոչեալ էր. և մանաւանդ այնքան պա
տուհասօրայ արանց միջի. և իւր իւրոյ սեղա
նոյ, և յիւրում տան։ Վասն որոյ ակամայիւք կա
մօք վերերևութիւս և կեղծաւորելով սրտիւ
առնէ զհաշտութիւն ընդ վրդովտին ըստ հրա

մանաց խանին: Եւ յետ խրախուսելոյ յորժամ հանդերձեալ էր ի գնալ խանն. ասէ ցկին ի կոսն. վ ըդ ա յս այս եղիցի քեզ յանձին յայսմ գիշերի. և ի վաղիւն ի գալն քո առ իս ընդ քեզ բերցես. զի ուսնիմ գործ ինչ ընդ դմա: իսկ ի վաղիւն կին ի կոսն ինքն ոչ գնաց այլ զոմն յետակայաց իւրոց եղեալ ընդ վրդ ա պետին առաքեաց առ խանն, իսկ խանն պատուհասեալ խիստ ըզայեաց զվրդ ա պան. զի էարկ իվնն զպատուհասն և զոսկէ հուսն կապայ: Եւ դարձեալ կոչեաց զնոյն զինուորն, որ բերեալ էր զվրդ ա պն, և ասաց նմա. արդ առեալ զվարդ ա պաս զայս տարեալ հասուսցես ի տեղին. ուստի և դար ձուցեր զդա. և յանձնեսցես արանց տեղւոյն և ապա դարձցիս այսրէն: իսկ զինուորն և վարդ ա պան երկրպագեալ իշխանին եղեալք յերեսաց նո ր ն գնացին դէպ ի գաւառն գողթան:

Իսկ արքն, որք էին նախանձաւորք ընդ վարդ ա պին. իբրև տեսին թէ մատնութիւնն, զոր արարին առ ամիրգ ունայ խանն՝ ոչինչ կարացին ստանալ վարդ ա պին. վնորոյ սովիմբ օրինակաւ միւսանգ զմատնութի ն արարին առ ղազ ղայ խանն. որ էր առաւել խրոխտ և վհատ գոյն փառաք՝ և ամիւ որպիսութ ի ք քան զամիր գունայ խանն: և էր ղառ ղայ խանն իշխող քա ղաքին Թաւրիզոյ. առ որ գնացեալ մեկ թ կ ի ղկան ինքն, և այլք ևս յեկեղեցական նաց և յաշխարհականաց. և արարին զամբաս տանութ ի զպղծոսկ վարդ ա պէ. և ղարչղայ խանն առաքեալ զզինուորս տարաւ ի Թաւրէզ զպղծոս վարդ ա պան: Իսկ կատարուա ծ գործ ոյն եղև՝ ոչ և առ ամիրգ ունայ խանիւն կատարեցաւ: և այսու ևս յամօթ լեալ պարտեցան նախանձաւորքն:

Այլ յետ անցից պատմելոցս ասի և ևս դէպս դունից. մինչ շրջէր պօղոս վարդապետս քարոզութիւն իմն ի քրիստոնէից ըստ հանապազորդի սովորութեան իւրոյ պատահեցաւ նմա սահակ կաթուղիկոս եղբօրորդի մեր քեռի կաթողիկոսին. և այլք ևս՝ի նոցին համախոհացն. և յորում աւուրս խոշտանգեցին զնա ասելով՝ լուեա դուն՝ի քարոզութենդ. և պօղոս վարդապետն ոչ կամեր լուել՝ զի կարի յօժար և փոյթ եր՝ի քարոզութիւն։ Այլ ներհակքն կարկաւեան և բազմահնարիւք պարաւանդիւք խորամանկութեամբ և զրպարտութեամբ մեքենայիւք ձմլեալ կո ըացուցին զնա ասելով. դուն մի ևս յաւելցիս՝ի շրջել առ ժողովուրդս և քարոզել. այլ տուր մեզ ձեռնագիր վկայութեամբ մահմետականաց՝ թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի թագաւորին. և մահու և սպանման պարտական։ Նա՝ի բազում աւուրս յոքնազանիւ կերպիւ ձնշելոյ ներհակացն զվարդապետն մնաց անձար. զի լինքն միայն եր ընդդիմակայ նոցա առանց օգնականի. Թէպետ՝ի քրիստոնէից բազումք կային բարեկամք և սիրօղք վարդապետին. այլ վա՜յ երկիւղն ներհակացն, ոչոք նչխերը օգնել վարդապետին. վա՜յ որոյ մնաց անձար, ետ նոյ զձեռագիրն այսպէս։ ես պօղոս վարդապետս եհաս ետու զձեռագիրս այսուհետև ոչ շրջել և ոչ քարոզել. և թէ զայսոսիկ առնեմ, լի նիմ ես թշնամի թագաւորին։ Այլ երբ առին ներհակքն զայս ձեռագիրս՝ի պօղոսէն. ուրախ եղեն անչափ եւ խնդութիւն։ և այնուհետև սկսան պօղոս վարդապետն զնաց՝ի մեծ անապատն՝ կայր միակեցութիւն լռեալ՝ի խցի. մշտամատոյց աղօթիւք խօսակցելով ընդ Աստուծոյ անդէն և ոչ եղ արտաքս յանապատէն մինչև ցվախ

Ձան կենաց եւ բոց՝ որ Հանգեաւ՝ի Վ՟ն. և ան
դէն թաղեցաւ: և եղև վախճան սո՟ա. Հազար
և վաթսունևինն ամի Թուականի մերում. որ և
՝ի գերեզմանէ նո՟ր զբաղում գործս պատչելեաց
լսեմք՝ի հիւանդս և՝ի ցաւագարս ո՟ոք յուսով
երթան առ նա. և առնուն զբժշկութիւնս իւրա
քանչիւրոց ցաւոց չնո՟հօքն Վ՟ն Ի.Ս մերոյ:

Վ՟ վարդապետութէն և կՀիվկսութէն տեառն Ա՟օսէսի:
Ընդ ո՟ոմ և յաղագս նո՟ոգութէն լուսաւո՟չի
սրբոյ Ա՟թոռոյն Էջմիածնի:

Ի Գ:

ԿԱՑԻՆ Ա.ՀՐԻՒՏ ՍԻՐԻ.

ամուսնո՟ւ և բարեփառ Հայրս մեր տէր
մ՟օսէս կՀիվկոսս. էր յաշխարհին
սիւնեաց՝ի գաւառէն բաղաց.
ո՟ր այժմ ասի աՀանան. ՝ի գեղջէն, ո՟ր անո՟ւա
նի խո՟տանան: Այլ մինչ էր նա ամաց Հնգե
տասանից աւելի կամ պակաս. եւո՟ւն նմա զա՟
տիՀան քահանայութէն. և օրՀնեցին կո՟ւա
կրօն աբեղայ:

Այլ դէպ եղև պատահիլ նմա տիեզերալոյս
վարդապետին սրապիոնի. և առ նա յարեալ աշա
կերտաւ նմա. բայց վախճանն սրապիոնի փո՟
թով ժամանեաց իմ՟ոյոր՟ում ժամանակի տՀաս
էր տէր մ՟օսէս ո՟ամամբ և տաճկաւ: բայց
սրապիոն վարդապետն մնոք նկատեալ իմանայր
յոգիս իւր՝ զի չնո՟Հ ա՟ծային երևիւր առ տէր
մ՟օսէսն՝ ընդ ո՟ոյոյ ցաւակ ցաբար Հոգաց զնա.
վ՟ն զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտն իւր
զկեսարացի դրիգո՟ր վարդապետն՝ և յանձնարար
նմա զտէր մ՟օսէսն ասելով. յանձն առնեմ զա
քեզ՝ զի փո՟խանակ իմ Հոլո՟ւեալ պահեսցես
զսա՝ և Հասուցեալ յարքունս Հասակի, և
վարդապետական ո՟ամանն. և տացես զգաւազան
և զայս

և զպատիւ վարդապետական. և եղիցի օրհնութիւն
իմ իմոյ քո և դորա:

Այլ եթէ վախճանի սրապիոնին մնաց տէր մո
սէս առ գրիգոր վարդապետն յաշակերտութիւն
նր. և զկնի սուղ ինչ ամաց խնդրեաց տէր մո
սէս զՀրամանն ի գրիգորէ վարդապետէն՝ զի գնաս
ցէ յեհեմ յուխտ և յերկրպագութիւն տնօրինակա
նաց տեղեացն Քրիստոսի: Եւ նա ետ զՀրա
մանն որպէս եղեալ տէր մոսէս գնացեալ էհաս
յեհեմ: և կատարեաց զուխտ ամենից տնօրինակա
նաց Տեառն: Ապա անտի գնաց յաշխարհն ե
գիպտոսի՝ և շրջեալ յամսն վանորայս և յանա
պատս ազգին ղիպտոց. վասն վանորայք և անա
պատք բազմք գոն յորում՝ բնակեալ են բազմա
հոյլք միաբանք՝ կարգօք և սահմանօք կրօնաւո
րականաց՝ որք ունին զկարգաւորութիւն ամենից
նրոց. ժամատեղից և սեղանատեղից. և զգես
տուց, և խցակացութիւն. և կրօնաւորականի
ժուժկալութիւն. և այլ ամենից գործոց. և իմքնին
շրջելով և հարցանելով և տեսանելով տեղեկա
նայր ամենևին սմին այսմիկ ինքն ևր մոսէս թէ պէտ
անհոգ և անփոյթ էր, այլ տնօրինիչ ևր հոգին՝
յածեալ շրջեցուցանէր իմքն այսպիսեաց կրօ
նաւորականաց կարգաց առի ուսուցանել զնա
վն ապագային ժամանակաց. ոյլ և պիտոյս
ցաւ՝ի ժամանակս կարգադրութիւն մեծի անա
պատին: և տէր մոսէս յեգիպտոսէ դարձեալ
եկն յեհեմ: և եղև լուսաբար սրբոյ յարութիւնն:

Յորում ժամանակի դէպ եղև անդ լինել
ասրգիս պարսն տիրոջն և տեառն կիրակոսի.
որոյ վերջարադրեցաք՝ թէ եղեն սկիզբն անապա
տի, և կրօնաւորականաց կարգաց. որք կային
յեհեմ, և շրջելին յաշխարհին յայնմիկ՝ ի վա
նորայն յոմանց՝ և յերզերս յորդանան գետոյ.

և՝ի լեառն փորձութեանն. և որոնեալ խնդրեին զտեղին անապատի անբոյթ և անչփոթ, և ըստ պատշաճին ոչ գտանէին: Զի որպ ասաց տէր մեզ. զայդ պիսի տեղի, զոր խնդրէք՝ յարևելեան յաշխարհին բազումք գոն. և մանաւանդ յերկրին սիւնեաց. որոց ես ականատես իսկ եմ: և յաշխարհին յայնմիկ կարի առաւել պատշաճ էին նստել զանապատ. զի բուն հայաստան է. վանորայք, և գեղորայք. և ժողովուրդք քրիստոնէից բազումք գոն. ուստի ամէնն պիտոյք անապատին լցեալ լինին: Զի և ինքն տէր մեզ յանձնէառ զի յորժամ նոքա ժամանեալ յերկիրն յայն. և ուրեք անդորրացեալ գտեղիցին. ուր և ինքն տէր մեզ թո գալ զամ անդր առ նոսա ժամանեսցէ՝ և ընդ նոսին բնակեսցի միաբանութիւն: արդ այսպէս առաւ յորդորականաւ բանիւ զնա առաքեաց՝ի վերին աշխարհն արևելից. և ինքն ճեաց յերեմ: Զի առ Հրամանաւ գրիգորի եպիսկոպոսին. որ էր առաջնորդ սրբոյ յակոբայ գնաց՝ի նոր իրակութիւն ի վն եղեմի և զբազում արդիւնս ժողովեալ՝ի քրիստոնէից եբեր յերեմ առաջի գրիգորի եպիսկոպոսին:

Զպա եղեալ յերեմայ եկն առ վրդ ատն իւր գրիգոր կեսարացի. որ էր՝ի կոստանդնուպոլիս՝ քանզի թագաւորականաւ հրամանաւ նստեալ էր առաջնորդ քրիստոնէից պատրիարգ անուանմամբ: և կացեալ յաշակերտուն գրիգորի վարդապետին յամս ինչ պարկեշտիւք և սրբակրօնիւք վարուք՝ ոչ պակասեալ և փափկիւ հնդերձիւ ոչ և այլքն էին՝ի ժամանակին. այլ խոշորազգեաց. և պահացող. որ՝ի շաբաթ օր և՝ի կիրակի օր լուծանէր՝ի կերակուրս նուազակատեաց. զատեալ՝ի մսոյ՝ և՝ի գինւոյ. և հանապազ սաղմոսերգ և պատարագամատոյց: Զոր հաճեալ և հաւանեալ

անեալ էր ժողովուրդն կոստանդնուպոլ
օի. եկեղեցականք և աշխարհականք, և երևե
լի արք ոչ շահին չալապին. որ էր այր նշանաւ
որ ի դրան թագաւորին. և այլք ևս յոլովք։
Կաւ վաճառականք արևելեան աշխարհին.
որք պատահեցան ի կոստանդնուպոլիս. և
մանաւանդ ջուղայեցիք և գողթնացիք. զի
տէրն թէ մօսէսն յարևելեան աշխարհէն է.
ամքն մատուցեալ առ գրիգոր վարդապետն խընդ
րէին տալ տեառն մօսէսի զվարդապետու թիւն։

Նոքա գրիգոր վարդապետն. էր այր ահարկու,
և յոյժ խրոխտ, և դժուարահաճոյ՝ բայց տե
սանելով զքաղց ցր և զսրբասէր բարս. և զայր
կէշտ վարս տեառն մովսէսի. նա և զվկայու
թիւն ժողովրդեանն, ոչինչ եղև անլուր այլ ըստ
վկայութեանն ամենեցուն. և ամի ժողովրդեան ետ
նմա զգաւազան վարդապետին մեծաւ հանդի
սիւ։ Իսկ հետևե տէր մովսէս վարդապետն ան
խափան քարոզէր յամ եկեղեցիս զաւետա
րանն Քրիստոսի և պայծառաւոյ քարոզութիւն։

Ուրեմն ամաց ինչ հրամանաւ գրիգորի վար
դապետին առաքեալ եղև մովսէս վարդապետն գը
նալ և ինքնագլուխ քարոզութիւն շրջագայիլ։
և եղեալ ի կոստանդնուպոլսէ եկեալ հասեալ
ի քաղաքն տիգրանակերտ՝ ուր էր տապանն
սրապիոնի վարդապետին. համբուրեալ զնա սը ր
բով տապանաւն. և առեալ ի նմանէ զօրհ
նութիւն։

Եղեալ անտի անցեալ զվաստրուրականաւ
քաղաքաւն եկն ի թաւրէզ. և անտի ի հայրենի
աշխարհն եւր, ի դաւառն սիւնեաց՝ ի վանքն
տաթևու։ յորոյ գալստենէ եղև անպատում
ուրախութիւն ամենայն եկեղեցականաց և աշխար
հականաց։ Եւ զառաջինն սիրով ընկալան զնա

միաբանք վանացն տաճկաւս եպիսկոպոսք և աբեղայք և այլ յետոյ յետս չոգան՝ ինձանէ քանզի ոչ ընկալան զքարոզութիւն նր։ Յաղագս որոյ եկեալ՝ ի տաճկաւս վանացն։ և գնաց՝ ի մեծ անապատն առ սարգիս եպիսկոպոս. և առ տէր կիր բահոն. ըստ նախկնոյ ուխտադրութեն իւրոյ, զոր պայմանեալք էին յերէմ. և անդէն յա նապատին կալաւ իւր դադար բնակութիւն։ և՝ ի ժամանակս ժամանակս եկեալ չրջէր իմէջ քրիստոնէից՝ և քարոզէր զպատուիրանս Աստ, և վերստին դառնայր յանապատն. վճռեալ ոչ ձուկն եկեալ՝ ի ջրոյ մերձ՝ ի մեռանիլ և ան դրկն՝ ի ջուր անկեալ կենդանանայ. այնպէս և մա յեղանէլն յանապատէն, և մոռանէլն յա նապատն։

Նոյնակ զքարոզութիւն մօսէսի վրդովին ամքն ժողովուրդք խնդութիւք ընդունէին, և յօժա րութիւք կատարէին. և ուրախութիւք փառաւոր էին զՅ զտոհիչն այնպիսեաց չնորհաց մարդ կան. բայց եպիսկոպոսք գաւառաց, և աբեղայք վա նորէից ոչ հաճէին՝ ի քարոզութիւն մօսէսի. վն զի մօսէս վարդապետ ոչ ինքն մերկէր առնից աշխարհականաց նիւթոց. և պահօք, և սրբ բութիւք, և կրօնաւորականօք վարուք կեայր ըստ հրամանաց գրոց՝ այնոյ և քարոզէր լինել առնից վանականաց. և նոքք անգոսնեալ զբանս նր՝ ոչ ընկալան։ վն զի առքն վանորայք ազգիս Հայոց՝ նուրբաբանչիւր սեռագրուխ ունէր իւր գինչս առանձին զայգի և զբուրաստան, զփէ թակ և զտուն և, զմնարան, և զհամբարանոցս և զմնուս ստացուածոց։ նաև զմուս հասս բահոց վանիցն մասունս արարեալ յինքեանս չաժանէին, և զայն առ ինքեանց, և ազգայ նոյ՝ և նուրեանց հաճելեաց արանց ծախէին՝ ի

պէտս

պէտս կարեւոց։ Այս զնոսիւրեալ տեղիան Հ. Յ. որք բնակարանք են նշխարաց սրբոց։ և աքանչէ լագործք. և զնորհակրից նշանաց Հ. Յ. լցեալ են զայնոսիկ կանամբք և տանուհիկնօք. և իւ բեանց ազգայնօք։

Այս բնաւ ոչ գիտեն թէ պարտէ կարգաւ որն զվերայ և զվիճակն ունել զիւրեաւ կամ հան դերձս խոշորս, և ասուիս զգենուլ. այլ ոմն զաշխարհական, և զմարմնաւոր իշխանս փափ կիւ և ազնիւ զգեստու պճնեին։ չաշխուր, և կապայ, և պատուական փակեղ'ի գլուխս. և քալափուշ զիւրեւ առեալ։ Հ. յիւ ոչ վարկա նէին թէ պարտէ վանականաց պահօք և ծոմա ջանիւք երկօք կենցաղավարել. այլ'ե բոլոր տա բին ուտիք և գինի և միս անխտիր։

Այոյնպա և գեղականք երիցունք՝ անուանեալ միայն քահանայք. այլ ոմանք առեալ զիշխա նուԹի մեղիքուԹե. և ոմանք տանուտիրու Թե՝ և ոմանք պուռնիկք և երկկանայք՝ ոմանք յարեցեալք իշխանաց այլազգեաց արբանեակք չարեաց գործոց նոք՝ և մասնիչք քրիստոնէ ից՝ ոմանք'ի մարմնաւոր արուեստս և'ի հոգա գործուԹիս պատաղեալք երբեմն զաշխարհա կանս. և բնաւին Թողեալ զժամ և զպատա րագ։ Այ կանխեն'ի ժամ՝ աղօԹից յիւրեղե ցին. և ոչ լիներ լսելի ձայն ժամակոչի'ի գե ղորայս՝ և բնաւին բարձեալ'ի նոցունց զնորհ քահանայուԹե, բայց տակաւին զինքեանս քահանայս անուանեին, և գործէին զգործ քահանայուԹե, ոչ իբր զքահանայ, այլ իբր զմարմնաւոր արուեստաւոր վիճ մարմնաւորն վարձու իւրոյ։

Այս ոչ միայն գեղական երիցունք և աբեղ այք իշ ասացեալսն անուղղիւք կարգօք լեալք Թա

թափառականք, այլև կթիղկեն՝ զի ոչ թէ միեր, այլ երեք և չորք կթիղկաք, վն զի յաղագս փառասիրութեն, և ագահութեե երբև զմաքսաւորս զաբաչայիս և հարկիս՝ ի պարսից թագաւորէն առնուին զիշխանութեն կթիղկսութե՝ և զսբաժոն չմիածնին, և՝ ի շրջագայութե իւ բեանց համչ ժողով լդեանն, թագաւրական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանեն ընդ ինքեանս և զիրաւունս և զհաս որք՝ ի ժողով լդենէն Հնդիւ և բռնութե ուժգին առնուին ոչ զորդիսն հեղեայ։ և կթիղկաքն ոչ ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալ զաստիճան կթիղկսութե, սոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոսունքն և քահանայքն, տգէտք, խոտանք, և անպիտանք, ըստ սաղմոսին, որք են լեալ պաշտօնեայք որովայնի հանապազ՝ ի գինեըըեալս դեգերեալք գուսանօք իբր զմարմնաւոր եշխանս, յառաւօտ մինչև ցերեկոյ հետևեալ կատակաց և լկտեաց բանից՝ և դատարկութե։

Այս սոցին ամենն առ ի թ, ոչ այլինչ եթէ ոչ հեռացումն՝ ի սբոց գրոց և յերկիւղէն Աստ, ոչ բնաւ ընթեռնուին զգիրս՝ այլ են փակեալ և լուեալ մատեանք Ծայինք, վնզի եր խափանեալ ընթերցումն սբոց գրոց, որք են արհամարհեալք յայսմ, հողով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք, վնզի ոչ զգիրս գիտեն և ոչ զզօրութիս գրոց ըստ կն բանի։

Արդ եթէ եկեղեցականք այսպէս, զինչ ևս ասացից զաշխարհականաց՝ որք ոչ բնաւ գիտեն թէ պարտ քրիստոնէի խոստովանիլ և հաղորդիլ։ կամ յամ աւուր՝ ի տեղի աղօթից կանխել։ նա և զպահս ձիթով և գինեաւ ապականեն։ ոմանք կնահանք, և ոմանք երկա

երկանայք, և չհասիք և մեղք ազգաշա
ղախիւ պղծութիք։

Ուակ եկեղեցիք և վանորայք, ամքն անշուք
և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զար
դուց և ի սպասուց, մինչ զի և սքր սեղանն և
ամենևին մերկ և բաց։ քազմաժամանակեայ
փակեալ դրամիք, խաւար և անլոյս, լռեալք
ի պաշտամանց և ի պատարագաց։ աւերեալ
և խախտեալք շինուճաքք նշ տանիք և որմունք
եբրև զանտէր և այրի զրկեալ ի փեսայէն և
օտարացեալ յորդւոց նատեալ թաղծելով
ոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ։

Ըդ՝ քազմապատկիւ յորվուրթիք քան զորս
չարագործեցաք աղաւաղեալ եղծեալիք քարե
կարգութի՝ ի վերին աշխարհիս Հայոց, և փո
խանակ նորա արձանացեալ և արմատացեալ ան
կարգութի։ Որոյ վա վշտանային և ցաւելին
հոգւով ջաւի ընդ ազիտաբար մոլորութիս
յայտնիկ երկոքին սքք վարդապքն Ով սկսա
այս և Ոյողոն զոր յանցեալում Ճառիդ ծանու
ցաք զորպէսն։ Ոյս պօղոս վարդապն փոքրմի
ժամանակաւ վաղագոյն եկեալիր քան զմով
սէս ի վերին աշխարհս, և ի սակս մեկնակու
թե նորոյ՝ հակառակորդքն հարատահարեին
զնա, նակ ի գալն մովսէսի վարդապնին,
երե
ցայ զօրավիգն եղեալ հատարձակ քարոզել ին
ընդ ամն գաւառս։ Ոյս սոքա երկոքին վրդ
պքքս, և սարգիս պարոնատէրն, և տէր կիրա
կոս, այլովք յիշատակեալ արամբքն, զոր ի
Ճառին մեծ ի անապատին յիշեցաք, նախ զամն
ղկարգս և զսահմանս անապատի և կրօնաւորու
թե սահմանեցին, զորս ի գրոց ընթերցմանէ
գտին, և զորս մովսէս վարդապն յանապատս
ղիթոցն տեսեալէր և ուսեալ և ապա նոքա
ամքն

ամբն յանապատին կալով աղօթիւն վն փրկու
թե աշխարհի, և նովին աղօթիւ նպաստ լինիւն
վարդապետին՝ խնդրելով՝ ի սէր Հոգւոյն օժան
դակել նմ՝ ի քարոզութե բանին կենաց։ Իսկ
երկրորդին վարդապետն մովսէս և պօղոս եղեն
երեքաց ընկերք երբեմն զոր առաքեալն պե
տրոս և պօղոս, լեալք ամենք հաւատով՝ շրջե
ցան յամենեսեան գաւառս արևելեայ աշխար
հիս. քարոզիւն ամենեցուն զՀշմարտութե, շի
նիւն զեկեղեցիս, կարգիւն զքահանայս, հաս
տատիւն դպրոց, ուսուցանիւն զմանկունս։
Վնզի առաքելաբար շրջիւն հետիոտս գնա
լով. ոչինչ առնուիւն յումեքէ, այլ միայն զկե
րակուրս. և զբոլոր շաբաթն պահիւն, միայն
՝ի շաբաթ օր և՝ ի կիրակի օր լուծանիւն նաև
կատեաց կերակրովք՝ ի բոլոր տարին, և՝ ի գի
նոյ և՝ ի մոյ մեկնեալք ամենևին։

Իսկ քրիստոնեայք վերին աշխարհիս տեսա
նելով զՀշմարիտ քարոզութե նմ, զի վկայիւն
բանից և քարոզութե նոցա գործք նմ, ամբն
դարձան՝ ի Թիւրից Հանապարհաց իւրեանց՝ և
Հնազանդեցան կարգաց և սահմանադրութե
նմ, եղիանք, եպիսկոսունք, և երիցունք, և արք
նշնաւորք ռահվիրք ամենեքեան՝ Հայց յոլովք արք
անուանիւք եկեղեցականք և աշխարհականք,
ոչ միայն ոչ ընկալան զքարոզութե նոցա, այլև
ներհականային ևս, և կեղծաւորս և խաբեբայս
անուանիւն։ և զահմանեալ կարգս նմ խան
գարեիւն ինքեանք և արքունեակք իւրեանց,
ուր և հասանիւն, ուր և կարեիւն։

Այլ զայս գործ հակառակութե առնիւն
արք թիւրք և օրինազանցք, որք ոչ հաճիւն
ընդ Հանապարհս Հշմարտութե, լինիւն չարա
համբաւք և ամբաստանք վարդապետին, մինչև
ի հաս

եհաս լուր ամբաստանութեանն նոյ առ այլազգի իշխանս աշխարհացն ի Խանս և ի սուլթանս, և մանաւանդ առ կիւրիկոն մեղքիսեթ, որ թագրա կանաչ բռնութեամբ վարէր զիշխանութիւն կիւրիկոսութեան։ և զի ինքն կիւրիկոն ևս ոչ էր ի Հանապարհս ուղղութեան, յայն սակս տեղի տայր ամբաստանութեանն այնպիսեացն՝ և զինուբ առեալ ի նոցանէն նեղէր զվարդապետն։ Զոր ումանգամ պատահեալ կիւրիկոնն ասաւ և անդ զսահմանեալ կարգս նոյ խափանէր։ և զի ի նոցանէ յառաջ կոչեալ զարմն յետոյ ընկրկեր, և նոցին զպատգամն զպատառնականս խրոխտիւ բանիւ առաքէր։

Եւ պատահեցան վարդապետքն կիւրիկեին զնոյն զպատառնական և զեպերական բանս լուծան ի Համանէ, զի թագաւորականաւ իշխանութեամբ խրոխտապէս իվ ի վարդապետէն։ և այնքան վտանգեցին զվարդապետն, մինչև առին զձեռնագիրն ի պօղոսէ վարդապետէ ոչ ևս շրջիլ իմիջ քրիստոնէից և քարոզել ոչ և յառաջդ պատմեցաք ի նորին Ճառին։

Եբև այն ինչ եղև՝ զի զպօղոս վարդապետն հանին ի կողմն ինչ և միայն գտեալ զմովսէս վարդապետն՝ սկսան սաստկիւք մրցանօք մաքառիլ ընդ նմա, և այնքան ի նեղարկին զնա ևս՝ մինչդոր ինքն մովսէս վարդապետն զիւր փիլոնն և զգաւազանն և զխաչիչէն առաքեաց առ մեղքիսեթ կիւրիկոն ասելով. որովհետև ոչ կամիս զքարոզութիւնն մեր, ահաւադիկ առ ի քեզ զիշխան նուիրեցաք մեր, և մեք լուեալ դադարիմք ի քարոզելոյ, և ընդ այդ թէ եցեն մեղք ինչ՝ դուս տացես զպատասխանի։ Այլ սակ բարեաց կամեցօղն Ք, որ զամ տնօրինէ, ոչ արար հաճելի զարարս մովսէսի խորհրդակցացն միքիսեթ թէ, վը որոյ հաւանեցուցին զմեղքիսեթ ոչ առնուլ

առնուլ զիշխանութիւնն մովսէսի, այլ զգաստա-
զանն իւր առ ինքն դարձուցանել և տալ զՀրա-
ման քարոզութիւնն։ և մեղքիսէթն արար այնպէս։
Թէպէտ եւս զՀրաման քարոզութիւնն մեղքիս-
սէթն մովսէսի։ այլ՝ ի նենգելոյ ոչ դադա-
րեաց, զի հանապազ հարատահարէր դատա-
փետեալ պարտաւորս առնէր, և զրպարտէր,
ինքն և համախոհքն իւր անխնայաբար զնո-
ղութիւնս իվր՝ նոր ածելով։

Ընդ որոց արարս տաղտկացեալ և ոգւով
չափ դառնացեալ վարդապետին մովսէսի, ձայն
Հրացեալ և ի բերդ զսրտիս վհատեալ և լքեալ,
մտածելով զբանն Ցն, Թէ հալածեացեն զձեզ՝ ի քաղաքիս յայսմիկ փախչիջիք՝ ի միւսն,
խորհեցաւ հեռանալ յարևելեան աշխարհէն՝
և գնալ յարևմտեան աշխարհն, և անդ եղե-
լոց քրիստոնէից քարոզել։ Ցյսու դիտաւո-
րութիւնն եղեալ և եկեալ՝ ի քաղաքն երևան՝ զի
անցեալ ընդ այն գնասցէ՝ ի Թէոդուպօլիս,
որ է արզրում քաղաք։

Որում ժամանակի տէր և իշխան էր երև-
ան քաղաքի և արարատեան աշխարհի մեծ և
հզօր իշխանն ամիրգունայ խանն, որում դեպ
եղեւ պատահմամբ ինչ տեսանել զվարդապետն
մեսէս, որոյ վէն հարցումն արարեալ խանն իւրոց
առաջնակայից քրիստոնէից, որոց պատասխա
նեալ զուստին և զորպէան։ և եղև զի այլ
ևս պատահեցաւ խանն վարդապետին, և որքան
տեսանէր և խօսէր ախորժ թուէր վարդապետն
առաջն խանին, զի ինամքն Ցհնորհալւոյ ցու-
ցանէր զնա առաջն իւր առաջի բռնաւորին, որ
և ոչ եթող խանն զմովսէս գնալ յաշխարհն
արևմտից, այլ անդէն արգել յերևան քաղաքի
և օր աւուր գայր խանն, և տեսանէր զպատա-

 բագն,

ըագն, և զայլ արարողութենս ժամակարգու
թենն, և խօսէր ընդ նմա երբեմն՝ ի պատճառս
իմաստութե, և երբեմն՝ ի պատճառս հաւա
տոյ, և լսէր զպատասխանիսն վարդապետին,
ախորժ և համեղ և լի հնորհօքն Ս՝ և ասէր
պարկեշտից վարուց նր սիրեաց զնա խանն, վա
րոյ պահեաց զնա յերևանս քաղաքի՝ ի կաթո
ղիկէ եկեղեցւոջն կացուցեալ զնա ջամն երիս։

Այր՝ ի վաղեմեաց ժամանակաց վայելուչ
մատուռ մի, չինեալ իվ ի դամբարանի սքղ առա
քելոյն անանիայի, որ էր՝ ի հիւսիսայնոյ կողմա
նէ քաղաքին երևանու իմիջ այգեստանացն, և
էր աւերակ և անմարդաբնակ։ որոյ վն ասաց
խանն առ վարդապան, տեսանես զայս եկեղե
ցիս, որ ամայի կայ, արդ լուր ինձ, և մի գնար
յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութե,
և դադարեա առաքէն՝ զի երբեցց մերձակայու
թէ և տեսութէ մխիթարիցուք։ այլև ամբեն
ժողովուրդք քաղաքականք և վաճառականք
աղաչելով զնոյն խնդրեն՝ ի վարդապետէն։ Որոց
զբանս հաճեալ սրբոյ վարդապետն զձեռն՝ ի
գործ էարկ շինել զտեղին արդեամբք և ձեռն
տուութէ քրիստոնէից տեղականաց և վաճա
ռականաց։ որք յօժարութէ տային զտուրս ողոր
մութե՝ ի շինուածն տեղւոյն, վն սիրոյ վրդպետին,
զի բնակեացի իմիջ իւրեանց։ վն որոյ փութա
նակի շինեցին շուրջանակի զպարիսպ և զխուցս
և զժամատունն, և զսարաւութէ, և զայլ տունս
յոլով։ և կատարեալ զամն շինուածն, բնա
կեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն,
կարգաւն և սահմանաւն այնու, զոր կարգեցին
՝ի մեծ անապատն։ Ուր ժողովեցան միաբանք
բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք
իմաստունք և սրբակեացք, կային՝ ի միասին

մեծք և փոքրերք սիրով հանդարտեալք ՚ի խոյի. հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սրբոց գրոց.

Որոյ ուղղի վարդապետութեն և բարւոյ քաղաքավարութեն համբաւս հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի. ՚ի Հռոմաստան, ՚ի քրդաստան, ՚ի վրաստան, ՚ի պարսկաստան, զի ամենից աշխարհս հայ վաճառականք գային անդր և տեսանէին և զհամբաւն տանէին. Ո այս ամ յաջողութեն զառաքադիմութեն Մովսէսի վարդապետին տեսանելով մեքքիսէթ կաթողիկոսին՝ զջարեբ և հեղձամղձուկ լինէր ՚ի սրտի. բայց ոչ կարէր զջար ինչ առնել մովսէսի վասն երկեւղի խանին. զի նա յոյժ սիրեր զվարդապետն.

Եւ եղև զի մեքքիսէթ կաթողիկոսն խորհրդակցովքն արար զայսպիսի խորհուրդ. ոչ վասն փառացն Ա՛յ և ոչ վասն օգտի մովսէսի վարդապետին. այլ վասն շահու և օգտի իւրեանց. զի մամոնայ՝ և արծաթ բազում գումարեսցի ին քեանց. Ահա մանեցին թէ՝ ՚ի սէր աթոռոյն Ա՛յ ջնջեա ծ զմեռանօրհնէքն առնեմք, և այն ձեռամբ մովսէսի վարդապետին. ոչ զի ՚ի նորին համբաւ ՚ի բազմաց աշխարհաց ժողովեցեալ գումարեսցին. յորոց լինի մեզ շահ յոլովից մամոնայից արծաթոյ. Որոյ ոմանք յերկիւղացն մեքքիսէթ կաթողիկոսին. եկին առ մովսէս վարդապետն. և մեծարեցին զնա բանիւ մեքքիսէթ կաթողիկոսին գալ յաջիածին. և առնել զմեռանօրհնէքն. Եւ յայնմ ժամանակի տակաւին ոչ ունէր զաս տիճան եպիսկոսութեն մովսէս վարդապետն՝ վասն որոյ հրաժարէր ասելով. ես ոչ ունիմ զաստիճան եպիսկոսութեն՝ ոչ է այդ իմ գործ. այլ այնոցին՝ որք եպիսկոպոս են: Որոյ պատճառէ ասաց մեքքիսէթ կաթողիկոսն. եթէ զեպիսկոսութեն

թեին պատճառէ։ Եւ օրհնեմ զինքն եպիսկոպոս։ Եւ միւս պատճառս յոդիսեայ այլ եկեալ օրհնեն զի զմեռոնն։ Նոյնպէս մեսէս հրաժարեր յեպիսկոպոսական աստիճանէ զանձն անարժան ասելով։ բայց նորին աշակերտքն, և ամբն քահանայք և ժողովուրդք թախանձէին յանձնառնուլ զաստիճան եպիսկոպոսութեան։ վասնորոյ յանձն եառ վարդապետն մեսէս լինիլ եպիսկոպոս։

Ապա մեկնէին կաթուղիկոսն եկեալ՝ ի դամբարանս սրբոյ առաքելոյն անանիայի՝ ուր էր գնացեալ մեսէս վարդապետն՝ զոր անուանէին անապատ։ Եւ անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւագ երկուշաբաթի աւուրն։ Եւ ապա եկին յԱմիածին կաթուղիկոսն և վրդապետն, և ամբն և կղերգականք, և աշխարհականք։ Եւ յաւագ հինգշաբաթի աւուրն օրհնեցին զմեռոնսյետ օրհնութեան մեռոնին վազվազակի արձակեցին զժողովն՝ զի՝ ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողովուրդք։ որոց առեալ զօրհնութիւն սրբոյ մեռոնին և զ՝ Ամիածնի գնացին՝ ի տեղիս իւրեանց։

Իսկ վաճառականացն ջուղեցւոց հասեալք յասպահան քաղաք առ հոմացեղս իւրեանց՝ աշխատեցան պատմել զբարեվայելուչ զարարողութիւնս զոր տեսեալ էին՝ ի մեսէսէ վրդապետէն։ Իսկ ջուղեցիք եկեղեցականք և աշխարհականք լսելով զայն, տենչային՝ ի սէր վարդապետին, և խանդակաթիւս սրտիւս փափագեին՝ ի տեսութիւն նորին։ որ և պատրաստեցին զարմանալուս քահանայս և աշխարհականս, և առաքեցին հրաւիրակ մեսէս վարդապետին գալ յասպահան իմիջ իւրեանց։ Եւ գլուխն ջուղեցւոց ողորմութեամբն Քրիստոսի արժանին խոջայնա զարն գրեաց իմ՝ որդւոյ իւրոյ խոջայ սարգիսի՝ որ յաւուրսն յայնոսիկ էր յաշխարհն ասո-

պատահական, մեծարել զվարդապետն մօսէս յատ պահան, որոց եկեալ և առեալ զմօսէս տարան յատպահան։ Եւ նա անդէն ըստ քննականի վարդապետութեն, և աւետարանականի քարոզու թենն սփոփեալ արգահատեր զնա, և հաստա տէր ՚ի հաւատս քննական, ոչ միայն զբնա կեալն՝ի քաղաքին, այլև զամեն չրջակայս գաւա ռին։ և կացեալ անդէն ժամանակս մի ծիւք փառօք փառաւորեալ՚ի նոցունց, և ապա անտի դարձաւ յերևան քաղաք՚ի տեղի իւր։

Մինչ կայր մօսէս վրդովն անհոգ պարզիւ մտուքբ յերևան քաղաքի յիւրում տան, նիւ թեաց նմա զնենգութի մեղքիսեթ կճղկին այսպիսեաւ օրինակաւ՝ զի երևեցոյց զթուղթ մի ոմն զթամասուկ, յորում գրեալէր։ Եսմօ սէս վարդապետս տալոյ եմ մեղքիսեթ կճղկիսին զՏարիւր թումանն՝ գնամ յատպահան և անտի եկեալ տամ զայս թուղթս տարան ՚ի դիւան ամիր գունայ խանին, և ձգիւ պահանջէին զՏարիւր թումանն։ Խակ մօսէս վարդապետ, ոչ և էր անպարտ զնոյն պատասխանէր թէ ան պարտ եմ ՚ի դմանէ, վասզի ոչ է եմ տուեալ զգիրդ զայդ՝ այլ դաւով և հնարիւք նմա գոր ծեալեն զգիրդ և թէպէտ պատասխանի առ նէր մօսէս վարդապետ բանիւք բազմօք, սա կայն ոչ լինէր փրկութի, զի կողմն զրպարտո ղացն Հարատասնք էին և փորձք ՚ի չարիս։ Խակ խանն իւրովք իշխանօքն և ամբն քրիստո նեայքն վերահասու եղեն զի թուղթն այն հնար նմա է և մօսէս անպարտ է, վասզոր ամբն ջանային փրկել զմօսէս՝ և ոչ կարէին, զի երկարեցաւ գործոյս այսորիկ դատաս տանն յերկուս ամիս։ այլ ազատարարն Ի՛ փրկեաց զնա այսպիսեաւ կերպիւ։

Եղբի

Աելքիսեթ կաթուղիկոսն և իւր եղբօրորդի սահակ կաթուղիկոն՝ ունէին զոհս նախանձու ընդ համազասպ եպիսկոպին՝ որ էր հաւուց թառայ վանացն և երևան քաղաքին առաջնորդ, և էր սա այր խրոխտ և ճարտարաբան որ մեծաբան նուիրէր պակուցանէր զկողմն մելքիսեթեան, և թեւածէր իվր ինչ. որև մելքիսեթեանք վն այ սորին քինու արկին զընդան իվր համազասպ եպիսկոպին։ Ա։ եղև ի յաւուր միում մինչ կայ ին՝ի հանդիսի դատաստանին, սահակ կաթուղիկոն էկաց առաջի իանին իմիջ առեներին, և ասաց՝ի լուր հանդիսին, թուղթդ այդ ընաւին սուտ է՝ զի ոչ իմ հօրեղբայր մելքիսեթ կաթուղիկոն գիտէ՝ և ոչ ես. այլ ես գիտեմ զի համազասպ եպիսկոպն արարեալ զայդ նենգութիւդ։ Ի՝այն ժամ իանն և ամբն, որք կային անդ, ՚ի ձայն ցնծութեամբ օրհնեցին զԱ՚ծ, որ ազատեաց զան պարան ՚ի ձեռաց զրպարտողացն, և՚ի նմին հանդիսի պատառեցին զթուղթն զայն։ և գնացին մելքիսեթեանքն կորագլուխ և ամօթոյ՚ի տեղիս իւրեանց։

Ի՝ետայսօրիկ անցին սակաւք ժամանակք իվր՝ եկեալ ե՚հաս հրովարտակ՚ի մեծ շահա բաս արքայէն առ ամիրգունայ իանն վն մօսէսի վարդապետին, յորում գրեալն էր թէ ծանիր ամիրգունայիան՝զմօսէս անուանեալ վարդապետն՝ որ բնակի՚ի քում քաղաքի առ քեւ. փութանայ կի առաքեացես զնա առ իս. և ուր և իցեմ ես եկեալ գտցէ զնա։

Ա։ պատճառ այսոցիկ խնդրանացս սպիտակացուցեալ մնացեալ էր. վնգի մօսէս վարդապետն՚ի ժամանակին յորում էր՚ի քաղաքին ե՚ՀմՀ անդուսաւ զարմանեսան մամ սպիտակացուցանէր զոյ. և արդ՝ինքն չտնի ամի սպիտակացուցանէր զե

զպատակ մոմ վառէր յեկեղեցւոջն ի պատա
րագն, և յայնմ ժամակարգութեան: զի զծնօ
տէրունականս և զնշանաւոր սրբոց մեծաւ հան
դիսիւ կատարէր սպիտակօք և պայծառեալք
մաղթինօք՝ և մեծաւ ցնծութիւբ. ոչ գրեալ է
ի պատմութիւնս [redacted] յօհաննու օձնեցւոյ:

Վարձեալ ոչ սովորութիւն է թագաւորաց և զաղջկունս ժողովէին յամենից աշխարհաց. այսու սովորութիւբ և այս շահաբաս թագաւորինս խարարաց իւրոց զոմն որոյ անունն էր բայինդուրբէկ. ընդ որում և այլևս նեղբինիս առաքեաց յաշխարհն ատրպատականի ժողովել զտղայս և զաղջկունս վն թագրին. և նոքք գալով եկեալ հասին ի քաղաքն յերևան: Ւ յաւուր միում ի զբօսանս եղեալ չորքեհին բայինդուրբէկին և ամիրգունայ խանին խիասին. և զբօսն լուծ եկին յանապատն ուր բնակէր մօսէս վարդապետն. և անդէն բերեալ մօսէսի վարդապետին յայնմանէ սպիտակէ մոմէն աղերսեաց զեօթն մոմ բայինդուրբէկին. և զեօթն մոմ ամիրգունայ խանին: և բայինդուրբէկին տեսեալ առաւել պայծառ՝ չքնաղ և հրաշալի զսպիտակութիւն մոմին. յայժ սքանչացաւ, և հաճեալ հաւանեցաւ. և ասաց, պահեմ զսա և տարեալ զաղերս մաղուցանեմ շահին: Ւբրև զայն լուաւ ամիրգունայ խանն ասաց՝ որովհետև այդպէս ասացեր՝ և զնմա բաժին եդից ընդ քումդ՝ զի ընդ դմին աղերսեալ լինցի առաջի թագաւորին: Ւսկ մովսէս վարդապետն իբրև եառ զբանս և զգործս իշխանացն. ասաց որովհետև այդպէս արարեք՝ զեօթնեւս մոմ բերեալ յաւելուածք իմոք դուցա և այնպէս մատուսցես առաջի թագաւորին: Ւսկ՝ ի զրաւ գործոյ իւրոց բայինդուրբէկին գնաց առ թագաւրն՝ և ընդ բազմաց և զանազա

նաղանից աղերսեցին, մատոյց և զպիտակ մումն առաջի Թագաւորին, որոց ՚ի տեսանել Թագաւորն առեալ զմումն՝ ՚ի ձեռն իւր տեսանէր և զննէր, և հարցանէր թէ ուստի էցէ, և բայենդուր բէկն ասաց զուստին։ արդ վասն այսորիկ Թագաւորն գրեաց զՀրովարտակ իվ ՚ի ամիրգունայ խանին զի առաքեսցէ զմովսէս վարդապան առ ինքն։ զոր և առանց երկբայապաղելոյ առաքեաց ամիրգունայ խանին զմովսէս վարդապան առ շահն։

Ի ամսորոյ երեսուն վարդապետին մովսէսի յերև անայ գնացն ՚ի քաղաքն բաղդատ զի անդ էր շահաբաս Թագաւորն, զի կամէր զքաղաքն բաղդատ յետ առնուլ յ( )ամանցուց, զորմէ ետ առ յետ սակաւուց աւուրց։ և մինչ տակաւին ոչէր առեալ զբաղդատ այլ շուրջ նստեալ պատէ բաղմէր, անդ մովսէս վարդապան յանդիման եղև Թագաւորին, յորում ժամանակի էր Թուճա կանն մեր, հազարևեօթանասունևհինգ, և Թագաւորն հարցուաւ զարարեալ վասն սպիտակու Թէ մումին, իսկ վարդապան առաջի կացեալ ըստ պատշաճին տայր զպատասխանին։

Ապա գրեաց շահն զՀրովարտակ և ետ ցմեսէս վարդապան՝ և առաքեաց յասպահան քաղաք առ լալաբէկ իշխանն, որ ՚ի Թագաւորէն քաղաքապետ կարգեալ էր ասպահանու, զի տացէ զՀարիւր լիտր մում և զերիս ծառայս ՚ի ծառայից Թագաւորին մովսէսի վարդապետին, և զամն ծախսնէ հոգացէ։ և այգեստանեացն որոց և հաւանեցան մովսէս վարդապետն անպատճառ տացեն նմա, զի անդ սպիտակացուսցէ զմումն։ և ուսուցեալ զծառայսն տարցէ առաջի Թագաւորին ուրև էցէ նա։ Ընդեալ վարդապետին մովսէսի զբաղդատն Հրովարտակն և եկն ՚ի քաղաքն ասպահան, եցոյց լալաբէկին, և նա կապ

տարեաց զնմանն հրամանս թագաւորին, տուեալ ի մօսէս զմովսէս և ծառայս երիս. և զայգին զոր թէ լիմ խանի այգի ասեն: և մօսէս յամիս ուրեն աշխատեցաւ անդ. սպիտակացոյց զմովսէս և ուսոյց զծառայսն, և ապա առեալ զսպիտակս ցուցեալ մովսէս և զծառայսն գնաց ի քաղաքն Ֆահրապատ: քանզի անդ էր շահն: ել զբաղ դատ քաղաքն առեալէր և դարձաւարարեալ գը նացեալէր ի Ֆահրապատ առնւ ձմերել անդ, վասնոյ անդ գնաց մօսէս:

Ի նմին աւուրսն անդ էր մեծ և փառաւոր իշ խանն Ջուղայեցի խոջայ նազարն՝ որ յոյժ բարե կամ էր մօսէսի. և յարդոյ առաջի շահաբաս թագաւորին: Որոյ ձեռամբն մօսէս վարդապետն մատոյց զսպիտակ մովսէս, և զուսուցեալ ծա ռայսն առաջի թագաւորին, որոց ի տեսանելն յոյժ զուարճացաւ սրտիւ՝ և ի ձեռս առեալ զբօսնոյր ի նոսա, և բազմաւ յուսադրականաւ բանիւ սրձակեաց առ ժամուն զվարդապետն:

Աւուրսն յայնոսիկ եկեալ էհաս տօն Ծննդեան և յայտնութեն Քրիստոսի, և ոչ սովորութիւն էր մօսէսի հանապազ մեծաւ հանդիսիւ կատարել զերբուսնական տօնսն, և ևս առաւել զտօնս զայս բազմաւ պատրաստու թիւ և յարմարագունիւ կարգաւորութիւ, քան զի ինքն թագաւորն ևս հանդերձեալէր ի տեսու թիւն և ի զբօսանս տօնին գալ, որ և եկն: և վարդապետն մօսէս թաւիշեայ զերկու սպիտակ մովսէս մորդաչափ և ի հրաշալուցն գիշերն ելուսա նալ տօնին լուցեալ յերեկորեայ յանուն սրբոյ Ա. Ծածկին և ինքն յոտին կացեալ հակելով ցա ռաւօտն ջերմադունիւ սիրով և հաստատունով հաւատով, յորդաբղխիւք արտասուօք աղո թելով առ տէր, զարեխոս արկեալ առ միածին

Որդին

Ողջին զտերամայր սբ. Ա՛ծ ածինն զի շնորհալի
ցուցցէ զաօնահմբուԹինն այլահաւասոյ Թգ-
բին, և արկցէ զգուԹ և զողորմ՛ի սիրտսն իվ՛ի
քրիստոնէի ազգին։ Ողբ ողորմուԹբն Ա՛.Յ
եղև ըս խնդրոյ վարդապետին, զի յաւուր ոօնին
մինչ նատէր արքայ՛ի զբօսանս ոօնին՝ և վրդո-
վեան զգեաոաւորեալ ԻւրովՔ պաշտօնէիքն
կատարէր զկարգն ջրօրհնեայ։ յոյժ հաձեալ
և հաւանեալ էր արքայ ըս ոօնախմբուԹինն.
և գԹացեալ իվ՛ի մօսէսի՝ որև հարցումն ևս
արարեալէր ԹգԻրն յաղագս վարդավետին ընդ-
խօջայ նազարին, և նա զբանս բարիս և յոյժվս
խօսեցեալ էր վ՛ն մօսէսի առաջի ԹգԻրին։

Ասէ զկնի աւուրց ասաց արքայ ընդ խօջայ
նազարին. զինչ խնդիրք ունի վարդավետն ձեր
զի կատարեացուք. զգանձ ԹԷ զդաստակերտ,
ԹԷ զայլինչ, զորինքն կամի. պատասխանեալէր
խօջայ նազարն ԹԷ սա այնպիսի այր է, որ զաշ
խարհաւ և զընչիւք նորին զանցարարեալ է՝ և
բնաւ միգ՛ի դոցանէ ոչ է կարիք սորա։ այլ
ԹԷ զշնորհս առնես տալ ամս զպարգևս. զըս-
սարարուԹինն Ա՛.ջմիածնի տուր. զի անդ սպա
սաւորելով եկեղեցւոյն այնմիկ տաղԹեսցէ վ՛ն
կենաց ԹգԻրին։ Ողբ խնդիրք յոյժ հաձեալ
և հաւանեալ էր արքայ. և տուեալէր մօսէ
սի զըսսարարուԹինն սրբոյ Ա՛.ջմիածնի ԹգԻրո
ընականաւ նոմոսիւ։

Ա՛ցա մօսէս վարդապետն եկեալ՛ի ֆահրաստա
պատու մեծիւք վաոօք և անպատմաւ ցնծու-
ԹԷ. ոչ միայն իւր՝ այլև ամենից քրիստոնէից.
եկեալ էհաս յերևան քաղաք, որ և՛ի սբ Ա՛.ջ
միածինն. և առանց յապաղելոյ զձեռն՛ի գործ
էարկ նորոգուԹԷ սրբոյ աԹոռոյն. ՛ի ԹուՀա
կանիս մերում. հաղար և եօԹանասունևվեց.

՚ի վարդավառի պահոց երկու շաբաթ աւուրն որ է յունիսի ամսոյ քսան և չորսն զսկիզբն արար բին շինուածք և նորոգուածք։

Լուդ լսելով զնորոգուածն ոչ գիտեաս թէ ոմն էր աւերուածին։ վա՛ որոյ հարկիմ գրել զաւերուածին։ զի ծանիցեն զթշնամառուածն սրբոյ աթոռոյն։ որով և զցաւիլն և զկսկծալն զոր ունէին ամ ազգն Հայոց և վարդապետք ժա մանակին վա՛ սրբոյ աթոռոյն։ ընդ նմին և զաշ խատանս մօսէսի վարդապետին և զիւրոց աշա կերտացն։ և զտուրս և զողորմութիս քրիստո նէ ի՚ի նորոգումն սրբոյ աթոռոյն։

Ոմն ասէ մարգարէն դաւիթ, արարին զերեմ ոմն խուղս մրգապահաց։ և եսայի մարգարէն ասէ վա՛ սիոնի, իբրև զհովանի իմիջ սեխեւ նեաց։ ըստ այսմ սարասի գոգցես և զծածաբնակ նոր աթոռս։ զի ամենևիմբ ունայնացեալը ՚ի սուացուածոց՝ և կողոպտեալ ՚ի զարդուց։ ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասացութի և կամ ընթերցուածն։ ոչ զգեստ և ոչ շուրջառ, զի ոչ էր ժամակարգուի և պատարագ։ մինչ զի Ի՚ի իջման տերն՝ և նոր սեղանն էս ոչ ունէին զծածկոցս։ ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս։ այլհա նապազ ՚ի խաւարի։ բայց այլազգի մահմետա կան ոմն վաւերը զձրագ ձիթոյ և գներ իվերնոյ մին։ և այնևս երբեմն երբեմն վա՛ անցաւորաց Հանապարհորդաց։ զի տեսանելով զայն զողոր մութի արասցեն նմա։ ոչ խնկարկութի, զի ոչ գոյր բուրվառ և խունկ։ և սալայարկ յատակ եկեղեցոյն քանդքանդեալ։ եղեալ որջ գեղ նոց և սոհնոց։ և մեծ ամենջք լուսամուտքն՝ զորս ունի՝ ամենն ՚ի բացկայր առանց վանդակի։ ուս տի մտեալ ՚ի ներքոս թռչունք ընտին զեկեղե ցին ծուտով և ծղով և այլոք գազեխոք։ զոր

յամ

յամ աւուր Հարկիս սրբեաք ։ և ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալն ձայնք թնդնոցն խափաներ զձայն ժամասէղին ։

Ոսկ յարտաքուստ կուսէ գլուխ կթիղկէին, և տանիքն ամբն ։ և երեսք որմոյն քանդքան դեալք և քարինքն թափեալք ։ և որմոյ յատակացն վէմքն փչրեալք և ծակոտեալք ։ Ի վա ղէմեաց ժամանակաց որ շուրջ զեկեղեցւոյն չին նուէքն եղեալեր ։ և դարձեալ աւերեալ և խլր միմեանց փլուզեալ էր ։ այնքան բարձրա ցեալեր հողն և մոխիրն ։ որ յամենից կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրա ցեալեր աղբեւան և հողն եկեալ և ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն որք կան յարտաքուստ կողմանէ ։

Ոսկ զարդք՝ և սպասք՝ և անօթք եկեղեցւոյն՝ և կամանտ քնաւ ոչգոյր ։ դի զորինչ և լեալ էր ի հնոց ժամանակաց՝ կթիղկոսքն զամ վա ճառելով և գրաւ դնելով վատնեալ էին ։ և արդ ևս գրաւ եդեալք անօթք գոյին առ մահ մետական իշխանս ։ զորս ազատեաց մեսէս վար դապետն ։ որ էր այր արիստակէսի Հայրապետին որդւոյ սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ ։ այլև զայր աղջոց վանաց սրբոյն ստեփաննոսի ։ ընդ որոց և զիսայ՝ և զակիհ՝ և զբուրվառ՝ և զշուրջառ՝ և այլևս ինչք ։

Ոչ ասացեալ բանքս որք ի մէնջ ցուցանեն զտեղին անբնակ գոլ ի մարդկանէ ։ և ասեմ զիսկն ոչ էր ամենևին անբնակ ։ այլ դուռ հա մարեաց իբրև զանբնակս ։ վնղն կթիղկոսունքն՝ անդ չվիաճին ոչ բնակէին ։ այլ յերևան քաղաքն ի կաթուղիկէ յեկեղեցւոյն ։ և կամ թէ ի շրջագայութեան աշխարհաց ։ բայց սակս գլուխք ոմանք սինելիք որք և դուեհիկք որպէս զգեղա

զգեղական հողագործս. որք վարնորդեսք մշա
կօք բնակեին յԱրմաւիր. և զաւուրս տարուն
զբազումսն՝ի գեղորայն անցուցանէին. քան
թէ յԱրմաւիր։

Այս յորժամ մօսէս վարդապետն զսկիզբն արար
նորոգութեանն. տարակուսէին վասն հողոյն և մոխ
րոյն որ բերացեալ կայր շուրջանակի. թէ զի
արդ լինի պղծել։ քանզի որովհետև կամքն ած
այնն քաղցրացեալ էր՝ և ձեռնարկուն գործոյն
նորին հաճութեանն էր. դիւրահնարիւ եղև
բարձումն հողոյն. վերի ածին զջուր՝ի գետոյն
յորդ և վարար. և կապեցին՝ի հողմն ինչ հո
ղոյն. և զբազումսմշակս արկին՝ի գործ՝ և սկսան
մշակքն փորել զհողն և տրօրտալ ջրոյն. և
այնպէս առնելով. ջուրն առեալ զհողն տա
նէր և քարն ծայր։ որ՝ի տակաւ առնուլս փութա
նակի յամենից կողմանց բարձաւ հողն. և բա
ցաւ վայրն ամբ. և եղև հարթայատակ գետին.
և ծնացեալ քարինքն շարեցան՝ի յորմն տանջն.
լեալ ձեռնտու գործոյն. և ապա զլայն և ընդ
արձակ պարիսպ պատեցին շուրջանակի. յորս
նեալ զբուրգս ութն՝ի նմա։

Այս զպարիսպն զոր շինեցին. այսպէս ձեւ
ացին։ Էին և տեսանի յեկեղեցւոջ անդ. ջորեքին
խորանք եկեղեցւոյն որք կան յօրինեալք՝ի նմա
ընդ ջորս կողմն աշխարհիս. յարտաքուստ կու
սէ եկեղեցւոյն՝ի ձակատաց այս ջորից խորա
նացս։ Այս ապա իմն պարսպին արևմտեան
կողմն շինեցին զդարպասս և զտունս՝ի պէտս
ինքեանց և հիւրոց։ և՝ի հիւսիսային կողմն և յա
րևելեան կողմն շինեցին խուցս՝ի բնակուելի միա
բանից։ և՝ի հնրաւային կողմն շինեցին զսեղանա
տուն, զվիճնատուն, զանտեստուն, զհամբարա
նոցս ցորենոյ և այլոց նիւթոց։ Այս ամ շինուած

ածքս այսոքիկ՝ միայն պարիսպն ի հողոյ եղև
չինեալ. իսկ այլքն ամենեքեան լիատելով քա
րիւ և թրծելով աղիւսով և կրով և բուռով շի
նեցին գեղեցկիւ և վայելչիւ յօրինուածով։

Եւ այսորիկ զեկեղեցւոյ գմբէթին տա
նիան նորոգեցին. քանզի սալքն քանդեցեալք
և ի տեղւոյն իբացատեցեալք էին։ Ա. թէ
որ տեսանցեալ գիտել կամիցի զչափ լուսակա
ռոյց Ա. Նանկարի Ա. Ծաբնակի տաճարիս սրբոյ
Ա. Ջմիածնի այսքան է. յիսուն հալասպի գազ
երկայնքն է յարևելից դէպ յարևմուտս. քա
ռասուն ևուրն հալաբի լայնքն է հիւսիսոյ
դէպ ի հարաւ. երեսունևհինգ հալասպի բաց
ձրուքինն է ի ներսիկողմանէն կճղակէ ի պոր
տէն մինչի գետինն։ այսոքիկ չափքս եկեղեցւոյ
մեջն է ի ներսի կողմանէն Թող զպատան։

Ա. օր աւուր նորոգեալ հաստատէր զսբ
աթոռն. որով և ամ կարգ և կրօնք հաւատոյս
քրիստոնէութեն. վանզի համբաւ նորոգմանն
սրբոյ աթոռոյս հնչակեալ ծաւալեցաւ ընդ
ամ աշխարհ, ի հռոմայոստան, ի պարսկաստան,
ի քրդաստան, ի վրաստան, և ամենեքեան
զսբ աշխատեալք ցնծային։ Ա. մէև յաշակերտաց
իւրոց առաքեր մօսէս վարդապետ ի քարոզու
թիւն յամէն կողմանս. որք գնացեալ հոգեբղխիւ
քարոզութբ և բարեկրօնիւք վարուք հաստատէ
ին զկարգս և զկրօնս քրիստոսականի հաւատոյս
և եկեղեցականի աւանդութե. մ՚ն զի ուրե գնայ
ին զՀմարտութե գործս ցուցանէին ըստ նմա
նութե վարդապետին իւրեանց. շինէ ին զեկեղե
ցիս, կարգէին զքահանայս և ընկերակեալ կործա
նէին զհակառակորդս Հմարտութե. որով
զօրացեալ յառաջանայր Հմարտութիւն։ Ա. մէև
և հոգելից աբ վարդապետս տէր մօսէս կարգեաց
զդպրա

զդպրատունն ի մեծափառ սբ. ուխտն յոհանա
վանք՝ ուր ժողովեաց զմանկունս յոլովս. և զա
մենեցունն զծախսն և զպէտսն ինքն հոգայր. և
մանկունքն անզբաղ և անխափան ուսանէին զե
կեղեցական ուսումն, և զգիրս Աստուածչչ, և
զնմաստասիրականն որք եղեն ամենեքեան արք
պետանիք և օգտակարք աշխարհի. վարդապետք,
եպիսկոպոսք, և աբեղայք, և երիցունք. և ամքն
վանորայք որք ամայացեալք ի խաւարն կային.
եղեն լցեալք միաբանիւք, աբեղայիւք, և կրօ
նաւորօք, և գեղորայք վարժիւք երիցամբք։
Նորոյ ամքն ժողովուրդք Հայոց՝ որք յԱստ
ուածոյ աշխարհս բնակեալք են յառաջին կթի
կոսաց անկարգութենէն ձանձրացեալք և ի սո
րն բարեկարգութենէն միսիթարեալք՝ կամօք
և յօժարութիւք կաթոգիւով սրտիւ կամէին զե
ինքն սբ. Հայրս մեր մօսէս վարդապետս լեցն կթի
կոս. որք գրովք և աղաչանօք թախանձէին
ամենից տեղեաց վարդապետք և եպսկոպոսք և
երևելիք արք. զնյանձնառեղ զաստիճան կա
թուղիկոսութենն. բայց նա հրաժարէր զանձն ան
արժան ասելով առաքելականի աստիճանին։
Այլև այրս Աստ տեր մովսէս վարդապետ հա
նապազ ի սրտի իւրում վարանէր. և տխրէր.
և ցաւէր. վն հարիւր թուման մուղադայինն.
որ անտանելի ծանր բեռն և անխզելի անուր
եղաւ՝ իվն սրբոյ աթոռոյն Աղձիածնի. ոչ
միայն սա այլև ամ ազգն Հայոց։ Որ վն փրկու
թեն Աստուածական սբ աթոռոյն ոչ դանդաղեալ
ծուլացաւ խնայելով յինքն կամ ի ծերութեն
տկարութեն այլ եղեալ գնաց ի դուռն արքայ
ին ի քաղաքն ղազբին. քանզի անդէր թագաւ
շահաբաս. ի հազար և եօթանասունևեօթն
ամի թուականիս մերում։ և մատուցեալ այսր
և անդր

և անդր առ նախարարս Թագաւորին աղաչէր զնա
ծանուցանել արքային առ՝ի բառնալ զհարիւր
Թուման հարկն՝ի սրբոյ Լջմիածնէ. և նա
խարարքն պատեհ ոչ համարեցան ասելով՝ այս
Թագաւոր յոյժ արծաթ ասէր և ագահ է. և յայդ
քան շահուց արծաթոյ ոչ զանցաւանէ. և մա
նաւանդ զի գործդ այդ իւր է հաստատեալ.
որով առաւել տեսանի զի ոչ զանցաւանէ զդո
վաս՝ վնասոյ պարտէ քեզ լռել՝ի ժամ և յաւ
ուրսս յայսոսիկ. այլ մեք գտեալ զպատշաճ
ժամ, խօսեացուք առաջի արքային. վնասոյ
տխրեցելով և թախծեցելով սրտիւ դարձաւ
՝ի ղազընոյ և եկն՝ի սբ Լջմիածին։

Ասէ արքայն շահաբաս եղեալ՝ի ղազընոյ
գնաց՝ի ֆահրատապատ՝ի քաղաքն որ կոչի ա
շրաւ. առ՝ի ձմերել անդ. և ըստ հիւծականի
բնութեան մարդկան հիւանդացեալ մեռաւ՝ի
հազար և եօթանասունևհուրն ամի Թուականա
նութեան մերում. և յունվարի ամսոյ եօթն և
կտակաւ հաստատեաց տալ զԹագուրութիւն Թո
ռին իւրոյ՝ զի արդասաւիտ և բազմախորհուրդ
արքայս շահաբաս, յորդւոց իւրոց զոմանս
սպան՝ և զոմանս կուրացոյց վն երկիւղի՝ զի մի
գուցէ Թագերեցուացեն իշխանքն. և մեռցեալ էր
Թոռն մի որդի աւագի որդւոյն իւրոյ. վնասոյ
եաս զԹագուրութիւն Թոռին իւրոյ։ Լսե ժողո
վեալ ամքն նախարարք՝ և հաւատարիմք տան
Թագուրին Թագերեցուցին զԹոռն, և կոչեցին զա
նուն նորոյ Թագուրին շահսեֆի. զի վիճակաւ
եդին զանուն նր. որ և վիճակին՝ և կոչեցաւ ա
նուանն ուղղակի դիպեցաւ. զի և անուն նոր
ընծայ Թագաւորիս հօրն սեֆի էր։ և նստաւ
Թագր նոր ընծայ շահսեֆի՝ի նոյն Թուականին.
հազար և եօթանասունևհուրն ամին. և յունն
վարի ամսոյ տասնևհինն։ Լսե

Այլ եղև ժամանակս այս պատշաճ և ըմբռն ժամ· վա՛ր բառնալոյ հարիւր Թուման մուղա դային· վասնորոյ ժողովուրդքն ջուղայեցւոց քննակեալքն ՚ի քաղաքն ասպահան· և մանաւանդ ողորմա՛ծ Թեղն Ա՛յ արժանին վ՚ինաակեր մեծ իչխանն խոջայ նազար գրեալ զԹուղթսրբն Թացիւ փայեկաւ հասուցին յ՚ոչմիածին առ մնաց վարդապետան· վաղվաղակի հասա նել ՚ի դուռն նորընծայ Թեգրին· վա՛ր բառնալոյ հարիւր Թումանին· զոր և անյապաղիւ ձեռով ելեալ մնաց վարդապետն գնաց յասպահան քա ղաք ՚ի դուռն Թեգրին· և կացեալ ՚ի դրան Թեգրին ամիս ուԹ· և տեսեալ զնմանն նախա րարս զՀինս և զնորս և հաճեալ զմիտս նոցա բազ մաւ ընծայիւ և աղերսիւ·

Այսպա՛ս ա՛ր այրն Ա՛յ պատրաստեաց զընծայ ոմն վայել ՚ի Թեգրայ· սկուտեղամբ զուտ ոսկի դահեկան· և զայլևս ինչս պատուհականս· և գրեալ զգիրս յօժարուԹե՛, որ ՚ի արքայ· և վարդապետն և խոջայ նազարն միաբնորդուԹե՛ նախարարացն ձօնեցին առաջի Թեգրին· որ՛ի հարցանե՛ն արքայի վա՛ր վարդապետին· երազգածարար զնա խոջայ նազարն· պատմելով նմա զաղնուհականուԹե՛ վարդապետին· այլև Թե նա խածանօԹ և հաճելի ծառայ ՚ի յառաջագոյն մեծի Թեգրին հաւոյն քում· և այժմ ևս աղօԹող ՚ի վանս կենաց Թեգրին· բայց զայս ինչ իմդիւրս ունի՝ զի այց արարեալ գԹասցի՛ ՚ի տա ռապեալ ժողովուրդս իւր արքայ՝ և զծանր բեռն, զոր ընդ վայր և՛ ի տարապարտուց եղեալ իմ վերայ· այսինքն հարիւր Թուման մուղա դէն· հրամայեսցէ արքայ բառնալ զայն·

Այս արքայ շահ աբբաս անդէն ՚ի հանդիսին յորում բանս խօսեցաւ ընդ խոջայ նազարին·

այլև ի Հարց՝ ի մասին վրդովեն վասն մուղա
դայ Հարիւր Թումանին. և ողորմութիւն և
ընդհանուր ծայնօք. ամքն բանք վրդովին դի
ւին և ախորժ Թումբը առաջի Թագաւորին։ քան
զի ամենաթագաւորն ծ,որ ունի՝ ի ձեռին զսիրտս
Թագաւոց. Հաճեցոյց և քաղցրացոյց զկամս
Թագաւորին որ՝ի լուր ամի Հանդիսին ասաց Թա
գաւոր՝ ի Հարիւր Թումանն մուղադայէդ՝ զոր
տայիք՝ի դիւան Թագաւորին. այսուհետև կացէք
ազատ և աղօթեցէք՝ վն մերոյս կենաց և յաջո
ղութեն։ Յայնժամ խօջայ նազարն՝ և մասին
վրդովեն՝ և ամքն իշխանքն՝ որք կային առաջի
Թագաւորին. ամենեքեան խոնարհեալ երկիր պա
դին Թագաւորին. և համբարձեալ զձեռս իւրեանց
՝ի ձայն գոհութեն օրհնեցին զ,ծ և զԹագաւորն։
և ուրախութիւն արձակեալ յերեսաց ատենին
դնացին՝ ի տեղիս իւրեանց։ ,յետուհետև մա
սին վարդովեն և խօջայ նազարն, հանապազորդ
օրհնելով՝ ի դրունս իշխանաց. և առ վերակա
ցուս դիւանականաց մատենից. և առ գծա
գիրն. այնքան աշխատեցան մինչ զի յամենից
մատենից ուրև գրեալ կայր բանն այն. յամէ
հանեալ արտաքսեցին։

,Ի ապա գրեաց միւս ևս զարզայ խօջայ նա
զարն և մատոյց առաջի Թագաւորին խնդրելով՝ զի
տացէ զնոսա Թագականաւ հնգով վն բառնա
լոյ Հարիւր Թումանն մուղադային։ այլև ընդհին
խնդրեաց յարքայէ տալ զիշխանուն կիպչակաս
Թէ մասին վարդովեն։ ,Ի արքայ չհաճեցաւ
կատարեաց զնմանն խնդիրս նոյ. զի եթ զնոսա
Թագականաւ հնգով տղդու և հատու բանիւ.
Թէ բարձի զՀարիւր Թումանն մուղադային,
որ՝ի մերոյ Թագաւոց եղեալ էր իմէ աթոռոյն
ձերոյ ,Ջմիածնի։ այլև եւոու զՀրամանն կա

ԹՂԿԱՍԵ ԹԷ ՄՍԱԽԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ըստ Հայցո՛ւա
ծոյ ամաղթին Հայոց։ Ա. ԴՐԴ այսպէս բազմաեռկիւ
աշխատութեբ. և յոյժ զբաղում գանձս ծախե
լով իբր թէ հազար թուման. հազիւ թէ կա
րաց բառնալ զծանր բեռն հարկին ՚ի սրբոյ
աթոռոյն սուրբ վարդապետն Մսախ. և առեալ
զԹղթրկանոմոն դարձաւ մեծաւ ուրախու
թբ և եկեալ Ե հաս յածաբնակ յաթոռն ՚ի սբ
Ա. Ջմիածինն։ և սիրեցաւ համբաւ աղատու
թէ սրբոյ աթոռոյն յընդհանուր աշխարհ
յաղգս Հայոց. և ամենեբեան լցեալք անպատ
մաւ ուրախութբ ՚ի ձայն ցնծութէ գոհա
նային զԱ. Յ։

Ա։ այնուհետև յամենից աշխարհաց արք
երևելիք եկեղեցականք և աշխարհականք.
սկսան առաւելաբար առաքել զթուղթս ա
ղերսանաց առ Մսախ վարդապետն՝ խնդրելին և
աղաչէին զի միւս պատճառս յօդեսցե այլ վե
հաստատութէ հաւատոյ՝ և կարգի եկեղեցւոյ
յանձն առցե զկԹղկոսութէին։ և այս թուղթ
աղաչանաց առաքեցաւ ՚ի պարսկաստանայ, ՚ի
վրաստանայ, ՚ի քրդաստանայ, ՚ի հոռմաստա
նայ։ Ա։ սբ Հայրս մեր՝ ոչ թէ՛ ՚ի փառս անձին
որ փառաւորեալ էր յԱ. Յ և՛ ՚ի մարդկանէ, այլ
վն օգտի ժողովրդեան Ա. Յ և հոգևորաց կր
նէց հաստատութէ լսող եղեալ աղաչանաց ամե
նեցուն ընկալաւ զաստիճան կԹղկոսութէ. և
օծմամբ ամենասուրբ Հոգւոյն Ա. Յ օծաւ Հայրս
պետ ամ ազինս Հայոց՝ պայծառ և պանծալի
ժառանգորդ բարձրագահ աթոռոյն սրբոյ
Ա. Ջմիածնի. ՚ի մերում Թուականութէս հա
զար և եօթանասունևերկու ամի յունվարի ամսոյ
տասնևերկոց. յոր անօրէնութէ Տ՚ն Ա։ ըստ բանին
Տ՚ն, Հրաշագ արփիաւորիչ էդաւ ՚ի բարձու աշ
տակա

տականի՝ ի գերագահ աթոռս՝ լինիլ լուսատու տանս արամեան։ և յածաչնորհիւ վարդապետու թէն իւրով մխիթարէր զնոսին քաղցու քարո զութէ ուղղելով՝ ի ճանապարհս արդարութե։

Այս էր սէր հայրս մեր մաքրակենցաղ՝ և սրբա անուն, երկայնամիտ և ողորմած, որ և բա զում գերիւք ազատեցան՝ ի գերչաց ձեռամբ սորա։ վնզի յաւուրս սորա անհաչա խռովու թէն էր եմէք պարսից և ( )սմանցւոց։ որոյ սակա աւար և գերութէն կարի յոլով լինէր յերկուց կողմանց։ և զորս և տեսանէր՝ ի գերեացն։ ան վրէպ առնոյր գնով և ազատէր։ Այս էկաց սա՝ ի բարձրագահ աթոռն՝ ի սուրբ [illegible]ջմիածինն։ ուղղիւ վարդապետութէ։ նորոգեաց զաւերականն նորոգչինութէ և պայծառացոյց միաբանօք և վարդապետք։ և յարմարիւ և հաստատնով ժա մակարգութէ։ և փարթամացոյց եկեղեցական նաւ անօթով և մարմնականաւ ստացուածով։ և էկաց սա կնէդկոս յերիս ամս և՝ ի կէս։ և՝ ի թուականիս հազար և ութսուն և մեկ ամին՝ ի մայիսի ամսոյ տասնևչորսին վախճանեցաւ։ պակասեալ աստի մահուամբ և յաւելաւ առ Տէր հանգստեամբ։ և գնաց առ անձկալին իւր Քն։ զոր հանապազ մչտապաղատիւ և սրբա նուիրիւս աղօթիւք կրէր յոգի իւր։

Այս պատահեցաւ լինիլ վախճան սորա յե րևան քաղաքի՝ ի վանս գամբարանի սրբոյ ա ռաքելոյն անանիայի։ վնորոյ և տարեալ՝ ի հա սարակաց գերեզմանատունս, ՝ի կողեւ կոչէ ցեալ բլուրն։ վն գերեզմանի կողւան վարդա պետին, որ անդ է։ և յարաշտաւ գերեզմանի կողւան վարդապետին՝ և մեկքիսէթի վրդապետին։ իմէք երկուցս այսոցիկ պատրաստեցին զդիր հանգստեան սրբոյս այսորիկ։ և անդէն իմէք

երկուց կափուցելոց տապանաց եդին զսրբա
նեալ նշխար մարմնոյ նր մեծաւ պատուով
և փառաք. ի փառս Քն և ի բարեխօսութեն
ամենեցուն Քրիստոնէից:

Վասն վարդապետութեն և կենդանութեն առաքն փիլիպպոսի:
Յորում և վասնորոգութեն եկեղեցեաց, սրբուհեաց
կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և
յայտնելոյ նշխարաց նոցին:

Ի՛Ա:

ՓԻԼԻՊՊՈՍ ԿՊԱՒՈՒ

ղնկոան էր յերկրէն քարմայ. որ
այժմ ասի աղբակ. ի գեղջէն որոյ
զանուանն կոչեն երընկան: գոլով սորա ի տիս
տղայութեն չորեքտասանց ամաց աւելի կամ
պակաս. լուաւ զՔնոյ ակն վարսմիայնակե
ցաց մեծի անապատին. մեծատենչիւ փափագ
մամբ եղեալ գնաց ի մեծ անապատն լինել կրօ
նաւոր. և հետևիլ առաքելականաց վարուց
մաքրակենցաղի սրբութեն. որոյ կարի փա
փագիւր: Իսկ կրօնաւորք անապատին ոչ թո
ղին զնա յանապատն. վն տղայականի հասակին
և անմօրուս գոլոյն. սակայն նա ոչ գարձաւ
կրկին յաշխարհ այլ անդէն եկաց արտաքոյ
անապատին իմիջ մայրեաց՝ որ չուրջ էր զանա
պատին. և համբեր այնպէս զամիսս ուրբ:

Ընդ այն ժամանակս մօսէս կենդանական
ին վարդապետ գոլով քարոզութիւ շրջէր յաշխար
հի. և լուսաւորէր զամ մարդ իբրև զարե
գակն. իսկ հայրն մեծի անապատին սարգիս
պարոնտէրն. ետ զփիլիպպոսն յաշակերտու
թեն մօսէսի վարդապետին: Ընդ որ կացեալ փիլիպ
պոս ետ յարբունս հասակի ի տիս երիտա
սարդութեն. օրհնեցին զնա աբեղայ կուսա

կրօն քահանայ. և նա ի տուէ և ի գիշերի հե
տևէր Հգնողականաց վարուց. և գործոց առա
քինութեե. և յընթերցուածն և յուսումն ածայ
նոց գրոց. որոյ զառաջադիմութենն տեսանե
լով վարդապետին մովսէսի. իւրով հաւանու
թբեն, և վկայութբ ամենից եղբարց, ետ նմա
զիշխանութեի վրդապետական. և յետ ամաց ինչ
զգաւազան վրդապետական. և ի հազար և եօթա
նասունևինն թուի օրհնեաց զնա եպիսկոպոս:

Եւ ի հազար և ութասունևմի թուի՝ յոր
ժամ է հաս վախճան մովսէսի կթղիկոսին, ժողո
վեցան առ նա եպիսկոպոսք և վարդապետք՝ և երև է
լիք արք. և ողբալով ասացին, որովհետև այդ պ
հաճեցաւ վն քոյ Տէրն և տուօղն կենաց՝ զի
մեկնիս և գնաս ի մէնջ: այլ արդ խնդրեմբ ի
հայրախնամոյ գթոյ քոյ զի մի կարի թողու
ցուս զմեզ որբս՝ այլ յայտնեա մեզ թէ զովքը
տաս մեզ լինիլ հայր և հովիւ զկնի քո՝ և նա
ասաց, դուք գիտէք՝ զորբը և կամիք ընտրեցեք:
Ակ ըստմբ ժողովոյն ասացին, մեք բոլոր աշ
խարհ զքեզ ընտրեցաք. և այժմ դու զովքըև
ընտրես ընդունելի է մեզ. և նա ասաց ես զիւ
լիպոս վարդապան կամիմ լինիլ փոխանորդ իմ,
և յաջորդ սրբոյ աթոռոյն Հռիփսիմեի. և նոք
ամենեքեան իբրև զայն լուան յօժարութբ կամաբ
հաճեցան. և ընկալան զսիլիպոսն լինիլ կթղ
կոս: Իբրև ծաւալեցաւ համբաւ մահուանն
մովսէսի յամենայն տարածս հայոց և յարևմտեան
և բանն այն. թէ վն փիլիպոսի պատուիրեալ
է առնել կթղիկոս. ամենեքեան կամաբ և յօժա
րութբ հաճեալ հաւանեցան. վասորոյ իւրաքան
չիւրոց տեղեաց առաքեցին զթուղթս վկայա
կանս զի փիլիպոս վարդապան լինիցի կթղիկոս.
և մինչ ի գալ թղթոյն էանց այն ամն. և ընտ

իւրն Թոռնականն հազար և ութսունևերկու յորում ամի օրհնեցին զնա կաթուղիկոս ծածուկ Յոդեայն սրբոյ. յամենայն յունվարի տասնևերից. ի տանի տնօրէնութեն Տն։ Իսկ ազգս Հայկազեան՝ թէպէտ իւրն մահուան մասին վշտալից լեալ տրտմեցան. այլ ի յաջորդելն փիլիպպոսի բերկրեալ զուարճացան. զի փոխանակ հօր եկաց որդի՝ իշխան հանուր ազգի։

Իսկ յորժամ ժամանեալ Թոռնականն մեր ՀՀաս հազար և ութսունևչորս ամն թագաւորեալ ստամբօլայ սուլթան մուրատ կոչեցեալ՝ այր կարի խորհուրդ հզօր յաղթող և իմաստուն. եղեալ ի ստամբօլայ եօթն հարիւրհազար հեծելազօր, և եկն յաշխարհս արարադու. և շուրջ նստեալ զբերդիւն երեվանու պատեալ պահեաց զնա. և յաւուրս ինն էառ զբերդն, և զիշխան բերդին զթահմազուլի խանն, զոր դին ամիրգունայ խանին կալեալ առաքեաց ի կոստանդնուպոլիս. և ի նախարարաց իւրոց զոմն բարեբարոյ և խելացի իշխան. որում անունն էր մուրթուզայ փաշայ. հաստատեաց իշխան իմն բերդիւն տասնևհինգ հազար սպառազինիւք և ընտրելովք հեծելօք. և ինքն անցեալ գնաց ի Թաւրէզ քաղաք. և անտի դարձաւ իւրն վանայ և գնաց ի տեղի իւր։

Իբրև եանց այն ամառն. և ի գալ ձմռանն՝ յորում էր Թոռնականն մեր հազար և ութսունևհինգ, եղեալ Թագն Պարսից շահսեֆի հրիւր հազար հեծելօք և եկեալ էմուտ յաշխարհս արարադու. և նստաւ իւրն բերդիւն երեվանայ յաւուրս նստունևերիք՝ մեծաւ տաժանմամբ և բազմօք չարչարանօք, և արեանց հեղմամբ. Հալիւ Թէ կարաց յետ առնուլ զբերդն ի ձեռաց ( )ամանցւոց։ Իսկ ի չարժամանէ այսց երկուց

երկուց ինքնակալաց թագըցս աւերեալ ապակա
նեցան աշխարհք արեւելից և արեւմտից. և մա
նաւանդ աշխարհն արարատոս իւրովք շրջա
կայիւք գաւառօքն՝ վասն զի երկոքին թագըքն իւրե
հեծելօքն և հետեւելովքն անդր գումարեալ
կատարեցին զգործս իւրեանց, և դարձան։

Ասկ սբ աթոռն Աղիաճին բաց յեկեղե
ցւոյն՝ և գմբեթաշէնն տանցն՝ ամքն բնաւին
աւերեցան. զի որինչ փայտակերտ տունք
և շէնք կային քանդեցան։ վնորոյ տէր փիլիպ
պոս կաթուղիկոս բազմաերկիւք վաստակօք զամն
շինուածոն վերստին շինեաց բովանդակ. քան
զի վասնիայն փայտերնոցա շինուածոց զհաղար
ղուռուշ նաղտ դրամ նորին արհեստաւորացն
ետ։ Յե խնջ սեղանատանն հայկերուքի սե
ղանն՝ և որ'ի նմա այլ կահք էին, յառաջն
որ շինեցաւ'ի ժամանակս մովսէսի, փայտա
կերտ շինեցաւ. վնորոյ դիւրաւ աւերեցաւ.
այլ այժմ փիլիպպոս կաթուղիկոս քարիւ շինեաց
զսեղան հայկերուքին. և զտեղի նստելոյն և
զսալայարկ յատակս նորին. զի մի դիւրաւ աւե
րեսցի'ի ժամանակս հեծելաշարժուքե։
Յե արեւելեայ կողման խուցն բովանդակ
նոր շինեցաւ. վնորոյ ոչ ըստ առաջնոյ ձևոյն
է. այլ այլով ձևով շինեալ է։ Յաև զեկեղե
ցւոյ տանիան, զատ'ի գմբեթի գտակէն,
զբովանդակն նորոգեաց։ Յե քարակապ
փարչն, որ շուրջ զեկեղեցեաւն է. և միւս
փարչն, որ առաջի խցացն և այլ տանցն է։ Յե
արտաքոյ պարսպին մերձ հարաւայնոյ դրանն
երկու գմբեթաշէնք ձիթահանք նոր շինեցան
զի ոչ գոյր բնաւ։ Օ ատ յայսցանէ և զայլեւս
մասնաւոր շինուածս բազումս շինեաց աստ
և անդ՝ զորս յանուանէ ոչ յիշեմք։

Իսկ զերեւանայ անապատն զորմէ ասացաք դամբարան գոլ անանիայի առաքելոյ. որինչ և շինուածքն գոյր անդ բովանդակ փայտա կերտ էր զատ ի մատուռն. և առքա ամբն քանդեալք աւերեցան ի գալ վերոյ ասացեալ երկուց Թգրացն: որև զայնս ևս զբովանդակն ամ վերատին շինեաց. ոչ Թէ փայտիւ՝ այլ քարիւ և բեռով գմբէթ Թեայ՝ զժամատունն, զեղանատունն՝ զանաեստունն՝ զխուցան՝ և զայլսևս շինուածս ամենևսեան:

Յետ կատարման ամենից շինուածոց՝ որ[ա]յ ի միածին և որ յանապատն. ի Թուին հազար և ութսուն և վեց գնաց նբ Հայրն մեր ամբ փիլիպպոս կաթուղիկոս յասպահան քաղաք՝ իմն ի քրիստոնէ եղեն որք անդ՝ եկաց յամմի և կէս քարոզելով նզ զօրենս [ա]յ՝ և հաստատելով ի հաւատսքն կան. այլև ժողովեր՝ ինոցունց զնուիրակին սրբոյ [ա]յմիածնի: և զուռղեցիք և ամքն քրիստոնեայքն ընդունեին զնա մեծիւք և բազմազան նուիրք փառաք իբրև զՔրիստոս ակ [ա]յ վն ձգնազ գեաց և առաքինականաց վարուց նորա:

Նա վն սրբոյ լուսաւորչի [ա]յնին. որ տա հաւին յասպահաներ, ոմ յառաջագոյն պատմեցաք վն նր Թէ հրամանաւ առաքչին շահա բասին տարան զ[ա]յն՝ ի քաղաքն ասպահան: [ա]յս փիլիպպոս կաթուղիկոս հանապազ ըղձասոն չորիւ և խանդակաթիւ տենչմամբ փափագէր, Թէ որով արդեօք ևս հնար զի առեալ զնբ [ա]յն բերցէ՝ ի նբ [ա]յմիածին: որոյ վն բազում աւուրս խնդրանօք խօսեցաւ ընդ քահանայս և ընդ ժողովուրդս զուռղեցւոց. և մանաւանդ ընդ մեծ ահաւաստ և [ա]նասկր իշխանին խոջայ սարգիսազին՝ որդւոյ խոջայ նազարին. որ յար դեանս ամանակի սա էր աւագ զուռղեցւոց. խօսէր

և ինդիր Յ.Ջոյն ղուսաւորչի։
խօսէր և աղաչէր փիլիպպոս կԹ՚ղկոսս զի տա
ցեն զնոսա ղուսաւորչի Յ.Ջն՚ի նա. որ տարցէ՚՚ի նոր
Յ.Ջիածինն, ՚ի տեղին իւր։

Յոկ Ջուղայեցիք ոչ կամէին տալ զնոքա Յ.Ջն
և կամ հեռանալ նմին յիւրեցի միջէն. վասն զի ա
սէին յօտարոտի աշխարհի և յայլասեռից ազգաց
միջի բնակեալեմք. և մանաւանդ եմք նեղ
ժոռ և օձաբարոյ ազգին Պարսից. և ոչունիմք
զնչան ինչ և առիթ հաստատութեանն հաւատոյս
քրիստոնէականի. ոչ վանորայք և տեղիք ուխ
տից. և ոչ քրիստոսականաց սքանչելեաց կառուց
մունք. ոչ գերեզման և դամբարան սրբոց Յ.Ի.
և կամ մերոց հարց և հաւուց նախնեաց։ այլ մի
այն այս ունի Յ.Ջն է զորոյ զհրաշագործութիւնն
տեսանելով նորաժամանիկ զաւակաց մերոց
ինան ՚ի հաւատս քրիստոսական. թէ և զայս
ևս առեալ տարցիս. որով միթարիցուք յերկ
րիս պանդխտութեանն յոր կամքս։ Յ.Ի. այսու
պատճառաւ ոչ կամեցան Ջուղայեցիք տալ
զ Յ.Ջն. վասն որոյ պատճառս յոդեալ ասացին առ
փիլիպպոս կԹ՚ղկս՝ Թէ զ Յ.Ջս սրբոյ լուսաւոր
չիս՝ զոր դու խնդրես՚ի մեզ՝ արքային Պարսից
բերել և յանձնել՚ի մեզ. և մեք զնարդ կա
րեմք տալ զսա քեզ առանց Թագաւորականի
հրամանի. վասն զի երկնչիմք ՚ի Թագաւորական
պատժոց. և նենգութեանէ մատնողաց։

Յոկ տէր փիլիպպոս կաԹ՚ղկան, այնուհետև
երևեալ արամբքն Հայոց՝ որք էին յերևանցուց
ժողովրդենէն. զի սքա կամէին զգնալն Յ.Ջոյն
Յ.Ջիածին, և սկսաւ շրջիլ՚ի դրունս հիշա
նաց Թագւորին, և առաւաձեռնիւք տրօք զսէր
տրա ամենն հաճեցոյց։ Յե ապա յետ ամենն
լցեալ ղուս ոսկի դահեկան յըսկուտեղ՝ և ըն
նին գրեալ զԹուղԹ արզայն մատոյց առաջի

շահասիրն արքայն, խնդրելով ՚ի նմանէ զՀրա
ման տալոյ զՅ.Ջ սէյլ լուսաւորչին։ Եւ ակն Տէր
և Ա.Ծն ամենից յաւիտեանց և ազգաց՝ որ ՚ի ձեռ
ն ունի զսիրտս ամենից Թագաւորաց՝ և յոր կողմն կա
միցի զնա, և ՚ի ժամուս յայսմիկ քաղցրացոյց
զսիրտս Թագաւորին, որ արար զչնորհս Հայրապետին.
և կատարեաց զինդրուածս նորին, և ետ զՀրա
ման գրով և Թագաւորական կնքով. զի տացեն
Ջուղեցիքդ զՅ.Ջ սէյլ լուսաւորչին ՚ի տէր փիլիպ
պոս կԹ՚ղիկոս։ Եւ երբ և առ փիլիպպոս կԹ՚ղիկոս
գնոմոս Հրամանագ Թագաւորին՝ էբեր առ Թո
ռունան խօջայ սափարին, զի որդւքն վախճա
նեալք էին, և Թոռունքն ոչ կամեցան տալ
զՅ.Ջն, որոց ապատեաց կԹ՚ղիկոս բարկութիւ մե
ծաւ. և նոքա երկուցեալք ՚ի սրբութէ նր. և ՚ի
Հայրապետականաց անիծից Թուլացան ՚ի գլն
տութէ։ Եւ Հայրապետն տէր փիլիպպոս բազ
մօք քահանայիւք ինքնին գնաց ՚ի տունն խո
ջայ սափարին, և առ անտի զՅ.Ջն, և էբեր ՚ի
խօջէնց եկեղեցին. և յաւուր կիրակէ ի մատոյց
պատարագ և էբաց զՅ.Ջն, յորոյ Համբաւ ժո
ղովեցան ամբն Ջուղեցիք և արարին զուխտ, և
տակաւին ընդդիմանային Ջուղեցիք, և ոչ
Թողուին տանել զՅ.Ջն, վասնորոյ գալստաբար
հնեալ անտի զՅ.Ջն բերին ՚ի վանքն Ջուղայու,
և անտի ևս Թաքուն տարան ՚ի քաղաքն իմիջ
երևանեցւոց, և անտի ևս Թաքնաբար հանեալ
տարան ՚ի բերինջ լուծի քարվանսարէն, և էդին
իմիջ բեռանց առն ումեմն քրիստոնեայ վաճ
առականի, որոյ անունն էր մարգարէ, որ էր
՚ի գաւառն գողԹան, ՚ի գեղջէն ցղնոյ. ոչ
էր վաճառականութէ եկեալէր յասպահան,
և նա առեալ զՅ.Ջն բեռամբն հանդերձ ըստ
կարգի վաճառականաց յաւուրջագոյն գնա
ցեալ

ցեալ Է Հաս ՚ի Թաւրէզ, և յայսցանէ ոչինչ
բնաւգիտէին ջուղայեցիք։ և ապա փիլիպպոս
կՀ՚ղկան եղեալ ՚ի սպահանայ գնաց ՚ի Թաւրէզ
Հաս զ Ա.ՔՆ ՚ի մարգարէէն և բերեալ Հասոյց
՚ի սբ Ա.ՔՀԱԾՆԻՆ՝ ինորինս սեպհական աթոռն։
Ա. եղև գալն սրբոյ լուսաւորչի Ա.ՔՆ յաս
պահանայ ՚ի սբ Ա.ՔՀԱԾՆԻՆ յաթոռն իւր։ Հա
զար և ութսունևեօթն Թուականիս մերում,
՚ի սեպտեմբերի ամսոյ քսանին։

Ա. եղև սբ Հայրապետիս փիլիպպոսի կՀ՚ղ
կոսութէն՝ օր աւուր ղօրանալ Հաստատել զի
Ն՚ էր ընդ նմա, քանզի էր վարուքն յոյժ
Ճգնող՝ և պահող՝ և մտօքն սրբախորհուրդ, և
անձանձիւր յաղօթս և ՚ի խօսակցութիւն Ա.Յ,
որ զինչ և խնդրէր Ա.Յ զամն անթերի պար
գևէր Ա.Ծ։ վ՚ղ մերով աչօք եսկ տեսաք զի բա
զում դիւահարք նորին աղօթիւք ազատեցան,
և Հիւանդք, և պէս պէս ցաւագարք, և անդ ամա
լոյծք առ ողջացան, և ամուլ կանայք աղօթիւք
նր ծնան զաւակս։ Որոյ արարեալ բժ չկուէն
զերկուան միայն աստանօր յիշեմ։ մինչ Էաք եղ
բարք յոլովք միաբանութիւք բնակեալ ՚ի սբ
Ա.ՔՀԱԾՆԻՆ առ փիլիպպոսիս կՀ՚ղկութս, պա
տահեցաւ ուՀեմն եղբօր այսահարիլ. և այնքան
յաձախեաց չարն, մինչ զի առեալ վարեր զնա
արտաքոյ չինուքն ՚ի դաշտամայրս և յանդս և
այր և անդր յածեցուցանէր բացեայ ՚ի մարդ
կանէ։ զոր կալեալ ածէին միշտ ՚ի վանքն, և
ապա յետոյ եդին երկաթեայ ոտնակապ յոտս
նր, և այսպէս պահէլով յամ աւուր կոր
դային զաւետարան քահանայքն, և երկարե
ցաւ այսպէս յաւուրս յիսուն։ Ա.պա յաւուր
միում որ էր կիրակէ յետ մատուցանելոյ փրկա
կանի խորհրդոյ սբ պատարագին, յորժ ամ ժո
ղո

ղովուրդքն ամքն եղեալք յեկեղեցւոյն գնացին, տէր փիլիպպոս հայրապետն հրամայեաց ածել զայսակիսի եղբայրն յեկեղեցին ամէն առեներին՝ զի պատարագօղ քահանայն սրբուհի ղեւտիւն զաւետարան կարդասցէ ի վեր ներ. զայս ասաց տէր փիլիպպոս, և ինքն եղեալ գնաց ի տուն, զի ունէր զգործ հարկաւորք, քան զի արք ամենայն պատուհասուորք եկեալէին հիւր նման, գնացեալ առնն էած առաջինոյ զսեղան. և սուղինչ յամեալ առնն յաղագս շահելոյ զնոսա էթող զնա ի սեղան հացկերուԹին, և ինքն եկն յեկեղեցին: և յարեւմտեայ դրանէ եկեղեցւոյն մուտ եալ հանդարտուԹիբ և խաղաղիկ եկն մինչև մերձ առեներին, և անդ անկեալ իւր Ժնկաց իւրոց ունելով զդեմս իւր հնդէպ սեղանոյն սբոյ: և ի ջուխ միոյ գոբգոյին պաղմոսի սրտառուչիւք պաղատանօք և յորդիւք արտասուօք աղօԹեաց: յայնժամ այսակիսի այրն կամէր զերծանիլ և փախչիլ ի ձեռաց ունողացն. և իբրև ոչ կարաց զերծանիլ՝ յայնժամ ուժգին և բարձրաձայն գոչմամբ աղաղակեաց և անկաւ ի գետին, և ժայռիբեաց. և եղև իբրև զմեռեալ: ապա այնուհետև դադարեաց տէր փիլիպպոս յաղօԹից. և մերձակայիցն հրամայեաց բառնալ զնա և տանիլ ի տուն, և մատուցեալ սպասաւորաց եկեղեցւոյն սրբեցին զտեղին ժայռիբեալ: և յայնմանէ օրէ և առ յապայ հնորհքն Քրիստոս, և աղօԹիւք առնն Աստուծոյ տէրն փիլիպպոս ազատեալ եղև այն եղբայրն յախտէն յայնմանէ: և ազատեալ եղբայրն ինքն պատմէր՝ ԹԷ մինչ կալեալ ունէին զնա եղբարքն՝ ի ներքոյ աւետարանին, որ կարդայր ժամարարն, տեսանէի զի կայր պատեալ զանձամբ իմով մեծ և ահագին վիշապ օձ մի սեաւ

սեաւ ընդ մէջս, և ընդ պարանոցս, և ամենից մարմնովս։ այլև տեսի զփիլիպպոս Հոգևոր աէրն, զի ունէր ՚ի ձեռին իւրում զմեր սուսեր յոյժ մեծ, և սրընթաց յարձակմամբ էմուտ ընդ գուռն եկեղեցւոյն, և էհաս մերձ առնս, և այնու սրովն էհար զօձն, որ զինև պատեալ էր՝ և կտրատեալ ՚ի վայր թափեաց յինէն, և գլուխ և կտորք օձին մեծաւ ոտգնապաւ փախուստ առեալ ելին յեկեղեցւոյն, և կո րեան։ Այս ոչ միայն այս՝ այլ զոյսպիսիս բա զում բժշկեաց, բայց զայս միայն գրեցի առ յօրինակ այլոցն ևս։

Պատմեցին միւս ևս զբանչելիս, մինչ քարո զութ՝ շրջէր աէր փիլիպպոս կԹ՝ վկս յաշխարհն ին ( )ամանցւոց, այսպիսի գործ պատահեցաւ ՚ի քաղաքին անկիւրնոյ յաւուր կիրակէ ի մեծի ածելի զատկին, մինչ առանձնացեալ նստէր Հայրապետն աէր փիլիպպոս, և յաշակերտաց իւր ոմն յովհաննէս անուանեալ վարդապետ այր էր ևեղի կայր առաջի նր։ ԵՒսկսին զի եկն պատանի մի երբև հնգետասան ամեայ և բարձեալ ու նէր յոտն իւր զմանուկ փոքրիկ երբև եօթն ամեայ, զոր բերեալ եդ առաջի Հայրապետին, այլև ունէր ՚ի նոյն պատանին ՚ի ձեռին իւրում փակե ղամբ միով զինձոր և զնեղրիեալ Հաւկիթ։ և զայնս ևս եդ առաջի Հայրապետին։ և աղաչա նօք և աղերսանօք խօսեցաւ առ նա, և ասաց, Ծառայ քո եմ աէր Հոգևոր, այս փոքրիկ մանուկ կրս՝ զոր եգի առաջի սրբութ քոյ՝ եղբայր իմ է, այսքան ամ է, որ Ծնեալ է՝ ոչ կարէ խօսել քան զի համր է, այլև ոչ կարէ կանգնել՝ քանզի ոտքն Թոյլք են, վ՚ որոյ մեծաւ պաղատանօք խընդրեմք ՚ի քումմէ սրբութենէ՝ զի արասցես զա զօթս իմ՚ սորա, և ես հաւատամ՚ ՚ի աէր՝ զի առ

թիւք քովք լինցի առողջուե՛ եղբօրս իմոյ: Ասէ Հայրն մեր և Հայրապետն սո՛ւրբ եկն իվ՛ի ծնկանց իւրոց և համբարձեալ զձեռա՛ն վե՛ր՝ և չինքն ամփոփեալ զխորհուրդս. և զտեսութե՛ն մատց իւրոց յառեաց առ տեսօղն ամենից սրտից Ա՛ստ, թողեալով արտասուս յաչաց իւրոց արար զաղօթս՝ ի ժամ բառականաւ և չետ աղօթիցն երբեք կատարեաց զՀայր մեր չերկինս, է առ՝ ի ինձորէն գլորեաց՝ ի բացեայ. և խոնդաղաղ տակաւ բանիւ ասաց փոքրիկ մանկանն, եղ որդեակ, եղ և գնա զայն ինձորն երեր. յայնժամ չնորհօք և ողորմութե՛ բարերարին Ա՛ստ եղեալ մանուկն՝ ի վերայ ոտիցն, և գնացեալ՝ ի վեր է առ զինձորն և երբեր առ Հայրապետն: միւս անգամ ասաց Հայրապետն ընդ մանկանն առ երր զինձորն որդեակ, յայնժամ չնորհօքն Ա՛ստ ետ զպատասխանի համր մանուկն այո առե՛, և ահաւասիկ: ասաց սո՛ւրբ Հայրապետն արդ տուր զփառս Ա՛ստ որդեակ և գնացեալ զօհացօղ լեր զնմանէ՝ ասաց մանուկն փառք Ա՛ստ. և ապա ետ զմանուկն ցեղբայրն՝ որ առեալ գնաց փառաւորելով զբանչէլագործն Ա՛ստ՝ որ տայ զչնորհս զօրութե՛ծ առ այից իւրոց:

Ա՛յլև եր այր կարի խորհրդական և հանճարեղ: աչխարհաշէնն և արդիւնաւոր: և՛ի գիրս Ա՛ծայնս արամիա՛ևնրբաքննին, և՛ի խրատս և՛ի քարոզս համեղաբան և արդիւնաւոր: և զայսոսիկ՝ ի չնորհաց աղօթից ստացաւ սակաւ սակաւ յապայն, վնգի յամանն տեղիս ուր և քարոզեր և կանօնադրեր, պաղաբերեալ ար գ՛ինանայր առ՛ենայնն:

Ա՛յլև եր յոյժ ոճնասէր պայճառացուցա նօղ ոճնից՝ զարդարօղ եկեղեցեաց՝ և պատուիչ ոճնից ոչ քուննակահաց, և սէր Ա՛ստ, ոչ և գրեալ

և գրեալ է վասն յոհաննու ածնեցւոյ։ վասն որոյ
յոյժ հոգեակեալ համբաւեցաւ անուն նորա
յամենայն աշխարհ, ոչ միայն իմիջ Հայոց, այլև
մահմետականաց, և ||ըստ, և ամբն սիրէին և
պատուէին զնա։ և վասն առաւել ձգնութեանն և
սրբութեանն և հաճոյական ծառայ գոլոյն ||Յ
յոյժ երկնչէին ի նմանէ՝ ոչ թէ ռամիկք,
այլև աշխարհակալք իշխանք և զօրագլուխք։
քանզի զբաղումն տեսին ի Թշնամեացն նր, որք
կործանեալք բարձան ի միջոյ, և ի սիրելեացն
նր՝ որք զօրացեալք յառաջադէմք եղեն։

||Ես զդպրատունն զոր յոհաննավանք հաս
տատեցին, սա ևս կարի հաստատեաց, և ուս
մամբ և առաքինութիւնբ վարժեալ հասոյց ի
կատարելութիւն։ և յետ ամաց ինչ փոխեաց
յոհաննավանից և եբեր ի սբ ||Ջվիաճ ինն, և
անդ կարգեաց զդպրոցն, որ և ամբն ուսան և
եղեն արք պիտանիք, վարդապետք, և եպիսկոպք,
և քահանայք։ ||Ես ի վաղնջուց խափանեալ
վանորայք լցան աբեղայիւք, և գիւղք, և քա
ղաքք երիցամբք, և դեռևս օր աւուր աճէ նո
ցին սահմանադրութիւնն։ և սովաւ բազում
կիսաւեր և խափտեալ եկեղեցիք նորոգեցան,
և ի գիւղս և ի քաղաքս յոլով եկեղեցիք նոր
շինեցան հրաշազանիւք յօրինուածովք՝ պայ
ծառ և փառաւոր ամենիւ որպիսութբ։

||Ես յետ ամենից շինուածոցն ||Ջվիաճնի,
զոր սբ Հայրապետն փիլիպպոս արար, այնու
հետև զձեռն ի գործ էարկ զնև զտաճարս սբ
բուհեաց կուսանացն գայիանեայ և հռիփսիմե
այ նորոգեցէ։ վն զի ոչ սակաւ ինչ նշանակե
ցաք զաւերակս տաճարացն երկոցունց կուսա
նացն ի Հաւրնն հռիփսիմեի՝ յորում վայրն
պատմեցաք թէ ճրագանկ պատրիք եկեն և զնո
րին

բին նշխարան գտնին: Այլոց սրբոց պայծառակերպ կուսին առաջարն առաւել աւերեալէր՝ զի առ նիքն բովանդակ իջեալէր, միայն շուրջանակի որմունքն և չորեքին սիւնքն կային կանգուն գլխին՝ ի բաց, և յատակք որմոյն աստ և անդ ծակատեալ և խրամատեալ, որոց արար նորոգման զակիզքն կ՚ածիլն տէր փրկիչն մեր ընդէնս կարօտիս և ջանիս. և զբաղում գանձս ծախեալով նորոգեաց զեղեցկաչէն. ՚ի հիմանց մինչև ցգագաթն գմբէթին. յորոյ վերայ կառուցին զնշան տերունական խաչին:

Այս՚ի նորոգել զեկեղեցին սրբոյ հոգւոյն գայիանեայ գտեալ եղև նոր նշխար նորին. և նորին ընկերացն. և եղև ուրախութիւն և ցնծութիւն անպատում ամի հայոցաղոյ տոհմի իբրև ըզկանգնումն կործանելոյ թագրուհ։ Ո՛չ զի ամէն խոկային և խորհէին վա՛ն նշխարաց սրբոց կուսանացն եթէ արդեօք ՚ի տեղին՝ թէ ոչ. քանզի աւագ խորանին ներքոյ չհնեալ մատուռն՝ որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս. աւերեալ էր քննաւին. ոչ միայն մատուռն. այլև իվ՚ի նորին կառուցեալ աւագ բեմին աւերեալ և քանդեալ էր մինչև ցյատակն. և աղբեւսովք և գետնօք լցեալ մինչև ՚ի վեր:

Այս յատուցս նորոգման սորին էր աբեղայ ոմն տէր յովհաննէս անուն ամբ. այր արդիւնաւոր և գործնեայ և խորհրդական խորհրդով. զոր և տեառն փրկչապատի կ՚ածիլն կարգեալ էր զսա վերակացու և գործավար իվ՚ի գործոյս այսորիկ: Այս յատուց մեծ պատճառանօք ինն յայլուց առաքեալ զնմանն գործօղս՝ և առանձնացուցեալ զտեղին գիշեր և ցերեկի. և ինքն իւրովն միայնակ պեղէաց զտեղին ուր կարծէր մատաղ աղդեալ նշանակեր: և այնքան

պեղեաց զՏողն մինչև ԷՀաս ցանշարժ Տողն յո
րոյ վերայ կառուցեալքը հինն եկեղեցւոյն. և
անդէն եգիտ զերիս տապանս՝ի ներքոյ հնոյն
եկեղեցեացն. որոց մինն էր՝ի կողմն հարաւոյ.
և մինն՝ի կողմն հիւսիսոյ. և մինն՝ի կողմն աՀ
րևելից. և ընդ բանալ կափարչաց վիմաց տապա
նացն. խակոյն բուրեցաւ հոտ անուշութե նո
րաբանչ և զարմանալի. որոյ անուշոե զօրակի
սութենն անկար է ումեք պատմել. որ և ծաւա
լեալ եղեալ զվայրն ամ, և տեսանէք զնշխարս իւրա
քանչիւրոցն իմիջ տապանացն սպիտակ փայ
լուն ոսկ զնիւն և բովանդակ նշխարն անպա
կաս իմիջ տապանացն։ առ որ բերկրականաս
ուրախութիք լցեալ տէր յովհաննէս անկեալ
իվէր երեսաց իւրոց երկիր պագանէր Ա՛Յ՝ և
գոՀանայր զնմանէ՝ զի ար ժանի արար զինքն
այսպիսեաց Հնարիցս։ և ապա առեալ զնշխար
մի յոսկերաց սրբոցն առ՝ի նշան Հաւաստու
թե, և ապա խափեալ զկափարիչ վէմն իվէր
տապանացն, և խՀով և կրով ամրացուցեալ
փակեաց շուրջանակի զտապանն, և անՀետ
արարեալ կորոյս զնշանն, և յարանց գործաս
րոց ոչոք իմացաս զայն։ Ա՛ս յետ կատարմանս
այսորիկ զառեալ նշխարն բերեալ եցոյց վար
գապետաց և եղբարց ամենեցուն, և պատմեաց
զնամ որպիսութենն, որոյ վերամբն՝ի Ձայն ցնծու
թե գոՀացան զՀ՛Յ և ուրախացան անպատ
մելիս զոՀարձութիք։ Ա՛ս եղև գիւտ նշխար
րաց սրբուհւոյ կուսին գայիանեայ և ընկերաց
նր, և նորագումն նորին եկեղեցւոյն, Հազար
և Հարիւրեակ թուոիւն, Հոկտեմբերի ամսոյ
տասնևինն, յաւուր երեք շաբաթի։

Իբրև կատարեալ աւարտեցաս ամենայն չի
նուածք տաճարին գայիանեայ կուսին, ապա

գնացեր՛ի տաճար արքունի Հռիփսիմէ
մեայ, և ձեռն՛ի գործ արկեալ սկան և զայն ևս
նորոգել. վասն յարտաքուստ կուսիկ եկեղեցւոյն
գլուխ կթղկէին, և տանիքն բովանդակ, և ե-
րեսք որմոյն և յատակք նորին։ Ասկ՛ի ներսի
կողմանէ բեմն, և սալ յարկ յատակին, և չորից խո-
րանացն մէջն, այս ամենայն զորս յիշեցի աւերեալ և
քայքայեալ էր՝ վասն որոյ բազմաց ջանիւ և յոյժ
կիւ աշխատութեամբ, դուն գործեալ մինչև զամ
նորոգեալ կատարեցին, և իւղ գագաթան եկե
ղեցւոյն կառուցին զնշան տարուընական խաչին
Եւ ընդ որմօքն և ողորմութեամբ Տն մերոյ Յի Քրի
տոս ևս յայտ եկեալ գտաւ նշխար սրբուհւոյ
կուսին Հռիփսիմեայ ոչ միայն՛ի միում տեղւոյ
այլ յերիս տեղիս, զոր բաժ ին բաժ ին էին արա
րեալ և ամփոփեալ՛ի զգուշաւոր տեղիս։ զեր
կուց տեղւոց նշխարն իմն ջ վիմաց եդեալ էին,
և զվինն որ և բազում էր նշխարն եդեալ էին
իմն ջ փայտեայ արկղ որ է անդուկ, և տեղի
փոքրիկ երբև զմատուռն շինեալ վն նշխարա
ցն, և անդ եդեալ էին զմնդուկն լի նշխարօք։
և յորմն մատրանն գրեալ կայր գիր, զորոյ զօրի
նակն առեալ ահաւասիկ գրեցի ասա, որէ այս։

✠ Ով հլուպափառ և երջանիկ վկայ անբաժա
նելի Քրիստոսի՝ օր՝ և համազոյդ Հո
գւոյն կամելին ընտրեալ ասորինս ասեմ, անսխալ
երկնաւոր փեսային Հարան, զբարեգործակ
արքային ունող, գոլով գլուխ, միշտ և անընդ
հատ յաղագս Քրիստոսի քեզ սպասաւոր սիրոյ Հո
գւոյն։ Ով սրբուհի աղաչեմ յիշատակողացս
անուանի քոյ բարեխօսութեամբ և անանուանդ ա
ղօթիւք լերպահապան և անդիս, որով Հանդի
սացիս ասորնոցս լինիլ, սիրէ կոյս արագ օգնա
կան,

կան ; որ և պատապարան եղիցիս յամի յաղթող բարեբան ։ Ոչ ինչ ևս զնոր նուիրեցայց ես կապել ընդ անուանս վերստին Ա. Ծագործո ղին կամահաճոյ յարկիս , զոհն մանուածոյ որոյ չնորհօքն բաւականացայց աղաչեմ յանձն և յարանուն քեզ հովիսիմէ ։ Ոչ ակովք քա հանայ սէր կաթուղիկէ արհի եպիսկոպոսարա նին ։ Այս խոսրովիկ ծառայ սէր հովիսիմէի ։ Այսր ողոքին ։ Առ ի մանն ։

Այսքան բանքսորոց յրսկիզբն կարեալ եմ նշան խաչի . ուրոյն ուրոյն գրեալ քեզ են յորմ մնորհան յորում եդեալ են զնդունչն լի նշխարօքն , և մեր անդի առեալ զօրինակն գրե ցաք աստ , ՚ի զուարճութիւն ձեզ առ յապայն պատահեալ ընթեր ցողացդ , և յիշատակ և առիթ վարձուց բարեաց ՚ի Քէ մեզ աշխա տողացս , աղօթիւք ձերովք և բարեխօսութիւբ սրբուհւոյն հովիսիմէի ։

Այս ակիզբն և կատարումն երկուց վկայարա նացս , սրբուհւոյն գայիանեայ , և սրբուհւոյն հովիսիմեայ , եղև յամն երիս , զի հազարև հա րիւր թուին զսկիզբն արարին նորոգութե , և ՚ի հազար և հարիւրևերկու թուին զերծան ՚ի գործելոյ , բազմօք ծախիւք և յոլովիւք աշխատութբ շինեալ կատարեցին ՚ի փառս Քէ և սրբոց վկայից նր ։

Սրբազան հօրս մերոյ Տ՚ն փիլիպպոսի կամե ցեալ դնալ յեէմ , որև երթեալ գնաց բազմաւ տ բոխու , վրդովմօք , եպիսկոպք , և բ՚ն իւք և ոգա սաւորք , որք էին իւր միաբանք ։ Ասկ ՚ի քա զաքաց և ՚ի գաւառաց սրբ՚ն ընծանուորբ յոյժ բազումբ վարդապետք , և եպիսկոպք , և երէսանք , որոց լուեալ զկամբաւ գնալոյ հայրապետին մեր , փութացան և նոքա ՚ի գնալ ։ Այս յորժամ

Հայոց վիճակեցաւ կաթողիկոս ի քաղաքն Թէոդուպոլիս, որ է արզրում, և համբաւ գնալոյն է Հայոց ի մեծ քաղաքն կոստանդնուպոլիս. իսկ Հայկականք ժողովուրդք՝ որք բնակեցեալք են ի կոստանդնուպոլիս յաղագս մեծաչուք փառաց հայրապետին եւ բանից, մտեան առ երջանիկ պարքոս Թէոդորին, որ է վէմզհրն, և խնդրեցին ի նմանէ զհոգեբարեան ծառայ ի դրանէ Թագորին, ընդ նմին և զնոսա Թէոդորականաւ կնքովն զի ծառայ կոչեցեալ իշխանն եկեալ պաշտպանեալ սպասաւորեսցէ հայրապետին յամենայն շրջագայութիւնս նոցա՝ որք ընդ իշխանութեան ( )սմանցւոց, զի մի գուցէ որ յիշխանացն կամ յաշխարհականացն՝ զրպարտեալ խռովեցէ և բռնադատեալ վշտացուսցէ զհայրապետն։ Որոց խնդիր հաճեալ եպարքոսին տնօրինմոս Թէոդորական, և իշխան մի բարեպաշտօն, որ և եկեալ իշխանն առ հայրապետն, և կատարեալ զգործ խնդրոյ պաշտպանութեանն սպասաւորելով հայրապետին յամենայն շրջագայութիւնս նորա քանզի յամենայն քաղաքս՝ որք են ընդ իշխանութեանն ( )սմանցւոց շրջեցաւ կաթողիկոսն, և իշխանն ընդ նմին շրջագայեալ սպասաւորէր, մինչև բերեալ հասոյց զնա յաթոռն նորին ի սբ. Էջմիածինն, և յանձնեաց իշխանի աշխարհին մնհմատուլի խանին, և առեալ՝ ենմանէ զհոգեղէն նշանն և ազատութեան դարձաւ ի դուռն Թէոդորին իւրոյ ի կոստանդնուպոլիս։

Այսուհետ վիճակաւոր կաթողիկոս եկաց յեջմիածին ջորս, և վաշայ քաղաքին և պատրիարքն հռոմոց, և վանաց պետն Փռանկաց, բազմամեծարեալ և մեծաշքօք վարուք ընդունէին և պատուէին զնա՝ որքան եկաց նա անդէն։ Այս զյաւտակս եկեղեցւոյ սէնն յակոբեայ՝ գեղեցկիւ

յօրի

յօրինուածով և նկարակերտիւ յարմարութիւբ
երանգ երանգ վիմօք սալայարկ արար՝ զի թէ
պէտ յառաջն գոյր սալ յարկ՝ այլ ոչ էր հնաւ
սար և դիւբ, այլ քարձր և ցած, ան յարմար,
և կոպիտ՝ և զաւագ խորանի բեմին բարձրացոյց
զի յառաջն կարի ցած էր։

Ի սմին ամի յորում գնացեալէր յԵրեմ տէր
փիլիպպոս կԹադիկոն, եկեալ էր անդ յԵրեմ և կա
Թադիկոն սբսայ տէր ներսէս. յորում ժամա
նակի էր առաջնորդ Երեմի ածատուր վարդա
պետն։ Ի սկ հոգիբնակալ Հայրապետն տէր փի
լիպպոս կԹադիկոն, որ նման առաքելոյն պօղոսի
Հանապազ ցաւէր և հոգայր վն հիւանդուԹեց
և անկարգուԹեց եկեղեցեաց։ Ի ա ամենեքեան
ժառանգաւորօք իւրով վիճակին միակամ ե
ղեալ կամեցաւ բառնալ՝ ի միջոյ զանկարգու
Թիս. վն որոյ հանապազօր դասիւ և քարոզիւ.
և առանին խօսելով յորգորէր զնմանն գալ՝ ի
միաբանուԹ և՝ ի սէր և բառնալ զանկարգուԹիւն
և զատելուԹիւն։ Ի որոյ քաջածաւալ քարոզուԹեան
և հոգեբուղխ վարդապետուԹենէն քաղցրացեալ
Հանուր ժողովն գումարեալ։ եկեղեցականք
և աշխարհականք. յորս էին գլխաւորքն կա
Թադիկոն սսոյ տէր ներսէս. և առաջնորդն
եՐեմի ածատուր վարդապետն. միաբանուԹիւն
խոնարհեցան՝ ի հրամանս Հայրապետին փի
լիպպոսի. և հաստատեցին զկանոնական բանս
երէքտասան գլխոյս. զորս համառօտիւ նշա
նակեցից ստորեն։

Ի որոց. Ի առաջինն է սէր և միաբանուԹիւն եր
կուց աԹոռոց կԹադիկացն Ի՝ջմիածնի և Ի սսոյ.
և իւրաքանչիւր կԹադիկոս զիւրով վիճակի նոճի
րեալն ձեռնադրեսցէ և մի զայլոց. և Թէ դէպ
լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք,

յիւրում վիճակին տեղաւորեսցէ զնա։ և ձեռնադրեալն՝ թէ յայնմ կաթուղիկոսի վիճակէ փոխեսցի յայլ կաթուղիկոսի վիճակ, անընդունելի լիցի։

Նրերորդ՝ զի ինքն նուիրեալն եւս. մի՛ համարձակեսցի առ այլ կաթուղիկս գնալ թողլով զիւրն. այլ առ իւր կաթուղիկոսն։

Նրրորդ՝ զի թարց խնդրանաց ժողովը դեան և վկայականի թղթոյ մի՛ ձեռնադրեսցի որ յեպիսկոսութեն։

Ղորրորդ՝ ամենևին զինչ և իցէ պատճառաւ. որ եպիսկոպոս զայլոյ վիճակ մի՛ յափշտակեսցէ։

Ինգերորդ՝ միոյ վիճակի մի՛ լեցին երկու եպիսկոպոսք, և երկու առաջնորդք. բայց թէ կարի մեծ ինչ պատճառ իմիջ գայցէ։

Վ եցերորդ՝ մի՛ համարձակեսցի եպիսկոպոս՝ յայլմէ վիճակէ զոք ձեռնադրել. այլ թէ համարձակեսցի. լուծցի ինքն և իւր ձեռնադրեալն։

Նօթներորդ՝ զի եպիսկոպոս որ թէ ոչ հրամանաւ կաթուղիկոսին իւրոյ՝ այլ կաշառօք և այլազգեաց բռնութեբ համարձակեալ նշխեսցէ այլոց վիճակաց. լուծցի՛ և կարգէն։

Վ աթներորդ՝ մի՛ համարձակեսցի որ վարդապետն ընխտրաբար տալ զիշխանութեն վարդապետութեն ամ ուսիք. եթէ ոչ ինչ նուիրեալն կատարեալ՝ ուսմամբ՝ և առաքինութեբ՝ և հասակաւ՝ և ձայնով երկիւղիւ՝ և վկայեալ յամենից։ զի այսու պատճառաւ բազումք անկարգութիւք և գայթակղութիւք մոխն յեկեղեցի։ և թէ ատունգանեալք քամահիցեն զայս հրաման. տուողն իշխանութեն անկցի՛ ի պատուոյն. և առողն իշխանութեն անընդունակ լիցի։

Իններորդ՝ քահանայ և այլ ծառայողաւոր յիւրմէ

յիւրմէ եպիսկոպոսէ ընկալցի զձեռնադրութիւն հաւանութիւք իւրոյ ժողովրդեանն. և թէ ոչ այսպէս, լուծցի ՚ի կարգէն։

Տամեր որդ՝ զերաւունս և զշնորհս որ ՚ի ժողովրդենէն կարգեալէ եպիսկոպոս և երիցս ցանց. ըստ հրամանի հայրապետականաց կանոնաց առցեն եպիսկոպոսք և երիցունք. և մի զմի մեռանս զրկեսցեն. որոց վնաս զտրտունջ և զժգոհութիւս յոլովս լսեմք հանապազ։

Ստեփաներ որդ՝ երիցունք մի զրկեսցեն զի բեարս։ զմիմեանց ծուխն և զհասոյթն յափշտակելով. կամ կեղծաւորաբար բարեձևութիւք՝ և կամ այլազգեաց բռնութիւք. այլ իւրաքանչիւր ոք իւրով բաժնաւն բաւականասցի. և թէ ոչ այսպէս, վտահանօղն լուծցի ՚ի կարգէն։

Աբրհոտաստաներ որդ՝ յորժամ հանդերձեալ իցեն դնել զնշան ումեմն աղջկան յաղագս ումեմն երիտասարդի. մի իշխեսցեն առնել զայն կանայք, կամ ժողովրդականք, կամ երիցունք առանց բազմի քննութեան. կամ առանց գիտելոյ առաջնորդին։ այլ քահանայքն քարոզեսցեն զբազում աւուրս խմբով եկեղեցւոյն. և ծանուսցեն առհասարակ ամենեսին։ զի գուցէ ոք տեղեակ իցէ ազգացեղութեան նոցա. որոյ ՚ի լսելն եկեալ յառաջագոյն ծանուսցէ. և այսպէս յետ բազմաց քննութեան՝ թէ ոչ գտցի ազգացեղութիւն խմբով նոցա. ապա յայտ յանդիմանի ամենեցուն քահանայից և ժողովրդոց՝ քահանայքն օրհնեսցեն զնշանն զայն՝ և հաստատեսցեն գործն։

Աբեքտաստաներ որդ՝ այրիք երիցունք՝ թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ ունիցեն մանկունս մնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին. և թէ ոչ այսպէս, գնասցեն ՚ի վանս և յանապատս։

և թէ ոչ գնասցեն ի բաց կացցեն ի ժառանգութենէ և ի կարգէ։

Ո այսքան գլուխ խրատական բանիս իբրև ղկնի կարգեալ սահմանեաց. և քարոզեաց յամառութիւն առաքի ամենեցուն։ առ որ կա՛ձեալ և հառանեալ և յօժարութիւն յանձին կալեալ տեառն ներբեսի կիւղիկոսին սասն՝ և ամենայն վրդովմունս. և ամենից վարդապետաց, և եպիսկոպոսաց, և իշխանաց, ձեռնադրեցին և կնքեցին. և համակարիւ յօժարութիւն առին զօրինակն և տարան յաշխարհն իւրեանց. որ և ի բազում տեղիս կայ լինակատար օրինակն այն. և տակաւին կան նովին ուխտիւն և սիրոյն հնորհօքն Քրիստոսի։ Իսկ զայլևս բազում արդիւնս և զգործս ուղղութեան սահմանեաց անդէն յեղեմ։

Ապա եղեալ յեղեմ եմուտ ի նաւ և ծովու գնաց ի կոստանդնուպօլիս. և եկաց անդ ամս մի բազում. և անդ ևս զարդիւնս և զգործս ուղղութեան յոլովս հաստատեաց։ Իսկ նախքան զամ արար միաբանութեն անջատեալ երկպառակութեն նոյ. քանզի ի ժողովրդականացն որք բնիկ տեղացիք էին ի քաղաքէն կոստանդնուպօլսէ. բարձամիտ բարձրայօն պարծանօք հարստահարեալ թևս ածէին իվէր եկամտից ժողովրդոցն. և իբրև զգուշհիկ ի ջմարդիս ունէին զնա. և զամն իշխանական իրակութեան զգործս և զբանս ի ձեռս իւրեն գրաւեալ ունէին և գործէին. և զկամուտան ի բաց քեցեալ անհաղորդս պահէին։ Ո ածորոյ և նոքա հոգւով ջափ վշտանային ընդ քամահանս իւրեն. և հանապազ խոցոտիչ և ատելութեն բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին. և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցն անհաշտ և արեամբ ջափ ատելութեն։

Լսակ՝ի գալ կԹղկսին փիլիպպոսի անդ՝և այնպ
տեսանել զնա. կարևոր քան ամենից գործոց իւ
րոց վն նորին տարաւ զհոգս՝ի բազում աւուրս
բազմազանիւ կերպիւ. երբեմն հասարակ և եր
բեմն առանձին խրատելով և ուսուցանելով.
զամենն զսիրտս և զկամս շահեալ էած՝ի հաւա
նուԹիւնից իւրոց. և հաշտեցուցեալ արար միա
բանս զնն. համապատիւ եղբարս լինել և զամեն
զգործս և զբանս իմիաբոլն հոգալ և կատարել։
Եւ այնուհետև ջերմագոյնք սիրելիք և վշտա
կից եղբարք լեալ՝ կան՝ի սահմանադրուԹիս
հայրապետին փիլիպպոսի. գեղեցկիւ սիրով և
միաբանուԹիւ. ընորհօքն ՔՀ Յ մերոյ։

Ապա յայնմհետե զձեռն՝ի գործ եարկ վճա
րել զպարտս եկեղեցեացն. վն զի քառասուն
հազար ղուռուշ պարտք կայր իվն եկեղեցեացն
այոց որ՝ի կոստանդնուպոլիս. և պատճառ
պարտուցս ելն։ Ալա սոսկ միայն կոչմամբ և
Թէ պատրիարգք անուանեալք առաջնորդքն.
որք նստին Թղրականաւ իշխանուԹիւ. և որ
ծաԹոյ ընտրուԹիւ սպրդեալ՝ի ներքս մտանէն.
յանձանց, և՝ի սուտակասպասից ընծայեալք,
և ոչ յՅ. և երկրորդ՝ խաղմաներքն և խու
վարքն՝ի ժողովրդականացն. որք վն փառա
սիրուԹիւ, և վն նախանձու, և վն մարմնաւորաց
շահուց ակնկալուԹիւ. գումարտակ լինէին
ոմանք իվն այսմ առաջնորդի. և ոմանք այնմ
առաջնորդի. սուտակասպաս արբանեակք և
զօրավիգք լինէին նոցա։ և ապա գնացեալ առ
դուԹարդարն, և առ վեզիրն, և առ Թղրն,
տային զկաշառս յոլովս նմ. և վանէին զախոյ
եանն. և առնուին զիշխանուԹիւն սոսկ անուն
պատրիարգուԹիւ և առաջնորդուԹիւ։ և զայլ
ևս բազմապատիկ կաշառս՝ի դրուն իշխա

նացն ցրուէ ինն ասա և անդ. և այսպէս առնելով բազմացաւ՝ բարդեցաւ՝ և դիզացաւ պարտքն՝ և եկեալ մինչ՝ ի քառասունհազարը ղուռուշն։ Այս յայսմանէ պատճառէ լցաւ խռովութեամբ ծաւալքաղաքն Կոստանդնուպոլիս. և իբրև ըզխռովեալ ծովն անդնդ ապտոյտ յատակաւն՝ լեռնանմանաւ կոհակաւ՝ շարժմամբ՝ շչմամբ՝ շառաչմամբ բրիքքաճայնիւ գոչմամբ։ և իբրև զորոտումն կայծակնակեց և հրացանից ամպոյ դղրդյուցանէր զամեն մեծելիս։ և համբաւ խռովութեաս այսմիկ ծաւալեալ տարածեցաւ յամեն քաղաքս և՝ ի գիւղս՝ ընդ արևելս և ընդ արևմուտս. և ամէն զայն՝ ի բերան առեալ խօսէր։ Այս՝ի պատճառս այս բազումանգամ արք երևելիք և անուանիք, երիցունքն և երեսփոխանքն և այլք՝ ի կոստանդնուպոլսէ ելեալք երկարաձգիւ ձանապարհաւ եկին՝ ի սբ աթոռն Այսմիածին առ կաթուղիկոն. առ ի հնարել ինչ վն թառնալոյ խռովութեացն և վհատելոյ պարտուցն։ և կաթուղիկոսն յամէն զօրութէ ջան եդեալ հնարէր. էր քեամն թղթով և երբեմն մարդուղարկելով. և այլով կերպիւ զհնարս հնարելով։ և ոչ եղև խաղաղութէն խռովութեց ժողովրդեանն։ Այս յայսմանէ պատճառէ. ժողովրդականաց քաղաքին բազմաց եղև վիշտ և վտանգ և ինաս. զի ոմանք եղեն տնանկք և աղքատք՝ զրկեալք յընչից և յիշխանաց՝ ի տանց և՝ ի հայրենեաց։ և ոմանք՝ ի բանտս և՝ ի կալանս մեռան։ և ոմանք վտարկան լեալ՝ ի հեռաւոր քաղաքս նշդեհու թէ չորքին. հեռացեալք յընտանեաց և՝ ի ծանօթից՝ և այնպէս զաւուրս կենաց վճարէին։ Այսյսմանուէ առտան երկարեցաւ այս գործդառնութէ. մինչև գնաց անդ ծառայն Այ՝ տէր վեհ հիսպոս կաթուղիկոն. և զի Ձ՚ երբ ընդ նմա. որոյ

չնորհօք վճարեաց զայնքան պարտսն ի նոյն քաղաքի ժողովրդականացն։ վն զի ժողովը դականացն ամենեցուն իւրաքանչիւրումիք ըստ իւրում կարողութե հրամայեր օգնական լինիլ առ ի վճարել զպարտսն։ և այլն առ որ լինէր հրամանն հայրապետին ոչ ընաւ իշխեր բան ինչ ասել։ այլ յօժարութե և սիրով կա տարէր զհրամանս հայրեպետին վն օրհնութե նորին։ Յն կացոյց հոգաբարձուս արս հաւատարիմս գործոյս այսմիկ։ որք բազմաւ ջանիւ և աշխատութե ժողովէցին զնուէրս ժողովրդեանն յամիսս ութ։ և վճարեցին զամենն պարտսն։ և ազատեցին զեկեղեցիսն ի պարտուց ընորհօքն Ա՛ի Ա՛՚ մերոյ։

Յն հռչակ համբաւոյ արդիւնականի գործառնութե և ճարտարութե վրդպտութե։ և առաքինականի ճգնութե տեառն փիլիպպոսի կաթուղկոսի։ ոմն յամ երկիր սփռեալ տարածեցաւ՝ սոյնպէ և յիլով քաղաք ի՛ Տաս։ և եպիսկոպն իլովայ քաղաքին Նիկոլայոս անուանեալն գե տաց յոգի իւր։ զի Թարց բնաւին կարծեաց և երկբայութե դեղ և սպեղանի վիրաց իւրոց՝ և ուղղութե իւրոյ ձախորդեալ գործոցն ի սոյն հայրապետե և ի հոգևոր բժշկէ լինել լոց է։ վնորոյ առանց դանդաղելոյ ելեալ յիլով վայ և եկն ի կոստանդնուպոլիս առ ոտս հայրապետին։ և հնազանդութե յանձնեաւ զկա նոնս և զկարգս հրամանաց նորին։ որով և զար ձակումն կապանաց և զիշխանութե եպիսկոպոսութե։ և մեծաւ ուրախութեամբ դարձաւ րեալ գնաց յիլով ի քաղաքն իւր։ Յն դու զամ որպիսութիւն այսորիկ պատմութե։ եթէ կամիցիս ի նոցին ելովացւոց ձառէն ուս ցիս։ զոր յառաջի կայդ կարգեալ եմ։ զի անգ

լեով

ընով շարագրեալ եմ ըստ պատշաճին իւրոյ։

Յորում տեսանն փիլիպպոսի կելով ի քաղաքին Կոստանդնու պօլսի զբաղումս գործս բարւոք թէ և զկարգս ուղղութեան հաստատեաց անդէն եկեղեցականաց և աշխարհականաց. և ապա բազմեալ երևելեաւ եկեղեցականաւ անօթով, և մատնեաւորքն կարասիւքն եղեալ ի Կոստանդնու պօլսէ Յանապարհ արարեալ եկն և հասեալ ի բարձրագահ աթոռն ի սբ. Քաղաքին. ի տանի փոխման սրբուհւոյ կուսին Ծածնի և մուտ Քսիածին։ Յոր եղև գնալն և գալն փիլիպպոս կաթուղիկոս յերից ամս. զի հազար և հարիւր թուին գնաց յԵՀ։ և ի հազար և հարիւր և մի թուին եկաց ի Կոստանդնու պօլիս։ և ի հազար և հարիւր և երկու. թուին եկն ի Քսիածին։

Երբ եմուտ թուականն ի հազար և հարիւր և երեքն յաւուրս աւգ պահոցն զսկիզբն արար զհինն արկանել զանգակատան սբ. Քսիածնի զի յառաջմէ ոչ գոյր զանգակատուն Քսիածնի։ բայց աւնչուշն բազձանաց յոլովագոյն կայր ի սենեակ սրտի կաթուղիկոսին փիլիպպոսի վն զանգակատանն շինելոյ։ և որ զկամս երկիւղած ծաց իւրոց կատարէ՝ կատարեաց զկամս սրտի նորա այսու կերպիւ։

Յանգի ի ժամանակին յորում ի Կոստանդնու պօլիս էր աթոռ փիլիպպոս կաթուղիկոն, էր և անդ հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անունն էր անտոն չալապի, և էր սա ի քաղաքէն բուբ սայոյ, որոյ տունն և տեղիք և բնակութիւն անդ ի բուբսայ էր։ այլև յիշմիր քաղաքի ևս ունէր զտունս և զապարանս, նա և ի Կոստանդնու պօլիս ունէր զտունս և զապարանս հոյակապս և ոս կեօծս զարդարեալ երանգ երանգ գունովք։

Յոր

Եւ եր այրս այս անաոնչալապի յոյժ երևելի և հռչակեալ այնքան մինչ զի յայտնի եր ի դուռն թագաւորին ( ) ամենցուստ, նա և ի հեռաւոր աշխարհս ճգնանկաց. Պատմիչ, զի կարի ընչաւէտ և փարթամէր առացուածովք. և եր իւր գործ վաճառականութիւն, որոյ պատճառէ երբեմն ժամանակաւ ի կոստանդնուպոլիս լինելը, և երբեմն ի զինուորին լինելը, որ է իզմիր։

Ի յաւուրսն յորում եր փիլիպպոս կաթողիկոն ի կոստանդնուպոլիս, պատահեցաւ և անդ լինել անտոն չալապոն, որոյ առաքելոյնորհ վարդապետութիւնն, և զմեք բարեհն ցաղ քաղաքավարութիւն առաւն փիլիպպոսի կապել եղև ի սէր նորին չալապին։ Ընդ որում ասաց առ փիլիպպոս, վասն յաճախ պատճառականէ ամ ինչ անպակաս պարգևեալ է քեզ. եթէ ընչից յոլովութիւն, եթէ ծառայից բազմութիւն, եթէ անուանի մեծութիւն։ արդ հարկէ քեզ զի ըստ արգոյաւոր անուան քումմ երևելի յիշատակ հոգևոր թողցես քեզ յերկրի. յորոց մինն այս է. որ առաջնակայ քեզ. որ է զանգակատունն Նիմաճնի. որ կարի հարկաւոր է, և ոչ գոյ. արդ կամիմ զի զայն պակասութիւն սրբոյ աթոռոյն դու կատարեալ լցուսցես։ Հակառակ լապին մեծաւ յաճախութիւն և համակարիւ խոնարհութիւն խոնարհեալ ի հրամանս հայրապետին յանձնեաւ կատարել զպատուիրեալն նմա։ զոր և ասաց առ հայրապետն որովհետև այդպես է յաճախութիւն քումդ կամաց. նա և հարկաւորէ սրբոյ աթոռոյն Նիմաճնի. յիմն կողմանէ դու լինիս ինձ երեսփոխան և հայր։ օգնութիւն Ի ի ժամանակի քո ի սբ Նիմաճնին. որքան բաւէ և ախորժէ յաճախութիւն մտաց քոց. լայն և ընդարձակ, հատատակ

ղոյս

ղոյս և բարձրացին. գեղեցկազանիւ նկարա
կերտուԹիՒ՝ ձեռնարկեալ շինեացեալ: և զամ
ծախ գանձուց, որ անդ լինի, ես լինով և յօժա
րուԹիՒ նահ աւելեաւ հատուցանեմ:

Ա. ԴԴ այսու պայմանաւ յորժամ Ե՛հաս փի
լիպոս կԹռիկոն'ի սուրբ Ա. ՋՄիածին զակիզն
արար շինուԹիՒ զանգակատանն. որոյ սկիզբն
և հմնարկուԹիՒնն եղև'ի Թուականիս մերում
հազար և հարիւրևերիք յաւուրս աղուհա
ցից. յարևմտից կողմն մեծի տաճարին Ա. Հ՛ոյ
Ա. ՋՄիածնի՝ իվերայ արևմտեան դրան նորին
հնոպ և կից որմոյ նորին: և յամին յայնմիկ
բարձրացաւ շէնքն մինչև կապեցան ներքինն կա
մարքն. և ժամանեաց իվ՛ր ձմեռն. և փոխե
ցաւ Թուականն'ի հազար և հարիւրևչորս
և յորժամ հասին'ի մարտի ամիսն'ի հինգերորդ
դուռ կերակին աղուհացից. եղև վախճան
մեծի հայրապետին տեառն փիլիպպոսի կԹռիկ
սին. և խանգարեալ խափանեցաւ շինուԹիՒն
զանգակատանն: Ա՛անզի իշխան քաղաքին
երևանու՝ որ էր լալաբէկն որդի մահամատ
ղուլի խանին. այս այն լալաբէկն է. զոր ոչխարի
քօղաւի Ճառի մէջն յիշեցաք. սորին որդին
մահմատղուլի խանս էր այր գուռզ և բռնա
գլուխ. այլև կուռէՀ ընդ քրիստոնէից՝ Թէ
պետ կաշառօք և բազմօք խնդրանօք խնդրեաց
'ի նմանէ կԹռիկոն փիլիպպոս զհրաման վե՛ր շի
նուԹեն զանգակատանն. սակայն ոչ յոյժ ևնա
խանն վե՛ր կուռէՀուԹենն. բայց կԹռիկոն ոչ և
էր յոյս նորա հաստատուն առ ՈՀ նովին յու
սով էարկ զհինն զանգակատանն, և սկսաւ շի
նել. և յորժամ վախճանեցաւ կԹռիկոսն փի
լիպոս մնաց կիսաշէն զանգակատունն վե՛ր քա
րուԹեն խանին՝ զի հանապազ ասէր Թէ ոչ Թո
ղում

զում չէին զզանգակատունն՝ այլ քակէլոց եմ
զնա։ Եւ յայնմիկ նախանձեցաւ Ի-
պահեաց զզանգակատունն՝ և զիանն քակեաց.
քանզի անուանիք և մեծագոյնք իշխանք առա
քեցան 'ի Թագաւորէն 'ի յերկիրսդ շահաբասէն
յաշխարհս արարատեան վն Թագրականաց գոր
ծառնուեց։ և վն գոռոզից բարուց իւրոց մահ
մատղուլի խանն, 'ի չմարդի համարեալ ան
պատիւ ունէր զնշխանան, և զբարեր ընդ նոսա։
և այնքան արար մինչ զայրացոյց զսիրտ իշխա
նացն. և նոքա յորժամ գնացին առ Թագաւորն
սկսան ամբաստանութիւն առնել զիանէն. վն
որոյ ցասեաւ Թագաւն խմբ խանին, և ընկէց զնա
յիշխանութենէն. և յափշտակեալ կողոպտեաց
զամենայն ստացուածսն. և կապանօք տարաւ
'ի սպահան քաղաք. և զայլոմն 'ի Թագրականաց
ծառայից առաքեաց յերևան իշխող՝ որոյ ա
նունն էր նաջաֆղուլի խան։ Եւ որ մատու
ցեալ տէր յակօք կնքիկան և 'ի բազում աւուրս
երթևեկութենէ առնելով 'ի դուռն նր. և զբա
զում զոսկի և զարծաթ տալով նմա և նորին իշ
խանացն. հազիւ թէ եառ զհրամանն շինութենէ
զանգակատանն, որդ մինչև այս ամ լեալ զրաւե
ցաւ՝ վոխեցաւ Թուրքականն. և ես հաս մինչև 'ի
հազար հարիւր և վեց՝ և ցյուլիս ամին. և ապա
այնու հետև սկսան շինել մինչև կատարումն
զարմանալեաւ արուեստիւ. յաջնազանիւ նկա
րակերտութ. քանդակեալ 'ի վեմն յամն պատ
շաճաւոր տեղիս տեսակս զանազանից կենդա
նեաց, գազանաց, անասնոց, Թռչնոց, բուսոց և
անկոց։ այլև յօրինուածս շինուածոցն յոյժ գե
ղեցկայարմար, խաբխսքն, և սիւնքն և խոյակ
քն, և կամարքն, և այլքն ամքն, և յաւուրս
որնուէն նր անուանեցին աւուրք հրեշտակա
պետ։

պետ. խորհրդով գաբրիէլեան փողոյն որ 'ի բարձանց գոյէ: Այս կատարումն զանգակատանն, եղև հաղար և հարիւր և եօթն թուին և 'ի տօնի խաչվերացին օրհնեցին զնաչն որ 'ի գլուխ զանգակատանն և քակեցին զնսկալէն. Այրդ ստոյգ պատմութեան զանգակատանն այս է. Թէպետ իվերայնորին գրեալ թուականքն այլապէս են:

Այս որքան եկաց փիլիպպոս կթղկոսն իվր երկրի. Թէ 'ի ժամանակս վարդապետութեան իւրոյ՝ և Թէ 'ի ժամանակս կթղկոսութեան. անդադար և անխափան արար և գործեաց նա զոր դիւնս իմէջ աշխարհի: և մանաւանդ բարձրացահ աթոռն սուրբ Հրեշտակին սովաւ առաւել Հաստատեցաւ և փարթամացաւ. եկեղեցս կանաչ անօթովք ոսկւով՝ և արծաթով՝ և մեծագնիւք զգեստուք. և պատուականօք գրեանք վարդապետականօք բազմօք: սոյնպէս և մոմ մեծաւորք սպասիւք, և կահիւք պղնձեղինօք և բրդեղինօք՝ և այլոք այսպիսեօք: այլև հոյլ անբանից կենդանեաց. ուղտք, և ջորիք, և ջորեբք մատակ ձիոց. և ջոկք խաշանց և անդեոց: այլև արտս և այգիս և բուրաստանս: Այլև բազմազանիւ կերպիւ հոգևորաւ և մարմնաւոր արդեամբ օգտակար լինէր աշխարհի. զի իբրև զբերդ ամուր էր նա շուրջ զազգին Հայոց ընդդեմ մահմետականաց՝ որք ոչ կարէին հարստահարել և 'ի զոհ ել զՀայս. վասն զի ամէն ներհակք ախոյեանք՝ որք իբրև զևառն հզօր ընդդեմ կային, ամէն խորտակեալք 'ի միջոյ բարձան. եթէ եկեղեցականք, և թէ աշխարհականք. և Թէ այլասեռք և այլազգիք փառաւորք իշխանք:

Այս եկաց նա իվր երկրի մինչ 'ի ժամանակս

ծերութե, լեալ ամաց վաթսունն և երից, արգոյ աւուր և մեծաշուք առաջի ամենից ազանց, Նայոց, Նոռոմոց, Ալ ըստ, ( )ամանցւոց, և Պարսից մեծամեծաց եչխանաց, նաև թագւորց իսկ։

Այս յօրէ յորմէհետէ եառ զիշխանութե վարդապետական, անխափան 'ի քարոզութե և 'ի խրատել եկաց, 'ի գիւղս և 'ի քաղաքս, 'ի վանս և յանապատս, և յամենեսեան տեղիս, և զօրինչ քարոզեալ խրատեր ոչ սղալեր, այլ ամն ար դիւնացեալ պտղաբերեր։

Այս 'ի մերձակայ աւուրս վախճանի եւրոյ տեր փեղիպոս կաթողիկոս եր 'ի նբ Ալ քջմիածինն. յաւուրս աղուհացից 'ի ջորրորդում կիրակէ ին, և ըստ հանապազորդեան սովորութե եւրում նստաւ յաթոռ և սկսաւ ասել զքարոզ այնր կիրակէ ին, որոյ բնաբանն է, Ա՛յր միեր մեծա տուն՝ որոյ եր անտես և եղև գնմանէ ամբաս տանութե։ Այս մեկնելով եհաս 'ի բանն յայն, որ ասէ, ոչևս կարես լինել անտես, և աստէն վերջաբար բանիւն և յաւուրն երկրորդի, որ եր երկու շաբաթ օր տակաւացաւ՝ և անկաւ 'ի մա հիճն։ Ժողովեցան առ նա ամքն միաբանքն և աշակերտքն իւր հարցանել ին վն տակաւութե ն, որոց պատասխանեալ ասաց՝ այս է վերջին տակա րութե ն իմ, որ ոչևս յառնեմ յառողջութե, քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի 'ի բանն որ ասաց։ Ալ ևս կարես լինել անտես, Թուէեցաւ ինձ ոմն թէ յայլմէ յուսքէ ապրե ցաւ 'ի սիրտս իմ, թէ ոչևս ապրիս մարմնաւ որօք կենօք՝ և այլևս ոչ անտեսես 'ի տան Ա՛ր, այլ վճարիս մահաճամբ։ Այս մնաց տակաւ մինչ եհաս 'ի հինգերորդ կիրակէն՝ և յայնմ գիշե րի դէպ 'ի լոյս առաւօտուն սկսաւ հոգեվա րել, ննջեն ևս գիտաց օր հոգեվարն է, վասն

որոյ Հանապազ զաղօթս և զօրհնաբանութիւն
Հ.Յ ունէր՝ի բերանէւր ասելով. արդ արձա
կեա զծառայս քո Տ՛ր ըստ բանի քում՝ի խա
ղաղութիւն. ասէր ցնդեաց զսրբասնեալ հոգին
իւր՝ի ձեռս Հ.Յ սէր Հայրապետին փիլիպպոս.
Հ.ր հոչակեալ ծառայեցաւ համբաւ վախ
ճանի նորա յամին չորեքկայ գաւառս արար
դեան աշխարհին. և ամ որ, որ լսեր վհատեալ
թաւիկացեալ յերկիւղ անկանէր, վն զի ամուր
պարիսպն, որ շուրջ զՀայոց կր բլաւ։ Հ.կին
ժողովեցան ժողովուրդք յոյժ բազում՝ի շուր
ջակայից գաւառաց, վնզի մեաց անթաղ յա
ւուրս վեց, քանզի միաբանքն Հ.ջմիածնի և ամէն
վարդապետքն կամէին՝ի դրան սրբոյ Հ.ջմիած
նի իմէք իւր շինեալ զանգակատունն թաղել։
բայց իշխանն մահմատուլի խան՝ որ զոխաս
խանձու յորովս ունէր ընդ Հայրապետին, վ
Հղօր գոլոյ Հայրապետին իվ՛ր խանին; այլև վ
զանգակատան շինելոյն, զի խանն ոչ թողոյր՝ի
շինել զանգակատունն, և կ՛ծիկան առ բռնու
թե ուժոյ իւրոյ զՀիմն է արկ և սկսաւ շինել։
և արդ՝ի վախճանել Հայրապետին, երբ
լուաւ թե իմէք զանգակատանն կամին թա
ղել. կարի սաստկացեալ չարացաւ՝ և ոչ թո
ղոյր թաղել իմէք զանգակատանն, այլև մեծաւ
խրոխտանօք ասէր թե զզանգակատունն քակէ
լոցեմ ես։ և մեաց կ՛ծիկան անթաղ յաւուրս
վեց վն այսմ պատճառի։ և եդեալ կայր դա
գաղով իմէք տաճարին Հ.ջմիածնի, և էր զո
արթ երեսօք ոչ զկենդանի մարդ՝ի քուն և
բուբեր՝ի նմանէ զհոտ անուշութե։ և ամէն
որք հպեին՝ի համբուրել զնա հեացեալ զար
մանային ընդ յորդաբուխ հոտոյ անուշութեն,
և ընդ երեսացն զուարթութե։ ոչ միայն քրիս
տո

տունեայք՝ այլև այլազգի մահմետականք, և հիացեալ փառս վերս առաքեին Աստ որ փառաւորէ զսբս իւր։ Այս վասն զի մահմետղուլի խանն ոչ կասեցաւ ի բերտ բարուց իւրոց՝ ոչ եթող ի սբ Աջմիածինն թաղել զկիճիկան, վասն այսորիկ բարձեալ ի սբոյ Աջմիածնէ զպատուականն նշխարս մարմնոյ նր, տարան ի տաճար որբուհւոյ կուսին Հռիփսիմեայ. և անդ իմջ տաճարին ի հիւսիսայնոյ կողման խորանին հան դուցին զնա։ և է բարեխօս առ Աստ վասն ամենից քրիստոնէից և հոգեծնունդ որդեկացս իւրոց։ Ար և այժմ ամենայն բնակիչ աշխարհին ցաւագարք և ախտաժետք գան յուխտ և ի համբոյր սբոյ տապանի նր և գտանեն զտուող ջուրն ցաւոց իւրեանց։

Այս եղև վախճան սբոյ և տիեզերալուսոյ հայրապետին տեառն Փիլիպպոսի ի մերում Թուին քառասնից, Հաղար և հարիւրևչորս, ի մարտի ամսոյ քսանևհնգին, ի հինգերորդ կիրակէին աղուհացից պահոցն։ և արար նա զկիճիկեան Թէ քսանևերկու ամ և երեքամիս, և ինքնէր վաթսուն և երից ամաց, յորժամ վախճանեցաւ։ և յաջորդեաց զկնի նր զկիճիկեան Թէն սբ Աջմիածնի ջուղեցի յակոբ վարդապետն. վնզն ծաղկեալ վարդապետքն, և եպիսկոպոսունքն, որք ի մահն փիլիպպոսի ժողովեցան, կացին ի սբ Աջմիածինն մինչև ցաւն ծաղկազարդին, և ի նմին տնին օրհնեցին զյակոբ վարդապետեան կիճիկն, ի նոյն Թուին, և յապրիլի ամսոյ յուԹն։ և ապա գնացին յիւրաքանչիւր տեղս փառաւորելով զՏէր և զորդի և զսբ Հոգին յաւիտեանս յաւիտենից ամէն։

Վասն Նորոգութեանն անուանեալ Վանորիկից, և հենուԹ բազմածախից և մեծավայելչաց եկեղեցեաց։

Լ.Օ։

ԱՐՊԱՒՍԻ ԴՈՒՔՆԱՀԱՅՆՈՑ

Ժամանակի հարաւային հողմոյ հնչեալ ծննդագործ զերկիր և բղխեցուցա նէ յոքնաղանից ծաղկանց զանուշ և զտեսակս, որով եր ի նաղարդեալ վայելչանայ երես երկրի։ սկիզն սաբաթից գոգցես և զժամանակս այսոցիկ երկուց կաթուղիկոսացս մեսէի և փիլիպպոսի, զի բազումք վանորայք և նահապետք և եկեղեցիք հենեցան։ յորոց մի է մեծ և անուանի վանքն սրբոյն ստեփաննոսի նահատակին, զոր ի դարաշամբի ձորին է, որ յառաջագոյն էր անապարհասպ, նաև հենուածք տանցն և յարկացն խարխարեալք և բլբլեալք, և դիւք հենուածոցն յոտն և անպիտան։ Ասկ ջուղայեցի յակոբ վարդապետն՝ որ յետ փիլիպպոսի եղև կաթուղիկոս, սա՛ի ժամանակս կաթուղիկոսութեանն փիլիպպոսի սկսաւ նորոգել՝ և միանգամայն զամենն շինուածսն քակեաց՝ ի հիմանց՝ զեկեղեցին և զտունսն, և զխուցսն, և զայլն ամենայն ինքն գհիմն էարկ եկեղեցւոյն և շինեաց խաչանման զեկեղեցի սրբատաշիւք վիմօք վեր ամբարձեալ կաթուղիկէ, գեղեցկաշէն և զանազան արուեստակեալ նկարակերտութեբ զարդարեալ։ Այնպես և զպարիսպն շուրջանակի, և զբնտունս, և զխուցսն ամենքն և հաստահեղոյս վիմօք շինեալ։ որոց ձեւն և դիրքն և յարմարութիւնքն կարի ըմբռնի և պատշաճաւորք, զոր բազմաւ աշխատութիւբ և յոլովիւք ծախիւք յամենայն տանն սպա կատարեցաւղի գբարն և գկոմինսրն՝ ի գեղջէն աստուածատոյ բերդէն տփղեր

սօք

սաք ջուրց երասխ գետոյ և մանանինչ՝ ի քրանցն յարարգ գեղջէն բերին ձիով սոյնպ և զկիրն և զխոյան և զՀացն՝ ի հետու վայրաց բերէին մեծաւ աշխատութբ և յոլովիւ ջանիւ, և կատա րեալ յաւարտ ածին՝ ի փառս Ա. Յ և սրբոցն։

Այնպ և եսայի վրդպն՝ որ էր ինքն՝ ի մեղրի անուշանեալ գեղջէն, և սա ևս յաշակերտաց տեառն մեծէսի կթղիկոսին էր, որ՝ ի փիլիպպոսէ կթղիկէ եպիսկս և առաջնորդ կարգեցաւ սբոյ կարապետի վանացն, որ՝ ի գաւառն երնջակայ։ Ա. սա ևս յաւուրս փիլիպպոսի կթղիկէ սկսաւ նորոգել զնոյն ինքն զվանս սրբոյ կարապետի, զի միանգամայն զամն յառաջագոյն լեալ չինեած ան քակեալ էբարձ՝ ի միջոյ, զե կեղեցին և զտունն, և զխուցն, և զպարիսպն՝ և ապա շուրջանակի լայն և երարձակ զհատ և զբարձրագոյն պարիսպ էարկ։ և ապա իմջն զտունս և զապարանս՝ ի բնակութբ ինքեանց և հիւրոց։ Եսաւաւել զեկեղեցին՝ ի տեղի հնոյ եկեղեցւոյն լայն և ընդարձակ և բարձրաբերը ձիւք կամարօք և կթղիկէ եւ, իսկ ջորից սեանց կառուցեալ՝ սրբատաշօք վիմօք, կատարեալ զամ եկեղեցին՝ ի հիմանց մինչև ցծայրս նորին՝ յոլովիւ աշխատութբ և բազմօք ծախիւք կատա րեցան ամքն չինուածքն։ և՝ ի հաղար և հարիւր և երկու թուին, և հոկտեմբերի ամսոյ տասն և եօթնին օրհնեցաւ եկեղեցին մեծահանդէս սօք նաւակատեօք՝ ի փառս Ա. Յ։

Ա. յսպէս և զսբարիայ վարդպն, որ էր՝ ի գեղջէն Ա. ջմիածնի, և էր նա առաջնորդ մեծափառ ուխտին յօհանավանուց, և սա ևս յաշակերտացն մեծէսի կթղիկոսին էր, այր երև ելի փառաւոր իմջ աշխարհի, յոյժ հանձա րեղ և ճոռոմախօս, խորհրդով և խելօք կորովի

և զիմաք ահարկու։ և սա ևս յաւուրս փիլիպպոսի զՀեռն՚ի գործ էարկ նորոգել զեկեղեցիսն և զտունսն յօհանավանից, զի պարիսպն որ շուրջանակի՝ նա միայնէր պիտանի. իսկ այլքն ամենքն անպիտանք և յոռիք և եկեղեցեացն ամենեքեան տանիքն աւերեալք և քանդեալք. զաքարիայ վրդովեան ժողովեաց զբազում վարպետս քարու հատս և փայտապաշս, և դարբինս, և զՀեռն՚ի գործ էարկ սկսաւ նորոգել զվանսն։ նախ զտունս և զխուցսն ամ շինեալ աւարտեաց, և ապա զեկեղեցիսն, բայց փութանակի՝ քանզի յերկուս ամս աւարտեցաւ նորոգումն եկեղեցեացն։ ՔՀի առաքեալքն յերկիր կՀեղ զգանձս՝ որ տայր գործողաց, երեսուն քարտաշ հանապազ նստեալ զքար տաշէին, և երկու ՃՀար տար մեմար միշտ շարէին, և այլ վարպետք և գործաւորք յոյժ յոլովք վՀորոյ փութով աւարտեցաւ։ և զքարն և զկիրն յայնմանէ կողմանէ Ձորոյն Ձիով բերէին, և՚ի հազար և հարիւրևմեկ թուին զերծան՚ի գործոյ, և՚ի տօնի խաչվերացին, օրհնեցին զխաչն, որ՚ի գլուխ կՀդիկ էին և գոհացան զՔ՚Ս։ ՅուՀնէսն զաքարիայ վրդովեան, էր այր կատարեալ և յոյժ պիտանի աշխարհի, և Թէպէտ յոյժ ծերացեալ էր այլ տևեաց նա մինչի հազար և հարիւրևւթ Թիւ Թուա կանին մերոյ յորում վախճանեցաւ։ և նախ քան զվախճանն իւր ինքն փորեաց զիւր գերեզմանն, և պատրաստեաց զքար տապանի, և յոր ևիսի ամսոյ տասն յաւուր տօնի վարդավառին վՃարեաց զոյս կեանս մահուամբ, և յաւելաւ առ տէր Հանգստեամբ, զոր ևւրում պատրաստեալ գերեզմանին Թաղեցին ևւրով տապանաւն, և պատահեցաւ վախճանն նոր լինի՚ի սբ Լուսաւորչի։ զի վՀ ընտանեբար և ցաւակից

Հոգալոյ

Հոգալոյ զսպաւսաւորութիւնն սրբոյ Յովհաննէս
իւրով քաջագունով խորհրդովն և կորովով
խելօքն. որով դիպաւոր և պատեհաւոր տրա
մատեալ ընտրեր զամէն խորհուրդս և զբանս.
անդ՝ ի սբ Յովհաննէն պահեին հանապազ: վն
որոյ անդ վախճանեցաւ. և անդէն թաղեցաւ
առաջի զանգակատանն յարեւմտից կուսէ, որոյ
յիշատակն օրհնութիւն եղիցի:

Ո այսու ժամանակաւ յաւուրս փիլիպպոսի
կիւղիկոսի, շինեցաւ վերատին և վանքն սրբոյ
առաքելոյն Թադէոսի, որ է յարտաղ գաւ
առն՝ ի գիւղն մակու: զի միանգամայն ամքն
շինուածքն աւերեալք եին, և՝ ի սոյն ժամա
նակի եպիսկոպոսն մեր մկրտիչ անուն իւրով միա
բանօքն աբեղայիւք և սարկաւագօք՝ որք եին
ամքն՝ ի նոյն գեղ ջեն մակուայ: զի թէպետև
աղքատք եին և չընչից թափուրք, այլ վառե
ցան ամքն սիրով սրբոյ առաքելոյն Թադէոսի,
յուսացան յողորմութիւն աստուածոյ և՝ ի
բարեխօսութիւն սրբոյն Թադէոսի առաքելոյն,
ձեռն՝ ի գործ արկին, և զսկիզբն արարին շի
նութիւն վանացն: և նախ զտաճարն սկան շի
նել որոյ արեւելեան և հիւսիսային կողմանն որ
մունքն մինչև ցկէս միայն չէն եր ձեռագործ. և
այլ ոչինչ քնաւ, և սոքա զամէն միանգամայն
մինչև ցգլուխ կիւղկէն շինեցին, ներքուստ և
արտաքուստ սրբատաշիւք վիմօք, ամուր և գե
ղեցիկ, և եղև կատարումն գործոյ տաճարին հա
զար և ինսունևինն թուին: Ձետ կատարման
տաճարին նոյն յուսոմն, որ առ՝ ի՝ սկան զժամա
տունն շինել խրատեցեալքն քաջամիք և մածու
ցեալով կրով. և սորին կատարումն եղև՝ ի հազար
և հարիւրևերկու թուին: Ո կնի սորին շինե
ցին զվկայարան սրբոյ հուսին սանդխտոյ

Այսպա զնահատակ անուճանեալ եկեղեցին, որ է տեղին նահատակութե սբ. առաքելոյն Թադէոսի։ և կատարեալ զամէն շինուճածս զայսոսիկ շնորհօք և ողորմութբեն Ա.Յ, նոյն եպիսկոպոսն մկրտիչ և միաբանքն իւր կան անդէն և պաշտեն զՅ և զսուրբսն ակնկալեալք ողորմութեն Ա.Յ որում փառք յաւիտեանս ամէն։

Յորմէ նման շինեցաւ յաւուրս տէառն փիլիպպոսի կԹ.դկսի, և վանք սրբոյն գԷորգայ զօրավարին, որ է՛ի գիւղն մուղնի. որոյ մերձ գողով գիւղաքաղաքին կարփու, ապաստարութբե և արդեամբք մարտիրոսի եպիսկոպին, որ է՛ն նոյ մուղնոյ գեղէն եպիսկոպոսնոյ վանցն։ որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ է՛ և այլ ամէն շինուճածքն անպէտ և անդէպ։ վնորոյ այս մարտիրոս եպիսկոպոս ղեղեալ եկեղեցին, և զայլ ամէն շինուճածն միահաղոյն իբագէ բարձ, և վնոր պարիսպ պատեաց շուրջանակի չափաւոր, և եկեղեցի վայելուչ իմջ պարապին եվ ջրից սեանց կառուցեալ. և առ պարապօքն զառուն և խուցս։ զամենայն շինեալ առատեաց և ԷԹող իւր յի չատակ բարի առաջի Ա.Յ և մարդկան, և ինքն ևս անդէն Թաղեցաւ, բարեխօս կալեալ զսէն գԷորգ վե իւր և վն ամենից քրիստոնէից։

Ա.յսպ և վանք սրբոյն սարգսի զօրավարին որ է՛ի գիւղն ուշի շինեալն՝ի սրբոյն մեսրոպայ մեծ վարդապետէն. որև սա մերձ է՛ի գիւղն կարփի. որ՝ի ստորոտս արագած լերինն. այս վանքս նորոգեցաւ ձեռամբ ոսկանի վարդապետին. որ էր ինքնս յերևան քաղաքէն և յաշակերտաց փիլիպպոսի կԹ.դկսին։ զի Թէ պէտ կայր եկեղեցիքն վայելուչ և սրբաշէն և բարձրաբերձիւ կաԹ.դկէ իւ. այլ տանիք եկեղեցեացն ամենն քանդեալք և աւերեալք էին։

եկեղէ

եկեղեցիքն միայն կային ՚ի տեղւոջն. և շուր
ջանակի շինուԹի ոչ ընաւ. այլ սաստիկ քա
րուտ։ Եւսկ ոսկան վրդ. պտս Թէպէտ ոչ կարաց
նորոգել զտանիս եկեղեցեացն. զի ոչ ունէր
զայնքան գոյս. այլ մեծաւ տաժանմամբ և բազ
մաւ աշխատուԹիւք պեղէաց զջորս կողմունս եկե
ղեցւոյն. և պատեաց շուրջանակի զպարիսպ
յոյժ ամուր. և իմիջ պարսպին շինեաց ըստ
պատշաճին զխուցս և զտունս՝ և ինքն կայ ան
դէն բարւոք կարգաւորուԹիւք յուսացեալ յո
ղորմուԹիւն Ա.Յ բարեխօսուԹիւք սրբոյն սարգ
սի զօրավարին։

Ա.յլև զՀոյակապ և զլայնանիստ և զբարձրա
բերձ տաճարն փառացն Ա.Յ. զՀանգստարան
մեծի վարդապետին սրբոյն Մեսրոպայ՝ այնորիկ,
որ Է գիտ զգիրս Հայոց. ոչ և բանիք պատմու
Թեն նմ Ճառեն տարեալ Հանգուցեալն զնա ՚ի
գիւղն՝ որ անուանի օշական. արդ այս տա
ճար Հանգստարանի սրբոյն Մեսրոպայ վարդա
պետին ՚ի վաղուց ժամանակաց բովանդակ տա
նիքն փլուզեալ լինէալ էր. և միայն աւագ խո
րանն էր մնացեալ ծածուկ. և ՚ի ժամանակս
կԹռնկսուԹե իւրոյ Հայրապետն փիլիպպոս
սկսաւ զայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազ
մօք ծախիւք և աշխատուԹիւք. խրատեցելով
քարիւ և մածուցելով կրով մինչև աւարտեաց
զբովանդակն. ՚ի Թուականիս Մերոյ Հազար
և ինսունևչորս. ՚ի փառս Ա.Յ։

Ա.յլև զբարձրաբերձ և զլայնանիստ և զմեծա
շուք տաճարն որ յանուն սրբուհւոյ Ա.ծածնին
շինեալ կայ ՚ի նախկնաց և վաղուց ժամանակաց
՚ի գիւղն բջնի. որոյ տանիքն ամ՚ աւերեալ
և քայքայեալ էր։ Նորոգեցաւ Հրամանաւ
տեառն փիլիպպոսի կԹռնկսի. ծախիւք և աղ

գեամբք Քաասերի մեծի պատրկի Ջուղայեցի խօջայ պետրոսին. զոր մականուանեամբ բդուզ պետրոս ասէին. և անուն եպիսկո վանացն էր փիլիպպոս յորում ժամանակի էր Թուխա կան մեր հազար և իննսուն և երկու: Այս յետոյ եղև առաջնորդ նոյն վանացն մօսէս վարդապետն աշակերտ տեառն փիլիպպոսի կենդանւոյն. որոյ շուրջանակի պատեալ զպարիսպ վանացն գե զեցկիւ յարմարութեբ և ախորժ տեսողացն:

Կան և այլևս բազումք վանորայք նորոգեալք. և բազումք եկեղեցիք՝ի հիմանց նոր շինեալք. ՚ի քաղաքն տփխիս. և գաւառն լօռոյ. և յայլ խարհն արարատու. ՚ի գաւառն սիսական. և յայլխարհն զափնայ. ՚ի քաղաքն նախիջևան. և ՚ի գեղերսյս նմ: ոպ չքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին աստուածատու. և քաղա քին նախիջևանու, և Ջահկայ գեղջն. և շահ կերտու գիւղին. և գաղ գիւղին. որք շինեցան յաւուրս տեառն յակոբայ կենդանւոյն և շուօթու եկեղեցին. և ագուլեաց վանքն և գիւղն ջոր եկեղեցիքն. և ցղնոյ եկեղեցին. և դարաշամ բայ եկեղեցին: և Թարվիզու քաղաքի եկեղե ցին. սոքա և այլք յորովք՝ զորս ոչ յիշեմ. ոմանք յաւուրս մօսէսի կենդանւոյն շինեցան. և ոմանք յաւուրս փիլիպպոսի կենդանւոյ. զորս Տէր Աստ պահեսցէ անսասան մինչև յաւիտեան:

Վասն Նահատակութեբ տեառն Անդրէի քահանային:

ԻՆ

Ի ՆՈՅՆ ՕՐ ԱՐՆՈ

և առաջին շահաբաս Թագաւորն Պարսից ուննկնդիր լեալ զրպարտո ղաց արանց. որք խօսեցան զբանս չարս վ բնակ չացն նախիջևան քաղաքին. որև բարկութբ մեծաս

մեծաւ ցաւեաւ իւրում նոյ շահն. և հրամայեաց հանել զամէն բնակիչս քաղաքին. և արտասահ մանարարեալ վարել և տանիլ՝ի քաղաքն Փա հրապատ. և զքաղաքն նախչուանն աւերել. զուռնան և զամէն չինուածսն քանդել. և զայ գեստանն կոտորել. որ անխափան կատարեցաւ առնոսա հրամանն Թագրին. զի զամէն բնակիչսն հանեալ վարեցին՝ի Փահրապատ։ Ասկ՝ի բնակ չացն նախչուանայ արք աննշանք և սինկիք որք փախուցեալք՝ի շրջակայ գեղորայն Թաբեան ասատ և անդ. յորոց մի էին և ծնօղք տէր ան դրէասին. որք գնացեալք՝ի գիւղն ագուլիս, և անդէն զետեղեցան։ և մինչ էր՝ի տիս մանկուԹե տէր անդրէասն եռուն զնա յուսուցիչ գրոց՝ և ուսաւ զամէն եկեղեցական ուսմունս։ իբրև զարգացաւ՝ և էհաս՝ի չափ հասակի. մուծին զնա՝ի կարգ աշխարհի և արարին նմա զհարսնիս։ Այս ոչ գրեալ Թէ ըստ վկայու Թե անձին իւրոյ և ամի ժողովրգեանն. օրհնե ցին զնա քահանայ. և նա պաշտէր զքահանայու Թիւն ոչ և վայելէր կարգի քահանայուԹե։

Այս՝ի սոյն ժամանակս վարդապետն մեսէս՝ որ յետոյ եղև կաթուղիկոս Ջմիածնի. վարդապետն պօ ղոս զոր՝ի վերոյ պատմեցաք. յայտնեալ եղեն յարևելեան աշխարհն հայոց ամբիծ և պար կեշտ՝ զի շրջէին յերկրէ յերկիր և անխափան քարոզէին. շինէին զեկեղեցիս, կարգէին զքա հանայս ըստ կարգի առաքելոցն։ Այս վն հաս տատուԹե հաւատոյս և կրօնիցս մերոց հաս տատեցին դպրատուն՝ի պատշաճաւոր տեղիս, ՝ի գիւղն աստապատ, և՝ի շօռօթ, զի՝ի շրջա կայ գեղորեիցն անդր ժողովեսցին մանկունք առ՝ի յուսուցմն։ սոյնպէս և՝ի գիւղն ագուլիս հաստատեցին զդպրատուն. և կարգեցին իւրն

մանկանցն դպրապետ զտէր անդրէասն. յո
րում տեղւոջ ժողովեցան մանկունք ոչ թէ
յիսուն կամ վաթսուն. և տէր անդրէասն էր վե
րակացու. որ հովուէր զմանկունսն և ուսուցա
նէր զուսմունն հասարակաց մերս եկեղեցւոյ։

Եւ եղև գալ շահաբասի թագաւորին՝ի գիւղն ա
գուլիս յայգիսւոյ նմին պատճառէ. զի յայգէն
Ջուղայեցոց ելեալ ոմն սարդար. անուանեալ
օքուզահմատ փաշայ բազմաւ զօրու եկն իմշ բեր
դին երևանայ։ վասն որոյ թագաւորն Պարսից շահա
բաս. ժողովեալ զամ զօրն Պարսից եկն յերև
ան յօգնութիւն բերդին։ և նստաւ սարգարն
իմշ բերդին և պատերազմեցաւ մինչև ցերկու
ամիս և կէս՝ և ոչ կարաց առնուլ։ ժամանեաց
իմշ ցուրտ աշունն՝ և վշտացեալ՝ի ցրտէ և՝ի
սովէ։ դարձ արարեալ ամենայնիւ բանակաւն
իւրով՝ և չուեալ գնաց՝ի քաղաքն կարին յայ
խարհն Ջուղայեցոց։ Օ կնի դառնալոյ սար
գարին. շահնևս դարձաւ յերևանայ և գնաց
՝ի նախչուան, և անտի յագուլիս։

Եւ սովորութիւն էր շահին, զի ուր և մնա
նէր թէ՝ի քաղաք թէ յերկիր. ամբն բնակիչք
տեղւոյն միահաղոյն ընդառաջ ելանէին, իշ
խանք, և ժողովուրդք, արք և կանայք և աղ
կունք. երիտասարդ և մանկունք ամբն զար
դարեալք ազնուապէս և մեծապէսով զարդուք.
քաղցրահամօք մրգօք. և համադամօք ձաշակե
լեօք և անուշահոտով և ծաղկեհամով գինեաւ.
և վայելչահասակ և գեղեցկատես մանկունք և
աղջկունք և կանայք՝ի ձեռս առեալ զգինին ո
կեաւ բաժակաւ մատուցանէին շահին։ Եւ
մարմնաւոր գուսանք և երգեցողք առաջի
ընթանային։ և արուեստականօք երգարանօք
քաղցրանուագ երգէին։ Եւ եկեղեցականք
քահա

քահանայք և պաշտօնեայք։ զգեցեալ զշուք
ջառ և զշապիկք։ և առեալ զխաչ և զաւետա
րան։ և ամբարձեալ խաչալամ։ խնկօք և մոմ
ղինօք։ և զանգակօք և ծնծղայիւք ելանէին
ընդառաջ շահին, և երգելով գնային մինչ
հասուցանէին յիւր իջեւանն։

Զոր յորժամ ագուլիս գիւղի քահանայքն
եկին ընդառաջ շահին զգեցեալ զգեստուք
կային ընդ նոսա և ոմանք ի մանկանց դպրա
տանն՝ որք զգեցեալ էին զշապիկք և բարձեալ
շամադան և մոմ։ և երթային առընթեր խաչա
լամին։ և մինչ երթային քահանայքն երգելով
առաջի շահին։ և շահն հայեր այսր և անդր։
և ըստ չարայուշ մտաց և բարոյից իւրոց զննէր
զնոսին։ և ի զննելն հայեցեալ ի մանկուանն
ետես զի ածելեալ էր կուսակք մանկանցն։ և
այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինք
եան։ զի համարեցաւ թէ վասն ինքեան արա
րեալ իցեն զայն։ ոչ զի մի վայելչագեղ երևե
ցին մանկունքն յաչս նր։ և հաճեալ ի նոսա
առցէ ի նոցանէ։ Այլ անգէն շարժեցաւ ի
ցասումն բարկութեամբ շահն իվրն առնն որ ածե
լեալ էցէ զկուսակս մանկանցն։ Այլև որք
ամանք մահմետականաւս հասատով որք բնիկ
բնակիչք էին ագուլեաց գեղջն՝ երևելի իշ
խանք։ որք ընդ շահին շրջէին։ և մերձ նմին ի սպա
սու կային։ և վն բնականի նախանձուն, զոր
ունէին ընդ քրիստոնէից առաւելս գրգռե
ցին և զայրացուցին զսրտմտութեամբ թագաւորին
իվերայ քրիստոնէից։ վասն որոյ ստէպ յու
մամբ հրամայեաց շահն զննել գտանել։ և որ
զայն արարեալ էցէ սպանանել։ և եթէ ծը
նօղք մանկանցն արարեալք էցեն զայն։ զնո
սին սպանանել՝ և զինչսն յափշտակել՝ և զմանն

կունսն

կունան դրաւել ՚ի ծառայութիւն թագաւորին։ Իսկ առաջնիկայք թագաւորին սկսան զննել և հարցանել ՚ի ամենէ և ՚ի նմանէ թէ ո՞ զայն արարեալ էցէ. և ամենն ղոչգիտեին պատասխանի։ ապա իմն ջուր առեալ զտէր անդրէասն և ստիպով պահանջէին թէ ասա մեզ՝ զի դու ես վերակացու մանկանցն. և դու ես գիտակ։ Իսկ տէր անդրէասն խոկայր ՚ի մտի. թէ զծնօղան պատճառեմ զնա սպանանել, և զմանկունսն յափշտակել։ և թէ զայլ ոք պատճառեմ զնա սպանանել. և լինի այն ինձ խիղճ մտաց և ստգտանք անփարատելի. բայց լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս մնոցն. վասնորոյ ՚ի կարի ստիպելն զննուողացն։ տէր անդրէասն ասէ փրկելոյ զայլս ասաց թէ ես եմ արարեալ զայն։ և զննուողքն ծանուցին զնա թագաւորին նորա շահին։ և շահն հրամայեաց ունել զնա և պահել ՚ի կալանս։ Յետ ելնի աւուրց հրամայեաց շահն ածել զնա առաջի իւր. և հարցանէր, թէ զատոյգն ասա՝ ով ոք է արարօղ այդմ գործոյ՝ և տէր անդրէասն ասաց՝ ոչ ոք այլ ես միայն։ Իբրև ետես շահն թէ զայնքան ոչ մատնեաց՝ յոյժ բարկացաւ իմն ՚ի նմա։ և հրամայեաց տարածել իմն գետնոյ և բրածեծ առնել անխնայաբար։ և զնիկոլովիոյ հարուածոցն ասաց շահն. զայդպիսի ինչս և զպարտաւորութիւն արարեալ է քո. եթէ կամիս զկենդանութիւն անձին քոյ. ուրացիր զհաւատն քրիստոնէութեան ձերոյ. և լեր օրինաքն մերով՝ դաւանութեանն առաջնորդին մերոյ. և ես տաց քեզ զպատիւս և զմեծութիւս. և թէ ոչ հաւանիս զնմա. չանց և գալանաց առաջի արկանեմ զքեզ։ Յետ նա ոչ կալաւ յանձն զուրանալն. այլ ետ զպատասխանի թէ քրիստոնեայ եմ և ՚ի ծառայ։

ծառայ։ և Թագուրն իբրև լուաւ զայն. զայրա
գին բարկութեաբ հրամայեաց դարձեալ ՚ի
բանտ արկանել։

Այս ՚ի վաղիւն վերստին կաճ առաջի իւր.
և հարցանէր թէ ուրանաս զՔաւատան քո. և
տէր անդրեաս ասաց ոչ ուրանամ։ Արկին ան
գամ ասաց արքայ տամ քեզ զպատիւս և զմե
ծութիս թէ ուրանաս զՔաւատան ձեր. և նա
ոչ Հաւանեցաւ։ և դարձեալ հրամայեաց ՚ի
բանտ արկանել։

Ասակ քրիստոնեայքն մատեան առ նախա
բարս Թագրին. և խոստացան զգանձս բազումս.
զի գուցէ ազատեսցեն զնա։ և Թէպէտ նախա
բարքն խնդրեցին երկիցս և երիցս ոչ լուաւ
արքայ։ Այլև ցղնեցի խօջայ անձրևի կինն
որում մայր էր ասացեալ շահն. և ունէր զպա
տիւ առաջի շահին. սա մեծաւ աղաչանօք ան
կեալ առաջի շահին խնդրեաց արձակել զնա.
սմա ևս ոչ լուաւ։

Այս դարձեալ ածին զտէր անդրեաս առաջի
արքային յետ բազումանգամ հարց և փորձ առ
նելոյ խոստմամբ պարգևաց և սպառնալեօք
տանջանաց. իբրև ետես Թագրն Թէ ոչ հաւա
նի, հրամայեաց սպանանել։ Ասակ քաջ նահա
տակն և Քրմարիտ քահանայն տէր անդրեաս
հաստատունով հաւատով կայր խնդր անշարժ
հիման հաւատոյս քրիստոնէութեան։

Ասակ զինուորացն առեալ զտէր անդրեան
կապանօք տարան ՚ի տեղի կատարման. և նա ու
բախութեբ և յօժար կամօք գնայր. և յորժամ
հասաս ՚ի տեղի կատարմանն խոնարհ արձա
կեաց զգլուխն իւր. և մերկացաս զհանդերձն
իւր. և ասէր դահճացն կատարել իմն ինքեան
հրամանս Թագրին. բայց դահիճքն յամեցուս
ցանէին.

ցանէին. զի գուցէ հաւանեսցի հրամանաց արքային:

Եւ մինչ կայր սուրբն՝ ի տեղի կատարմանն, առաքեաց առ նա Թէոդոս՝ ի նախարարացն զօ մանս երկիցս թէ մի կորուսանիր զքեզ և զմանկուածքդ՝ եկեալ հաւանեաց իմոց բանից. և առ չինէն զպարգևս և զմեծարութիւն: Իսկ քաջ նահատակն ամենից բանից նոյն պատասխանի. Թէ ընդունայն խոստանայ ձերոց ոչ հաւանիմ և զչքմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ: Եւ զահ ձացան հանեալ զսուրն խաղացուցանէին իւրն նորա՝ և ածէին իւր որովայնին առ ի երկիւղ ցուցանել զնա՝ և նա ոչ երկնչէր:

Իսկ՝ ի տեղի նահատակութեանն ծնօղք սրբոյն և կային առ ընթերն՝ և աղաղակէին և յորդա քղխօք արտասուօք լային. և աղաչանօք ասէին առ սուրբն. քաղցրիկ որդեակ մեր, որ առ եր զկարգ քահանայութեանդ և եղեր զինուոր Քրիստոսի. մի երբեք լինի քեզ ուրանալ զՔրիստոս. և լինել զինուոր տիրատեաց. մի Թողուցուս զլուսաւորչական հաւատս Քրիստոսի. և մի վն առ ժամս նակեայ կենացս զրկեսցիս յաւիտենականաց կեանացն. այլ յիշեա զչքմարիտ վկայն Քրիստոս զորոյ զպատմութիւնն Հանապազ ընթերցեալ պատմէր մեզ. Համբերը որպէս և նոքայն. զի և նոցին պսակացն արժանասցիս: զայս և որ ասցին նման փղձկելով սրտիւ. և յորդաբղխօք արտասուօք աղերսալի ասէին ծնօղք սրբոյն առնա: Իսկ գահձացն զբաղում ժամս յամ ցուցին անդէն. զի Թերևս երկմտեալ Թուլասցի. և սուրբն անդրդուժելի կայր իւրմ ձչմարտի հաւատոյս. և՝ ի խաչակնքելոյ զդէմն ոչ դադարէր: Իբրև տեսին զհաստատութիւնն մտաց նորա գահիճքն. Թէ ոչ դառնայ, յայն ժամ

ժամ ձգեալ զսուրն պատառեցին զզգեստսն
նր. և վաթեցաւ աղէքն արտաքս՝ի փորէն. և
սքեն միով ձեռամբն ժողովէր զաղիսն՝ի փորն
և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն. և յիշէր
զանունն Ք։ և ապա ծակեալ զջիլս սրու
նից ոտացն. և պարանօք բարձրացուցեալ՝ի
բարձունս. և կախեցին զսուրբն գլխի վայր.
և նա կայր կենդանի մինչև՝ի մուտս արեւուն։
և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին՝ի
ձեռս Ա. որպէս զկնէնկ անոյշ և զճմարիտ
զոհ ընդունելի։ Յետ մահուան սրբոյն
հրամայեաց շահն ձգել զմարմին նր արտաքոյ
շինուածոց. զի կերակուր լիցի գազանաց և թռչ
նոց։ Ասկ քրիստոնէիքն բարձեալ անտի և բե
րեալ յագուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ
ասի խցաձորի եկեղեցի. և անդ թաղեցին. և
այժմ անդէն կայ թաղեալ պատուականն
նշխար ոսկերաց նր։

Յետ եղև կատարումն և մարտիրոսական մահ
սքեյ քահանայիս Ա. տէր անդրեասի՝ի Թոճա
կանիս Հայոց հաղար և վաթսունևվեց. տրէ
ամոյ՝ի տասն. և նոյեմբերի ամոյ՝ի տասնև
յոթն։ Սրոյ յիշատակն օրհնութիւն եղիցի և
աղօթիւքն Ցր մեզ ողորմացի։

Յետ կատարման տեառն անդրէասի
երբև անցին իւր ամիսք երեք կամ չորք. խմչ
խասից և զրուցաց վերստին յիշեալ եղև առա
ջի շահաբասին ոսպուհիք և իրակուհիք անցուա
ծոց տեառն անդրէասի։ Յետ անդէն ոմն՝ի նախ
կի չարախօսացն՝ի բնակող մահմետականացն
ագուլեաց՝ որոյ վասն կանխաւ յիշուածն արա
րաք. և սորայս անունն էր շահուղբէկ. ա
սաց առաջի շահին Թէ տէր անդրէասն, որ
զկուսակս մանկանցն ածելեալ էր. ոչ Թէ յիւ

բոց մտաց ինչ. այլ խրատով վերակացո՛ւին իւ-
րոյ. քանզի ունի ինքեան զխրատիչ։ և անդէն
արարին զՀարցումն վ՛ն խրատողին թէ ովք
իցե՞ս դու՞ի Համեմատուես մարդկան և անաս
նոց կենդանեաց. Համեմատին առաքեաց ազգն
՛ի յոձ վ՛ն նախանձուն և նենգուե՛թե, զոր բնա
կեան ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստո
նէից։ յորոց և ոմն այս շահաւղբե՛կ նովին
կրե՛ցն ախտացեալ մատնեաց շահին զմօսէս
վրդ՛ովան ասելով։ Է ոմն այր, որոյ է անունն մո
սէս. որ է վարդ՛ապետ օրինացն քրիստոնէից. որոյ
բնակութե՛ն է ՛ի վանքն տաթևու. և ինքն է
յերկրէն սիւնեաց՝ և նա է օրհնաւսոյց և դաս
տիարակ տեառն անդրէ՛ի։ Յաղագս որոյ հրա
ման եղև՛ի թագաւորէն առաքել զզօրականս և առ
նել զմօսէս՝ և կապանաւք ածել առ թագաւորն։ և
զօրականացն գնացեալ կալան զմօսէս վարդ
պետն. ընդ նմին և զպօղոս վրդ՛ովան. և եդին
զօղտանեակ զուգեալ՛ի փայտից՛ի պարանոց
նդ. և երկաթ ոտնակապ յոտս նոցա. յաւուր
ցրտութե՛ն ձմերայնոյ. և բերին զերկուսեան
վրդ՛ովան՛ի բանակն շահին, և ծանուցին նմա
՝ս՛ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալքն
շահն թէ սպանանե՛մ զարս երկուս՝ սակաւ մի
նի ինչս քրիստոնէից և օգուտ մեզ. այլ առից
զյոլով տուգանս արծաթոյ՛ի նոցանէ. որով
լինի աւելի օգուտ մեզ և ինչս նդ. և այսպէս
վ՛ն ագահութե՛ն և արծաթասիրութե՛ն էարկ
զտուգանս իվ՛ր վարդ՛ապետդն թէ ՀՀինգհարիւր
թումանն տան և ապա գնան ազատ։ բայց քրիս
տոնէիցն զտղերս մատուցեալ առ նախարարս
աբքայի, զի ինդրեցեն յաբքայէ թե՛թևացու
ցանել զտուգանսն. և վ՛ն միջնորդելոյ նախա
րարացն ինքաւ մինչ յերկհարիւր թումանն.

և

և անդէն վճիռ եհատ թէ անպատճառ տա
ցեն. որև կարգեաց իւր նոյ զզօրականս զի առ
ցեն։ Իսկ վարդապետքն վն ոչնչնելոյ զինչս, զի
տացեն ի տուգանս. եւ նի ի չրջագայութիս և
ի խնդիր ողորմութե յամենայն ազգս Հայոց։

Իսկ ամենասրբազն թէպետ աղ
քատք և չքաւորք եին. այլ ըստ կարողութե իւրն
աղքատք և հարուստք. արք և կանայք անխնայ
աբար թափէին զինչս և զողորմութիս առաջի
վրդովատացն։ և նոքա առեալ զողորմութին. ուրև լի
նէր գերի և բանտ արգել և անզերծանել պար
տատէր՝ և այլ պակասաւոր՝ նախ նոյ տային և
ազատէին. և յայսմանէ պատճառէ բազում
գերիք, և բանտ արգելք, և պարտատէրք,
ազատեցան. և ապա զմնացեալն տային իւրեանց
ունող զօրականացն սակս տուգանին իւրեանց։
Իսկ այսպիսեաւ չրջագայութէ մինչև ի չորս
և ի հինգ ամիսս վճարեցին զերեքհարիւր թու
մանն. և ինքեանք զերծան ի կապանաց ողոր
մութէն Ա.Յ և տրօք քրիստոնէից։

Իսկ շահուղբէկն. որ մատնեաց զմնաե
վարդապետն յետ սակաւուց աւուրց սպանեալ
եղև սրով ի զօրականաց շահին. ընկալեալ
աստէն զՀատուցումն վաստակոց իւրոց զստ
տակութեն մարմնոյ. և անդէն զկորուստն հո
գւոյ և զտանջանսն յաւիտենից։

Պատմութէ նեղութէց, և վշաց. զոր կրեցին Հայ ազգա
քրիստոնեայքն, որք բնակեալք են ի քաղաքն Իւղ։

ԻԲ։

ՈՐՔ ԸՆԴԻՐ Ի ԿԱՐՊԻ

պատմութե, զոր գրեցաք վն մեռելոսեն թէ
կենդանին թէ գնաց նա յաշխարհն իւր
խաց. արդ յորժամ Հաս նա անդր՝ և Հմուտ

ի քաղաքն իլով յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ի նուենոյ իլովէ քաղաքէ ոմն աբեղայ. որոյ անունն էր Նիկողայոս. զարս ոմանս միջնորդս և բարեխօսս արարեալ առաքեաց առ մեկբի սեթ կաթուղիկոսն զի օրհնեսցէ զինքն եպիսկոպոս ազգին Նայոց. որք կան իլով քաղաքին և որոց չուրջ զնովաւ. վա՛ զի ի ժամանակին յայն միկ ոչ գոյր եպիսկոպոսնի: Նա միջնորդացն մտուցեալ առ կաթուղիկոսն ընծայեցին զոսկիս բազումս. և խնդրեցին առնել զնիկողայոս աբեղայն եպիսկոպոս. և կաթուղիկոսին տեսանելով զոյ լովուն առ ձեռն պատրաստ ոսկւոյն՝ նաև ակն կալուածէն և յոլովից ոսկւոյ առատապէս. Նա ձեռնադրեաց օրհնել զնիկողայոսն եպիսկոպոս իլովայ:

Ասակ քահանայ և ժողովուրդք քաղաքին՝ իշխանք և ռամիկք՝ ի վաղուց ժամանակաց գիտեալով զորպիսութիւն վարուց նիկողայի աբեղայնին. գումարեցան միահաղոյն ամենեքեան, և եկեալ առ կաթուղիկոսն ծանուցին զբանս իւրեանց նմա՝ և ասացին. մեք գիտեմք զդա, և զորպիսի վարուց դորա. վնորոյ ոչ է դա մեզ ընդունելի. մի՛ զդա՝ այլ զայլոք արասցես մեզ զեպիսկոպոս:

Ասակ կաթուղիկոսն զամահեալ անարգեաց զժողովուրդն և զբանս նոյն. և արտաքսեալ յերեսաց իւրոց յետս դարձոյց զնա. բայց ժողովուրդքն՝ ոչ թաւալացան՝ ի բանից իւրեանց՝ այլ ի բազում աւուրս՝ բազմաթ բանիւք խօսեցան ընդ կաթուղիկոսին. և ոչ թողին օրհնել զնիկողն եպիսկոպոս:

Այսպա կաթուղիկոսն երթեալ ի քաղաքէն գնաց՝ի վանքն, որ անուանեալ սրբոյ Հռիփսիմեայ Ծածանին կոչ չինեալ արտաքոյ քաղաքին. զոր լովացիք Հռիփսիմա կատար Ծածանին ասեն. և անդէն առանց գիտելոյ ժողովրդոցն իմիջ գիշերի սկսաւ օրհնել զնիկողայ աբեղայն եպիսկոպոս. որում իրազ

գան

գաճ լեալ ժողովրդականաց քաղաքին առ ժա
մայն ՚ի նոյնում գիշերոյ իշխանք և ռամիկք
վաղվաղակի գումարեցան ՚ի միասին և ընդ փոքր
դուռն քաղաքին ելեալ փութանակի հասին
՚ի տեղին. աղաղակէին առ կԹ՚ղիկոսն մի՛ օրհ
ներ զդա՛ և մի՛ մատներ զմեզ և զեկեղեցիս մեր
՚ի ձեռս անիրաւիդ այդմիկ. զի մեք գիտեմք
զդա՛ և զորպիսու Թիվարուց դորա. վասնորոյ ոչ
է մեզ ընդունելի։ Նր կԹ՚ղիկոսն նստեալ իմ
աԹոռոյ օրհներ զնիկոլ աբեղայն եպիսկո
պոս՝ և խաչիւն որ ՚ի ձեռին էր սաստեր ժո
ղովրդեանն. և զբանս տգեղս, զոր ոչ է պարտ
յիշել՝ ասեր նոցա. և Թէպէտ ողորմելի ժողո
վուրդքն ամբոխեալ և աղմկեալ յոքնակի ա
ղաղակեցին. ոչ լուաւ նոյ կԹ՚ղիկոսն. այլ օրհ
նեաց զնիկոլն եպիսկոպոս։

Նր յետ սուղինչ աւուրց կամեցաւ մեքքի
սէԹ կԹ՚ղիկոսն ելանել ՚ի լովայ և գնալ ՚ի քա
ղաքն կամենից. և ժողովուրդքն հնարէին,
զի Թերևս զնիկոլն ընդ կԹ՚ղիկոսին ուղևորեսցեն
՚ի գնալ. եբրև խօսեցան ժողովուրդքն ընդ
նիկոլին վն գնալոյ ընդ կԹ՚ղիկոսին. և նա խա
բեաց զնոսա ցուցանելով զինքն կամայօժար ՚ի
գնալն։ Իբրև գնացին աւուրց ինչ Ճանապարհ,
ասաց կԹ՚ղիկոսն ընդ նիկոլին. բաւականէ այս
քան գալն քո՝ այսուհետև խաղաղութԹ դար
ձիր ՚ի տեղին քո. և ՚ի գործ եպիսկոպոսուԹե
քոյ. ասաց նիկոլն՝ քո իսկ աչօք տեսեր զի այն
քան հակառակեցան քեզ՝ և ոչ հաՃէին յիս.
և այժմ զնարդ իշխեմ գնալ ինձ նոյ։ և այն
քան հնարեաց նիկոլն. մինչ որ կԹ՚ղիկոսն զդիր
քանադրանաց՝ նզովից և կապանաց գրեալ իմն
ժողովրդեանն ետ՚ի ձեռս նիկոլայ եպիսկոպոսին.
ոչ զի ԹեՂք ընդդիմակայեալ հակառակեցին.

և ոչ ընկալցի զնա ի պատիւ եպիսկոպոսութեանն. լինի ինքեանքոյ բանադրանաց։ Ընդ որում ժողովեցան ամենայն Թուղթս և եկն ի լոյս. ասաց Ժողովրդեանն. դուք ամենեքին ժողովեցարուք յաւուր կիրակէիւ կեղծեցին՝ քանզի ունիմ խօսք ինչ խորհրդական հաստարակապէս ասել ձեզ ամենեսին։ և յաւուր կիրակէին յորում և ժողովուրդք ժողովեալք էին յեկեղեցին՝ հանեաւ զԹուղթն բանա դրանաց ետ ընթեռնուլ ի լուր ամենեսեան. իբրև զայն տեսին և լուան ամենքն ժողովուրդքն տրտմեալ մեծաւ սգով և վհատեցեալ սրտիւ ապուշ մնացին. և ամենեքեան եղեալ լռեցին։ Նոկ կենդանի մեղքիսէ՝ որ գնայր ի կամենից. իբրև էհաս անդր. զկնի սուղինչ աւուրց հիւանդացաւ՝ որ և մեռաւ իսկ յաղօթից պահոցն ի ծաղկազարդի շաբաթօրի, ի տանի յարութեանն ղազարոս. ի մերում թուականին հազար և երեքհարիւր և հինգ՝ և անդէն թաղեցաւ։ Եւ այսոցիկ զկնի անցելոց աւուրց և ամաց ինչ. դեպեղև նիկոլայի եպիսկոպոսին գալ ի քաղաքն կամենից. և ի նուէրոյ քաղաքին ղոմն սար կաւագ որոյ անունն էր խաչիս օրհնեաց աբեղայ. փոխեաց զանուն նոր և կոչեաց ծնօփրիոս։

Եւ կեսարացի գրիգոր վրդովտան. որ տոհմեալ էր ազատազան վրդովտական մօսէսի կենդանին. էր այր երևելի. զի վարուքն կարի պարկեշտ էր և չորակաց՝ և խիստ ուժգին փարթամ, բանիբուն և յոյժ հանճարեղ. վն որոյ անհնարին էր նա իմիջ աշխարհի՝ որ ամ աշխարհ կա խեալ կայրն զնմանէ. և եղև այսորիկ գրիգոր վարդովիս յաւուրսա յայսոսիկ գալ յաշխարհն իլախաց. և նախ քմուտ ի քաղաքն կամենից. անդ ի կամենից էր և նիկոլ եպիսկոպոս. և կամեցան նիկոլ եպիսկոպոսն և այլք ոմանք զնորընծայ աբե

աբեղային զնուիրիտս արտաքս բերել՝ի քառասունից։ Վն որոյ և եկեալ առ գրիգոր վրդ.ապան մեծարանօք հրաւիրեին գալ՝ի միւս եկեղեցին. յորում զպատարագն մատուցանելոյ ի ծնորդն ծային. և նորընծայն դեռևս ոչ էր լիով պահեալ զքառասունն՝ քանզի տասնևհինգ աւուր օրն նեալեր՝ զոր կամէին արտաքս բերել. վն որոյ ասաց վարդապան՝ որովհետև ոչ է լցեալ զթիւ քառասունն աւուրն. ոչ է պարտ հանել՝ի քառասունից. այլ պարտ լիով պահել զքառասունն ըստ աւանդութեն Հայաստանեայց եկեղեցւոյ՝ և կանօնաց Հայրապետաց մերոց. և ապա հրաման է նորընծային մատուցանել զպատարագ և արտաքս ելանել՝ի քառասունից. վն որոյ և նորա լուեցին զայն շաբաթն և ոչ բերին արտաքս զնորընծայն։ Այլ՝ի գալ միւսում կիւրակէին կամեցան նիկոլն և այլք արտաքս բերել զնորընծայն. վն որոյ՝ի շաբաթօրն աւուր միւսանգամ եկեալ հրաւիրեցին զվարդապետն. և վարդապան ոչ գնաց, այլ ասաց խօսքն մեկ կու լինի։ իսկ նորա ոչ եղեն ուշիմդիր բանից վարդապետին, և ոչ համբերեցին. այլ գնացին՝ի յայնմ կիւրակէին արտաքս բերին զնորընծայն. որ մատոյց զպատարագն. և այս կիւրակէս՝ յորում զպատարագս մատոյց նորընծայն. դեռ քսանևերկու օր էր նր, որ քառասունք էր պահեալ։

Այլև եպիսկոպն նիկոլ արար յոյժ զանգուգն և զանպատշաճ զգործ՝ի կիւրակէ ևս յայսմիկ՝ յորում զպատարագն մատուցին. քանզի եկէղեցոյն այնմիկ յորում էր վարդապան զգուշն վակեաց և զբանալին առ ինքն կալաւ։ Վն այսմ գործոյ յոյժ վշտացաւ վրդապան՝ վն որոյ ասաց՝ այն մարդն անիծեալ լինի, որ այսօր

գնայ յայն եկեղեցին: և եպիսկոպոսն յետ կատարելոյ պատարագին, և արտաքս բերելոյ զնոր ընծայն. զայնմ եկեղեցւոյ զդուռնն ևս փակեաց. և եղեն փակեալք երկուց ևս եկեղեցեաց դրունքն: և էին աւուրք աւագ տօներոյն՝ որ զկնի նուէրոյ կիրակէին Հետագայ յերկու շաբաթ Թող աւուրն դաւթի մարգարէին և յակօբայ Ն՚ն եղբօրն էր տօն, և այլ ըստ կարգի. և մնային այսոքիկ աւուրքս եկեղեցիքն փակեալք առանց ժամու և պատարագի:

Իսկ այսոցիկ յաւել նիկոլն այլևս զնենգու թիւն գործել առ վարդապան, և վշտացուցանել զնա. վասն գնայ առ վոյթն կամենից քաղաքին, որ՚ի մեծ իշխանէն վերակացու էր կոչ գեալ կամենից քաղաքին, որոյ անունն էր լուկաշ, խօսեցաւ եպիսկոպոսն ընդ նմա և հաւանեցոյց զնա՝ զի արգելցէ զվարդապան, և մի թող ցէ գնալ՚ի լուի և կամ յայլ քաղաքս, այլ՚ի կամենից քաղաքէն դարձուսցէ զնա, յետ դառնալ ընդհուպ եկեալ Հանապարհն և գնալ յայլ աշխարհ: Իսկ նորոյ և լուկաշ անուշ ամբ վոյթն առաքեաց զպատգամս առ վարդապետն ասելով. մեծ իշխանն մեր թուխթ է ուղարկեալ մեզ՝ թէ այդ վրդովպտ, որ՚ի թուրքի աշխարհէն եկեալ է չաշուտ է եղեր, հրամայեց զկոյ որ՚ի քաղաքէդ դնանէ. մի թողուք, որ եր թայ, թէ ոչ ձեր գլուխն կերթայ: և այսպէս սեաք բանիւք արգելեցին՚ի գնալոյ զվրդովն, և վարդապետն կայր անդէն ետրև զդիպահոլ: Իսպա արք ոմանք բարեպաշտօնք՚ի ժողովրդոց քաղաքին մատեան առ վոյթն և ծանուցին զանմեղութիւն վարդապետին, ապա թէ հրամայեցէ վարդապետին զի եկեալ գնասցէ ոչ թէ երկայ այլ դէպ՚ի յետ ընդ որ և եկեալն էր և վար

և վարդապետին եղեալ՝ ի կամէնիցոյ և եկն՝ ի քուղդան և՝ ի յուռուսէլէմ, և՝ ի Ճանապարհն գրեաց զգիրը բանադրանաց նղովից և կապանաց իւրոց նիկոլային՝ և առաքեաց՝ ի լուս. Ներսէս կոչն ոչինչ հոգաց՝ ի կողմանէ բանադրանացն, այլ կայր՝ ի կարգի իւրում և՝ ի քահանայապետ ծուխն։ Այց քահանայքն և ժողովուրդքն՝ այնք որք յառաջմէ ներհակ էին նիկոլին, ՝ի բերան առեալ խօսէին, նաև յերեսաց ընդդէմ բերէին նմա, նաև ոմանք ոմանք ներ հանային և, և օր աւուր զօրանային ներհակքն իւր նիկոլին։ Այլև գրիգոր վարդապետն, ամ որպիսութեն անցուցանէ այսոցիկ, այլև զանուղ գայ վարս նիկոլին թղթով ծանոյց մնսէսի կթղիկոսին սբոյ Էջմիածնի, և խնդրեաց՝ ի նմանէ զի և նա բարձու հրամանաւ սրբոյ Էջմիածնի և կթղիկականաւ իշխանութեն քանադրեսցէ զնիկոլ եպիսկոպոսն, և մնացեալ կթղիկան և գրեաց զգիրը բանադրանաց, և առաքեաց իւր նիկոլային եպիսկոպոսին։ և այսու պատճառաւ առաւել և զօրացան ներհակքն իւր նիկոլին և՝ ի չմարդի ունէին զնա։

Այս ոմանք՝ ի ժողովրդականացն հայր ցուցին արարին ընդ նիկոլին՝ թէ ընդէր ոչ գնաս առ գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն՝ ի նորին կապանացն, և նա պատճառեաց թէ ոչ ունիմ զթոշակ Ճանապարհի, և ժողովեցին զերիս հազար դուռուշս և ետուն նմա՝ ի թոշակ Ճանապարհի։ Այնուհետև սկսան, եթէ յիւրոց ինչ մտածութեց, և եթէ՝ ի սադրելոյ յիւրոց բարեկամացն, և թէ՝ ի հարկելոյ ժողովրդոցն, եղեալ՝ ի լուայ գնաց՝ ի կողմանս կոստանդնուպոլսի, և կեսարիոյ. զի թերևս յուրեք գտեալ զգրիգոր վարդապետն

տացէ մեղայ և առցէ զարձակումն ի նորին կա
պանացն : Եւ գալով եկեալ ի Հաս ի քաղաքն
Բեւրսայ , պատահեցաւ ընդ յաւուրսն յայնոսիկ
անդէր և խարբերդացի արիստակէս վարդ
պետն , արդ՝ այս արիստակէս վարդապետս և այն
կեսարացի դրիգոր վարդապետն , ունէին ընդ մի
մեանս զոհս նախանձու յոյժ սաստիկ : Եւ թէ
զինչէր պատճառ նախանձու և ոխակալութէ
սոցին , բազմաժամանակաւ որոնեցի և ոչ
ստուին ոչ գտի և զանհատաստուն ոչ գրեցի և ի
պատճառէ այսմ նախանձու բազմաք բանիք
և պէս պէս եղելս կերպիւ խօսեցաւ արիստակէս
վրդապետն ընդ նիկոլայի եպիսկոպոսին , և արգելչաւ ի
գնալոյ առ դրիգոր վարդապետն . երբեմն ասէր ,
գու եպիսկոպոս ես և նա վարդապետ , ջունի զինչ նու
թէ իմ քո . երբեմն ասէր , ի ղուր և ի նախան
ձու է բանադրեալ զքեզ , երբեմն ասէր , և ես
վրդապետ եմ իբրև զնա ես արձակեմ զքեզ ի կա
պանաց : և այլ բազմաց կերպիւ խօսեցաւ և ոչ
եթող գնալ ի կեսարիայ առ գրիգոր վարդա
պետն : այնուհետև նիկոլն ինքն ոչ գնաց՝ այլ
գրեաց զթուղթ խնդրանաց և աղերսանաց առ
գրիգոր վարդապետն , թէ մինչ ի ձուրսայ եկի ,
և առաւէն հիւանդացայ և անկեալ կամ ի մա
հինս . վնորոյ ոչ կարեմ գալ , խնդրեմ զի ջորձ
ցես յինէն զբանադրանն և արձակեսցես ի
կապանաց , և առաքեսցես ինձ և ժողովրդեանն
զթուղթ օրհնութէ , զի թերևս աղօթիւք
և օրհնութէ քով առաի դարձայց և ողջութէ
հասից ի տեղին իմ : Եւակ վարդապետն ի տես
նելն զգիրն անկեղծութիւք մտաք հաւատաց խօ
սից եպիսկոպոսին երբեմն ճշմարտից խօսից , գրեաց
զթուղթ արձակման և օրհնութէ եպիսկոպոսին ,
այլև զգիր օրհնութէ լուսաւորչի քաղաքին և առա
քեաց

քեաց առնիկօն, որ՝ի բուրսայ էր. Ա ն ի կ օ ն ա ռեալ զԹուղթն զայնոսիկ դարձաւ՝ և դնա ցեալ էհաս՝ի լավ։ և լուացիք եբրև տեսին զԹուղթն գրիգորի վրդ ապետին, ուրախացան և միաբանեցան ընդ եպիսկոսին։ Ասակ գրիգոր վար դապետն՝ի ձեռն Հանապարհորդաց և յարանց գնողաց, հաւաստեաւ իվր էհաս Թէ նիկոլ եպիսկոպոսն, յորժամ եկեալէ՝ի բուրսայ ոչ հիւանդացեալէ և ոչ տկարացեալ՝ այլ խորհրդակ ցուԹիք արիստակէսի վարդապետին զկայ առեալ կացեալ է՝ի բուրսայ, և հնարիւք և պատրոյ զանազան բանիւք արձակման զԹուղթ առեալ է և գնացեալ՝ի տեղն իւր։ Ընդ իմ՝ի այսմ խաբէուԹիս՝ զոր արարեալէ եպիսկոպոսն ընդ վարդապետին՝ կարի վշտացեալէ վարդապետն, և զայս խաբէուԹիւն գործոց նորա գրով ծանուցեալէ լուացուց, այլև գրեալէ Թէ զնոյն առաջինն նզովքն և բանադրանքն տակաւին կայ իմ՝ի այդմ եպիսկոպոս, վն որոյ և լուացիք յետս կացին յեպիսկոպոսէն, և ոչ ընդունէին զնա. և ան կաւ հակառակուԹիւն իմՋ եպիսկոպոսին և ժողովրդոցն յոյժ սաստիկ։

Ընդ միացեալ այսպիսեաւ հակառակուԹիւնս մին ձև հասին՝ի Թուխատն մեր հազարևեօԹանասունևևինն յորում ժամանակի առաքեաց մեծս կԹղկան զմեծ աշակերտն իւր, զկեսարացին խաչատուր վրդապետն՝ վն նուիրակուԹիւն սրբոյ Ա ջ միածնի յաշխարհն արևմտական՝ յատուկ ետուն և՝ի հոմանոցսն։ Ընդ որ խաչատուր վարդապետն այր հեզ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անխնամ և անբան. այլ խնամատուն և բանի գուն, որ լոկ տեսուԹիւնն միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վն զնա կարգեցին նուիրակ։ և խաչատուր վարդապետն անցեալ զամենիւք

նիւք տեղեաք եկեալ Է Հաս՝ի կեսարիայ, և անդ պատահեցաւ մեծի վարդապետին գրիգորի, և գրիգոր վարդապետն զբազում բանս հրամայեա կանս պատուիրեաց Խաչատրոյ վարդապետին՝ թէ՝ի հասանիցես քո՝ի լով մի գուցէ թէ ընկալ ցես զնիկոլն՝ի կարգ և՝ի պատիւ եպիսկոպոսութեան։ Եւ Խաչատուր վարդապետն նուիրեալ զամենեսեան տեղիս եկեալ Է Հաս՝ի լով, առ որ մատուցեալ ժողովրդականացն սկսան բազմօրինակ և կսկծալի զամբաստանուել առնել զնիկոլայէն վասն սպիսից անցուցածոց և գործոց, որ՝ի նմա նէ տեսեալէ ին և կրեալ։ Եւ կարդապետն ըստ իւրում քաղցու և հեզի բնութեանն ոչ առ երես յանդիմանէր զնիկոլն, այլ մեղմ և խրատուրէն ինքն և նա մի այն խօսէր ընդ նմա՝ ըստ պատուի բանին Ցն թէ առաջիր նմա յորժամ դու և նա միայն իցէք։ Եւ նիկոլն բնաւ ոչինչ հոգայր յամե, զի ոչ՝ի վարդապետէն ամաչէր, և ոչ՝ի ժողովրդոց ամբաստանուելն երկնչէր, այլ իբրև զանչարժ լեառն արձանացեալ կայր՝ի կամս իւր։

Եւ եղև երբեմն յաւուր կիրակէ ի աւետարան կարդալ, և նիկոլ եպիսկոպոսն հրամայեաց իւրում աբեղային թէ գնա կարդա, իսկ Խաչատուր վարդապետն ասաց թէ ողնա չկարդա՝ այլ այն ոմն, իսկ նիկոլն ոչ անսաց բանից վարդապետին այլ իւրում աբեղային ետ կարդալ զաւետարանն, իբրև հառաս վարդապետն թէ խմբ քահանայիցն և ժողովրդոցն յայտնի և համարձակ քամհարեաց զբանս իւր, և՝ի չմարդի ունի զինքն, դարձաւ առ ժողովուրդն և ասաց, այն մարդն անիծեալ լինի, որ սորա յետին գծուներ դնէ։ զայս ասաց վարդապետն, և եղեալ յեկեղեցւոյն գնաց՝ի տեղին իւր՝ի վերնա առնն,

տունն, ուր լինէր ի հասարակ աւուրսն։ Եւ
ժողովուրդքն երբեմն զայն լուան և տեսին՝ ին
քեանք ևս ամբն միահաղոյն գրոհ տուեալ
եղեն արտաքս յեկեղեցւոյն, և մնացեն յեկեղե
ցին Նիկոլի և այլք ոմանք, և զկնի արձակելոյ
ժամին նոքա ևս գնացեն ի տեղիս իւրեանց։
Իսկ ի ժողովրդոցն Հայոց՝ դատաւորքն և իշ
խանքն եկեն ի նոյն ցերեկին, և փակեցին
զդուռնն եկեղեցւոյն և առեն յինքեանս զբա
նալին՝ և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ։
Եւլև դատաւորքն և իշխանքն Հայոց խօսե
ցան ընդ վարդապետին խաչատրոյ, և հաւանե
ցուցին զնա զի նստցի յաթոռ և կարգեսցէ յա
տեան դատաստանի, առ դատել զնիկոլի վե
յանդգնութենն, և այլեւս անկարգուեն և յան
ցանայն։ Երբև հնացաւ եպիսկոպոսն զգործս զայս
եբեր առ ինքն զերկուս ոմանս ի վկայիցն Փու
կաց, որ իմէջ ամի դատաստանի նոքա գան
և առան զվկայութիւն։ և ըստ նոցին վկայութեանցն
դատաւորքն տան զվճիռ դատաստանին, քան
զի զայսպիսի կարգս ունին աշխարհն իւրեանց
իմէջ իւրեանց։ Ելեալ նիկոլն ընդ վկայիցն
այնոցիկ, և հաճեցոյց զկամն նոցա զի յորժամ
կոչեսցէ զնա, և նոքա անյապաղ եկեսցեն ի կոչ
նն։ և յաւուր դատաստանին յորում նստաւ
վարդապետն ի դատաստան, նստան ընդ նմա և
իշխանքն և դատաւորքն Հայոց՝ կոչեցին և զնի
կոլն առի դատել, բայց նիկոլն յառաջագոյն
զվկայն զայնոսիկ բերեալեր ի տունն յայն,
և ի տեղի Թաքուն կացուցեալեր զնա առանց
գիտելոյ արանցն Հայոց։ Երբև կոչեցին զնի
կոլն ի ներքս՝ և նա եկեալ հրամայեաց իւրոց
սպասաւորացն դնել զաթոռն իւր ի հանապա
զորդեան տեղին իւր, զի անդ նստցի ինքն, իսկ
իշխանքն

իշխանքն ասացին առ Նիկոլն՝ զինչ առնես, զի նատիս՝ զի՛ ի դատել կոչեցեալքն զքեզ. կաց՛ ի յոտին այդր։ Եւ Նիկոլն ասաց՝ և ով է դա ասոլն իմ, ասեն իշխանքն, եկեալ նոր՛ երակա, զոր առնանես, և դատաւորքս, որք ահա կան։ Յայն ժամ բարձու ձայնիւ գոչեաց Նիկոլն առ Թագաւորեալ վկայն, Թէ եկայք արտաքս, և նոքա առ ժամայն եկին, և կացին իմիջ հանդիսին, առ որս ասաց Նիկոլն, վՒ Ձերով աչօք տեսէք՝ և ձերոյք ինձ վկայք՝ զի ես եպիսկոպոս եմ, և սոքա աշխարհականք գոլով ժողովեալք են առ՛ի դատել զիս. և վարդապետս այս որ՛ի Թագաւորեալ աշխարհէն եկեալ է ասա. ՛ի չաշուառս Թէ եկեալ յայս երկիրս՛ ի գիտել զամենայն որ պիտուԹիւն մերոյ աշխարհին. և սա այժմ սոքօք նստեալն առ՛ի դատել զիս։ Եւ վկայքն ասեն, զորինչ մերովք աչօք տեսաք սմին վկայեմք, և ուրուանիս զմեզ տամք զվկայուԹիւս։ Յայն ժամ ամբն ժողովեալքն՛ ի Հայոց եԹէ քահանայք և եԹէ իշխանք և դատաւորք, եղեն պատկառեալք, և զարհուրեալք յերկիւղէն Ք֊ան կաց. և սկսան միմիանց ելանել և փախչիլ, և վարդապետն ևս եղեալ գնաց՛ ի տեղի իւր։

Ո կին այսոցիկ Նիկոլ եպիսկոպոս սկսաւ ստուԹիւք և կեղծաւորուԹիւք առաքել միջնորդս, և պատգամաւորս առ վարդապետն, և առ քահանայսն, և առ իշխանսն մեծ հաշտուԹիւն ասելով. բաւական է այսքան հակառակուԹիւնդ ձեր՝ և այլ մի ևս հակառակիք՝ և մի փակէք զեկեղեցիսն. այլ բացէք զդուռնն եկեղեցւոյն. իսկ լսողացն ամբն գիտելով զխարդախուԹիւն նո֊ ոչ հաւատային նմա։ Այլ վարդապետն նկատեալ իւրով մտօքն ետես զի ցորքան գրգռին ՛ի խռովուԹիւն, և զվէճ և զպայքար դնեն ընդ եպիս

եպիսկոպոսին, առաւել և բաղում յորդեալ յա
ռաջագոյն՝ ի նմանէ գործ չարութիւն. վն որոյ
յաղագս վտանգիս այսմիկ յակամակամաբ կա
մեցաւ առնել զՀաշտուԹիւն ընդ եպիսկոպոսին, զոր
և խօսեցաւ ընդ քահանայիցն, և ընդ իշխա
նացն, զի արասցեն զՀաշտուԹիւն՝ և նորա ոչ
կամեցան. ասաց վարդապետն, վն ապագայից
չարեացն, որ հանդերձեալ է գալ յեպիսկոպետդ,
երկնչիմ ես և կասկած կրեմ, Թէ մի գուցէ՝ ի
վերջ յամառուԹիւս մերոյ մեծ ագոյն ինչ ելնաս
կրիցեմք՝ ի դմանէ։ Ասուն զայսոսիկ,
ամենևին մի երկիցես վարդապետ. զի մեք ունիմք
զբաշխ նոսին յաւագնոց և՝ ի վաղեմեացն Թէ զոր՝
զի ցորքան պատահիցէ դատաստան երկաք ինչ
գործ ոչ, մեր հայոց ազգի դատաւորքն արաս
ցեն զդատաստանս հայոց. և ոչ Թէ դատաւ
որք ազգին Փռանկաց, այլև ունիմք զապրանս
ընդ ապրանաց նոցա, և զհետս ընդ հետից նոցա
և դու զի ևս երկնչիս։ Ասէ վարդապետն ոչ քնաւ
Հաճեցաւ՝ ի բանս յայսոսիկ, այլ երբեմն
հասարակ, և երբեմն առանձին խօսէր ընդ
նոսա գալ՝ ի ՀաշտուԹիւն, և նորա ոչ կամեցան.
յայնմհետէ կալեալ վարդապետին երկոքին ձեռ
ամբն զվզոցսատն երկար, ԹօԹափելով ասաց,
անպարտեմ ես՝ ի մեղադրուԹենէ դորին
դուք գիտասջիք։

Ասէ նիկոլ եպիսկոպոսն երբև ետես Թէ միջնոր
դուԹիւն երկոցունց առաքելոց սոցա և կենդ աւորաց
պատգամաւորացն լսելացն ոչ գան՝ ի ՀաշտուԹիւն,
և ոչ քանան զեկեղեցին. այնուհետև գնաց
առ եկեղեցականս Փռանկաց՝ որք կան իմջ
քաղաքին լոմայ, և մանաւանդ առ այնոսիկ
որք՝ ի կարդէն եղ վայելեալ էին, միաբանեցաւ
ընդ նոսա՝ և ետ զձեռագիրն անլուծանելին։ Ասա
նիկո

Նիկողայոս եպիսկոպոս Հայոց՝ իմովս կամաւ միա
բանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ. և մտի
ի հնազանդութիւն փափկին ամենիւք հեռև
ելովքն իմովք կատարել զամսն հրամանս որք
առ ինմանէ։ Ուր այսորիկ յարեաւ գլխաւորն
եղվայիթայ կարգին, և առ և զայլսն եկեղեցս
կանս յայլոց և կարգացն, առին ընդ ինքեանս և
զնիկոլ եպիսկոպոս Հայոց, և տարան առ արք եպի
սկոպոսն իւրեանց. և նա ողբօք առաքեաց զպատ
գամս առ իշխան քաղաքին՝ զի հրամայեսցէ
ժողովրդոցն Հայոց, կամ հնազանդեացին
եպիսկոպոսին իւրեանց, և բացցեն զեկեղեցին. և
կամ եկեալ յատեան դատաստանի միմեանց
յանդիման լինցին։ և ըստ հրամանի արքին եպի
սկոպոսին արար իշխանն, բայց ժողովուրդքն Հայ
ոց, ոչ զեկեղեցին բացին, և ոչ ի դատաստան
եկին. մինչև երեքանգամ այսպէս կրկնեաց
իշխանն, և Հայք ոչ զեկեղեցին բացին, և ոչ
ի դատաստան եկին։

Ապա յաւուր միում ժողովեցան բազումք
եկեղեցականք յեղվայիթայ կարգէն. նա և
յայլոցն և կարգացն. առին և զբազում տղայս
ի դպրոցացն, գնացին առ արք եպիսկոպոսն իւրեանց,
առին և զկարգաւորս ի նմանէ. գնացին առ
իշխան քաղաքին և առ դատաւորս. առին ի նոս
ցանէ զզօրականս և զդատաւորս ընդ իւրեանս.
աջ ամբն եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց՝ զոր
իշխանն Հայոց փակեալ էին։ Եւ առաքեցին
առ իշխանս Հայոց. զի կամ ինքեանք եկեալ
բացցեն զդուռն եկեղեցւոյն. և կամ զբանս
լինն առաքեացեն. և նորա ոչ ինքեանք եկին,
և ոչ զբանալին առաքեցին։ Յայնժամ նորա
որք եկեալք էին՝ հարեալ խորտակեցին զդ
դուռն եկեղեցւոյն. և առեալ զնիկոլ եպիսկոպոսն

մուծին յեկեղեցին. և 'ինա յանձնեցին զեկե-
ղեցին ամենիւք ընչիւք. որ մինչ ցայսր աւր եկեղե-
ցի այնու հետև երեալ զօրականացն Փռանկաց
'ի ինդիր երիցանց և իշխանաց Հայոց. զի իշխա
նականաւ բռնութիւք կալեալ տիկանիցեն 'ի բան
ոլս և 'ի տուգանս. և նոքա փախուցեալք թաքեան
և ոչ բնաւ երևեցան։ Այս ինքն եկեղեցւոյն
կայր գանձատունն, և 'ի նմա գիրք և անօթք
յոյժ բազումք. գրեանք աւետի քան զՀազար
փերթ. ամբոն ընտիրք և պատուականք և վար
դապետականք. յորս է ին ոսկետուփ ածաչունչք,
և աւետարանք, և շարականոց, և այլք գրեանք
բազումք։ Նոյնպես և անօթք, սկիհք, և խաչք,
գդոցք և բուրվառք, կանթեղք և աշտանակք,
շուրջառք և եմիփորոնք, թագք և վակասք,
ոսկք նշանք և արբոց նշխարք. և որ 'ի Հարց և
'ի Հաւուց 'ի վաղեմի և 'ինաիկին թագաւորանէ-
ին մուրհակք և նոմոսք. և այլևս ինչ յոյժ բա
զում։ ոչքա ամենն իմիջ եկեղեցւոյն է ին 'ինոյն
գանձատանն. զորս գրաւեաց ընդ իւրով ել
խանութիքն նիկոլն։ Ոչ միայն զայս եկեղեցիս
այլև զայլ եկեղեցիսն և զվանորայսն, որք 'ի քա
ղաքին. և որք շուրջ զքաղաքաւանն էին. և զամեն
աւանդս նոյ. զտունս և զանդաստանս. զաղո
րիս և զխանութս, կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով
իշխանութիքն ասելով. Ես եմ եպիսկոպոս, իմ են
եկեղեցիք ամենեքեանք և աւանդք իւրեանց։
Այսպէս խաչատուր վարդապետն և ամենայն ժողո
վուրդքն Հայոց որք 'ի լոլ կային 'ինացին արտա
քոյ եկեղեցւոյ. քանզի թէ մնասէին յեկեղե
ցին Տարկեր նոյ մնասել ընդ իշխանութիքն փա
փին. և ընդունել զնորին դաւանութիքն. այլ և
պարտեր Հնազանդիլ նիկոլայի եպիսկոպոսին. և
լովացիք ոչ ախորժէին զայսոսիկ. վնորոյ եղեն

վարանեալք և տարակուսեալք՝ և ոչ կարէին գտանել զՀարինչ. և ՅՈՒնային Ժողովրդքն Հայոց ոգ որք՝ ի լով քաղաքին էին առանց եկեղեցւոյ

Այլև զի վարդապետն խաչատուր էր՝ ի քաղաքէն. և գնաց՝ ի սուրբ խաչ կոչեցեալ վանքն, իսկ՝ ի ժողովրդոցն ոմանք որ կամէր գնալ առնա՝ համարձակութիւբ գնայր և գայր. և ահա յաւուր միում եկին բազումք զՆինուէորք և զբականք զՆինուէ և պատրաստութիւբ. և շուրջ նակէ պատեցին զվանան. և՝ ի հարցանելն տէ սողացն պատասխանէին զՆինուէորքն Թէ՝ ի թուրքաց աշխարհէն ջաղուտ է եկեալ՝ և ահա՝ ի քեզ տեղս է, կամիմք ըմբռնել զնա ։ իբրև սուղ ինչ ժամ էանց իմէ. և տեսին, զի ահա եկն Նիկոլ եպիսկոպոս իւրովք սպասաւորօքն և փառօք. և՝ ի մերձենալն իւր առ զՆինուէորն հարցանէր ցնա՝ Թէ վն էր ժողովեալ էք աստ. ասեն զՆինուէորքն՝ ի թուրքաց աշխարհէն ջաղուտ եկեալ է աստ՝ կամիմք ըմբռնել զնա առ որս ասաց Նիկոլ՝ ոչ է մարթ և պատշաճ ըմբռնել զնա ձեր զնա. այլ դուք դարձարուք և գնացէք՝ ի տեղիս ձեր. և ես գնացեալ տեսանեմ և խօսիմ ընդ նմա. և զՆինուէորքն ամենեքեան իսկոյն ցրուեցան և գնացին ։ իբրև այսպէս եղև զրաւ գործոյն. որոյ վէս կարծեցեալ եղև՝ ի ժողովրդոցն Հայոց՝ Թէ՝ ի հնարից եպիսկոպոսին եկեալ էին զՆինուէորքն վասն երկեցուցանելոյ զվարդապետն ։ Իսկ եպիսկոպոսն գնաց առ վարդապետն էառ զնա անտի. և էբեր զնա ընդ իւր՝ ի քաղաքն ։ Յետ մինչ էր վարդապետն՝ ի քաղաքին. հանապազ գային առ նա աբեղայք և այլք ոմանք՝ ի Փռանկաց. և առնէին զկաթ ՋառուԹի ընդ վարդապետին իմէն երկու բնուն, և մէկ բնուԹե . և իբրև զհառնէքեակսանաւ

հէր

Հերձուածողին խոտորեալ զհայս. և ի տգիտու-
թէ և յիմարութէ մոլորեալ ասկ վարդապետին
մտածելով զգործս անցելոյն. և խորհելով զա-
պառնոյն. և տեսանելով զներկային. գիտաց
զի ոչ գոյ ինչ օգուտ՝ այլ զուր աշխատանք և ի
նանիր վաստակ. վասնորոյ եբեալ՝ ի լուսայ՝ և գնաց
զհանապարհս իւր մինչև եկեալ ի հաս յ՚Ջմիա
ծին առ մեսիս կԹ՚ղկոսն. և առ այլ վարդապետն.
որք ամբն ցաւագնիւ սրտիւ՝ արտասուաթո
րոյք աչօք սգային վն ազգին հայոց՝ որք էին ՚ի
լուսաքաղքին՝ Թէ զնարդ լինի փրկութէն նոց։

Եւ ոչ ՅԷն վՀն ասաց՝ նախ զՀղօրն կապի
ցէ և ապա զտուն նր աւար Հարկանիցէ. այս
պէս արար և նիկոլ եպիսկոպոսն. զի յետ գնալոյ
վարդապետին. ոչ զգաստանն տեսչեանն գանիէ
զի սկսաւ զամն ժողովուրդն և զգանձս և
զամն ինչս եկեղեցւոյն՝ ուտել և մանրել և զմնա
յորդն առ ոտս արկանել։ Վանզի ոչ՚ի ժա
մանակս կռապաշտից Թշնամացն ուներ քրիստո
նեայքն զՀալածանս՝ այսպէս և յայսմ ժամանա
կի եղև իվերայ ազգին հայոց բնակելոցն՚ի լուս
աքաղքին։ քանզի կարի զօրուԹէ զօրացաւ
նիկոլ եպիսկոպոսն և բռնացաւ իվր ժողովրդեանն
հայոց։ կալոյր զերիցուսս առ ողոք և գտուս
ներ սուղինչ ՚ի քանս և արկանէր ՚ի քանս՝ և առ
նոյր ՚ի նոցանէ զտուգանս զերիս Հարիւր և չորս
Հարիւր ղուռուշս. սոյնպէս և զեկեղեցիս, որք
և դատաւորք էին կարգեալք՝ կալեալ տուգանէր։ Եւ Հասարակ զամն ժողովրդեան
վտանգէր. ոչ Թողոյր ՚ի Թաղել զմեռեալսն
վասն գանձի. և յորժամ առնոյր զգանձս ըստ
հաճոյից կամաց իւրոց. ապա տայր զՀրաման Թա
ղելոյ և զտեղի գերեզմանի առնել Թաղել. և յետ
Թաղելոյն յորժամ զտապանաքարն իվր գերեզմա

նին կամէին ձգել յայնմանէ պատճառէ մի՛ սանգամ առնոյր զգանձս. և ապա զԵրեմիան տայր ձգել զբարն: Այլ պատճառի էր. և պսակք և մկրտութիւնք խափանեցան. զօրս տա րեալ յայլ քաղաքս պսակէին և մկրտէին. և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին. և զայսոսիկ առնէին ՚ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. և յորժամ իմանայր՝ մեծաւ ցասմամբ զայրանայր. և ըմբռնէր զերեցն և զարարող արան բազմօք խոշտանգանօք ջարդէր՝ և զծանրագոյն տուգանս առնոյր:

Այլև երբեմն զի զմեռեալ կամեցան պսակել ՚ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. որոյ վերերեք քահանայք բերին զի՛ ի տան անդր արասցեն զպսակն. և ծանուցեալ եղև այս եպիսկոպոսին. որոյ առաքեալ զօրականս ունէր զերիցուանն և զտեառս Հարսանեացն և արկանել ՚ի բանտ: սմին իրաց երազգած եղեալ տեառց Հարսանեացն և երիցանցն. առ երկիւղին ականն թաքչէր. զմեռ յերիցանցն եդին ՚ի մէջ անդուկի և կոպզայեցին երբ թէ կահք և զարդք կանացի գոլ: և երկուքն յերիցանցն ժամին իմէջ սօքային, որ չինեալէին իմէջ տանն վերն հրաւառուն: Ասկ զօրականացն ՚ի յուզելն և ՚ի խանդրելն զերիցուանն գտին իմէջ սօքային. Հանին զնա ՚ի սօքայէն և կապեցին ձեռս ՚ի յետս գլխիքաց և բռկոտամբ սկսա ցեալ երեսաք և մաքմնով զի մուր սօքային սկսա ցուցեալէր զնա. և այնպէ տարան զնա առաջի եպիսկոպոսին: և եպիսկոպոսն յետ բազմաց անարգանաց և սպառնալեաց էարկ զերիցուանն և զտեառս Հարսանեացն ՚ի բանտ. և էառ զչորս Հարիւր ղուռուշ յերիցանցն. և զչորս Հարիւր ղուռուշ ՚ի տեառց Հարսանեաց. և ապա եթող

որք գնացեալք արտքին զհարսանիսն։ Եւ բա
զումք տղայք մեռանէին առանց մկրտութե.
և բազումք տղայք կային անմկրտեալք հնգե
տասան և վեշտասան ամեայ՝ և բազումք մե
ռեալք մայրին անթաղք յամս բազումս։
դնէին զմեռեալն՝ի մէջ փայտեայ տապանի
և ընդին զտապանն կապրով մինչև որ ծած
կէր զմեռեալն. և դնէին՝ի ցուրտ տեղիս
և պահէին. սոսկալի վայելուչութե կն և բո
վանդակ եօթն խորհուրդ եկեղեցւոյ և ամ
ամանակարգութե խափանեցաւ։ և մնացին
ողորմելի ժողովուրդքն իմէջ անհնարից նե
ղութե։ առաւել քան զոր՝ի ժամանակս
կռապաշտութեն։

Այսպա ժողովուրդքն յաղագս յոքնակի նե
ղութե իւրեանց բողոք բարձին՝ի սուրբ ա
թոռն Լուսաւորիչն. վն զի տէր սիմէն անուամբ
ոմն քահանայ և գերևեղի այր մի աշխարհական
առաքեցին առ կԹղկան տէր մասնս՝ զի հո
գայցէ, և հնարեսցէ նց զվերկութե։ և կԹղկան
գրեաց զնամակս խոհեմականս՝ և լի իմաստու
թե. խոնարհ և մաղթողականաւ բանիւ առ
թգւրն լեհաց և առ նորին իշխանան. և առ
արք եպիսկոպոսքն քաղաքին լովայ՝ որ յազգէն
ֆռանկաց. նաև առ փաւին։ Եւ ընդ որեայ
թե ողորմելացուք առաւպելոյ ժողովր
դեանն. և չնորհեցեք զեկեղեցին ինքեանց՝
և մի՛ խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ.
զոր ոչ է պատուհ առնել քահանայից վրդ.
իւրև հասին նոքա այսոքիկ՝ի լով քաղաք. և
ժողովուրդքն ՚ի տեսոց զարեալ մեռուցին իւրա
քանչիւր տեառց՝ թգւրին և այլոց։ Եւ նորա
հրամայեցին թարգմանել՝ի գիր և՝ի բարբառ
իւրեանց. որոց յընթերցուածն հաճեալ հաւա

նէ ին ամենից բանից և որպիսուԹց. որոց բանից վերայ գԹացաւ սիրտ ԹՁբրին. որոյ անուն էր վլատիսլաւ. զոր և Հրամայեաց ԹԷ տուք ղեկեղեցին Հայոց յինքեանս. բայց յեզվայի դայք ընդ-իմացան և ոչ Թողին՝ ասելով ԹՁբրին. այս եկեղեցական և հոգևորական գործ է՝ որ վերաբերի առ փափն. և առ աքք եպիս կոպոսն. և ննքա պարտին հոգալ զսա՝ որոց անկ է և պատեհ. և ոչ քեզ՝ որ մարմնաւոր ԹՁր ես. վն որոյ ոչ է քեզ պատեհ խառնիլ յայս գործ՝ որ է հոգևոր: և ԹՁբրն վն գԹա ղոյ'ի տառապանս ժողովրդեանն Հայոց. խընդ րեաց յաքք եպիսկն իւրեանց տալ ղեկեղե ցին Հայոց. սին և ընդ-իմացան եզվայի դայքն, և ոչ Թողին տալ: Ի վն առաւել գԹալոյ ԹՁբրին իվր Հայոց ինքն ԹՁբրն յա րեաւ և գնաց յեկեղեցին Հայոց՝ զի տացէ ղե կեղեցին Հայոց ինքեանս'ի Հայս. իբրև զայն գի տաց նիկոլ եպիսն. խսկոյն զգեցաւ զզեստս պատարագի. և բարձեալ զՀաղորդ պատարա գին իվր գլխոյ իւրոյ՝ և ելեալ եկն ընդառաջ ԹՁբրին. որում'ի տեսանել ԹՁբրին զոր Հուրեցաւ'ի տէրունականէ խորհրդոյն. և ոչ ինչ զօրեաց առնել. այլ Թողեալ զնա դարձաւ'ի տեղի իւր և յապարանս:

Ի պա Հարկ եղև Հայոց գնալ'ի Հռոմ առ փափն՝ զոր և բազմօք աղաչանօք առին զԹուղթս բարեխօսուԹ'ի ԹՁբրէն և յաքք եպիսկն առ փափն. և գնացին'ի Հռոմ. եւտուն'ի փափն նախ զինդրանաց ԹուղԹն մանէսի կԹղկսին. և ապա ղԹՁբրին և զաքք եպիսկն: Իբրև եռեսն նիկոլ եպիսկն ԹԷ ժողովրդքն գնացին'ի Հռոմ. գնաց ինքն ևս'ի Հռոմ. և անդ ևս անիրաւ եզվայի դայքն ներհակացան Հայոց՝ և ձախեցին զբանս

նից՝ որ ոչ եղև տուեալ եկեղեցին Հայոց։ զորև ունայն դարձան ողորմելիք ժողովուրդքն։ և եկին՝ի լով։ Յարձաւ և նիկոլ եպիսկոպոսն՝ի հռոմ մայ և եկն՝ի լով։ և կայր ըստ առաջնոյ կարգին վտանկն լով զժողովրդեան և ևս անառակութիւն։

Յոդ զառաջինն երկիցս և երիցս ևս առաքեցին լովացիք զքահանայս և զերեսփոխանս յՋմիածին առ կաթողիկոսն փիլիպպոս։ զի մօսէս կաթողիկոսն վախճանեալ էր։ և փիլիպպոս կաթողիկոսն քազումանգամ զանազանիւ կերպիւ զթուղթս գրեաց՝ի լով։ և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց՝ի լով։ սակայն այնու ևս ոչ եղև օգտութիւն ինչ Հայոց ժողովրդեանն։ Յայնժ՝ի լովայ քաղաքէն եկեղեցականք որք բարեպաշտոնք։ որք էին աբեղայք և երիցունք գրոց աշակերտք։ վն այսոցիկ հալածանացս եկին յՋմիածին՝ և անդէն բնակեալ կացին։ որք էին որդիք նշանաւորաց արանց։ յորոց զո մանս ձեռնադրեաց փիլիպպոս կաթողիկոս եպիսկոպոս լովայ՝ և առաքեաց անդ առ՝ի հովուել զժո ղովուրդսն։ սակայն և այնու ևս ոչ եղև օգտու թիւն ինչ ժողովրդեանն լովայ։ Յայնժ՝ի սոյն ժամանակի՝ի կրգէն դօմինիկոսի պօղոս անուն ամբ վրդպտ ումն այր խնաստուն և երևելի յազ գէն Ֆռանկաց։ եկին յերկիրն նախջուանայ իւ մէջ ախթարմայիցն որք անդ կան։ և փիլիպպոս կաթողիկոսն զբազում սէր և զբարեկամութիւնս ա րար ընդ պօղոսին այն։ վն օգուտ ժողովրդեանն մերոյ և փրկութիւն եկեղեցւոյն լովայ։ և պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ՝ի հռոմ։ և գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ՝ի լով քաղաք։ և լովացիք ևս բազմօք աղաչանօք խնդրեցին՝ի պօղոսէ և զբազում մեծարանս արարին նմա։ և զգանձս

և յոլովս առ՛ի թոշակ ձանապարհի եառն
նմա. զի թերևս զօգնութիւն ինչ հնարեսցէ նմ
՛ի դուռն փափին: և յորժամ ի հաս պօղոս՛ի
հուսմ և մինչ նա զբանս ինչ բարեխօսութիւն վե
Հայոց առաքարկեալէր. և խօսեր՛ի դուռն
փափին. վազվաղակի գնաց զինի նր և նիկոլ
եպիսկոպոս՛ի հուսմ՛ի դուռն փափին. և խա
փանեաց պօղոսի ձեռնտուա
թիւ եզվայիթոցն: և այսոքիկ յամենից կողմանց
խափանեցաւ փրկութիւն և օգնութիւն տուա
պեալ ժողովրդեան լովայ քաղաքին. և ընդ
պօղոսին գնացողքն տրտում և ունայն գար
ձան անտի: Իսկ նիկոլ եպիսկոպոս և դարձաւ՛ի
հուսմայ և եկն՛ի լովայ քաղաք. և կիրակի ըս առաջ
նոյ վարուց խրոց. և և առաւել անառակ: և
զվերոյասացեալ գրեանսն. և զօրբութիւն ա
նօթան. և զամեն աւանդս եկեղեցւոյն. զորս
վաճառեաց. և զորս կաշառս բաշխեաց. և
զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար զար
ծաթ և վաճառեաց: և զայնքան զբաղում
և զանթուելի զինչսն և զգանձսն ցիր և ցան
արարեալ բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց.
միայն լոկ դատարկ քարեայ եկեղեցին. զի
կիրակի անառակ և զեղխ և չոմայտիք վարուք՝
յայտնի և համարձակ յոչըմբեք վերհերելով:
և քաղաքն գրեանք և անօթք՛ի նորին վաճա
ռելոցն եկին յերկիրս Հայոց՝ և առ մեզ հա
սին. զորս վաճառականքն գնով առեալ բերին.
որ աքանչելի էր տեսողացն:

Իսկ ողբմալի ժողովուրդքն լովայ զվատնիչս
և զչարչարանս բազումս կրեցին. վն զեօթնեքոր
հուրդս եղեկեցւոյ խափանելոյն. և քաղաքն
աւր երկիւղածք. և վրէ ժխնդիրք Հայրենեաց
օրինաց մեկնեցան՛ի տանց և՛ ի տեղեաց. և ե
լեալք

լեալք ի քնի ձեն հեռացան. անջատեալք յըն
տանեաց և յազգաց. պանդուխտք, և նշդեհ.ք
շրջագայեալք յօտար աշխարհի. և այնպիսեաւ
կենօք հեծելով և յոգւոց հանելով վախճանե
ցան. և զայլևս չարչարանս և զնեղուն յոքնակի
կրեցին ժողովուրդքն Հայոց՝ զի հալածումն
մեծ էր իւրեց նոցա. որք և զրկեցան յեկեղեցւոյն
իւրմէ՝ և յայնքանեաց առացուածոյն. և իւրմէ
ևս զգանձս վանեցին ի գրուանս իշխանաց և
թագաւորաց. և այսպ և անդ յոտղեգնացուածս:
Եւ այնքան աշխատեցան երկոքին կողմանքն.
այսինքն նիկոլն և ժողովուրդքն. զի լքան ի
բազմութեան հնարագործութեանցն իւրեանց
մանաւանդ ներհակութեանցքանզի սկիզբն խա
չոտեցուածոյ եղև ի հազար և երեքհարիւրերկու
թուականին. որ զեկեղեցին յաւիշտակեաց նիկոլն.
և մնացին այնպէս մինչ որ հասին ի հազարև
հարիւր և երկու թուականն մեր:

Յորում ժամանակի տէր փիլիպպոս կՃիղիան
արքեպ աթոռոյն Լամիածնի գնաց յԵՀմ, և
անտի եկն ի մեծահանդէս քաղաքն ի կոս
տանդնուպօլիս, որպ գալստեան համբաւն
հաւաքեցաւ ընդ ամեն տեղիս, նաև ի լուր քա
ղաք ևս եհաս:

Ի սոյն ժամանակի հանճարեղ խորհրդա
կան նիկոլ եպիսկոպոս, նկատեալ տեսութիւն իւ
րոց մտաց, թէ ժողովուրդքն այսքան չարչարե
ցան, և ոչ կատեցան ի բնէն կամաց իւրեանց.
այլ տակաւին ի նոսն կամ յամառութիւնք կան, վն
որոյ խորհեցաւ գնալ ի կոստանդնուպօլիս
առ կՃիղիան փիլիպպոս, զի թերևս բարձցի
յինքենէ անուն բանադրութեանցն, նաև ընկալցի
ի նմանէ իւր ժողովրդեանն զթուղթ օրհ
նութեան, և առ ինքն հնազանդութեան: բայց

զի էր դատաւոր և ունայն՝ի գոյից. և ոչ ու-
նէր զպաշտօն Հանապարհի. վասն որոյ խորհէր
գտանել սմին հնար. զոր և էգիտ այսպիսեաւ
կերպիւ. Այր էր՝ի Թօխաթ քաղաքի յազգէն
Հայոց այր ումն երևելի և անուանի. որոյ ա-
նունն էր մահ դասի մարկոս. որ ետ զգանձս
յոլովս սիմէոն անուամբ որդւոյ իւրոյ՝ և առա
քեաց յաշխարհն իլասաց վաճառականութե
աղագաւ և սիմէոնս այս եկեալ էհաս՝ի լով քա
զաք՝ հանապազ ուտէր և ըմպէր և կեայր՝ի
խրախութե. նաև եղև Ծանօթ և բարեկամ
ընդ նիկոլայի եպիսկոպին. զորմէ խոստացաւ եպի
սկոպն, և ասաց. Թէ ունիս ջկամն գնալոյ առ
կԹ՚ղկոսն. մի՛ հոգար վասն պաշարի. զի որքան
և պիտոյացի քեզ դրամ վասն Հանապարհի
ցամենն ես տամ. զորմէ ըստ իւրում խոստմանն
ետ եպիսկոպն զերկուահազար դուռուշս նաղա
դրամ. իբրև զայն էառ եպիսկոպն. ապա եղեալ
՚ի լովայ եկն՚ի քուղ դան և գնայր առ կԹ՚ղկոսն
փիլիպպոս։

Օ այս տեսեալ ժողովրդականացն Հայոց որք
՚ի լով. Թէ գնաց նիկոլ եպիսկոպոսն առ կԹ՚ղկոս.
սահմանեցին և նոքա զայր ումն երևելի յիւրից
կողմանէ, որ էր մի՚ի դատաւորացն Հայոց.
որոյ անունն էր խաչկո՝ գնալ առ կԹ՚ղկոսն փի
լիպպոս տումեալ նմա զգրեալ ԹուղԹս և զպա
տուհրեալ բանս քաղցումս։ և նիկոլ եպիսկոպոս
և խաչկո դատաւորն՝ որիշ՚ի միմեանց գնա
յեալ հասին՚ի կոստանդնուպոլիս՝ և պատահե
ցան կԹ՚ղկոսին։

Այր՚ի յոլով աւուրս զկնի բազմից խօսեց և
գործոց. կատարումն գործոյն այն եղև՝ զի կԹ՚ղ
կոսն փիլիպպոս Հրամայեաց՝ զի զբանս չորս
դխով յանձն առցէ նիկոլ եպիսկոպոսն. և զայն
ձեռնա

Ձեռնադրով եւ բոլով դրոշմեացէ. եւ տացէ ի
լիպոսի կԹղիկոսին։

Եւ զի զգաւանութիւն լուսաւորչին. եւ զնո
բին աթոռակալ Հայրապետացն դաւանեալ
խոստովանեացն Նիկոլն, եւ իւր հետեւողքն. այս
ինքն եկեղեցականք եւ աշխարհականք։

Արկրորդ՝ զի զարարողութիւն հայաստանեայց
եկեղեցւոյ արասցէ ինքն եւ իւր հետեւողքն։

Երրորդ՝ զի զկնի վախճանի Նիկոլին՝ ի տե
ղի Նիկոլին եպիսկոպոս նստուցն. ՚ի կԹղիկոսէն
Ջհաճենի լինիցի օծեալ եպիսկոպոս. եւ նորին
Հրամանաւն նստցի ՚ի նուիրոյ վիճակին. եւ նու
նոյ կԹղիկոսին հնազանդ եւ հետեւող լինի։

Չորրորդ՝ զի ինքն Նիկոլն միայն յիշեացէ զա
նուն փափկին. եւ զայնեւս ՚ի պատարագն մի
այն. եւ ոչ յայլինչ բանս եւ յարարողութիւս։
Եւ մի խառնեացէ զՋուր ՚ի բաժակ սրբոյ
պատարագին։ Նոսկ յեկեղեցականաց ժառան
գաւորաց եւ ՚ի կղերիկոսաց. ձեռք քնաւ չի
շեացէ զանուն փափկին։ Այլոյն եւ մի յիշեացէ
զկնի Նիկոլին նստող եպիսկոպոսն զանուն փափկին
ամենեւին. ոչ ՚ի բանս եւ ոչ ՚ի գործս՝ այլ
միայն Նիկոլն. եւ զայնեւս ՚ի պատարագն միայն։
Եւ վասն յիշելոյ զանուն փափկին՝ Նիկոլն ինքն
ինդրեաց ՚ի կԹղիկոսէն զի այնմ միայն ներուածն
արասցէ. քանզի Նիկոլն ասաց Թէ Ձեռնադ
րեան, զոր ես տուեալ եմ Փառանակաց ՚ի կարգէ
լուծանեն զնա. գուցէ մնհայարար եւս առնի
ցեն. վասն որոյ ներեաց կԹղիկոսն։ Եւ զայս
չորս բանս գրեալ ՚ի քարտիսի. կնքով կնքեալ
եւ Ձեռնադրով դրոշմեալ Նիկոլն եւս կԹղիկոսին
փիլիպպոսի եւ կաԹուղիկոսն եւս խաչէս դա
տաւորին. զի ընդ իւր տարեալ ՚ի քաղաքն լոմ ՚ի
պահեստի ունիցին վասն ապագայն զգուշութեան։

և

և ասա կԹ ղկոսն արձակեաց զնիկօլ՛ի կապա
նաց բանադրանաց. և ետ նմա զնոմոս եպիս
կոպոսականի իշխանութԹե իշխել նմ՛ի ժողովր
դոյն լուսոյ: Եւ պատմէ նմա զի զդա
տացեալ՛ի Թափառականաց և՛ի խնդիր չից վա
րուց նոցա՝ եկեալ՛ի կրօնս և՛ի բարեշաւիղ
Հանապարհս արդարութԹե. որ վայել էր անուա
նի և աստիճանի եպիսկոպոսութԹե: և նիկօլ
եպիսկոպոսն զամենն հրամանս կԹ ղկոսին հոգւով
չափ և յօժարկամօք յանձին կալեալ. և ար
ձակեալ՛ի նմանէ եկեալ ի Հաս՛ի լուս քաղաք:

Եւ ժողովէքն լուսոյ Համարեին Թէ զոջա
ցեալ և Թողեալ եցէ նիկօլն զԹուրվարս հա
բս. բայց տեսանէին զի՛ ինոյն վարս կայ անփոփոխ:
այլև յիշէին զանչափ գանձուցն հարցի և զանս
Թոցն վատնուածն. և զբազմապատիկ նեղու
Թիան՝ զոր Հասոյց նոցն եպիսկոպոսն նիկօլ. այրեալ
խորովեալ առչորեին սիրտք նոցա: վՀ այնորիկ
ոչ կամէին միաբանիլ ընդ նմա. Նա ևս առաւ
էլ փախչէին և կամէին նզով լինիլ՛ի նմանէ:

Եւ մինչ տակաւին ոչ էր գնացեալ նիկօլ
եպիսկոպոսն՛ի կոստանդնուպօլիս. փիլնպոս
կԹ ղկոսն՛ի կոստանդնուպօլսէ զոմն վարդապա
յիւրոց աշակերտաց՝ որոյ անունն էր յօհան
վարդապա. որ էր առեղեաւ յարղնուոյ. այր փար
Թամ ՀամաստութԹե. և Հանձարեղ բանիւ.
առաքեաց գնաալ՛ի լուս. զի Թերևս գուն գոր
ծեալ Հնար եղիցի վրկուԹե գտանիցէ եկեղե
ցեացն. և՛ի գնալն յօհաննու վրդապետին՛ի լուս.
և՛ի գալն եպիսկոպոսին՛ի կոստանդնուպօլիս. ՛ի
Հանապարհին պատահէցան միմեանց. և նիկօլ
եպիսկոպոսն՛ի յօհանէ վրդապետէն ևս էառ զԹուղԹ
առ կԹ ղկոսն. վն Համբառնալ յանձն արարու Թե. և
գնաց առ կԹ ղկոսն՛ի կոստանդնուպօլիս: նակ

յօհան

յօհան վարդապետն Հաճեցի՝ ելոյծ մնաց անդէն մինչ որ նեկոլ եպիսկոպոսն և խաչկօ դատաւորն՝ ի կոստանդնուպոլսէ դարձան և եկին՝ ի լոմ։

Իբրև եաես յօհան վարդապետն թէ ընդդիմանան ժողովուրդքն եպիսկոպոսին. և ոչ կամին հնազանդիլ նմա ակաս մի՛ նորդել խմբ ժողովրդեանն և նիկոլին մի՛ բանալոյ զբազմս ժամանակեայ զաղմուկն՝ և զխռովութիւն. և զբազում աւուրս բազմաւ խրատով՝ քարոզիւ՝ և դասու՝ և առանձնակի խօսելով ընդ ժողովրդեանն և ընդ եպիսկոպոսին. բազմաւ ջանիւ և յոլովիւ աշխատութ՝ թէ հազիւ թէ կարաց հաւատ նեցուցանել զժողովուրդն հնազանդիլ եպիսկոպոսին։ ապա՝ ի միասին առեալ յօհան վարդապետն զժողովուրդն և զեպիսկոպոսն եբերեալ էմոյծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ էր եպիսկոպոսն։ Այս եղև՝ ի մոռանել ժողովրդեանն յեկեղեցին. որպես զնաառնումն գառանց՝ ի Հօտս ոչխարաց մարդ իւրեանց գոռումն, և գոչումն, և ողբումն, և աղիողորմ լաց և փղձկելով արտիւ յորդառատ արտասուս հեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց. մեծաւ հառաչմամբ մի՛ տարփալեաց կարօտանալ և փափագանաց որ առ եկեղեցին իւրեանց։ և անդէն յեկեղեցւոջն՝ ի նոյնում ժամուն սկսաւ յօհան վարդապետն միսիթարել զժողովուրդն յիմաստնոց գրոց և՝ ի վարուց և յօրինակաց սրբոց. որոյ բանից վերայ զոլմանայր սիրտ ժողովրդոց. և ամենայն՝ ի համբոյր հաշտու թէ զամենեսեան ընդ եպիսկոպոսին։

Այս ես յաս համբաւ հաշտութ՝ես առ Թա գաւորն լեհաց՝ որոյ անունն էր Եռնգեաժի միր. քանզի՝ ի քաղաքն լոմէր Թիւրն յաւուրսն յայսոսիկ. որ և կոչեաց Թիւրն առ ինքն զյօհան

զյօհան վարդապետն և առանձինն ի սենեկի խօսեցաւ ընդ նմա զբանս բազումս. և լուաւ զպատասխանիս հանճարեղս և համարս բանիւ և սքեմաց Թէոդորն զվարդապետն և զչնորհակալութիւն արար նմա վն միջնորդութեանն և հաշտեցուցա նելոյն զժողովուրդն և զեպիսկոպոսն. և զբազմա ժամանակեայ խռովութիւնն բառնալոյն: Իսկ մնաց անդէն վարդապետն յօհան ամ մի ողջոյն և ապա դարձաւ և եկն ի տուրբ Յովհաննէս: Յակ ժողովուրդքն լսելոյ և նկունք եպիսկոպոսկան իւրեանց պայմանադրութեանն, զոր առնէին նեցին վիճակապոս կիճիկոսն, և յօհան վարդապետն մինչև ցայսօր՝ յորում զպատմութիւնս շարադրեցաք ի թուականիս մերում հազարն և հարիւրն և հինն. ի մայիսի ամսոյ տասն:

Թէ որք և ոչ եղեն պատճառք դանդաղելոյ զոճն և զդիտուն Թէոս արտաքնոց դրոց, և զարհուրեսս քերականութեանն, հանդուգնալ սիրեցին ի վարդապետս Հայոց, որ բնաւին բարձեալ և անհետ եր լեալ:

ԻԹ.



ՐՈ ՝Ի ՀՆԱՈՑ ԵՒ ՝Ի Վ.

ղեմեաց ժամանակաց կայր դասա տուն վրդ-պետ՝ ի քաղաքն բաղէշ, ՝ի վանքն որոյ անունն ամրդ-ոլ ասեն, որ յա ջորդէլով մի՛ զմի ՀՀ յաս մինչև ՝ի ժամանակս Հարց մերոց: յորում ժամանակի եր յաջորդ և առաջնորդ պետ և գլուխ վարդ-պետց տեղ ոյն այնմիկ ոմն վարդ-պետ բարսեղ անուն, որ եր այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտ ունէր տեր: և նոյն վանքն ամրդ-ոլու յառաջա գոյն խրթին և յոռի չինեալէր և այն ևս խոր խազեալէր ՝ի ՀՆուքեն՝ սա զամենեսեան չի նուազ ածն միաձաղոյնքակեաց, և ինքն վերստին

հմնարկեալ չինեաց և կատարեաց զբովան դակն, զեկեղեցին և զտունն և զայլսն որ 'ի նմա։

Այլև եր ինքնս բարեպէտ վարդապետս 'ի դասս զանձն որ 'ի տաճկացոյն յառաջ եկեալ և սերեալ, այսպիսեաւ կարգաւ։ Նախ գրիգոր տաճկացին։ Նորին աշակերտ դանիէլ։ Նորին յովանէս համշէնցին։ Նորին յորթան գրիգոր արձիշեցին։ Նորին ներսէս որ մատաղ ասի, Նորին ներսէս բաղիշեցին։ Նորին ներսէս ամիէցին։ Նորին գրգուռթ յովանէս ոստանցին։ Նա բին բարեպէտ գաւառցին, որոյ վասն բանս է։ Նորին աշակերտ մոկացի ներսէս 'ի գեղջէն ասկնջաւոյ, որոյ մականուն բեղլու ասեն՝ զի մեծ եր բեղն։ Նորին աշակերտ մեղքիսէթ երևանցի, 'ի գեղջէն վժանու։

Այդ այս բարեպէտ վարդապետս յինքենէ իսկ գիտակեր թէ գիտութէն արտաքնոց իմաստից և քերականութէն ոչ գոյ իմիք վարդապետն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թէր ևս հասանել այնմ գիտութէն ոչ միայն վն իւր, այլ մանաւանդ վն ազգին, զի արծարծեալ սիրեսցի իմիք ազգիս Հայոց, ոմն զի ամենն հասցեն այնց շնորհաց և գիտութէն։ վն որոյ յարաժամ առեալ 'ի ձեռս իւր զարտաքին գիրսն, և թէպէտև ոչ գիտէր այլ անյապաղ և անձանձիր ընթեռնոյր, եր զի ուրէք ուրէք հասանէր իմիք տեսութէն, և մտաց բանին, և եր զի ոչ, բայց նա ամենևին զանիւ առանց ձանձրանալոյ միշտ ընթեռնոյր։

Եւ ոմն Տէրն Վահ յառակս երիցք նկատակին ասաց, թէ ոչ տայէ վն բարեկամութէն, սա կայն վն ժառութէն յարուցեալ տացէ նմա զինչ և խնդրեսցէ։ այսպէս և սմա եղև, որ անդադար և անձանձիր տքնութէբ յար հանապազ

կա

կացեալ՝ ի դուռն խմաստից գիտուն քաղքէդ զյայգ և զկերուկ աղօթիւք և ընթերցմամբ։ Իսկ աղբիւրն և տունօղն ամի խմաստութիւն սբ Հոգին Ա՛ծ, որ բերանով Իակոբին իւրոյ խոս տացաւս. Թէ խնդրեցէք, և տայի ձեզ. բաղ խեցէք, և բացցի ձեզ. Հայցեցէք, և առնու ցուք, տեսեալ զանդանդաղելի զկանխէնն և զբաղխէնն սորա, ընորհեաց սմա զխնդրելին, զի ետ զտեսութիւն և զհանճար մտաց սորա խե լամուտ լինել բառին, և ոճոյն, և շաւղաց ար տաքնոց գրոց, առանց ուրուք առաջնորդե լոյ և ցուցանելոյ։

Քանզի նախ զսկիզբն արար սահմանաց գրոցն. կարդայր մինչև ցվերջ պրակին, և դարձեալ դառնայր՝ ի սկիզբն պրակին, այնքան կար դայր և դառնայր, մինչև ամենից որպիսու թիցն տեղեկացեալ լինէր՝ և ապա անցանէր՝ ի միւս պրակն, այսպէս առնելով մինչև՝ ի տան պրակն սահմանացն կարդաց, և վերն հասու եղև՝ որ այլոց ևս կարելի ուսուցանել։ Եւ ապա թո ղեալ զսահմանան էանց՝ ի պորփիւրն՝ տեսա նել և փորձել զնորին ևս զորպհասութիւն, և սկսաւ մեծաւ ջանիւ ընթեռնուլ և մտածու թիւ խոկալ և՝ ի բազում աւուրս յոքնակի աշ խատութիւ ընթեռնլով և դառնալով, ՝ի պոր փիւրէն զսեռն և զտեսակն ևս եգիտ ընորհօք սրբոյ Հոգւոյն։

Եւ յաւուրս ծերութիւն իւրոյ այս բարեղ վրդնայս, կոչեաց զամենեսեան աշակերտս իւր առաջի իւր, և զորինչ և գտեալնէր իմաստու թիւ յարտաքնոց գրոց դաս ասաց նոյ, զոր նորա ամենն՝ ի միտս լին, և ուսան։ Եւ ապա սկսաւ խօսիլ ընդ նոսա և պատուիրել։ Որդեակք իմ սիրելեալք, զորս Հոգևօրօք երկամբք ծնայ՝ ի

Տէր զի նախնեաց վրդովմտաց գրեանց մերոց զոր յիշեն, զաեռ. և զտեսակ, և զտարբերութիւն, և զայտուկ, և զպատահումն, և զտարբաստութիւն, և զբացատութիւն։ որոց բազմաց և յորովից պատահելեաք համք պարապմանց գրոցն, և գանձուց գրոցն, և առ որս գրոցն, և այլոց այսպէս սեաց։ Թէ պետ և ընթեռնուածք, և անցանելիք, այլ Թէ զինչ են սոքա, և սոցին հետեւմունքն, և բոլորն և մասունքն, և այլ որպիսութիւնքն մեք ոչ գիտեմք։ և Տարկ է վարդապետաց սոցին ամենից քաջ գիտակ գոլ՝ զի Թարց սոցին գիտութիւն, Թէ պետ ընթեռնու զր. զինչև ընթեռնու, և կարծէ համացեալ զնա, այլ ոչ է նմա ցեալ ըստ պատշաճին և պարտին։ զի ամենից համատութիւնց և գրոց ներածութիւնք սոքա են, եթէ նրբից և Թէ արտաքնոց։

Ա Ո որոց իբրև զանդատանալի կաղկ մահու պատուհասիւ ձեզ. և մանաւանդ ծանր և անբառնալի Տարկ իմ ձեր դնեմ զի որպէս զիս տեսիք զի Տանապազ ընթեռնուի զայս գիրս. և բազմաւ խոհմամբ մտածէի, և երկնէի. այն քան մինչև գտանէի զտեսութիւն բանին. և զորինչ և գտի ընորհիւով Ա՛Ն զայն ամ ա՜ Տաւատիկ դասատացի ձեզ։ Ա՛ւ այժմ մեծաւ Տարկիւ պատուհասիւ ձեզ զի և դուք այս պէս առնիցէք որքան և իցէք կենդանի. և զայս՝ զոր ես դասատացի ձեզ՝ Տանապազօր կարգացէք. և իմ ո՛որ ես դուք ևս աՀեցուցէք. ընթեռնելով և յաւաջ գնալով։ և զորինչ և տացէ ձեզ Ա՛ծ սէր Հոգին գյինէն ուսեալն և զձեր գտեալն ձերոց աշակերտելոցն դասատացէք. և միշտ վարժեցէք զնո՛ Ի՛նոյնն մինչև ունակատ ցե՛ի միտս նո՛ց. և դուք ևս պատուհասիցէք ձերոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ օրինակի ա՜

բասցեն։ և այսպէս յորդւոց որդիս առնելով հաւատամ՝ի Տէր զի բանայ և ցուցանէ զնմանն Աննապարհս և զդրունս չքնաղն և պանծալոյ գիտութեամ այսորիկ։ Որդ լուսընկալ հոգի բարեզ վարդապետս ըստ ասացելումն պատճառ եղև գտանելոյ արտաքնոյ գրոց գիտութեան։ և այսպէս պատուիրելով յաւելաւ առ Հարս իւր՝ և Հանգեաւ՝ի Քրիստ։ և եղեն զնա՝ի Հանգիստ գերեզմանի՝ի նոյն վանքն ամրոցալոյ, զոր ինքն նորոգեաց։

Ընդ ըստ պատուիրելոյ երջանկի վարդապետիս բարոյն երիցս ոմանք յաշակերտաց սորին արա բինս որք էին՝ի մոկաց գաւառէն միոյն անունն յօսէփ՝ի գեղ ջէն որոյ անունն է ոզմի, և միւսոյն հայրապետ, և սորին եղբօր որդւոյն ներսէս, որք էին՝ի գեղ ջէն որոյ անունն է սակնջաւան։ և այս ներսէս, բեղ լուս ներսէսն է, զոր՝ի կարգ վարդապետին յիշեցաք՝ի վեր անդր։ այս ներսէս յոլով աշխատեցաւ՝ և առաւելացոյց զբան զբարեզ վարդապետն և զքան զընկերս իւր։ Ընդ ապա՝ի միտս իւր եկեալ ներսէս վարդապետս և խոկմամբ՝ի միտածեալ զնմանն ունայնութիւն կենցաղոյս և զպատառ մունս սորա՝ և զպատրանս մեծութեան, զդջացաւ յաշխարհէն՝ և լքեալ թօթափեաց յինքենէ զաշխարհս, և զամենայն վայելչութիւնս սորին քանզի մեծ անապատն նոր էր չինեալ և հաստատեալ, որոյ զպատմութիւնն կանխաւ ձառեցաք, և՝ի նմին պատմութեն ներսիսի վարդապետի յիշումն արարաք, և այն յիշեալ ներսէսն այս է։ և սորա լուեալ զառաքինական ճգնութիւնս միւս բանից մեծ՝ի անապատին, եկեալ գնաց անդր։ Ընդ՝ի միաբանից մեծ՝ի անապատին ոմանք աբեղայք, սկսան դասատնուել զարտաքին

գիրսն

գիրն՝ի ներսիսէ վարդապետէն։ և վասն գործ-
նական առաքինութեին յարդոյ, և նախապատիւ-
կարդային առ այն՝ որ կարօղն էր ապրեցուցա նել զնա՝ ի վտանգէն, զի թէ պէտ վէ պարտեաց մեղաց բարկութիւն խրատեաց և սրտմտութեան դիմանեաց այլ արարչականաւ գթութիւնն և նա խախնամականաւ ողորմութիւն ողորմեցաւ նմ, որոյ բնութիւն իսկ է ողորմիլն արարած ոց իւրոց ըստ մարգարէին բանի, գթած ողորմած է Տէր երկայնամիտ և բազումողորմ: Արդ ո՛չ իսպառ մնաց ՚ի բարկութիւն և ո՛չ յաւիտեան պահեաց զոխս. այլ հեռի արար ՚ի մոցանէ զմեղս նմ ըստ բազմութիւն ողորմութեան իւրոյ, և գթա ցաւ ՚ի ստեղծուածս իւր ոմն զկայր և զմայր իմ՝ զաւակաց, վէ զի յիշեաց թէ մարդիկք են և բաղկացեալք ՚ի հողոյ: Ափսեալ տարա ծեաց իմ՝ նոցա զգութիւն և զողորմութիւն իւր, և էբարձ ՚ի նոցանէ զպատուհասն և ետ հա տատութիւն երկրի՝ և հանդարտութիւն աշխար հին, և զնաղաղուել մարդկան, որք կեան գոհ նալով զնմանէ յամենայնումի ժամումի, զի թէ պէտ խրատելով խրատեաց այլ ՚ի մահ ոչ մատ նեաց: Արդ՝ քանզի յայսմհետ ցուցաւ ամենակարող զօրութիւն անմահի թագաւորութեանդ, և գութ, և ողորմութիւն մարդասէր կամաց նորա:

Պատմութիւն վէ գերեզմանին և ասկերացն վարդապետիկոյ:

Ա. Օ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ վարդապետիկոյ, որ նէն գութեամբ և հնարիւք ետ կոտորել զազգն Հոռոմոց Պարսից ազգին. և զայս նա խանձս և ոխս տակաւին ունէին ՚ի մտի ազգն Հո ռոմոց. և մինչև ցայսօր հնարին վրէժխնդիր լինիլ նախանձուն այնմիկ: և ամաց յամն գան մար

մարդիկք՝ի Հռոմոյ ազգէն առ՝ի գողանալ զոսկերս վարդապարկայ. զի տարեալ իմիջ իւր բեանց կատարեսցեն իվէր նէր զարկամն իւրեանց ոչ և յօժարի սիրտք իւրեանց։

Այլ եղև զի յամս և՝ի ժամանակս յետինս՝ի Թուականիս Հայոց հազար և տասն և երիքսին. դարձեալ եկին յազգէն Հռոմոյ արք երկու գողանալ զոսկերս վարդապարկայ՝որ Թաղեալ կայ իմիջ եկեղեցւոյն՝ի գիւղն խորգոմ՝ի Հայոց ուձոր կոչեցեալ գաւառին՝ի վասպուրականի աշխարհին։ Այդ զոսկերսն վարդապարկայ Թաղեալէն իմիջ եկեղեցւոյն՝որնախակի շինեալ է իվէր երեսաց երկրի իվէր բնականի գեանոյ. և ապա Հողով ծածկեալէն զայն եկեղեցին և կուտեալէն զՀող բազում իվէր նէր՝ որ եղեալ է մեծ բլուր. որ կարծի՝ի տեսողացն Թէ՝ի սկզբանէ յաւիտենից Ա՛ծաստեղծ բլուր է և ոչ շինուվի. և Հողն ծածկեալ է զեկեղեցին և առաւելեալ բարձրացեալ. և ապա յետոյ՝ի գլուխ բլրին միւսանգամ նոր եկեղեցի են շինեալ իվէր գա գաթան ներքնոյ եկեղեցւոյն. և յայսմ եկեղեցւոջ կատարեն քահանայքն զժամակարգու Թիւն և զեօԹն խորհուրդս եկեղեցւոյ. նաև գիւղականքն անդ գան և աղօԹեն և գիւղն ոչ է շուրջ բոլորիւ զեկեղեցեաւն՝ այլ յարևելից կողմն եկեղեցւոյն՝ի սիրտ բլրին. և յարևմտից կուսէ եկեղեցւոյն և բլրին ծուխ է՝ զորվանայ ծուխ կոչեն իբրև քսան կանգուն հեռի յեկե ղեցւոյն՝ այլև գետ ջրոյ՝ի յարևելից կողմանէ գեղջն և եկեղեցւոյն գայ. և՝ի հարաւայնոյ կողմանէ նոցին անցանէ և խառնի՝ի ծուխն։ Այլ եկեալ երկոքին Հռոմէքն նախ ձևացուցեալէն զինքեանս իբր զայր առաքինի և հաւատարիմ և Հրաժարեալ քյաշխարհականաց իրաց. այն

այնքան մինչ որ քահանայքն և ժողովուրդքն հաւատացեալքն ընդ և զբանալին եկեղեցւոյն՝ի նոսա տուեալ և զնոսա լուսաւորեալ եկեղեցւոյն և ժամկոչ են կարգեալ: և նոքա Թէ յետ յոլ վից և Թէ յետ սակաւուց ժամանակաց՝ի գիս պօղ ժամանակի յարևմտից կուսէ եկեղեցւոյն իբրև տասանևհինգ կնգնաւ հեռի եկեղեցւոյն ծակեալքն զգետինն փորեալքն նաղմ: և այնչ նաղմ փորելով յատաչ գնացեալքն զի Թերևս մոցեն՝ի ներքին եկեղեցին յորում ոսկերքն վարդապատրկայ Թաղեալ կայ և զփորեալ Հողն նաղմին բերեալքն՝ի ծովն Թափեալ՝ի գլխոյ վրէն. քանզի եղը ծովուն փուլ է՝ զոր ալիք ծովուն արարեալ է: և որովհետև գիւղն՝ի յարև էլից կողմն բլրին է՝ և արևմտից կողմն անբնակ երկայնանէ պատճառ անկոյթ է՝ի մարդկա նէ տեղին. վասյսորիկ արքն վատահացեալ զայս գործ եղին: Ի. դր՝ի Թափեալ Հողոյն և՝ի հարև լոյ ալեաց ծովուն՝ պղտորեալքն ջուրքն և պղտորութ ի ջուրցն խառնեալ ի ջուրս գետոյն և զսա իվեր ընդ գետն գնացեալ. քանզի ջուրք գետոյն ուռկան տուեալ կանգնեալ կան յեզր ծովուն: Ուստ գեղականքն տեսանէ ինչպէ ջուրն որ հանապազօր պարզ և յատակ էր այժմ պղտոր է. ասէ ին անձրև ոչ է եկեալ և հեղեղ ոչ է իջեալ՝ և վն էր են ջուրքս պղտոր. ասէ ին ի միմեանս և հիանային և ինդրէ ին զպատճառն. և շրջելով և որոնելով պատահեալին Թա փած Հողին. և ապա գտեալքն զծակն և զնագնին. ապա կալեալքն զարան գայնոսիկ և՝ի ծածուկ և՝ի ներսագոյն տան արգելեալ. և այնքան հնարեալքն գեղականքն մինչ արքն այ նոքիկ զատոյգն ասացեալքն. Թէ եկեալեմք զի զոսկերան վարդապատրկայ հանցուք՝ և տարցուք

ապա՝ի գեղականացն. որք խորհրդականքն են լեալ Թագուհւոյն՝ի խառնաձաղանձ արանց՝ի գլխ շերմ միւսմ զերկոսին զարան զայնոսիկ եդեալ են իմբ տփի և հանեալ իմբ ծովուն և յառաջ խաղացուցեալ տարեալ իմբ ծովուն և կապեալ են քար՝ի պարանոցս նոցա և այնպէս թո ղեալեն՝ի խորս ջուրց ծովուն։ Երդ՝ կատա րումն գործոյս այսպէս եղեալ է. զոր ծերք և վաղեմիք մարդիկք պատմեցին. իսկ գեղա կանքն այնու հետև առաւել զգուշութիւ պա հեն զեկեղեցին զայն՝ի հանապազորդեան ժա մանակի. իբր զաւանդութիւն ստացեալ յորդիս՝ի հարց՝ի փառս Երկ և այս ևս այսպէս։

Յաղագս շարժին որ եղև՝ի Վան քաղաքին. և խրատ ընդակայ երկրին։

ԼԱ։

ՈՐ Ի ԹՈՒՎ ՌԻՒ ԱՄՆ

Թէս Հայոց հազարևիննասնևեօթին.



յապրիլ ամսոյ յերկուսն. յաւագ ուրբաթու գիշերն՝ որ լուսանայր՝ի լոյս աւագ շաբաթի աւուրն. անցեալ հասարակ գի շերոյն և ժամանեալ ժամ առաւօտուն որև զաւաւօտու աղօթիւն կատարէին. եղև յան կարծակի թնդիւն ևգոռումն՝ որոյ զկնի շարժ ահագին. որ՝ի բնակ էից այնքան գաւառացն ոչք էր տեսեալ այնպէս ահագին շարժ։

Որմէ շարժ մանէ բլաւ ներքին բերդի պա րիսպն վանայ քաղաքին՝ի Թաւրիզու դարգա հէն մինչ՝ի դանի բուրջն. և աջևս այսր և անդր բազումք տեղիք՝ի պարսպէն փլուզան և բլան. և որք ոչ բլան խախտեցան՝ զորս յե տոյ քակեցին զամ և նոր շինեցին։

Եւ եկեղեցիքն վանայ քաղաքին ոմանք խախ

տեցան. և ոմանք աւերեցան. ընդ սահակ ա-
նուամբ եկեղեցին քանդեցին աւերեցաւ. զոր
յետոյ խոջայ ախիջանն շինեաց։ Յաղթիա
ծին անուամբ եկեղեցին խախտեցաւ. զոր սոյն
խոջայ ախիջանս զայն ևս նորոգեաց առաւել
քան զառաջինն։ Յորոց առաքելոց եկեղե
ցին ի ներքոյ կողմանէն առաստաղն բլաւ.
զոր խոջայ ատոմեանք նորոգեցին։ Յորում պո
ղոս եկեղեցւոյ կաթուղիկէն բլաւ. զոր գերա
քանց զնոցա շինեաց։

Յի մաչէթացն, միայն մուստաֆայ փաշի
մաչէթն մնաց և սորա մնիրէն. իսկ այլ մա
չէթքն և իւրեանց մնիրէքն ամէն փլան։ և վե
րին բերդի մաչէթի մնիրայն ևս փլաւ։

Յեղաղամք տունք և ապարանք և շինուածք
փլան. և ներքոյ իւրից առին զեաղամ մարդիկս
և զանասունս. և այնքան բաղումք էին մեռեալքն
որ սայլիւ բարձեալ տանէին արտաքս ի քաղա
քէն։ և ի թաղէն ոչ բաւէին հատանել զգերեզման. այլ պատառեալ զերկիր վիհ մեծ
առնէին և ի մեռելոցն զուռքն և զտան պա
տեալ կտաւով դնէին ի վիհն և հողով ծած
կէին։

Յայուրս ուրբն անդադար ի շարժման
եկաց երկիրն, որք ոչ կարէին ի տունս բնակիլ
այլ ի բացեայ վայրի վրանով կային. զի յայն
ուրբն օրն անդադար ի շարժման եկաց եր
կիրն ոտ զնաւ իվր երեսաց ջրոյ։ և զկնի այնո
րիկ սակաւ ինչ հանդարտեցաւ. որ ի չորս
օրն, և ի հինգ օրն, և ի տասն օրն միանգամ
շարժիւր. և այնպ մնաց մինչ որ յունիս ամիսն
լինցաւ. և ապա հաստատեցաւ երկիր ողոր
մութքն Ա՛Ա։

Յզկնի առաջնոյ շարժին իւրաքանչիւրոք
որք

որք զերծան ՚ի մեռանելոյ. եկին ՚ի տունս իւրեանց ակամ պեղել զՀողն. և ՚ի ներքոյ Հողոյն հանեին զինչս և զմարդս՝ որք ՚ի ներքոյ Հողոյն մնացեալք էին։ Թէպետ մեռեալքն անթիւք էին. այլև բազումք ևս կային՝ որք խնամքն Ա. Կային կենդանիք, զորս հանին ՚ի ներքոյ Հողոյն. վն զի յետ տասնևհինգ աւուր կենդանի մարդ հանին ՚ի Հողոյ։

Այլև յաւուրս այսմ շարժմանս եղև գործինչ յորոյ վերայ բազումք զարմանային. այր ոմն աղքատ և չքաւոր. ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ՝ ՚ի նոյն քաղաքէն վանայ։ այրս այս նախքան զշարժումն եղեալ ՚ի քաղաքէն գնաց ՚ի քարափոս անուշանեալ գիւղն վն մուրանալոյ։ և կային այսմ աւուն երկու որդիք փոքր եբրև տասն ամաց աւելի կամ պակաս. և այսաքիկ երկու տղայքս մնացին ՚ի տունս իւրեանց և հասեալք ՚ի յերեկոյն ըստ հանապազորդեան սովորութեանն ննջեցին. և ՚ի գիշերին յորում շարժն եղև՝ սոցա տունն ևս բլաւ. և ՚ի ներքոյ մնացին մանկունքն. Այլ սոցա Հայրն՝ որ գնաց գեալէր ՚ի քարափոս գիւղն. ննջեալէր ՚ի տան ուրումն. և ՚ի լինիլն շարժին անկեալեր գերան տանն և խորտակեալ զոտս առնն. և յայսմանէ պատճառէ մնաց այրս այս ՚ի գիւղն քարափոս մինչև համբարձումն, որ ողջացան բեկեալ ոտք նր։ ապա եղեալ եկն ՚ի քաղաքն և ետես փլուզ զեալ զտուն իւր. և համարեր ինքն և այլք ամքն թէ մանկունքն ՚ի ներքոյ տանն մնացեալ մեռան. Եւապա ժողովեալ զարս ոմանս եբեր անդր՝ որք պեղեցին զՀողն առ. տեսին զմանկունսն ննջեալ ՚ի ներքոյ Հողոյն։ և հիմա ցեալ զփառս մատուցին Ա. Յ. վն զի եր անցեալ աւուրք քառասուն և չորք զկնի շարժին՝ որք

Յետոյին մանկունքն իներքոյ հողոյ. և շնորհօք և ողորմութեբն Յ.Ի կենդանի արտաքս եկին մանկունքն: և որք լուան և տեսին հիացեալ զարմանային. որոյ լուրն էհաս մինչև 'ի փա շէն քաղաքին. և տարեալ փաշէն զմանկունսն առաջի իւր և հարցեալ ստուգեաց զնմ. և գրեալ 'ի քարտիսի զայս գործ՝ որ կատարեցաւ իվր մանկանցն. և պահեաց առ իւր 'ի յիշատակ սքանչելեացն Յ.Ի: Յ.յև հարցին ցման կուենան վ՛ կերակրոց, թէ զինչ ուտէիք. և նոքա ցուցին սակաւ փշրանս հացի թէ զայս ուտէաք երբեմն երբեմն. և վ՛ ջրոյ ցուցին աման ինչ յորում կայը բաղկի թթուս. որ 'ի ծարաւիլն զայն ուտէաք և զովանայաք. բայց զտիւ և զգիշեր ոչ գիտէաք: Այս մանկունքն այնոքիկ կան ցարդևս կենդանի շնորհօք ամե նակարողին Յ.Ի:

Յ.յև ամբն վանորայք երկրին վանայ փլուզեալք աւերեցան. վերին վարագ՝ և ներքին վարագ. և եկեղեցի սրբոյ Հօրն Թոդկայ. և մեծ եկեղեցին սանսապատայ վանիցն. շուշա նից վանքն. ղուռուսպաշայ վանքն. խեբուց վանքն. երմէրայ վանքն. սրխոս վանքն. բեր դակուս վանքն. կենդանանից վանքն. կռնկու վանքն. անգուանեղոս վանքն. աղերուս վանքն. արջակուս վանքն: Այս յայս ասացեալ վանո րէիցս. երկու վարագ՝ և կռնկու վանքն՝ և խեբուց վանքն միայն շինեցան՝ իսկ այլքն մնա ցին աւերակ: Այս գեղերայք՝ որք 'ի վանայ բոլորն կային ամենեցուն շինուածքն բլան. և նոցին եկեղեցիքն ևս ընդ նոսին աւերե ցան: Իսկ նորագեղն եկեղեցին մեկ արտա ջափ 'ի յիւրեղոյն իբացոստեալ հեռացաւ և տպա բլաւ:

Ա՛ւ յայսմանէ շարժմանէս բազումք աղբիւրք որք յաւիտենից ժամանակաց բղխեին ցամաքեցան՝ ոչ և եղնաբերդի աղբիւրքն՝ որք վեց ջրաղաց լանեցնէին ամքն ցամաքեցան. որ ըզ բերդն անտի փոխեցին վ՛ն չգոլոյ ջուրց՝ և տա րեալ՛ի ղասրիկ շինեցին։ Այնպէս և զներքին փագախ անուանեալ գիւղն՝ որոյ աղբիւրքն ցամաքեցան՝ և առի չգոյէ ջուրց տարան զայս ևս՛ի ղասրիկ շինեցին։ Ա՛ւ աղբիւրք աւանայ գեղջն՝ որք էին աղբիւրք երկոտասանք ամքն ցամաքեցան. որք ոչ երևին այժմ։

Ա՛ւ՛ի ձորն մեծ ափառիուխին հոդուոց վա նից կայր լեառն մի մերձ վանից։ որև զանուն լերինն աբեղներ կոչէին. ՛ի գիշերին՝ յորում շարժն եղև՝ հաստատուոյց արարչակերտ ձեր ծրագոյն վիմական լեառնն այն՝ յահագին շարժմանէն խախտեալ բեկբեկեալ քայքայեալ զառիստորև սորեալ՛ի ձոր անդր փլուզ զեալ զձորն ամ լնոյր։ և երիս արս՛իներքոյ իւր առեալ էսպան. և զձանապարհն խափանեաց. որ յայլմէ կողմանէ արբրին զձանապարհ. և զքր զայն խափանեաց որ յայլում տեղւոջ շինեցին։ զձորն լցեալ ըզ ազուզում աւուրս արգել զդնացս ջուրց գետոյն. որ յետոյ զկնի բազմաց աւուրց առ սակաւ սակաւ ապա արար ջուրն ինքեան դնալոյ զձանապարհ՝ և գնաց զգնացս իւր։ Ա՛ւ՛ի գաւառն հաւուս ձորոյ մերձ՛ի վանքն եր մերուս արտաչափ տեղւոյ գետինն սուզեալ յեր կիր կլաւ. և եղև խոր և ահագին փոս մինչև յանդունդս. և՛ի միջոյ փոսոյն՛ի յանդնդոց ելեալ սեաւ ջուր և ծովացաւ անդէն ամէն փոսին. և կայ այնպէս մինչև ցայսօր։

Ա՛ւ վանայ քաղաքի փաշէն և այլք իշխանքն. զամն եղեալ գործս զայսոսիկ գրով շարա

գրեալ առաքեցին՝ի քաղաքն Կոստանդնուպոլիս. և ծանուցին Թէոդորին առաքեալն իբրա հիմ խոնդքարին. Թէ այսքան շինուածոց քա ղաքաց և գեղորէից. մաչէթաց և եկեղեցեաց աւերումն եղև: ՍՅԼև վանայ քաղաքն խո ջէքն առաքեցին առ խոջայ ռօհիջանն՝ որ յաւ ուրան յայնոսիկ՝ի կոստանդնուպոլիս էր՝ հրա ման առնուլ՝ի Թէոդրէն վերստին շինուԹէ աւերեալ վանորէիցն և եկեղեցեացն. որ և խոջայ ռօհիջանն առեալ զհրաման՝ի Թէոդրէն առաքեաց՝ի վան առ խոջայն. և նոքա սկսան շինել զեկեղեցիսն քաղաքին՝ ոմն նախ պատմեցաք և զվարագայ վանից: ՍՅև նախ կիրակոս վրդ ասէ, որ էր առաջնորդ վարագայ վանիցն յանձնէառ շինել զժամատունն՝ զոր և շինեալ կատարեաց: և խոջայ ամիրխանն զքէ խայէի եկեղեցին և մարիամաշչալապին զածածնի եկեղեցին: և խոջայ դիլանչին զսբ սիօնի եկե ղեցին: և խոջայ յովանէսն զսբ նշանի եկեղե ցին: զայսոսիկ եկեղեցիսս շինեցին՝ և մնաց բեր դով եկեղեցին. և քառասուն աբեղայից եկե ղեցին. և զվանից պարիսպն ևս շինեցին շուրջ նակի բովանդակ: ՍՅև կատարեցաւ շինուած ներքին վարագայ վանիցն՝ և այլ վանորէից և եկեղեցեաց. և կան իւրաքանչիւրոք՝ի տե ղիս իւրեանց ողորմութիքն ՍՅՀ՝ որոյ մի փառք յաւիտեանս:

Զաստուածն է և պատճառք կողոպտելոյ զանօրէնի վանքն Վարագ կոչեցեալ. և տանելոյ զառագ որ Կ՚ասէն ՚ի բերդն Խոշաբայ. և դարձեալ անտի ՚ի Վան քաղաք։

ԼՐ։

ՏԻՐՆ ԽՕՇՔԵՐԱՑ

բերդին որում սուլէյմանբէկ ասէին. եղև երբեմն զի զՀանապարհորդ կարաւանն՝ որք ՚ի վանայ գնային՝ ՚ի Թաւրէզ և ՚ի Թաւրիզուց՝ ՚ի վան՝ սա զկարաւանացն բեռինսն բռնութիւբ բանայր՝ և որինչ իրաց և հասանէր՝ սուղինչ գին ձգէր իւր տիրոջն և կորզեալ ՚ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն. և պատճառեր Թէ գնով գնեցի։

Լ՚այլ ՚ի սոյն ժամանակի էր իշխան և հրամանատուս վանայ քաղաքին ոմն մեծագոյն իշխան, զոր Հուսէյնաղայ ասէին. որ էր ՚ի նոյն քաղաքէն վանայ. առ որ մատուցեալ արանցն, որոց զինչսն և զապրանսն յափշտակեալէր սուլէյմանբէկն. արարին զբազում անբաստանուս Թիւն զսուլէյմանբէկէն։ Լսեալ Հուսէյնա ղէն զարարեալն սուլէյմանբեկին ծանոյց ՚ի դուռն Թագաւորին յստամբօլ. վն որոյ հրամանն եղև ՚ի Թէրճեն առ Հուսէյնաղէն վն սուլէյմանբէկին. Թէ զառեալ զինչսն դարձուսցէ առ տեարսն՝ և սուլէյմանբէկն ոչ դարձոյց։ վն որոյ և Հուսէյնաղային առեալ զամն զօրսն վանայ. այլև ժողովեալ զամ շրջակայ զիշխանսն ազգին մարաց. ընդ որս էր և մեծ իշխանն մարաց եզդիշէր, որ էր տէր ջուլամերկայ՝ և շատախայ. և այլոց բազմաց գաւառաց և բերդո րէից. և նոքօք գնացեալ նստաւ իւր խոշաբայ բերդին յորում ամբացեալ նստէր սուլէյմանբէկն. և յերիս ամիս նստեալ ՚ի նայն՝ և զեր կերն ամ աւերեցին. վն որոյ սուլէյմանբէկն

անձար և ի տարակուսի լեալ անհնար ճնաց. զբազում կաշառս ոսկւոյ և արծաթոյ տուեալ եզդիչեր մեծի պարոնին. զի թերևս ցնուսչն աղէն և զայլսն զեմման առեալ եբացգնասցէ. որպէս կատարումն գործոյն եղև այնպէս. զի առնին զինչս բազում՝ ի սուլէյմանբէկէն և ի բաց գնացեալ ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս:

Ո կնի գնալոյ նոցա եբրև սակաւ ինչ աւուրք իւերայ անցին. յայնժամ եկն առ սուլէյման բէկն այր ումն գոռոզ արիւնարբու և արիւն ահեղ. յաղթօղ պատերազմօղ և անպարտելի ախոյեան՝ որոյ զանունն չօմար ասէին: Որում պարգևեալ էր խոնդքար թագաւորն Պարսից զզաւակիս և զիշխանութեն՝ և առաքեալ էր երկիցս և երիցս ի քաղաքս և յաշխարհս իշխել նոցա ըստ կարգի օրինացն Պարսից. բայց սա ի գնացեալ տեղիսն կարի բռնութեբ և անիրաւութեբ վարեալ էր զնշխանութեն. կեղեքելով՝ կողոպտելով՝ յափշտակելով. և ըստ ամենեսեան անիրաւութեբ վարելով. եթէ ընդ սպայից եթէ ընդ ռամկաց: և ուրև գնայ ցեալէր յամենից տեղեաց Համբաւ անիրաւութեն և ամբաստանութեն եկեալ էր առ թագն և առ վէզիրն: Վասնորոյ յորժամ լուծեալ ի փաշայութեբ քաղաքաց՝ և եկն ի դուռն թագին ոչնս յաւելին տալ նմա զնշխանութեն և զփաշայութեն: Նա այս գործս յոյժ ծանր և վշտագին երևեցաւ չօմարին. վասնորոյ ապա տամբեալ՝ ի կողմանէ թագաւորին ել՝ ի կոստան գնուպօլսէ. և եկեալ՝ ի կողմանս բուրսայու և անկիւրիոյ: առ որս յարեցան արք սրիկայք և եղբարկք. որք էին ամենեքեան գողք և աւազակք. և աշխարհաւերք և նմանօղք նմին չարագործութեբ. և նոքօք բնակեր՝ ի լե

բինս և յանապատս՝ և այնպէս անցուցանէը զկեանս իւր։ Իւ յորժամ յօժարէը կամք իւր նոքումբք ելջանէը 'ի լեռնէն՝ և գտանամուտ լինէը իւիր Ճանապարհաց՝ և երթ և եկ կարաւա նաց իվերայբաղխեալ՝ զորս կոտորէը՝ և զորս փախստական առնէը. և զոսկի և զարծաթ և այլ զգրինչ և կամէը առեալ գնայր։ և ոչ թէ 'ի սակաւ աւուրս և 'ի ծածուկ զայս առնէը. այլ յայտնի և համարձակ և 'ի բազում աւուրս. այնքան մինչ զի երթևեկուն թէ Ճանապարհաց խափանեցաւ՝ որոյ համբաւն գնաց 'ի կոստանդնուպօլիս և ետհաս առ թագաւորն։ վն որոյ հրաման եղ 'ի թագաւորէն կարգել զգօրս գլուխ բազմաք զօրօք և գնալ պատերազմիլ ընդ նմա և սպանանել. և կարգեալ զօրագլուխն յոլովիւք զօրօք եկեալ պատերազմեցաւ ընդ նմա. ոչ կարացին սպանանել՝ սակայն փախուցին 'ի տեղւոջէն։ Իւ ջամարն ուրև գնայր զնոյն գործ գործէը. վնորոյ հրաման եղև 'ի թագաւորէն առ իշխանս և զօրագլուխս ամենից աշխարհաց՝ զի ուրև գնասցէ ջամարն. այնորիկ աշխարհն իշ խանքն և զօրքն մարտուցեալ պատերազմեսցին ընդ ջամարին՝ և սպանցեն։ և թէ ոք՝ որ բերցէ զգլուխն և զնշանն ջամարին՝ զբազում պարգեւս և զմեծ ուրախս առնլոց է 'ի թագաւորէն. քանզի աջոյ ձեռացն ծկիկ մանն իմէջ ձեռացն ափին մածեալ կապած էր անմէկնելի՝ որին վն ասացին զնշանն բերցէ։ և յաղագս այսպիսեացն հրամանաց թագաւորին՝ ուրև գնաց ջամարն ամէն զօրք և իշխանք աշխարհացն հալածականն արա րին զջամարն. և յոչ գտանելն զտեղի դադար մանն 'ի հալածելն իւրում ջամար՝ և գալով եկն և ետհաս մինչև սուլէյմանբէկն։ և յա ղագս առիւծասիրտ արիութեանն և յաղթա

ԿԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԿԱԼԱԼ ՁՆԱ ՍՈՒԼԵՅՄԱՆ ԲԷԿՆ՝ ԵՒ ԱՍԱՑ. ԵՂԻՑՈՒՔ ԵՐԿՈՔԵԱՆՍ ԵՂԲԱՐՔ՝ ԵՒ ՊԱՀԵՍՑՈՒՔ ԶՀԱՅՐԵՆԻ ԶԵՂԵԱՆՈՒԹԻՆ ՄԵՐ՝ ԵՒ ԼԻԱՍԻՆ ՎԱՅԵԼԵՍՑՈՒՔ։

Վ ԱՐՁԵԱԼ ՅԱՂԱՒ ՊԱՏՄՈՒԹԻՆ ՈՐ ՊԻՏՈՅ Ի ՄԷՋ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ։ Ի ՎԵՐՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՀՈՒՍԿՅՆԱՂԷՆ Ի ՊԱՏՃԱՌԷ ԼԻՔԲԷ ԱՐԱՐ ԸՂ ԱՍԵՐ ԵՒ ԶԱՒԱՔԱՆՈՒԹԻՆ ՄԾԻ ԻՇԽԱՆԻՆ ՄԱՐԱՑ ԵԶԴԻՇԵՐԻՆ՝ ԶԻ ԶԱՌԱՍՈՐ ԵՂԲՕՐ ԻՒՐՈՑ ԵԹԵ Ի ԿՆՈՒԹԻՆ ԵՂԲՕՐ ԵԶԴԻՇԵՐԻՆ. ՈՐՈՑ ԱՆՈՒՆՆ ԵՐ ԽՈՍՐՈՎ ՓԱՇԱՅ. ԵՒ ՍՈՔԱ ԵՐԿՈՔԵԱՆԱՍ ԵԶԴԻՇԵՐՍ ԵՒ ՀՈՒՍԿՅՆԱՂԱՅԱՍ ԿԱՐԻ ՍԻՐՈՎ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ԵՒ ԵՂԷՆ ԽՆԱՄԻՔ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՔ։

Վ ԱՐՁԵԱԼ ՅԱՂԱՒ ՊԱՏՄՈՒԹԻՆ։ Ա.ՅԱ ՀՈՒ ՍԿՅՆ ԱՂՑԱՅԱ. ՅՈՅԺ ԶՕՐԱՑԱՒ ԵՒ ՄԵԾԱՑԱՒ Ի ՄԷՋ ՔԱՂԱՔԻՆ ՎԱՆԱՅ. ԱՅՆՔԱՆ, ԶԻ ՍՈՐԻՆ ՀՐԱՄԱ ՆԱՒՆ Է ԼԻՆ ՓԱՇԱՅՆ ԵՒ ՂԱԴԻՆ՝ ԵՒ ԵՆԿԻՉԱՐ ԱՂԱ ՍԻՆ՝ ԵՒ ՂՈՒԼՈՐ ԱՂԱՍԻՆ՝ ԵՒ ԱՅԼՔՆ ՀԱՄՔՆ. ԵՒ ԱՊԱՆ ՉԻՇԽԱՆԱՑ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՆ ԻՇԽԱՆ՝ ԸՆԴ ՈՐՍ Է՛Ր ԵՒ ՂՈՒԼՈՐ ԱՂԱՍԻՆ։ ԻՍԿ ԱՅԼ ԻՇԽԱՆՔՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՔ ԵՂԷՆ ՅԱՀԵ ՍՈՐԱ։

Ա.ՅԼԵՒ ՊԱՏԱՀԵՑԱՒ ԴՈՐԾ ԼԻՆԷ ԱՅԱՊԻՍԻ։ ՀԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՆ Է ( )ՍՄԱՆՑԱՑԱ ԱՂՔԻՆ ՈՐ ՁՄԻՆ ՓԱՇԱՅՆ ՄԱՆՂՈՒԼ ԱՒՆԵՆ ԵՒ Ի ՏԵՂԻՆՆ Ի ԴՐԱՆԵ ԹԷՓԵԼԻՆՆՈՐ ՓԱՇԱՅ ԱՒԱՔԷՆ, ԱՅՍՊԷՍ ԵՒ ՁՎԱՆԱՅ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ՓԱՇԻՆ ՄԱՆՂՈՒԼ ԱՐԱՐԻՆ՝ ԵՒ ՆՈՐ ՓԱՇԱՅԻ ՄՈՒԱԾԻՄ ՈՒՂԱՐԿԵՑԻՆ Ի ՎԱՆ Ի ԴՐԱՆԵ ԹԷՓԵԼԻՆ։ ԻՍԿ ՀՈՒՍԿՅՆԱՂԷՆ ԵՒ ՀԻՆ ՓԱՇԻՆ ՄԻԱԲԱՆԵԱԼ ՈՉ ԸՆԿԱԼԱՆ ԶԵԿԵԱԼ ՄՈՒԱԾԻՄԻՆ ՆՈՐ ՓԱՇԱՅԻՆ՝ ԱՅԼ ՅԵՏՈ ԴԱՐՁՈՒՑԻՆ ՅԸՍՏԱՄԲՈՂ։

ԻՍԿ ՎԱՆԱՅ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՍԱՅՔՆ, ՈՐՔ ՎՇՏԱՑԵԱԼՔ ԵՒՆ Ի ՀՈՒՍԿՅՆԱՂԱՅԷՆ, ԳԱՂԱՏ Ի ՆՄԱՆԷ ԵՒ Ի ԾԱԾՈՒԿ ԿՈՂՄՈՎ ԲԱՆԱՑ ԱՄԲԱՍՏԱՑՈՒԹԵՆ ԳՐԵՑԻՆ ԶՄԱՆԱՆ՝ ԵՒ ԸՆԴ ԳԱՐՁՈՒՑԵԱԼ

մուսալիմին ուղարկեցին ՚ի դուռն Թագաւորին։

Յետ սուղինչ աւուրց ՚ի դրանէ Թագաւորին եկն սինան անուամբ հիւսան ոմն հնկիչարի աղասի ՚ի քաղաքն վան։ Եմուտ ՚ի բերդն, և սա ըստ վերին բերդին՝ և ամենից հնկիչարեացն։ Եւ յետ սուղից աւուրց այս նոր եկեալ սինան աղայս, որ հնկիչար աղասի էր ՚ի վերին բերդէն սկսաւ Թօփ ձգել իվր ապարանից փաշային՝ ասելով. Թէ հրաման է Թագաւորին իվր զի գնայց։ Վասն որոյ եղեալ գնացաւ ՚ի քաղաքէս, այլև ձգէրթօփ իվր տան հուսէյն աղային և առաքէր զպատգամն առնէ Թէ մի պահէր զփաշէն այլ ուղևորեա։ Իսկ հուսէյնաղէն և փաշէնէր կուցեալք ՚ի Թօփէն եղեալ գնացին ՚ի ներքնոյ բերդն հիւսիսային կողմն մերձ Թաւրիզու դրանն, և մտին ՚ի տեղին, զոր ասէն պալԹի տունք՝ և անդ ամրացան։ զի Թօփն որ գայ ՚ի վերին բերդէն ոչ պատահի այնմ տեղւոջ՝ զի քարափ լերինն ՚ի վերուստ հովանի է իվր նոր, իսկ վանայցուն Թէպետ և Թշնամիք էին հուսէյն աղային՝ և առէն զնա. այլ զի կարի երկնչէին ՚ի նմանէ, վն որոյ ժողովեցան և նոքա անդ հուսէյնաղային։

Իսկ հնկիչար աղասին առաքեաց զարս ՚ի բերդն խոշաբայ և զեկույց սուլէյմանբէկին զի կեալ հրաման Թագաւորին՝ և զղօղէն հուսէյն աղային և զփաշային, իսկ սուլէյմանբէկին վն անցելոյ քինուն՝ և նախանձուն վրէժխնդրու Թէ՝ բազմաւ ցանկու Թէ ցանկայր այնպիսւոյ լրոյ, ոչինչ դանդաղեալ՝ այլ շեշտակի յարու ցեալ ինքն յոյժ ուխտիւք զօրօք, առեալ ընդ իւր և զջօմարն՝ զոր յառաջդ յիշեցաք՝ և գնացեալ հասին ՚ի վանքաղաք։ և ՚ի շրջակայ գեղօրայս քաղաքին այսր և անդր շրջէին հանապազ

զի

զի գուցէ ՚ի ձեռս ածցեն զՀուսէյն աղէն, որև
չըՔելով գնացին ՚ի գիւղն արՔակ, և անտի ՚ի
գիւղն խառակունիս, և գիւղս այս Հուսէյն
աղայինէր՝ և առ ՚ի վրէժ խնդրութԷն քինու
Հուսէյն աղային զգեղի տանուտէրն ՚ի ձող
բարձրացուցեալ և սպան սուլէյմանԷֆէնդ:

Այս անտի եկին սուլէյմանԷֆէնդ և ջամարն զո
րօքն իւրեանց՝ գնացին ՚ի վարագայ վանքն. և
զորինչ ՀամՔաւ յառաջմէ լուԷալէֆէնդ զմեծա
Հանդիսէ ուխտէն վարագայ՝ այժմ աչօք տե
սեալ և մտօք նկատեալ զինէֆէնդ. և մտա
խոհ եղեալ խոկային ԹԷ այսպիսեաց Հոյակա
պից և Հռչակաւորաց մեծաշխից վանից, գոն
բազ մաժամանակեայ մԹերեալ ինչք և ստա
ցուածք, կահք և կարասիք պղնձեղինաց, ար
ծաԹեղինաց, և ոսկեղինաց. և արդ ժամ է մեզ
զի ՚ի ձեռս մեր գրաւեսցուք զայն: Այս յայս
մանէ պատճառէ յանկարծակի կալան զայն
բնակիչս վանացն՝ կապեցին և պահէին ՚ի կա
լանս, և մի մի բերեալ առաջի իւրեանց Հար
ցանէին մն ստացուածոց վանացն՝ և խնդրէին
՚ի նոցանէ. և նոքա որինչ յայտէր ցուցանէին,
և մն այլոցն ասէին ԹԷ ՚ի քաղաքն են տարեալ
զամենայն և անդ պահեն, զի մն ասի գողոց և
աւազակաց աստէն ինչ ոչ Թողուն:

Ասէ ՚ի բնակչաց վանիցն, ԹԷպէտ չարչա
րեցին զմանս առաւել և զմանս սակաւ, այլ
գնա զամն Թողին, և ՚ի նոցանէ ովոր եգիտ
Հնար փախչելոյ փախեաւ անդառնալի, բայց
երեք աբեղայք ծերք ՚ի միաբանից վանացն,
որոց անուանքն էին տէր յօհաննէս, և տէր սա
հակ, և տէր մօսէս. զոսոս կալան և պահէին
կապանօք և բազմաւ զգուշուԹԷ, և ասէին.
այլք բնակիչքն մանկագոյնք են՝ ոչ են տեղեակք

պահ

պահարանաց վանիցս, սոքա հինաւուրցք և ծերք են սոքա գիտակք են ամենեւին։ Ի բերեալ առաջի նախ հատանակաւիւք բանիւք, և ապա սպառնալեօք խնդրէին ցուցանել նոյ զպահարանս վանիցն, և աբեղայքն ասէին մեք բնաւ ոչ եմք գիտակք յորոց դուքդ ասէք, քանզի կամք և յօժարութիւ սրտի յանձին կալան զմահ և մեռանիլ և ոչ ցուցանել։

Ի յետ բազմի հարցման և պատասխա նոյ սկսան չարչարել զնա. և նախ կախեցին զնա յոտից նոյ և խստագոյն հարին բրօք կաբի անո ղորմ և անչափ։

Ի ապա ի բաքանչիւր աբեղայից զերկոսին ձեռն տարան յետսկոյս, և զերկու բոյթս ձեռացն կապեցին իւր երեքաց, և արկին պա բանս իմն երկուց ձեռաց նոյ, և՛ի բարձր առ ղօղջ կախեցին զնա, և բերեալ զծանր վէմն եդին իւր թիկանց նոյ։ և Թողին այսպէս ՛ի կախաղանին, որք ծնացին մինչև ցերեկոյ, որով քակեցան օդուածք երկոցունց ձեռաց նոյ, և աբեղայքն ողբալով աղաղակէին թէ ոչ գի տեմք զինչ գործելին ձեր՝ և անօրէնքն ոչ անսային։

Յետայսորիկ արկին գալարան չուան ՛ի գլուխս աբեղայիցն, որ է այսպէս. զի զպարանս կանթեղին որ բարակ է և պինդ։ կապեցին և արկին՛ի գլուխս աբեղայիցն բոլոր երբև զօղ, և անցուցին փայտ իմն ջ պարանին, և սկսան մանել զփայտն, և ՛ի մանել փայտին պարանն ևս ոլորեալ և մանեալ եղև՝ սաստկիւ պնտու թիւ, և Թաղեցաւ իմն մնոյ ևմորթոյ գլխոյ աբեղայիցն։ և երբե՛ի մամուլս պնտեալ սեղ մեալ եղև գլուխ նոցա, և ամբն միսք և մորթք և երակք գլխոցն և պարանոցացն այսուցեալ արիւնաուշաք եղեն, և երկոցունց աչաց նոցա

հանեալ

համարէին՝ ի բաց ոտեալ՝ ի միեղեացն, և աբեղայիցն անընդհատեալ և ուշադիր եղեալ ի բերելն զմեռեալ անկանելին՝ ի գետնի։

Այլ ապա բերին զպարանոս բարակ և պինդ՝ և կապեցին յերանս աբեղայիցն, և քարշեալ՝ ի վեր կախեցին՝ ի բարձր տեղեաց զիւրաքանչիւրն՝ և շուրջ զնոքօք բոլորեալ անօրէնքն և զօրքն իւրեանց հայհոյէին, թքանէին, այպանէին ասելով, զայդ քան չարչարանադ կրեալ՝ և ընդ երդ ոչ ցուցանէք զդարման վանացն, և աբեղայքն ոչ ցուցանէին վնասի զմահ յանձն առեալ էին։

Ոչնչի սորա եկեալ ջօմարն ինքն երբ զծա ծուկ մարմինս աբեղայիցն, և ի սուրբ դաստառակ իւրն առնացն անդամոցն, և ինքն՝ ի բերան իւր առեալ ատամամբն ծամէր զայն, յոր մէ յոյժ վշտացան աբեղայքն և անընդհատեալ անկան երբեմն զմեռեալս։

Զդ զայսքան սարսուռելի տանջանս կրեցին աղօրմելիք աբեղայքն, և գրեթէ յիւրաքանչիւր չարչարանս յատուկ յատուկ մեռանէին և կենդանանային, և մանաւանդ՝ ի վերջին չար չարանս յայս՝ որ կարի սարսուռելի տանջանք էր և՝ ի բազմաց տանջանացն Ճնշեալ մնացեալ և վատաբալք եղեն մարմնով՝ որք ոչ զօրէին իւրեանց կանգնիլ։ Ո այսքան չարչարանս զօրս յանուճանէ յիշեցաք երևելիք և յայտնիքն էին, զօրս՝ ի չարագրութիւնս բանի բերեալ գրեցաք, նակ որք վտրրագոյնքէն՝ զօրս մեք թողաք դուզայն մնօք. քովք իմացիս և զայս ամենայն հնարեալ ներգործէր անիծեալ և անողորմ, անիծ և մարդապէմ գազանն այն ջօմարն։

Այլեւս այսքանեաց վշտաց հանեղուեց, երբև գիտաց ջօմարն թէ աբեղայքն ոչ ցուցանեն զդա

զդարանն՝ ինքնին իսկ յարուցեալ՝ի խնդիր որոնել և յուզել զդարանս վանիցն, քանզի էառ՝ի ձեռն իւր զմուրճ, որ է քլունկ և սկսաւ շրջագայել իմիջ վանիցն յեկեղեցիսն և՝ի տունն և յամն տեղիս, կանգնելը և հայելը, և դիտեալ նկատելը զամն տեղիս, ապա ուր և համարելը գոլ կարծելը և նմանութիւն դարանի, մրճռնէ այսմիկ՝ զոր՝ի ձեռն ունէր՝ քաղխելը զտեղիսն։ Եւ այսպէս շրջագայելով եկին և մտին՝ի մի յեկեղեցեացն՝ և յորժամ է հար դկարծեցեալ տեղին, նոյն ժամայն եղ ձայն թնդմամն, վիրոյ վաղվաղակի քակեցին զտեղին և գտին դիտոր մի լի պղնձեղինօք, վասնզի զամն պղնձեղէնն անօթս վանիցն անդ լցեալ թաքուցեալէին, զորս զամենայն արտաքս բերեալ ժողովեցին՝ի մի վայր։ Եւ՝ի գտանելն այսմիկ առաւել յորդորեցան՝ և քաղմաց այնպէս սեաց գոլ դկարծիս տարան, և կարի որոնմամբ սկսան հարկանել զամենայն տեղիսն։ Եւ անտի գնացին յայլ եկեղեցի, և՝ի քակելն թէրն դաց տեղին, և վաղվաղակի քակեցին, և գտին զդարան մի դատարկ դի ոչինչ գոյր՝ի նմա։


Եւ թողեալ զայն գնացին՝ի միւս այլ եկեղեցին, և՝ի քակելն պատհեցաւ տեղին ուր էր մեծ դարանն՝ յորում պահեալէին զաւազ սբ նշանն և զամենայն անօթս եկեղեցեացն։ Եւ վաղվաղակի քակեցին և գտին զդուռն դարանին, և մտեալ՝ի ներքս տեսին լի գանձիւ, և զաւազ սբ նշանն քաղմօք դասատառակօք պատեալ և իմիջ դեղեցկաշէն յարկեղ եդեալ, և՝ի վերոյ քան զամենեսեան անօթսն քաղմեցուցեալ, զոր սուրբ Լուսաւորչանքն ինքնին՝ի գերկին իւր առեալ զսբ նշանն և զբեր արտաքս։ Եւ ապա արտաքս բերին զայլևս անօթսն, որբ էր քաղում

արծաթ

արծաթեղէնք էին՝ սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր, և իւր գրեալ ունէր զաւետիս խաչ ։ բազումք ոսկետուփ և արծաթապատ աւետարանք, և այլք գրեանք ։ և արծաթեղէնք քշոցք և բուրվառք և կանթեղք ։ և պատուականք և մեծագինք շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլևս կահք և կարասիք՝ բազումք, զորս անդէն պահեալէին, զամ հանեալ բերին արտաքս։ որինչ արծաթեղէնք էրք էին եդին իմէջ մադկի, և որինչ պղնձեղէնն էր խոր տակեցին, և այլ զորինչ և գտին բարձին ձիոց, նաև զոբ նշանն իւրով զարդուքն ։ և կալեալ էրեցվի բերին և կարգեցին գնալ ըստ որբոյ նայնին վա սպասաւորելոյ նմա ։ և սուլէյմանբէկն և չօմարն զօրօքն իւրեանց առեալ զայն եմ գնացեալ Հասին՝ի խոշաբ։ Ա՛րդ՝ ամենբեանք անօթքն և ինչքն վարագայ այսպիսեաւ կէր պիւ գնաց՝ի խոշաբ ։ յորում ժամանակի էր Թոռականն մէր Հազարևհարիւր ։

Իսկ երէքին աբեղայքն՝ որք այնքան տանջ ցան, Թէպէտև տևեալ ապրեցան զամ մի՝ այլ երբև զմեռեալ զեռուն, զի ձլամահօք կնոք կային և ըղձային մահու, որև զկնի աւի մոյ Հասեալ ևս ընդ նոցա մահն Հանգոյց զնա՝ի տա ռապանաց իւրեանց ։

վան գնալոյ Հաւաքնաղային՝ի ջուլամերկ ։



ԱԿ ՀՈՒՄԱՆԻՑՆ ԱՊԱ ԼԻՆ

և փաչէն՝ որք՝ի պալթի տունան մնեալ էին և զօղեալ, մնացին անդէն այնպիսի մինչև յերկու ամիս, և Թօփն՝ի վերին բերդէն Հանապազ զնեբքին բերդն և զքաղաքն ծե

Ի դաշտումն ի Հուսէյն աղային։

ծէր և աւերեր։ Ապա Հուսէյնաղային նկա տեալ խորհրդով գիտաց զի ոչ ուստէք գոյ նմա փրկութիւն եթէ ոչ ի խնամոյն Իւրոյ յեզ դիչերէ մեծ պարոնէն. վաղորոյ յիւրոյ հաւա տարմաց զումանս թափոց ընաւիւն ումէք գիտելոյ առաքեաց առ եզդիչէր ասելով. յայտ է քեզ զի իշխանքն վանայ և սուլէյմանբեկն իմ թշնա միք են. արդ ոչ ուստէք գոյ ինձ հնար փրկու թիւն, եթէ ոչ ի քէն. վաղորոյ վազվազակի պար տիս հասանել ինձ յօգնութիւն։ Յոկ մեծ եչ խանն եզդիչէր զկրտմանն արար Իւրոյ եչխանի ումիճն՝ որոյ անունն էր միրաբեկ՝ առնուլ զզօրս և գնալ. և նա առեալ զնդ Իւր զզօրս հազար և հինգհարիւր. պատրաստութիւն յո լովից զինուց և մանաւանդ թփանքաց։ որոց փութանակի հասեալ յերկիրն վանայ ի պա տեհասար տեղիս ի մերձակայս քաղաքին չրջ եին. զի թերևս զհուսէյնաղան ի ձեռս ածեալ առեալ գնասցեն։

Իբրև զայս եառես փաշէն թէ զօրքն եզդի չերին եկին ի տանել զհուսէյնաղան. խոր հեալ ի միտս Իւր գիտաց զի յետ գնալոյ նորա ինքն միայն մնայ. վաղորոյ փութացաւ ինքն և յա ռաջքան զհուսէյնաղան երթալ ի վանայ քա ղաքին Իւրով զաշտոնեչ Իւր գնաց՝ յո և կա մեցաւ։

Այլ թօփն հանապազ ի վերին բերդէն ծեծէր զներքինն քաղաքն և աւերէր, զի յառա ջին չաքաթու ազուհացիցն սկիզբն արարին թօփձգելոյ՝ և մինչև ի հոգւոյ գալուստն ձգե ցին, որոյ վն ձանձրացան ամենքն քաղաքացիքն իշխանք և ազայք և ռամիկք։ խորհուրդ արա րին մեծ-ամեծքն և զուլ լար ազասիքն, թէ վն առն միոյ ընդդեր է զայսքան ջարչարանս կրել

մեզ, կալցուք զՅուսէֆնաղէն՝ և տացուք ի ձեռս իւրոց խնդրողացն: և ոմանք զայս խոր Հուրդ Ծանուցին Հուսէֆնաղային, և նա կամեցաւ զի զգլխաւորս այնմ խարհրդեանն՝ որք էին զուլլար աղասիքն, հնարիւքիմն սպանանել: և այս խորհուրդ ևս յայտնեցաւ զուլլարաց սոցին և այլոց գլխաւորացն: վն որոյ լուսանալ առաւօտուն, զուլլարաղասիքն և այլք գլխաւորքն իւրաքանչիւրք առեալ զդրօշ նշանաց իւրեանց գնացին ի ներքսին բերդի յայն դուռն՝ զոր իսկալի դուռն ասեն, անկեցին զդրօշն իվի պարսպին և աղաղակեցին՝ Թէ զուլլն դարձաւ՝ զուլլն դարձաւ, իբրև զայն լուան սպայազօրքն, ձայքն առեալ զգինա իւրեանց ի ներքս դրօշին իւրեանց: և մնաց Յուսէֆն աղէն մինքն միայն և որդիքն և ծառայքն իւր, որք երկուցեալ Յուսէֆնաղայն՝ զի միգուցէ ըմբռնեսցեն զինքն, յայն ժամ ծառայքն Յուսէֆնաղային պարանաւ կապեցին զնա ի ներքսին բերդի պարսպէն, որ իջեալ գնացեալ խառնեցաւ ի զօրս եզդիշէրին, և զօրքն եզդիշէրին առեալ զՅուսէֆն աղայն գնացին ի շաղաղ և անտի ի Ջուլամերկ առ եզդիշէր: և այս ևս այսպէս:

Պատմութիւն վերադարձին պիղծ չմարին:

Խ:

ՅՈՐԺԱՄ ՍՈՒՆՈՒՑՄԱՆ

Բէկին և չմարին առաքեալ կողոպտեցին զվանքն վարագայ՝ և առեալ գնացին ի խօշաբ, անդէն մնացին մինչև յայտնութեամբ կիսանակն, ապա եկեալ լրտեսացն պատմեցին նմա, Թէ ահաւանիկ Յուսէֆնաղէն յայս նկառւսը եկանէ ի Ջուլամերկայ և գնայ առ խոնդքար Թէքէրն: յայնժամ կամաք և խորհրդակ

գակցուԹիւ սուլէյմանբէկին առեալ ջամարն զՏարիւը այր ևիվ ի բերկրուԹ և արձիչու գնաց ՚ի պահել զՀանապարհն հուսէյնաղային զի Թերևս սպանցէ զնա։

Ասէ այն հրաման Թագաւորին, որ՚ի վաղուց ժա մանակաց էլեալէր վե ջամարին, Թէ ուր և երևեսցի ջամարն այնմ աշխարհի զօրապետքն զօրաքն իւրըն մարտիցեն ընդ նմա, և սպանցեն. որոյ սակս և փաշայն արդ բուսաց ՚ի լսելն իւր զգալն ջամարին, զոմն իշխան չորս Տարիւր ա բամբք առաքեաց զվերն ջամարին։ որոց եկեալ Հանդիպեցան ջամարին ՚ի գաւառին կեղեց ուրև մարտուցեալ կռուՀեցան ընդ ջամարին և յաղԹեցենն նմա՝ քանզի զօրքն ջամարին Տարիւր էին և նոքք չորս Տարիւր, վն որոյ զ զօրսն ջամարին զոմանս սպանին և զոմանս փախուցին և ինքն ջամարն ուԹն միայն արամբք եղեալ ՚ի կողմն ինչ և զերծաւ ՚ինոցունց, և կամեցաւ դառնալ և գնալ ՚ի խոշաբ առ սուլէյմանբէկն և յուղի անկեալ եկեալ մինչ ՏՀաս ՚ի կապն ոստանայ։

Ասէ քաջ առօղն ոստանայ, որ զՀանապարհն պահէ, և զքաջն առնու ՚ի Ճանապարհորդաց, Թուես զջամարն ՚ի Հեռաստանէ՝ և իմացաւ, որ ջամարն է, և վաղվաղակի ինքն զիանջալն իւր ՚ի քաց ձգեաց յինքեանէ, և սկսաւ այսր և անդր որոնելով շրջագայել զայս արար պատՃառա նօք զի միգ Թաստացեն զնա ոստանցի գոլ և սպան ցեն։ Ասէ ջամարն ևս Թուես զայրն ՚ի Հեռաս տանէ և ասաց ևրոց արանցն՝ մեզ Թէ գնաս ինչ Տասանէ, յառնես յայսմանէ Տասանէ, վն որոյ ՚ի Տասանէն ձեր առ նա սպանէք զնա՝ և մի Թողուք։ Իբրև եկեալ Տասին առ այրն ջա մարն և արքն իւր, Տարցին զայրն Թէ զի շրջիս, և նա խաբեաց զնոսա և ասաց Ճանապարհորդ

եմ և ասա ես եկեալ կորուսեալ զխանջարն իմ, և չըր
ջելով որոնեմ զի գուցէ գտայց զնա։ և՛ի լսելն
զայս յաւետեն սկսան ինքեանք ևս չրջագայել
առ իմանալ զատոյգն։ և փոքրինչ չրջեալ
այսր և անդր գտին զխանջարն, և այնու համա
բեցան երաւացի Ճանապարհորդ գոլ զայրն,
վ'ն որոյ ոչ սպանին այլ Թողին՛ի գնալ։ և այրն
քանզի հմուտ էր վայրացն, ընդ Թաքնագ
նայ ձորակ մինչ, նախ քան զանցանել ղօմարին
զկապն, փութանակի ե հաս՛ի գիւղն։ զի կոյց
զօրականացն Թէ ահաւանիկ ղօմարն եկեալ՛ի
կապն, և այս համբաւ վաղվաղակի հնչեաց
ցաւ առ ամենեսեան զօրականս, որոց ամենն շեշ
տակի ձիարշաւ ընթացմամբ գնացին՝ ոմանք
դէպ՛ի կապն, և ոմանք դէպ՛ի վերին Ճանա
պարհն։ և զերկոսին Ճանապարհսն կալան։ իսկ
ղօմարն ոչ գնաց ընդ վերին Ճանապարհն, այլ
ընդ Ճանապարհս կապին եկեալ ելմուտ՛ի
կապն՝ և ընդ այն կամէր անցանել։

Այս է կապս այս այսպիսի ինն։ զի է քարան
ձաւ բարձրագոյն, և՛ի ներքոյ քարանձաւին
ծուխն ծուխացեալ է անհնով խորութիւն, զոր Ա.յ
միայնէ գիտելի որ քանուԹի խորութիւն նորա
բայց՛ի հնոց և՛ի վաղեմեաց ժամանակաց
զնոյնս քարանձաւին խնամատուքն և բազմաց աչ
խատուքն քարահատիւք արուեստաւորաք հա
տեալն զքարն և արարեալն զՃանապարհն ըս
որ ուղևորք գնան, բայց ոչ Թէ լայն՝ այլ այն
քան որ միայն ի բեռնատար գնայ՝ և ոչ երկու։

Յակ ղօմարն որ Ճանապարհաւ կապին մը
տեալեր և գնայր, ոչ գիտէր Թէ ժողովեալ
են անդ մարդիկք վ'ն ինքեան՝ և պահեն զբե
րան կապին՝ վ'ն որոյ և անհոգ գայր, և յորժամ
հ'հաս յայս կոյս յերդ կապին իմացաւ զայն և

յան

յանհնարին վտանգս աղէտից և տարակուսա
նաց ըմբռնեցեալ եղև, զի յառաջ ընդդէմ նո՛ք
գնալ երկիցէր՝ թէ միգուցէ թիֆանքաւ հա
րեալ սպանցեն, և յետոգառնալ ընդ որ եկեալն
երոչ կարէր, զի յոյժ նեղէր տեղին, վն որոյ յա
մենից կողմանց անձար լեալ մնաց յանհնարինս։
Եւ հայեցեալ ջօմարն տեսանէ մերձ ինքեան
փոքրինչ զառիվայր տեղի՝ և սորք վիմաց իբր
զսուղինչ ձորակ ի՛ջեալ յերդը ծովուն, և թէ
պէտ դժուարին էր. այլ՝ ի տագնապէ սպան
մանն, ջօմար ի՛ջեալ իվայր՝ ի ձիոյն կալաւ զպա
խուցն և ընդ այն ինքն և ձին ի՛ջին յերդը ծովուն։
ապա հեծաւ իվր ձիոյն և կալեալ զպախուց
երիվարին, քաջագոյն պատրաստութիւ՛ն զըս
պեաց զինքն՝ և ուղղեալ վարեաց զերիվարն
իմէջ ծովուն, և յորժամ վարեաց զերիվարն
իմէջ ծովուն զառաջինն խորասուզեալ ընկ
ղմեցաւ, և գրեթէ էհաս մինչև յառակս ծո
վուն՝ քանզի զբազում ժամս անյայտ լեալ ոչ
երևեցաւ։ և իբրև անցին իվր պահ՛ք ինչ՝ տե
սին արքն, որք զբերան կապին պահէին, զի
՝ի հեռու վայրն ելին յերեսս ջրոյն երիվարն
և ջօմարն, և յայնքան հեռւ վայրն ելին և երևե
ցան մինչ զի թիֆանք ոչ հասանէր, քանզի կա
մեցան ձգել զթիֆանք և սպանանել զնա, և զի
ոչ հասանէր, վն որոյ և ոչ ձգեցին։ Եւ բազ
մաց գովութեց արժանին այն երիվար, քաջ
ձեալ զվերելեալն իւր և տանէր՝ ոչ թէ իբրև
զցամաքային կենդանի՝ այլ իբրև զջրային կեն
դանի գնայր լողալով հնչէր, փնչէր, փռըն
գայր. զանբաւ խորութի՛ն ջուրց ծովուն յու
մմէ հատանէր, և գնայր լողալով և եկեալ է
հաս յերդը ծովուն և ել՝ի ցամաք՝ ի կողմանս
ոստանայ։

Եւ յորժամ եկ յովսէփ ՚ի ցամաք, ոչ գի տեր զսահմանս և զձանապարհս, կամ զցամաքայինն և զտղմայինն տեղիս վայրացն՝ և՚ի տագնապել երկիւղին, վարեաց զերիվարն հանդէպ երեսացն և գնայր, ոչ թէ իւր երկրի այլ իւր օդոյ: որև՚ի գնայր հանդիպեցաւ յոյժ սաստկի տղմայինն տեղւոջ որում լայնութիւնն և խորութիւնն բազում էր: այլև գիտէր ինքն յովսէփ նաև տեսանէր իսկ, զի բազումութիւնք զօրացն գաւառին գրոհ տուեալ ընթանային միտն զկնի ինքեան, եթէ դարձեալ գնայ ընդ ցամաքայինն վայրս՝ երկնչի անկանիլ՚ի ձեռս նոցա: վասն որոյ անդրէն ևս մտրակեալ զերիվարն վարեաց իմիջ տղմոյն, և թէ պէտ՚ի սակաւ ինչ տեղի գնաց, այլ յորովհետև տղմոյն արգել զնա իմիջ իւր զբազում ժամս, և բազմաւ ջանիւ և աշխատութիւք այսր և անդր տարաբերելով հազիւ ուրեմն եկ՚ի տղմոյն երիվարն և ընդ իւր և զնա զյովսէփ: Եւ յորժամ եկ՚ի տղմոյն յովսէփ միւսանգամ՝ վարեաց զերիվարն հանդէպ երեսացն առ՚ի փախչել, և ոչ աստուածք անհմուտ էր որպիսութիւնք վայրացն, ոչ գնաց՚ի կողմն ձանապարհին և կամրջին, որև մուտ իսկ էր նաև զերծանիւր իսկ, թէ գնացեալէր, այլ գնաց հանդէպ երեսաց իւրոց: և՚ի գնալն իւրում պատահեցաւ շամիրամայ առուին, որում ոչ գոյ հնար անցանելոյ բաց՚ի կամրջէն, զի յոյժ լայն է և խոր՝ և երկուց կողմանց թմբերն բարձր՝ ընդօր մարդ և ձի ոչ կարէ ելջանել և իջանել, և առ եզերբք այս առուիս գնաց յովսէփն սակաւ ինչ զառի վեր և դար ձաւ՝ և եկն՚ի գիւղն կեմ կոչեցեալ:

Զինչ այսոքիկ ամենքն անց եղեն ՚ի յովսէփն, զոր երկրին, որք գրոհ տուեալ հետևեցան ընդ Թանայէն

Թանային զկնի ջամարին, եկեալ հասին յառուն շաբաթայ. և փութացեալ կալան զանցս կա մրջին՝ քանզի հմուտ էին վայրացն։ Այս ոմանք ՚ինոցանէ եկին ՚ի գիւղն կեմ և գտին անդ զջ մարն՝ որ ելեալէր ՚ի ձեռն և յանդաստանի ու րեք ղողեալ՝ որք և շուրջանակի պատեալ պա շարեցին զնա։ և ջամարն ունէր ընդ ինքեան զջորս տապանջայ թփանք՝ զորս ուղղեաց ՚ի ձգել և ոչ էառ հուր՝ քանզի բարուքն Թրջեալէր ի ջրոյ ծովուն և տղմոյն, և կայր ՚ի տարա կուսի զի քաղէին ոգիք նր և զորք երկրին՝ որք շուրջ զնովաւ պատեալք կային, ոմն ՚ի նոցա նէ՝ որոյ անունէր շխուրէկ քաջուքն աձա պարեալ ուղղեաց զԹփանքն Հանդէպ ջամա րին և ձգեալ ետար զգլուխն՝ և անդէն սատա կեաց զջարն և զանիծեալն զայն ջամար։ Այս նոյնժամայն կտրեցին զգլուխն և զաջոյ ձեռն՝ առին և զձին, և տարան առ եզդիշէր պարոնն իւրեանց։ և եզդիշէրն զձին պահեաց առ ինքն, և զգլուխն ջամարին և զաջոյ ձեռն նշան ընդ նմին առաքեաց ՚ի կոստանդնու պոլիս առ Թագն։ Այս Թագն տեսեալ զգլուխն և լուեալ զորպիսութիւն սպանմանն, և ուրախացեալ ըստ այն պարգեւեաց զբազում պարգեւս պատուական եզդիշէրին, այլև զերկիրն ողբրտու նմա ինամ ետ, զորս արդէն իսկ եզդիշէրն տիրէ երկրին ողբրտու, և որքան ինքն կենդանի է տիրէ։

Այսց էր ձին հակայաձև՝ բարձրահասակ՝ հաստաբազուկ՝ լայնալանջ՝ երկայնավիզ՝ կա պուտագոյն՝ գեղեցկատես՝ սիգաձեմ՝ և իբր զբանաւոր ընտրօղ ժամանակին, և գիպոճ ածոյն. և ձանաչօղ տեառն իւրոյ։ և կայ նա այժմ առ եզդիշէր պարոնն. և ստացեալ են ՚ի նմանէ հինգ քուռակ։

Ա՛րդ սատակումն պղծոյն չամաբրին այսպէս եղև ոմն և պատմեցաք։ Ժամ է մեզ այսուհետև զսատակումն սուլէյմանբէկին։ և զդարձումն սրբոյ նշանին պատմել՝ ի վանայ քաղաքն։ քանզի և պատմութիւս մեր վասն սրբոյ նշանին է։ և ոչ վասն ամբարշտաց արանց։

Պատմութիւն սատակման սուլէյմանբէկին։

ԽԱ։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՏԱԿՄԱՆ ՍՈՒԼԷՅՄԱՆԲԷԿԻՆ։

Յառաջդ։ Թէ սուլէյմանբէկին կողոպտեաց զվանքն վարագայ։ առեալ զամն անօթսն և զաւազակսն նոցին և տարաւ՝ ի բերդն խօշաբայ՝ և անդ պահէր։

Այս զի հոգւոց վանքն՝ որ յիշի խիզ պատմութիւն վերափոխման սրբուհւոյ Աստծանէին։ զոր՝ ի սրբոյ առաքելոյն բարդուղիմէոսէ շինեալ է։ և անդ ամփոփեալ է կենդանակիր պատկեր սրբուհւոյ Աստծանէին։ այս վանքս յերկիրն խօշաբայ է ընդ իշխանութիւնն սուլէյմանբէկին։ Ասորիս վն յորժամ եկին սուլէյմանբէկն՝ ի խօշաբ։ կոչեաց առ ինքն զառաջնորդն հոգւոց վանիցն զտէր պետրոս եպիսկոպոս։ և իբրև երեխ տասուր ձևանալով նմա ուրախութիւն ասէր՝ բերի՝ ի վարագայ զձեր մեծ սուրբ նշանն։ Ա՛րդ՝ տամ զնա քեզ զի տարեալ դիցես՝ ի վանքն մեր՝ զի անդ կացցէ։ իսկ եպիսկոպոսին նկատեալ մտաւք՝ և խորհեալ թէ ոչ է միամտոյ այն իւրինն վնասոյ պատասխանեալ էր ոչ գոյ հնար այդմ սրբոյ նշանիդ առ մեզ միամտոյ՝ զի՝ ի բնէ հարց և՝ ի հաւուց նոցա է այդ ստացուածք՝ և ոչ մեր։ և ոչ էր տարեալ պետրոս եպիսկոպոսն զսուրբ նշանն՝ ի հոգւոց վանքն թէպէտ սուլէյման բէկին

բեկն քաղցած անգամ ասացեալ էր։ Այլ
ասացեալքը սուրբ Հոգւոյն թէ գուա ոչ տա
նես. ես պիտոյ քահանայից տամ, և առաքեմ
'ի վանքն. պատասխանեալքը եպիսկոպն՝ յորժամ
գուա զայն նշանն առաքես 'ի վանքն. ես զմիա
բանս իմ առեալ ելանեմ անտի և գնամ. գուա
գիտես և քո վանքն։ ապա սուրբ Հոգւոյն
Թողչը տուեալ և ոչ էր առաքեալ։

Յայնժակ հայազգին քրիստոնեայքն՝ որք 'ի վան
քաղաքն և 'ի գաւառս նր էին՝ միահաւոյն
սրտաբեկ և միջակոտոր՝ տրտմաթախիծ ան
միսիթար լեալք զսուգ զգեցան վ Հողպատ
լոյն վարագայ՝ և մանաւանդ վասն սրբոյ նշա
նին. և Հանապազօր Հաշէին, մաշէին, Հե
ծէին, և Հառաչէին, թէ զնարդ արդեօք Հցէ
Հնար փրկուԹԷ սրբոյ նշանին։ Որոյ այր ոմն
երևելի և բարեպաշտօն քրիստոնեայ 'ի խո
ջայից քաղաքին վանայ. որ էր սա ինքն խա
նենց խոջայ Թումայի որդին. որոյ անունն էր
մարխաս ջալապի։ այս մարխաս ջալապիս ա
ռեալ զբազում աղերս և եկեալ 'ի խոշաք առ
սուրբ Հոգւոյն. մատոյց զաղերսն, և զբա
զում աւուրս կացեալ անդէն. նա և զբազում
արս միջնորդս արկեալ աղաչէին զսուրբ Հոգւոյն
բեկն վ Հողպատ սրբոյ նշանին. և նա ոչ
Հաւանեցաւ զնա տացե։ Այլ 'ի Հազար ղուռուշ
չէն սկիզբն արար մարխասջալապին տալով և
եՀաս մինչ 'ի եօԹնՀազար ղուռուշն զնա տա
ցե զայն նշանն. և սուրբ Հոգւոյն ոչ ետ։ և
յետ յոլովից աւուրց անդէն կէզոյ մարխասջալա
պան։ իբրև ոչ էառն զայն նշանն, եկեալ 'ի խո
շաբայ տրտմեցուցով և Թախծեցուցով սրտիւ
գնաց 'ի վան քաղաք։

Այս ոմն ասէ մարգարէն. Թէ զայր մեղաւոր՝

ջարիք իւր որսան ՚ի կորուստ. այնպէս և չարք սուէյմանբէկին որսային զինքն ՚ի կորուստ՝ այսպիսեաւ կերպիւ: քանզի իշխանքն սուէյմանբէկին արք տասն կամ ևս աւելի. խորհեցան ՚ի միասին սպանանել զսուէյմանբէկն. զի ասէին Թէ, որքան սուէյմանբէկն պարոն եղեալէ՝ երկիր և աշխարհ մեր բնաւին աւերեցան. զի ոչ երբէք դադարեցաւ հե ծել չարժուԹի՝ և հինահարուԹի՝ և աւար՝ և կռիւ՝ և վրդովուԹի՝ և որքան սա կեն դանի է՝ գիտեմք զի ոչ լինի խաղաղուԹի. վ որոյ սպանցուք զսա՝ զի խաղաղացին խռովուԹի աշխարհիս մերոյ:

Ո այս խորհուրդս արք ոմանք իմացեալ զդա ցուցին սուէյմանբէկին. Թէ երէքին փառաւորք իշխանքն քո՝ որ է մալայ գաւառ՝ և մուս տաֆայբէկ՝ և իբրահիմբէկ՝ գլուխ եղեալ են և այլովք ևս իշխանովք խորհեալեն առ՚ի սպանանել զքեզ: և սուէյմանբէկին կալեալ զերեսին զիշխանան զայնոսիկ էարկ ՚ի բանտ կա պեալ երկաԹի շղԹայիւք. և ըմբռնումն երից իշխանացս եղև յառաջին շաբաԹին աղուհա ցից: իսկ կապեալ իշխանքս ԹղԹով և վիշնոր գով՝ բազմաւ կերպիւ զաղաչանս և զինդրուճ ածս արարին առ սուէյմանբէկն զի արձակեսցէ զինքեանս, և նա ոչ արձակեաց:

Իբրև գիտացին իշխանքն Թէ ոչ արձակէ՝ այլ սպանանէ. խորհեցան զայլևս հնարս զի բերին առ ինքեանս զաներն սուէյմանբէկին. որոյ անունն ևս մուստաֆայբէկ էր. և՚ի բա զում աւուրս յորվիւ կերպիւ խօսեցան ընդ նմա՝ զի Թերևս կարասցէ զՀնարս ինչ գտանել վն փրկուԹե նդ: և՚ի խորհիլն և՚ի խօսիլն սասցին իշխանքն ընդ աներոջ սուէյմանբէկին.

կին. Թէ կարէիր դու փրկել զմեզ՝ մեք զքեզ իշխան և պարոն կարգեաք մեզ 'ի տեղի սուրբ մանըն էին. քանզի և որդի իշխանի ես դու։ և արդարև որդի իշխանի էր այս մուստաֆայ բէկն։ արդ եթէ դու սպանցես զսուրբ մանն բէկն անպատճառ զքեզ կացուցանեմք իշխան 'ի տեղի սուրբ մանըն էին. և յոչ հաւատան աներկբայն բազմաւ երդմամբ և պէսպիսով բա նիւ զսիրտ հաստատեցին. այնքան մինչ որ հաւա նեցաւ բանից իշխանացն. քանզի ոչ էր այլ խո րագէտ՝ այլ պարզամիտ՝ վասն որոյ հաւանեցաւ։

Ո կնի սարին հնարեցին զգործ այսպիսի. զի երից իշխանացս այսոցիկ կապելոցս՝ ումմին որ դին և երկոցունցն երկու ծառայք. թաքու ցին զսուրս 'ի ներքոյ հանդերձից իւրեանց. և յարտաքուստ զգեցան զզգեստ կանացի՝ և ածին սաւանս իւրեանց. և ձևացան ոգ ղջաստի կանայք։

Ա յսոքիկ երեքին արքս՝ որք և կերպացան կանայք և սուրբ մանըն էին աներբ մուստաֆայ բէկն. յաւուր միում ընդ ծագել լուսոյ աւ ուրն ելին և ուղեցան՝ և գնացին 'ի բերդն։ եկին և հասին յառաջին դուռն բերդին. և դռնապանքն բերդին և այլ արքն տեսանէին զի սուրբ մանըն էին աներն գնայ՝ և ունի աւա ջի իւր զփոքրիկ մատաղ մանուկ որդին իւր՝ և երեք կանայք զկնի նր։ Այրև եկեալ հասին 'ի դուռն բերդին՝ յայնժամ դռնապանքն հար ցումն արարին 'ի մուստաֆայբէկէն վասն կա նանցն. և նա ասաց, Թէ կանայք կապելոց իշ խանացն են, երթան առ կինն սուրբ մանըն էին ազաչել զնա՝ զի և նա բարեխօսս լինի առ սուրբ մանըն էին վասն արանց սոցա։ զայս բան իբրև լուան դռնապանքն թոյլ ետուն 'ի գնալ և

նորա անցանելով ընդ ամենայն դրունս քեր դ.ին հասին մինչև 'ի վերին դուռն. և անդ.ս հարցումն արարին դռնապանքն. և մուտս փայբ.կին սոցին և.ս արար զպատասխանի ըստ առաջնոյ կերպին վն.որոյ դռնապանքն թոյլ ետուն. քանզի ովք և տեսանէր զմուտս փայբ.կին՝ և առաջինն զտղայն. և լսէին զպատասխանին, աներկբայ հաւատային. զի համարէին թէ ոչ յերեկն և յեռանդն գնայ և գայ մուտս փայբ.կին առ սու.լէյմանբ.կին՝ սոյնպէս և այժմ, վն.որոյ թողուին 'ի գնալ:

Այս.նորա անցանելով զամենեսեան դրունս եկեալ հասին յապարանս սու.լէյմանբ.կին. և եկեալ կացին 'ի դուռն տանն՝ յորում սու.լէյմանբ.կին ննջէր 'ի գիշերի. որև յայնմ ժամու տակաւին իմէջ անկողնոյն կայր՝ բայց էր ար թուն. և կինն սու.լէյմանբ.կին և երկու աղախնքն և.ս 'ի տան անդր. Այս.նախեմուտ 'ի ներքս 'ի տունն մուտսփայբ.կին. եբաց սու.լէյմանբ.կին զերեսն և ետես զաներն իւր 'ի տանն՝ և երեք կանայք արտաքոյ դրան տանն՝ և դարձեալ ծածկեաց զերեսն անկողնաւն. զի համարեցաւ զկերպացեալ կանայսն սուտգիւ կին գոլ. և կարծեաց թէ վն.կապելոց իշխանացն բարեխաւսելոյ գան. վն.որոյ ծածկեաց զերեսն իւր. Այս.ժամայն շէշտակի ընթացեալ կերպացեալ կանանցն և անկան իմէջ սու.լէյմանբ.կին. և սրովն իւրեանց ծակոտեալ խողխողեցին և սպանին. և սատակումն սու.լէյմանբ.կին եղև յաղու.հացից հինգերորդումն շաբաթու յուրբաթօրն. վն.որ յորում աւուր սու.լէյմանբ.կին զվարագ կողպտեաց. 'ի բաղորել տարան 'ի նոյնում աւուր և ինքն սպանաւ:

Ի՝ետ սպանման սուլէյմանբէկին. եկին երեքին արքն սպանօղք սուլէյմանբէկին. փուա Թանակի բացին զդուռն բանային. և Հանին ՚ի կապանաց և ՚ի բանտէ զերեսին կապեալ իշխանն։ որոց եւս ՚ի բանտէն եկին ՚ի դուռն բերդին. եկին և Ժողովեցան առ նոսա և այլ ևս ուխտադիրք ընկերքն իւրեանց. և այլևս արք յոլով՝ և աղմկեալ խօսէին։ Ոսկ երեքին սպանօղք արքն դարձեալ մտին ՚ի բերդն. և գնացին ՚ի տունն՝ յորում սպանին զսուլէյմանբէկն. և առին զդի մարմնոյն՝ պատեցին ձոր ձով ինչ. և բերին արտաքս ՚ի դուռն. բերդին իմէջ անբոխեալ արանցն. Թէ տեսէք ձեր րով աչօք և Հաւատացէք. զի անկարծիք և ստուգիւ սպանաւ սուլէյմանբէկն։ իբրև ար կին զգէշն իմէջ՝ նոյնժամայն նք երեքին սպանօղքն և անէրն սուլէյմանբէկին, փուա Թանակի դարձան և մտին ՚ի բերդն՝ և փակեցին զդուռն բերդին՝ և չինքեանս կալան ըզ բերդն. այնու մտօք Թէ մեք սպանաք զսուլէյմանբէկն. վասնոյ մեք լինելոցեմք իշխան ՚ի տեր ըզ նորա։

Ոսկ կինն սուլէյմանբէկին եղեալ ՚ի գլուխ պարսպի բերդին բազում աղաղակեաց դէպ ՚ի քաղաքն՝ և յաղագս բարձրութեն ոչղը լսէաւ. իբրև ետես կինն Թէ ոչ եղև լսելի ձայն նր ՚ի քաղաքին. և առ զգլխոյ ղաւուխն սուլէյմանբէկին և զքիչմիրի չալն նր. զի յորժամ սպանին զնա ՚ի գլուխն էր՝ և էր արիւնաթա Թախ պատեաց զղաւուխն չալոնքն և ձգեաց իմէջ քաղաքին. և ղաւուխն գնացեալ անկաւ առաջի տան ուժմին Հայոց քրիստոնէի՝ որոյ անունն էր խոճայվասոյ, որ՝ ի տեսանելն ծանեաւ զի պարոնի ղաւուխն էր. բայց վէ արիւնաթա

Թախտ գոլոյն երկիւղակածէ եղև Թէ մի գուցէ սպանեալ լինէն զպարոնն: որք և առժամայն փութացեալ հասին 'ի դուռն բերդին, և տեսին զի հաւաստեաւ սպանեալ էր սուլէյմանբէկին:

Այս խօջայ վասոյ ասացեալս. վնզի բարեկամ էր սուլէյմանբէկին զի զսիրալի խնամն և զայցելութիս բազում առեանէր 'ի նմանէ. սա ծածկաբար առաքեաց զարս՝ և զնկոյց եղ բարց սուլէյմանբէկին. որոց անուանքն էին աւագին իբրահիմբէկ. և կրսերոյն էվլիայբէկ. քանզի նոքա իւրաքանչիւրոք յիւրեանց բերդոջն կային. որք և ոչ կարի հեռւից էին 'ի խօշաբայ՝ որոց 'ի լսելն փութանակի զօրակա նօք հասին 'ի խօշաբ: Իբրև եկին 'ի դուռն բերդին՝ ոչ բացին նոցա զդուռն սպանօղք արքն՝ որք մնեալ էին ի բերդին. և 'ի սա կաւ աւուրս մնացին այսպիսեաւ աղմկաւ ամբն արք: և յաւուր միում աղմկեալ ժամու եղ բացին սուլէյմանբէկին էվլիայբէկ. և հասեալ սուսերբք զմարտաղաւմն և սպան զնա. քին անդիւր լեալ արեան սուլէյմանբէկին:

Այս զկնի անցելոցս այսոցիկ. կինն սուլէյմանբէկին՝ որ տակաւին իմն էր. 'ի միում գիշերի թարց բնաւին ումբք գիտելոց ինքն միայն կախեաց զպարան 'ի բերդէն և 'ի վեր քարշեաց զայր մի յարանցն. իբրահիմ բէկին 'ի վեր 'ի բերդ անգր. և նոքա քարշեցին 'ի վեր զայրն. սա՝ ընդ որս և զնիբրահիմ բէկն: ապա այս իբրահիմբէկս և արքն իւր հետամուտ եղեն սպանօղ արանցն սուլէյմանբէկին՝ որք անդ 'ի բերդին էին. և նոքա փա խուցեալ մտին 'ի ջաբախանէն. և իբրահիմ բէկն հուր էարկ 'ի ջաբախանէն յորմէ հրոյ

հրդեհեալ

հրդեհեալ բարուքն ի վեր էառ զտունն ընդ նմին և զարթն. և ընդ յօդս ցընդեաց՝ որք և փերթ փերթ եղեալ հոսեալ ի վայր իջանէին։

Ա. Յետ հետև իբրահիմբեկն տիրացաւ բերդին և առնայնի երկրին. և սորին եղբայր եվ էր այբեկն գնաց ի տեղի իւր յառաջին բերդն ուրև նախ բնակէր՝ որոյ զանունն ապազայ ասէին. Ա. ընդ զսատակութիւն սուլէյմանբեկին պատմեցաք. այսու հետև պատմեսցուք զպատերազմն իբրահիմբեկին և զդարձն սրբոյ նշանին ի վան քաղաք։

Պատմութիւն ի պարսից իբրահիմբեկին. և դարձի սրբոյ նշանին ի վան քաղաք։

ԽԱ.

ԲԴ Ի ՋԲՐԱՒԱՅՍ

Ամի՝ որ էվ լեայբեկն դարձաւ և գնաց յառաջին բերդն իւր՝ յապազայ կոչեցեալն. և իբրահիմբեկն էժուռ ի բերդն խոշաբայ. և ընդ իւրով իշխանութիւնն նուաճեաց զբերդն և զամուն գաւառսն. և յաւուրց յաւուրս առ սակաւ սակաւ հաւաքեալ տեղեկացաւ ամենից թշնամեաց իւրոց. նաև այնոցիկ որք ի սպանութիւն սուլէյմանբեկին համախոհք էին։ և օր աւուր սակաւ սակաւ զամուն զնոսա կոտորեաց՝ և ոչնչացուք խնայեաց. այլև կալաւ զկինն և զբոյրն սուլէյմանբեկին և եդ ի բանտի. և բազմակերպիւք չար չարանօք չարչարեաց զնա՝ զի ցուցանիցեն ըզ ճնացուածս գանձուց սուլէյմանբեկին. իբրև էառ զորինչ էգիտ՝ և յետոյ զնոսին ևս սպան։

Այն այս իբրահիմբեկ ևս վերստին կոչեաց առ ինքն զառաջնորդն Հոգւոց վանից զպետ

թոս եպիսկոպոս. և ասաց տամ ի քեզ զնոսա նշանն տար ի վանքն մեր՝ և անդ պահեա զնա՝ մի անդ կացցէ. և պետրոս եպիսկոպոս ամին և արար զպատմութիւնն ոսկի և տարար առաքեալքն կին. և ոչ տարաւ զնոսա նշանն ի վանքն. այլ մնաց ի բերդն խոշաբայ։

Ա՛ւուրս յորմէ հետէ առաքեալքն զնոսա նշանն հանեալ ի վարագայ լերէ ի խոշաբ. գրեթէ ցառաւմն և պատուհաս տեղացեալ լցաւ յերկիրն խոշաբայ. զի երկիրն ոչ տայր զպտուղ՝ և թէ լինէր՝ հազիւ զսերմն առնուին. և հեծելշարժութիւն և խառնութիւն լցաւ գաւառն։ այլև կենդանիքն ոչ աճէին այլ տակաւին պակասէին։ այլև յաւուրս ամենայն ի նոր գրիգորի պահոցն սաստիկ և անչափ ձիւնեկին՝ որք բազումք ասէին թէ երկու կանգուն նստաւ. և անասունք ամբն առանց արօտի մնացին մի ձեռանն յոլովութիւն. և այնու պատճառաւ անասունք յոլովք սովամահ եղեն։ Ո՛վ ինքն այսպիսի անկաւ մահ անասնոց յերկիր նոցա. և որում գոյր հազար գլուխ ոչխար. հարիւր գլուխ ուրեմն մնաց։ վասնորոյ բնակիչք երկրին խոշաբայ ժողովեցան առ իբրահիմբեկն և ծանուցին զառաքումն աշխարհին. և աղաչէին զարձուցանել զնոսա նշանն ի տեղի իւր՝ զի վերստին պատուհասն ի նոցանէ։ Ա՛յլև ինքնիբրահիմբեկն գոդեցաւ. զի ցաւ գոդութիւն յայտնեցաւ ի մարմինն։ այլև ցաւ իմն ոսկի թէ քանի գոյացաւ ի նա՝ որ կալաւ զմկնջն և զրծ քարձան և զորունն և հանապազ տանջէր զնա այլև կինն իբրահիմբեկին հանապազ թախանձէր զնա. և ոչ սպիտակ բանիւք խօսէր ընդ նմա. զի դարձուսցէ զնոսա նշանն ի տեղի իւր. և մի վերստին առաքեալ պատճառացդ. հաճեցաւ իբրա

իբրահիմբէկին զի գարձուացէ զնբ նշանն ի տեղի իւր։

Որև ազդեցաւ այս վանայ քաղաքի ժողովր դոցն։ և նոքա լցան երկնայնով խնդութբ. և նոյնժամայն վերոյ ասացեալ մարխաս չալապին առեալ ընդ իւր զմանս ի ժողովրդականացն։ և փութանակի հասին ի բերդն խոշաբայ. մա տեան առաջի իբրահիմբէկին խօսեցան առնա բանիւք աղաչանաց. և եդին առաջի նբ ըզ դրամն երկու հազար ղուռուշս նաղտ, և առին զնբ նշանն և զնացորդս անօթոցն՝ եթէ զնաջ և եթէ զայլ ինչ՝ եկին ի վան քաղաք. վն որոյ գրոհ տուեալ ամենից բնակչաց գաւառին քրիս տոնեից գային յերկրպագութի սրբոյ նշանին՝ և արտասուօք գոհանային զՔ՝ որ եբեր զնբ նշանն միւսանգամ առնն։ իսկ ի շուրջառացն զերկուսն առեալ էր չօմարն՝ և վն իւրն կա րեալեր զննթիան և զգեցեալ։ Լսակ զնբ նշանն ոչ ևս տարան ի վանքն վարագայ. զկաստուած և զերկիւղ կրեալ. մոռածելով զանցեալ արհաւ իրան. այլ պահեցին ի վան քաղաքին ի տիրա մայր անուանեալ եկեղեցին։ Այս եղև դարձ սրբոյ նշանին ի վան քաղաք հազար և հարիւր և չորս թուականիս մերոյ. հնորհք Ն՚ն մերոյ Յ՚ն Ք՚ն որում փառք յաւիտեանս ամէն։

Պատմութի վն նշխարաց սրբոյն Յովհաննու կարապետին, որ յայտնեցաւ ի ժամանակս յետինս, զոր ի հին ջա ղայ պահեալ կայր ի վաղուց՝ ժամանակաց։



ԽԴ։

ՐԹ Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԻՆ

յորում թագաւորն Պարսից շահաբաս կոչեցեալն՝ մեծն և առաջինն Էհան զժողովուրդան ջուղայեցւոց ի հին

ջուղայոյ, և վարեալ տարաւ զնա յերկիրն Պարսից՝ ի քաղաքն ասպահան։ Եւ ոչ ժողովուրդն ջուղայեցւոց ոչ կարացին զինչ և զառաջինն ածս իւրեանց զնման բառնալ և տանիլ ընդ ինքեանս. քանզի հրաման թագաւորին սաստիկ էր իվ շինչ ինչ ասացին, որք որով փութացուցանէին զնա ձեռով ելանել՝ ի տեղւոյն և գնալ՝ վն որոյ ոչ կարացին առնուլ ընդ ինքեանս զինչս իւրեանց, այլ իւրաքանչիւրոք պահելով զԹաքուստ և զգաղուստ արարեալ՝ ի յարկս, և՝ ի խորս, և՝ ի վիհս, և՝ ի պատշաճաւորս տեղիս, և այնպէս Թողեալ գնացին։ Եւ ոչ շրջակայգիղորեից եղնակիչքն և գաւառականքն, որք մերձ էին հին ջուղայոյ. գիտէին զպահուսան, զոր ջուղայեցիքն արարին. վասնոյ գային նոքա յաժամ և յուղէին. որոնէին, և պեղէին զհող և զքար յաղագս գիւտի ընչից. և բազումք զբազում՝ ինչս գտանէին։

Եւ եղև՝ զի այր ումն այլազգի և կրօնիւքն մահմետական՝ ի գեղջէն որոյ զանուն ասէն մի քան. եկեալ՝ ի հին ջուղայ՝ ի յորոնումն և՝ ի յուզումն ընչից։ և եկեալ յերեսեղեցին՝ զոր վերջին կաթան ասէն. անդ յորոնէին իւրում՝ ի յարևելեան որմն աւազ խորանին. եգիտ զամանն ինչ խեցեղէն եգեալ՝ և իմէջ ամանոյն զփայտեղէն արկղ մի փոքրիկ՝ որ է ղուքի։ Եւ բև էհան զարկղն փայտեայ՝ ի մէջոյ խեցեղինի ամանոյն՝ և եբաց զփայտեայ արկղն. իսկոյն բուրեաց նմա յորդագոյն անուշահոտութեն. և այնու զգաց՝ ի յոգի իւր այն այլազգի թէ ընչիարք սրբոց է այն. և էր իմէջ արկեղն մա սունք ոսկերաց մանր և մեծ. և ընդ նոսա կտոր մի մագաղաթ՝ և իմէրայ գիր ինչ գրեալ։ Եւ առեալ այն զարկղն զայն ոսկերքն և մագաղաթ

թիւն

Թիւն տարաւ ի տուն իւր, տեսանել Թէ զինչ պարտ է խորհիլ վն նորա. և ինքա նշխարն ի տանն աւուրս բազումս։ և սկսաւ ինչ և ասա ցՀաճախ նոր օր աւուր նոճալիլ. և կենդանիքն և անասունքն մեռանիլ. և ամէն ինչ նր ջնջեցան մինչև որդիքն և մեռան։ Յետ եկեալ այրն ի միտս իւր գիտաց՝ Թէ ի նշխարացն է պատահումն այն՝ որ դիպեցաւ նմա. վնորոյ հանեալ զնշխարան ի տանէ իւրմէ այնու հետև տարեալ ի վայրն և ի բացեայ տեղիս իմիջ քարակուտ տաց ինչ պահեաց զնա՝ զի Թերևս վերստին ցասումն Ցն ի տանէ նր. և ոչ եղև վերստին ցեալ։

Հետայսորիկ եկեալ այլազգի այրս այս. ի հռչակաւոր ուխտն ի վանք սրբոյ նախավկայ ին, որ ի դարաշամբ կոչեցեալ գեղջն է. և անդ յայտնեաց զամենայն որպիսութիւն եպիսկոպոսն ումն. որոյ անունն էր շմաւոն. որ էր նա խածանօթ այլազգւոյն այնորիկ ի վաղուց ժամանակաց. իսկ եպիսկոպոսն պատուիրեաց քահանային զայն առ ինքն։ և իբրև եբեր այլազգին զարկղն և էտ ցեպիսկոպոսն. և ի բանալն առ ժամայն բուրեցաւ հոտ անոյշ և էլից ղտունն. և ետես ղմատունս նշխարացն. և առեալ զկտոր մագաղաթն և ընթերցաւ՝ և էր գրեալ իվերնորա այս ինչ։

